ՍՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9 1897 — ՍԵՊՏԵՄԲԵՐ — 1897 № 9

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

			երես	
1	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱՒԵՏԻՔ. . .		1147	Հայ քաղաքացին հայ գիւղացու առջև
2	ՇԱՆԹ		1151	Վերժին (վէպ)։
3	ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆԴՐ . .		1178	Սիրելի ընկեր, դու մի զարմանար... (բանաստեղծութիւն)։
4	» » . .		1179	Մեր դարը (բանաստեղծ.)։
5	ՉԵԽՈՎ, Ա.		1180	Կին (վէպ. վերջ)։
6	ԱԹԱՑԵԱՆ, ԱՐՇԱԿ.		1216	Նոր կեանք (բանաստեղծ.)։
7	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . .		1217	Խորտակուած կեանք (վէպ. շարուն.)։
8	ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ .		1238	Էուլիւսիայի դաղափարը (շար.)։
9	ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.		1247	Ղոչաղը՝ իբր տիպար հայ վիպադրութեան մէջ. (վերջ)։
10	» »		1264	Վ. Փափազեանի՝—«Անչագը»։
11	ԹԱՌԱՑԵԱՆ, Ս.		1268	Ա. Տէր-Մելքէլեանի՝—«Աստուածաբանական գիտութիւնները»։
12	Ա. Ա.		1271	Վ. Լունկևիչի՝—«Երկրի և երկնքի մասին»։
13	ԱՂԱԲԱԼԵԱՆ, Ն. ԵՒ ԱՅԼՔ .		1277	Հայ գաղթականները Թիֆլիսում։
14	ՍԵՒԵԱՆ, Հ.		1281	Թատրոնի շուրջը, XV։
15	ԼՈՒՍԻՆԻ.		1284	Արաբեսկ (Գոլովիադա թէ Մշակիադա)
16	ԽՄԲ.		1289	Զանազան լուրեր։

Յայտարարութիւններ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1897

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9 1897 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1897 № 9

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.
1897

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го сентября 1897 г.

ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ԱՌՋԵՒ

Երբէք չի կարելի անպատիժ կերպով մոռացութեան տալ այն հիմնական պայմանները, առանց որոնց մի ազգ չի կարող իւր գոյութիւնը պահպանել և առաջ գնալ։ Դեռ միայն անցեալ տարի էր, որ մայրաքաղաքների թերթերից մէ՛կը մանաւանդ, որի սխալ թէ ուղիղ կարծիքները ռուսաց մեծ հասարակութեան և նոյն իսկ կառավարչական շրջանների վրայ ազդեցութիւն ունին, մեղադրում էր Անդրկովկասի հայերին իբր հարստահարիչ տարրի Անդրկովկասում, ներկայացնելով հայ ազգը մեզնում որպէս լոկ քաղաքների բնակիչներ, որոնք երկրի առուտուրը և կապիտալները իրենց ձեռքն են դցել ի վնաս բոլոր միւս ազգութիւնների։ Ոչ ոք չի կարող ուրանալ, որ, ինչքան էլ այդ ձև հայերին ներկայացնելու մէջ տենդենցիական ստութիւններ կային, բայց և այնպէս այդ արշաւանքները հայերի դէմ, իբրև ազգութեան, իբրև մի փոքրիկ տարրի լայնածաւալ կայսրութեան մէջ, իրենց արձագանքը գտնում են ոչ միայն հեռաւոր ներքին նահանգների ռուս հասարակութիւնների մէջ, այլ և նոյն իսկ մեր երկիրը կառավարող շրջանների դէթ մի մասում։ Բնաւ հարկ չկայ ասելու թէ որքան վտանգաւոր է երբ զօրեղ միջոցներով պրոպագանդա է լինում մի ազգութեան դէմ առհասարակ, բայց մանաւանդ մի այնքան անպաշտպան տարրի դէմ, որպիսին հայերն են, որոնք դրականապէս ոչ մի պաշտօնական միջոց չունին իրենց ձայնը լսելի անելու ուր հարկն է։ Մեր ձայնը, իբրև հայոց մամուլի ձայն, կարելի է ասել, բնաւ տեղ չի հասնում. և ռուսաց մամուլի այն մասը, որը հայերի դէմ արշաւանքներ գործելը իւր մի տեսակ նուիրական կոչումն է համարում,—նորա համար գոյութիւն չունի նաև հայոց մամուլի ձայն։

Եւ ահա, ռուսաց մի շարք օտարակեր օրգաններին պատասխանող հանդիսանում է էլի ռուսաց մամուլը, յանձին նորա լաւագոյն ներկայացուցիչների։ Դոցանից մէկը, ապացուցեց ամբողջ ռուս աշխարհքի առջև, թէ հայերը, որոնց վրայ այդքան խեթ աչքով են նայում, միմիայն վաճառականներ ու կապիտալիստներ չեն, այլ և անհամեմատ մեծ մասով երկրագործ և գիւղացի ժողովուրդ են։

Մայրաքաղաքային մամուլի հակա-հայկական արշաւանքների միջոցին, որ բնաւ չպէտք է վերջացած համարել, արտասանած ամենածանրակշիռ խօսքը հէնց այդ մի քանի թւանշաններն էին, որոնք ~~լինելու~~ զօրութիւն ունեցան ռուս հասարակութեան և կառավարութեան գէթ մի մասի համար խնդիրը պարզելու։ Մենք երբէք չէինք կարող երևակայել անգամ, որ այն թւանշանները, որոնք, սկսած 30-ական թւականներից, պարբերաբար հաւաքւում են պաշտօնական անձերի միջոցով երկրիս ազգաբնակութեան կազմի մասին, որ, ասում ենք, այդ թւանշանները կարող էին այնքան թաքուն մնալ մեծ հասարակութիւնից, որ նոցանից արած մի քանի ամփոփումները, տպելով ռուսաց մի համակրելի ամսագրում, կարող լինէին Ամերիկայի գիւտի տպաւորութիւնը գործել ոչ միայն Ռուսիայի ներքին նահանգներում, այլ և նոյն իսկ մեր երկրում, մեզ հետ ապրող այլազգի հասարակութիւնների և նոցա մամուլի վրայ։

Եւ սակայն այդ այդպէս է։

Բայց մեր խօսքը այդ ատելի պոլեմիկայի չէ վերաբերում։ Մենք չենք գալիս նոր նիւթ մատակարարելու մեր պաշտպանութեան համար՝ ընդդէմ հայի տնունն իսկ հալածող շովինիստ թերթերի։ Բնաւ ոչ։ Այլ մենք կամենում ենք շեշտել այս ակնյայտնի իրողութիւնը, որ ամեն անգամ երբ հայի անունը այսպէս կամ այնպէս վտանգի մէջ է, նորան փրկողը—հայ գիւղացու գոյութիւնն է։ Հայ գիւղերի, հայ գիւղացի ազգաբնակութեան մեծատոկոս բազմութիւնն է իւր հայրենիքում, որ ազատում է հային և դորա հետ նաև հայ քաղաքացուն նոյն իսկ ազգերի ատելութիւնից և դէմ տալիս նախապաշարուած ազգերի հալածանքների յորձանքներին։

Այդ իրողութիւնը սակայն չի կարելի լոկ վկայել, ապա մոռացութեան տալ և անցնել. եթէ այդ իրողութիւնը այդքան լուրջ բան է—ապա հարց է առաջ գալիս, թէ ինչ է կատարւում հայ գիւղացու օգտին, նորա պահպանութեան, նորա բարգաւաճման համար։ Ապացուցուած է, որ հայ գիւղացու անունը գալիս և վոտանդի միջոցին փրկում է նաև հայ քաղաքացուն. սակայն մենք պէտք է վկայենք, որ քաղաքացին այդ իմանում է միայն երբ լսում է, և ապա կատարելապէս մոռացութեան տալիս։ Ազգը պարծենում է գիւղացու գոյութիւնովը. բայց նոյն այդ գիւղացին ամենահանդիսաւոր լոզնով կարող է աշխարհքին վկայել, որ բարոյական կապը հայ գիւղացու եւ հայ քաղաքացու մէջ խզուած է. նա կարող է վկայել, որ եթէ հայ քաղաքացին անչափ գոհունակութիւն է զգում երբ հայ տարրի մասին վիճելիս մայրաքաղաքների թերթերում հայ գիւղական տարրի մեծ քանակութեան ապացոյցներն են բերւում պաշտօնական թուանշաններով, այդ նոյն քաղաքացին, սակայն, բնաւ չի մտածում ոչ այդ գիւղացու գոյութեան պայմանների և ոչ նորա բարգաւաճման մասին։

Այդ խզուածութիւնը հայ քաղաքացու և հայ գիւղացու միջև արտայայտւում է բնորոշ երևոյթներով, որոնց յարատևութիւնը և անուշադրութեան մատնելը ամենակորստաբեր հետևանքներ կարող են ունենալ։ Այդ խզուածութիւնը կայ ոչ միայն հին քաղաքացու և իրեն անծանօթ գիւղի մէջ, այլ և այն քաղաքացու, որը ինքը գիւղի զաւակ է և որը իւր բախտը քաղաքումն է որոնել։ Սակայն՝ մեր խօսքը այդ վերջին կարգի դէպքերի մասին չէ միայն, այլ ընդհանուր երևոյթի մասին։

Եւ այդպէս է ոչ միայն քաղաքացի ամբոխի վերաբերմունքը դէպի գիւղն ու նորա բնակիչները՝ սոցա ամէն կարգի ցաւերով, այլ այդպէս է վերաբերմունքը նաև ժամանակակից կթուած, այն այժմ բաւականին մեծ դասակարգի, որ իւր բարձրագոյն ուսումով ու դորանով ձեռք բերած դիրքով տարբերւում է ամբոխից։ Այն անուշադրութիւնը, որին մատնուած է հայ գիւղացին՝ հայ քաղաքացու կողմից—ընդհանուր է, և եթէ թուելու լինինք դէպքերը, ուր որ և իցէ գիւղ որ

և է օգնութիւն է ստանում քաղաքացիներից—այդ դէպքերը կը սպառուեն աննշան ֆակտերով.—մի քանի հոգի՝ իրենց տարեկան անչափ մեծ եկամուտներից բարեհաճում էին տարեկան մի քանի հարիւր ռուբլի նուիրել իրենց ծննդավայր գիւղերի հայոց դպրոցներին... և ուրիշ?—ոչինչ, կամ գրեթէ ոչինչ...

Եւ սակայն, մեր գիւղերը հեծծում են պարտքերի տակ. գիւղական ամբոխը կատարելապէս ճորտ է տեղական «կուլակների» անագորոյն ձեռքերում. նոյն իսկ տարեկան հունձը մեծ մասամբ գիւղացունը չէ և նա չի կարողանում օգտուել յաջող գներից,—և այդ բոլորը գիւղական ամբոխի թշուառութիւնից, որի գոյութիւնը աղատարար է հռչակւում՝ իբրև ամենազլխաւոր ապացոյցը աղգի առողջ կազմի, փրկիչը հայ անուան, իբրև աղգի։

Վերին աստիճանի անբնական, ֆնասակար, անառողջ յարաբերութիւններին ենք ականատես, թէ ինչպէս այն մեծ գիւղական դասակարգը, առանց որի գոյութեան քաղաքների հայ բնակիչը կը կորցնէր իւր յարգն ու պատիւը այլ ազգութիւնների մէջ, և դրանով իւր սոցիալական դիրքը, այդ մեծ դասակարգը սև ապերախտութիւնով է վարձատրւում թէ հայ ինտելիդէնցիայի և թէ իրենց դրամական ոյժով կարող հայերի կողմից. և այդ սև ապերախտութիւնը—որը երբէք անպատիժ չի կարող մնալ—հայ քաղաքացին չի քաւում նոյն իսկ իւր մահովը. աչքի անցրէք այս ամսագրում կանոնաւորապէս ցուցակագրւող դէպքերը նէրների և կտակների մասին և տեսէք թէ նոյն իսկ երբ մէկը ցանկութիւն ունի ազգային-հասարակական կարիքներին օգնութեան գալ, ո՞ր մէկն է մտածում իւր ունեցածովը գիւղական հայ համայնքների պէտքերին ծառայել?!

Ս. ԱՐԱՄԻԱՆԵԱՆՑ

ՎԵՐԾԻՆ

ՇԱՆԹԻ

Ա

—Մէկ խօսքով՝ չի կայ. ոչ մեր գրականութեան, ոչ մեր հասարակական գործունէութեան մէջ դեռ ժամանակակից զարգացում ունեցող մարդ չի կայ։

Եզրակացուց Արշակ. աթոռին վրայ ջղուտ շարժում մը ըրաւ, թեւը յենեց պատշգամի վանդակին ու հայեացքը սահեցուց խոսակցի դէմքէն, որը հազիւ կը նշմարուէր պատշգամը դրկող բաղեղներու թանձր ստուերին մէջէն։

Տիրան ոչինչ չառարկեց։ Անշարժ նստած էր՝ աչքերը սեւեռած Մարմարայի ծալերուն, որուն վրայ լուսինը կէսը խաղուած ու կէսը մնացած դունչովը կը յօրանջէր։

Եւ վայրկեան մը լռութիւն։

Միայն ծովն էր, որ վարը՝ պարտէզի շրթունքի աւազուտին վրայ իր զբաւարթ ու օրօրուն խշրդուքովը անվերջ կը շոփէր։

—Առանց բնական գիտութիւններու հիմնական ծանօթութեան. շարունակեց Արշակ իր խօսքին թելը. առանց մեզ շրջապատող ու մեր գոյութիւնը եղող ուժերը ճանչնալու, առանց մեր կազմը ու այդ կազմի բնական ընթացքն ու ֆունկցիոները հասկընալու. միւս կողմէն զուրկ մեր ընկերական կեանքի ֆիզիկական՝ ու հոգեկան երեւոյթներու ուսումնասիրութենէն, զուրկ տնտեսա ա ն չ քաղաքական գործօններու լայն ու խոր ըմբռնումէն. ահա թէ ինչ տեսակ մարդիկ են եղեր մեր հասարակութեան միտքն ու զգացում.

ները սնուցանելու. և ինչոմ. վերացական ուսուցիկ դատողութիւն-ներ ու արամաբանական աննիւթ վարժութիւններ. այդ չէ մեր դպրոցներու, մեր լրագրութեան, մեր գրականութեան մէջ. ուր է իրերու, կեանքի ու զգացումներու լուրջ ու սիստեմատիկ վերլուծումը։

Նորէն լռեց։

Ոտքը նետեց ոտքին վրայ. ձեռքերը իրարու կապեց գլխուն ետեւը. ու սկսաւ մտածել։

Քսանըհինգի մօտիկ, միջահասակ, խարտեաշ մազերով, մաքուր ածիլուած այտերով, ջղուտ երիտասարդ մըն էր ան։

Անոր պէս ջղային, բայց քիչ մը աւելի դեռատի, քիչ մը աւելի շէկ ու գանգուր երկար մազերով աղայ մըն էր Տիրանը. որը միշտ լուռ ականջ կը դնէր ընկերոջը ճառին՝ պէնսնէին մէջէն առաջաստանալի մը սուերագծերուն հետեւելով, որը հեռուն լուսնի ցոլացումներուն վրայէն հանդարտ կը սահէր։

—Բայց, է, ինչ կարելի է պահանջել այդ մարդիկներէն. հընչեց վերստին Արշակի ամուր ձայնը։ Բաւական է անգամ մը պատկերացընել, թէ ո՞րն է անոնց մտաւոր պաշարը. արտասահմանեան թերթի մը յօդուածէն վերցուցած դատողութիւն մը, եւրոպական գրախօսի մը մէկ թռուցիկ եզրակացութիւնը, խոշորանուն փիլիսոփայի մը միակողմանի տեսութիւնը, ան ալ ի հարկէ երկրորդ բերնէ յափշտակուած. կամ վերջապէս վէպի մը կամ բրոշիւրի մը յարձակումներէն սեփականած հայեացք մը ընկերական այս ու այն հարցին վրայ. ահա բոլորը. պատահական ցան-ցիր կրթութիւն մը. բրոշիւրի կրթութիւն։ Մինչ մեզի, և մասնաւորապէս մեր գործի գլուխ կեցած մարդիկներուն միայն և միայն հիմնական, սիստեմատիկ ու լուրջ պատրաստութիւն պէտք է. գիտական կրթութիւն. ժամանակիս բնական ու ընկերական գիտութիւններու բարձրութեան վրայ կեցած ինքնուրոյն ուղեղներ, և ոչ թէ...

—Սիրելիս, կարելի չէ՞ թեմադ փոխես. ընդհատեց վերջապէս Տիրան այլ ևս համբերել չկրնալով. ու ժպտեցաւ։

—Ինչպէ՞ս թէ։

—Այս հիանալի բնութեան դիմաց. թող վերջապէս քիչ մըն ալ զգայարաններդ գործեն. նայէ՛ ինչ սքանչելի գիշեր է. երկինքը,

ծովը, օդը։ Թքեր եմ միւսներու անպատրաստութեան ալ, իրենց փիլիսոփայութիւններուն ալ ու քու գիտնականութեանդ ալ վրան. «գիտական կրթութիւն, հիմնական զարգացում. շաբաթ մը՝ է ուղեղս նահատակեցիր։

—Տես, է. ամբողջ օրը ոտանաւորներէդ ու վէպերէդ ինծի շունչ առնել չես տրուեր, և հիմա ալ ելեր ես ինծի կը մեղադրես։

—Սակայն, սիրելիս, ընթրիքէն անմիջապէս վերջը մարդու ստամոքսը կը խանգարի այդ գիտական անմարսելի լրջութենէն։

—Խնդմ բանաստեղծիս ստամոքսը։

Եւ երկուքն ալ լռեցին։

Ոգոստոսի բարակ հովիկը ծովուն վրայէն արագ վազեց ու շտապով մը մոտաւ թաղնուեցաւ պատշգամի սաղարթներուն գիրկը։ Ու անոր բերած չարաճճի լուրերէն ուռնայնամիտ իրարանցում մը ինկաւ տերևներու խտութեան մէջ, և ծածուկ փսփսուք մը։

Տիրան յափշտակուած ականջ կը դնէր այդ զբաղարթ փսփսուքին. և աչքերը գոցած անոր իմաստը ըմբռնելու ճիգեր կ'ընէր, երբ տան վարի յարկէն լսուող աղմուկ մը իր աչքերը մէկէն բանալու ստիպեց։

Ու նոյն վայրկեանին մութ նախասենեակէն գնդակի մը պէս պատշգամ գլորուեցաւ Տիրանի փոքրիկ եղբայրը.

—Բժիշկենք եկան. շըշընչելով շունչը կտրած։

Ուրախ շարժումով մը Տիրան իսկոյն վեր թռաւ։

—Ո՞վ են. հարցուց Արշակ անտարբեր։

—Բժիշկ Պզտիկեանները. ճանչնալու ես. գոնէ բժիշկը անշուշտ տեսած կը լինիս. քալէ՛ վար իջնենք քեզ ծանօթացընեմ։

—Չէ. ուուն երթամ. այսօր ամբողջ օրը հոս կորաւ. մանրմունր գրելու բաներ ունիմ. երթամ այս գիշեր կարգի բերեմ։ Ցտեսութիւն։

—Ա՛յ յիմարութիւն։ Կեցիր. մէկ-երկու ժամ ուրախ ատեն կ'անցընենք. բժիշկը հետաքրքիր մարդ է։

—Է՛, լսած եմ այդ շատախօսի մասին։

—Մանաւանդ քոյրն ալ կրթըւած աղջիկ։

—Գիտեմ. այդ Պոլսի կրթըւած աղջիկներն ալ գիտեմ։ Ցտեսութիւն։

Տիրան կարծես վիրաւորուեցաւ ընկերոջը այդ արհամարանքէն.

—Բայց կը սխալիս. ան քու գիտցածներէդ չէ.՝ առարկեց լըրջութեամբ։

—Վաղ անցիր, եղբայր. այդ պէպէքները։

—Ա՛յ, մի՛շտ այդպէս ես դուն. տաքցաւ Տիրան։ Ուրիշի խօսքին բնաւ կարևորութիւն չես տար. եկուր, աչքովդ տես, որ հաւատաս։

—Ց՛ը։

—Արշակ, ճշմարիտ կը վշտանամ, եթէ երթաս։

—Խէնթ է։

—Ո՛չ. այսօր ալ իմ խօսքս պիտի լինի։

Արշակ զարմացած ակընթարթ մը ընկերոջը երեսը նայեցաւ. ու կատակող շեշտով մը յարեց.

—Լաւ. այսօր ալ քու խօսքդ թող լինի։

—Դէ, իջնենք ուրեմն։

Տիրանի ծնողքը հազիւ հիւրերը դահլիճն էին առաջնորդեր ու նստեր, որ երկու ընկերները դռան սեմին վրայ երևացին։

—Օ՛, բարև՛, պարոն Տիրան. բացականչեց բժիշկը խոշորաձայն, մեծ ոսկի ակնոցներուն մէջէն հայեացքը անծանօթի դէմքին շեշտելով։

Իր ձայնին պէս ինքն ալ հաստ մարդ մը. կարծես իբրև ծաղր իր Պզտիկեան անունին։

—Բարև ձեզի. պատասխանեց երիտասարդը ընդհանուր կերպով։ Թոյլ տուէք նախ ձեզի ծանօթացընեմ իմ ընկերս՝ Արշակ Սմբատեան, որ գերմանական համալսարանները չափչփելէ յոգնած, եկեր է այս ամառ իւր անվերջ քննադատութիւններովը մեր համբերութիւնը չափելու. առաջընկէ զգուշացնեմ։

—Մի՛թէ. խնդաց բժիշկի բամբ ձայնը։

—Տիկին, օրիորդ և բժիշկ Պզտիկեաններ. շարունակեց Տիրան մեքենաբար։

—Շատ ուրախ եմ։

—Ահա այս այն օրիորդ Վերժինն է, որու մասին քիչ մը առաջ քեզի այնչափ զէշ բաներ պատմեցի. կցեց Տիրան աղջկայ դէմքին ժպտելով։

—Ո՛ւհ, ձեր այդ շաղակրատելը. բացականչեց աղջիկը՝ թեթև մը ոտքը գետին թափելով։

Փոքր, նուրբ, արձանի մը համաչափութեամբ կերտուած, քընքուշ ու կոր գծերով մարմին մըն էր Վերժին. ճկուն ու տոկուն։

Մինչև մէջքը հասնող շագանակի մազերը առանց հիւսկի, միայն ծոծրակին մօտիկ ժապաւէնով մը օղակուած, ազատ թափուած էր թիկունքին։ Սիրուն, սուր թուշը, փոքրիկ կծկած բերանը, իր շարժուն ու խելացի աչքերուն հետ միասին, դէմքին արտայայտիչ քննող շեշտ մը կուտային։

Ամենքը նստեցան։ Հասակաւորները մէկ կողմ. իսկ երիտասարդները սենեակի մէջտեղը դրուած ձուաձև սեղանին շուրջը, որուն վրայ առաստաղէն կախուած լամպը առատ լոյս կը թափէր։

—Ո՛չ. դուք հոս եկէք, իմ քովս, պարոն Տիրան. ըսաւ աղջիկը իր քովի աթոռը մատնանիշ ընելով ժպտերես։ Եկէք, հիմա ալ ես ձեզի քոմպլիմաններ ունիմ ընելիք ձեր տպած վերջին պատկերի առիթով, որ շատ սիրուն էր։ Ճշմարիտ չեմ հասկընար, ուրկէ ձեր միտքն է եկեր այդ տարօրինակ նիւթը։ Բայց, է, եթէ հասկընայի, ես ալ բանաստեղծ կը լինէի արդէն, չէ։

Ու թեթև պչրանքով մը՝ գլուխը թեքած՝ սկսաւ խնդալ տղու դէմքին։

—Իրաւ, պարոն Տիրան, մէջ ինկաւ բժիշկը. մանաւանդ գիւղացիին այն փիլիսոփայութիւնը շատ օրիժինալ է։

—Ի՞նչ, պարոն բժիշկ, ուրեմն իմ պատկերս կարդալու պատուին ալ արժանացուցեր էք. դուք, որ ինչպէս կ՚ըսէք բժշկական էնսիկլոպեդիէն զատ երեք տարի է ձեռքերնիդ գիրք առած չունիք։

—Զէ. անկեղծ խօսելով ես անձամբ կարդացած չեմ ձեր գրածը. բայց երէկ իրիկուն սեղանին վրայ Վերժինը այնքան խօսեցաւ այդ մասին, որ ակամայ կարդացած եղայ։

Արշակ սկսաւ խնդալ։

Տիրան անախորժ զգացումի ծամածռութիւն մը ըրաւ, թէև սիրտը հաճոյքէն կը նետէր։ Աչքի տակէն քովընտի երկար նայուածք մը դամեց աղջկայ դէմքին. հալոող, շոյող, փափուկ նայուածք մը։

Մինչ աղջիկը դարձաւ Արշակին.

—Իսկ դուք, պարոն, հապա պատմեցէք մեզի ձեր շրջած,

տեսած տեղերէն, եւրոպական կեանքէն։ Եղբայրս շատ ժլատ է այդ կողմէն. և ընդհակառակը ինծի ալ այնպէս կը հետաքրքրէ այդ բոլորը։

—Ի՞նչ կ՚ուզէք, որ պատմեմ. խսկապէս պատմելու ոչինչ չի կայ, օրիորդ։

—Զարմանք, ճիշտ եղբօրս պատասխանը։

Բժիշկը հեգնոտ ժպիտով մը ծխախոտի ամբողջ ամպ մը շրթունքներէն բաց թողուց։

—Ա՛, օրինակ, պատմէ՛—մէջ ինկաւ Տիրան—արդեօք հոն ալ աղջիկները մարդու հոգին կը հանեն մինչև քուպլէտ մը բան երգել յանձն առնեն, թէ միայն հոս է այդպէս։

—Լռէլ... ձայնը երկընցուց Վերժին մատը տղու վրան թափ տալով. ու նորէն դարձաւ Արշակին։

—Մասնաւորապէս հետաքրքիր է ինծի ձեր տպաւորութիւնը Եւրոպայի կանանց մասին. անոնց զարգացման, կեանքի մէջ բռնած դիրքի, անոնց ձգտումներու և գործունէութեան մասին։ Մարդ ամէն օր իր չորս կողմը կը լսէ եւրոպացի կնոջ մտաւոր ու բարոյական բարձրութեան վրայ խօսելը, թէև ցարդ ոչ մէկը չներկայացուց մեզի անոր իրական ու լրիւ պատկերը, որ որոշ գաղափար մը կազմելը կարելի լինի։

Արշակ հարցական նայուածք մը նետեց Վերժինի դէմքին։

—Զէ՞ք պատասխաներ. հարցուց աղջիկը։

—Ի՞նչ պատասխանեմ, օրիորդ. եւրոպացի կրթուած կինն ալ նոյն մեր հասարակութեան մէջ ամէն օրուան ձեր տեսած և սովորաբար «զարգացած» կոչուող էակն է. ձեզի շատ լաւ ծանօթ. քանի մը արտաքին մանր տեղական փոփոխութիւններ գուցէ. ուրիշ ոչինչ։

—Նորէն քննադատութիւն. ես ձեզի չըսի. դարձաւ Տիրան միւսներուն։

—Մի՛ ընդհատէք. բացականչեց աղջիկը հրամայող կատակի շեշտով մը՝ Տիրանի դիմացը մատը սեղանին զարնելով։

Տիրան ընդոստ շարժումով մը ձեռքը շրթունքներուն տարաւ, խնդաց ու լռեց։

—Հմտա այդ գրագիտուհիները, վարչական կիները, ուսանո-

զուհիները, կանանց կոնգրէսները, որոնց մասին մեր թերթերուն մէջ շարունակ կը գրեն։

—Հեռուէն թմբուկին ձայնը անուշ կու գայ, օրիորդ. այդ գովեստներուն մեծագոյն մասը ձրի է։ Մեր մէջ գովեստն ու պարսաւը արդէն ինքնին շատ աժան է. մտաւոր ծանծաղութեան յայտնի ախտանիշներէն մէկը։

—Այդ կերպով մեր կիներուն դրդիչ օրինակ մը տալ կ'ուզեն. նկատեց բժիշկը ճակտի կնճիռներն ու յօնքերը խաղցնելով։ Տղուն կարծիքը կը փորձէր։

—Իմ համոզումովս ցոյց տալ «կրթուած» կոչուող եւրոպուհիին իրական դիրքը, և իր ստոր մնացած լինելու պատմական պատճառները շատ աւելի օգտակար է ու դրդիչ, քան սուտ ու սխալ իդէալներ շինելը։ Իրողութիւնը գոնէ ա՛յս է, օրիորդ, որ իրապէս դեր խաղացող ու լրջօրէն հասարակական կամ գրական կեանքին մէջ բանի մը պէտք եկող կինը հոն ալ մատի վրայ համրըւելիք բացառութիւն է, ինչպէս և հոս։

Աղջիկը մոլորուն նայուածքով տղու աչքերուն մէջ կը նայէր։

—Ուրեմն հոն ալ կնոջ կեանքը այնպէս չոր է, կաշկանդուած ու ապարդիւն, ինչպէս հոս... ո՛չ, այդ անկարելի է. վճռեց յանկարծ աղջիկը կարծես իր մտածումներուն թելը շարունակելով. ու ցընցըւեցաւ։

Արշակ զարմանքէն աթոռին վրայ ուղղըւելու շարժում մը ըրաւ. ու դիտակցօրէն սկսաւ դիտել իր աչքերուն օղակուած աղջիկան հայեացքը։

Վերժին բնազդօրէն աչքերը փախցուց։

—Կը ցաւիմ, օրիորդ. գուցէ ձեր պատրանքը պատռեցի։

—Խնդրեմ, շարունակեցէք. պատասխանեց աղջիկը ճակտին մազերը ետ նետելով։

—Ա՛, ես ալ այդպէս շատ եմ հիասթափուած, շատ. մեր գլուխը մոցուցած սուտ իդէալներուն դառն պտուղը։

Եւ պատմեց եւրոպական քաղաքակրթութեան, հասարակական կազմակերպութեան, ընտանիքի, կնոջ, կրթական հարցի, ուսանողութեան մասին իր ունեցած բարձր, պայծառ հայեացքները և իրականութեան դէմ կրած առանձին կծու տպաւորութիւնները։

Բժիշկը մինչև վերջը լուռ էր. և ուշադիր տղու ըսածներուն կը հետևէր՝ փոքրիկ կաթուածահար եղած ժպիտ մը ձախ այտին վրայ։

Տիրան մօրը ակնարկովը ելած էր դուրս, ուր հիւրասիրական խորհրդակցութիւն մը ընելու վրայ էին։

Միայն Վերժինն էր, որ մէջէմէջ տղուն նոր հարց մը կամ նկատողութիւն մը կ'ընէր։ Եւ Արշակ ամէն անգամ աւելի պինդ կը համոզուէր կարծես, որ աղջկան այդ խօսքերուն մէջ տեսակ մը մաղձ, տեսակ մը ներքին ժգոհութիւն կար կուռ եկած, որը ամէն հեղ դուրս ցատկել կ'ուզէր և որը ամէն հեղ կը սանձըւէր։

—Է՛, այսօր մեզի բան մը պիտի չերգէք. գիմեց Տիրան օրիորդին՝ սենեակի սեմէն ներս մտնելով։

—Ա՛խ, ոչ. թողէք, խնդրեմ. հետաքրքիր խօսակցութեան վրայ ենք։

—Գիտեմ, գիտեմ. բայց Արշակին որ թողնենք մինչև առաւ. զասախօսութիւն կը կարդայ ձեզի նոր երիտասարդութեան անհրաժեշտ եղող բնագիտական զարգացման, ընկերաբանական կրթութեան, հասարակական գործունէութեան վրայ. ախ, դեռ առիթներ շատ կ'ունենաք այդ բոլորը լսելու։ Իսկ առայժմ եկէք գեղարուեստի ոգևորութիւնը հոսեցընենք այդ պնդ խորհրդածութիւններու չոր երակներուն մէջ։

Խնդաց Տիրան. վերջին նախադասութեան ամէն մէկ բառին ինքզինքը ծաղրող շեշտ մը տալով։

—Դէ՛, այս ճարտասանութեան ալ չէ կարելի դիմադրել. պէտք է, որ բան մը երգէք, օրիորդ. կցեց Արշակ։

Տիկիններն ալ խնդրեցին։ Աղջիկը դեռ կը վարանէր։

—Դէ՛, եկէք, օրիորդ. ես ալ ջութակովս ձեզի կ'ընկերակցիմ. կրկնեց Տիրան անուշ, խնդող ձայնով մը. աչքերը աչքերուն։

—Այդ, ի հարկէ, ինքնին հասկընալի է. հծծեց Վերժին ոտքի ելնելով։

Ջութակի քանի մը նախնական յարդարումներէ ու երգի ընտրութեան վրայ փոքրիկ վէճէ մը ետքը՝ սկսան։

Տիրան գործիքը փոքրիկ մօրուքին տակը սեղմած՝ ոգևորութեամբ կը նուագէր. մազերը եկեր թափուեր էին ճակտին. ուշադիր

կը հեռուէր աղջկայ երգին. ու իր խանդակաթ աչքերը անոր շըրթունքներէն չէր բաժներ։

Վերժին քայլ մը հեռու, սենեակին մէջտեղը կեցած, թեք, աջ ոտքը քիչ մը առաջ, ձեռքերը ետին կապած՝ կ'երգէր, կայծկըլտող աչքերը անհանդարտ ներկայ եղողներուն վրայ յածելով։

Արշակ գլուխը յենած ձեռքին՝ կը նայէր անոր։

«Նելլացի աղջիկ է». կը դառնար գլխուն մէջ։

Ի՛նչպէս ալ սիրուն կ'երգէր։

Եւ ամէն անգամ աղջկան գրաւիչ ձայնին ալիքներուն մէջէն նուրբ ախորժ մը կըզգար ոգան, երբ անոր վառ նայուածքը իր դէմքին վրայէն կը սահէր։

Բ

Արշակ ու Տիրան հին ընկերներ էին. դպրոցի ընկերներ։

Իրարու հանդիպեցան Ղալաթիա Կեդրոնական վարժարանը։

Գրեթէ նոյն տարիքի պատանիներ, նոյն դասարանէն, երկուքն ալ տաք բնաւորութեան տէր, բան մը դառնալու, գործ մը տեսնելու տենչովը բռընկած՝ շուտով յարեցան իրարու, և մտերմացան։

Այդ մտերմութիւնը քանի մը տարեան մէջ սկսաւ աւելի ամիլ դասարանէ դասարան՝ չնայելով իրենց անվերջ վէճերուն ու կռիւներուն։ Արշակ աւելի ձեռներէց ու գործունեայ շարունակ կը ծաղրէր Տիրանի երազկոտ անփութութիւնը. Տիրան ընդհակառակը աւելի խոր զգացող ու նուրբ մտածող միշտ կը մեղադրէր ընկերոջը կտրուկ վարմունքը, անոր հպարտ ինքնավստահութիւնը։

Հազիւ էր երկուքին ալ ընչացքը վերի շրթունքին վրայ բըծաւորուելու սկսեր, որ իրարմէ բաժնըւեցան։

Արշակի մօրեղբայրը Վիէննա կ'ապրէր գործով։ Տղան վարժարանի բարձր դասարանները աւարտելու չհամբերեց, կերպ մը մօրեղբայրը համոզելու յաջողեցաւ, ու գնաց անոր քովը։ Հոն տարեան մը չափ պատրաստուելէն ու լեզուին վարժըւելէ վերջը անցաւ ուղղակի համալսարան, առանց ականջ դնելու իր ազգականի յորդորներուն, որը ոգան իր առևտրական գործերուն մէջ առնել կ'ուզէր։

Համալսարանը նախ ինքզինքը տըւաւ բնական գիտութիւն-

ներուն. բայց իրենէ աւելի գործօն դիրք մը բռնելու հակած՝ սկսաւ մտածել այնպէս աշխատանքի մը ձեռք զարնէ, որ անմի՛ջապէս մերշրջանին մէջ արդիւնք մը յառաջացընելու յաջողի, անմի՛ջապէս իր հասարակութեան վրայ ազդել կարողանայ։

Երկու անգամ ամառը եկաւ տուն իր մայրն ու քոյրը տեսնելու. և աւելի ճիշտ, աւելի մօտէն ծանօթացաւ Պօլսի կեանքին, ու աւելի ալ բորբոքեցաւ անպատճառ հասարակական դեր մը խաղալու ձգտումովը։

Համալսարանի երրորդ տարին բնական գիտութիւններէն կամաց-կամաց անցաւ ընկերական ուսումներուն. և բնական գիտութիւններու հիմքին վրայ դրուած՝ մարդկային կազմակերպութեան ու գործունէութեան այդ ուսումնասիրութիւնը բոլորովին ոգևորեր էր անոր ուղեղը։

Հիմա ալ Նորէն իր մօրը պահանջին համեմատ եկած էր Պոլիս արձակուրդի այդ երկու ամիսներուն, հոկտեմբերին կրկին վերադառնալու համար։ Դեռ երեք կիսամեակի չափ գործ ունէր, ուրկէ վերջը դառնալու էր «վերջապէս գործի սկսելու», ինչպէս ինքը կ'ըսէր։

Իսկ Տիրան մնաց Պոլիս իր վարժարանը։

Ու քանի վերին դասարանները բարձրանալ սկսաւ, այնքան աւելի սէր տրւաւ գրականութեան։ Եւրոպական գրէթէ բոլոր յայտնի գրական երկերը կարդացած էր արդէն, մանաւանդ Ֆրանսականը, իրենց քննադատութիւններով։

Միւս կողմէն ալ սկսաւ գրելու. փորձերը յաջողեցան։ Ընկերներու դրդմամբ դեռ դպրոցին մէջ քանի մը կտոր տպելու տրւաւ. մամուլի մէջ գովեստի ակնարկներ եղան. և այդ օրէն դարձաւ ինքն ալ գրագէտ։

Քսան տարեկան երիտասարդ մը աւարտեց դպրոցը. և ընկերոջ վիճակէն աւելի դրդրւած, որուն հետ շարունակ յարաբերութեան մէջ էր, վճռեց ինքն ալ երթայ Եւրոպա գոնէ երեք տարի մը բարձրագոյն գրական դասախօսութիւններուն հետևելու։

Սակայն հայրը այդչափ ոսկի հասցընելու անկարող էր. մանաւանդ մասնաւորապէս հակած ալ չէր իր զաւկի «տղայութիւններուն»։ Տիրան դիմեց մէկ-երկու ծանօթ և իրենց քիչ մը ազգական եղող հարուստներու. ապարդիւն։

«Զաւակս, կ'ըսէր հայրը, վաղ անցիր այդ քու նորէն դպրոց մերթալու ցանկութենէդ. ինչքան սորուեցար հերիք է. ինչ պէտք կայ ասոր-անոր բերան ծռելու. և վերջապէս սորուել ուզածդ ալ ինչ է. ինչի՞ է պէտք այդ գրականութիւն ըսածդ, որու պոչին փակեր ես։ Գիտեմ, բանաստեղծ ես. ամենքը կը գովեն. սակայն այդ բոլորէն ստակ կ'ելնէ՞. քու դրած թուղթերդ քեզի հաց չեն տար. պէտք է ձեռքդ մարդավարի գործ մը ունենաս, որ ստակ շահիս. հիմա առանց ստակի ոչինչ է մարդս։ Հօրդ խօսքերուն ականջ դիր, տղաս. եթէ այդ խենթ ու պարապ բաներուն եռևէն դեռ իյնաս՝ ապագային ուրիշներու երեսին կարօտ կը մնաս»։

Տիրան ի հարկէ ուսերը միայն կը ցնցէր։

Ուրիշ կողմէ յոյսը կորած՝ վճռեց ինքն իր աշխատանքովը նպատակին հասնի։ Որոշեց երեք տարուան չափ լեզուի ու գրականութեան դասեր տայ ու ստակ խնայէ։ Վստահ էր, որ պակասը հայրը կերպ մը կը գտնէր։

Այդպէս ալ ըրաւ։ Այս երկրորդ տարին էր, որ Պոլսի քանի մը դպրոցներու վերին դասարաններուն գրականութեան ու աշխարհաբարի դասերը կ'աւանդէր. ունէր նոյնպէս մէկ-երկու մասնաւոր դասեր. և յոյս ունէր յաջորդ աշնան Պարիզ լինելու։

Միևնոյն ատեն Պոլսի գրական հրապարակին վրայ որոշ դիրք մը գրաւած էր արդէն։ Անընդհատ կը շարունակէր իր փոքրիկ պատկերները, ոտանաւորներն ու վէպիկները, որոնք ընդհանրապէս ախորժով կը կարդացուէին։

Վերջերը Տիրանի ծնողքը անցած էին բուն Պոլսի կողմը բնակելու, և այս վերջին ըսնան եկած էին Մաքր-գիւղ, ուր էր և Արշակենց տունը դեռ տղու մանկութենէն։

Եւ հոն էր, որ երկու ամբուան չափ առաջ Տիրան ընտանիքի մը մէջ հանդիպած էր Պզտիկեաններուն։ Ու առաջին վայրկեանէն Վերժինը իր վրայ մասնաւոր տպաւորութիւն մը ըրեր էր. տղան զգացած էր իսկոյն, որ այդ աղջիկը իր շրջապատողներէն տարբերութիւն մը ունէր։

Վերժինի ու Տիրանի ծնողները սկսան իրարու հետ յարաբերութեան մտնել. հեռաւոր ազգականութիւն մը կար մէջերնին. քանի մը անդամ իրարու այցելած էին արդէն. իսկ Տիրան առան-

ձին աւելի յաճախ կ'երթար անոնց, մանաւանդ վերջին տաեններրը։

Վերժին արդէն առաջուց լսած էր Տիրանի մասին. ու երիտասարդին մեծ հետաքրքրութեամբ ու համակրանքով կը վերաբերուէր։ Եւ ուշադրութեամբ կը հետեւէր ինչպէս բոլոր մեր նոր գրականութեան, այնպէս և մասնաւորապէս Տիրանի գրածներուն։

Տղան չափազանց կը շողոքորթէր աղջկան այդ անկեղծ հետաքրքրութիւնը դէպի ինքը և դէպի իր մտքին արտայրութիւնները։ Մանաւանդ այդ բոլորին վրայ Վերժին սիրուն ալ էր. այն տեսակ մը պիքանտ սիրունութիւններէն, որոնք կարծես հրամանմը են համակրելու, և այդ հրամանին անկարելի է չհնազանդիլ։

Տիրան սկիզբները աղջկան հետ տեսակցելէն եթէ մեծ հաճոյք կը զգար՝ այն պարզ պատճառով էր, որ խօսքը միշտ գրեթէ իր շուրջը կը դառնար. քիչ մը վերջը սկսաւ աղջկայ մտերմութենէն ալ ուղղակի նոյն հաճոյքը զգալ։ Ու քիչ-քիչ նկատեց, որ կարծես գրաւիլ էր սկսած։

Սէր էր այդ։

Իր կոյս հոգին դեռ շատ կանուխէն՝ պատանեկական հասակէն դեռ շատ առաջ՝ սկսած էր սիրոյ ծարաւը զգալ։ Եւ սիրած էր քանի մը անգամ տղու, պատանիի այն վերացական տարօրինակ սէրերովը։ Բայց հիմա երբ ետ կը նայէր, չէր կրնար չժպտել իր այդ միամիտ զգացումի անմեղ խաղերուն վրայ. անվերջ «անոր» պատուհանին առջևէն անցուդարձ, մէջէմէջ նետուած փոքրիկ ժպիտ մը կարմրութեան և յուզման ահագին տագնապներուն մէջէն. մօտէն անցնելու, գէթ զգեստին շփուելու յափշտակութիւններ։ Վերջերը միայն կարծես աւելի լուրջ զգացում մը ունեցած էր. և այդ իր աշակերտուհիներէն մէկն էր, որոնց դպրոցը նորագոյն գրականութեան դասերը կ'աւանդէր. ընդունակ աղջիկ մըն էր ան, աղքատ, խոշոր-սև աչքերով, ու Տիրանի դասերէն անհուն ոգևորուած. իսկ դասերէն աւելի Տիրանով ոգևորուած։ Տղան այդ կը տեսնէր, կը տեսնէր նաև իր կրծքին տակ բարձրացած խլրտումը։ Սակայն աղջիկը յանկարծ ելած էր դըպրոցէն, և այդպէսով ձախորդ վէպը մէկ անգամէն պատռուած։

«Ա՛, որքան տղայամիտ եմ դեռ». կը կրկնէր ինքնին։

Եւ երբ հիմա ալ նշմարեց, որ Վերժինը սկսած էր գրաւել

իր սրտին մէջ բաց մնացած զգացումները, որոնք յափշտակուած լինելու պահանջովը կ'եռային, Տիրան ակամայ հարց կուտար իրեն.

«Արդեօք աս ալ նախորդներէն չէ. հովի անուշ շունչ մը գարնան տապ օրին. կը շոյէ ճակատդ ու կ'անցնի»։

Ու իր տարակոյսները, յոյսերը, իր ինքնիրմէն ամաչելը, սրտին խարխարումը, տենչանքը, Վերժինի հոգին այնպէս, ինչպէս ինքը կը հասկընար, այդ բոլորը արդէն երգած էր իր ոտանաւորներուն մէջ։

Եւ Վերժին այդ բանաստեղծութիւններէն մէկ-երկուքը կարդացած էր, նոյն իսկ հեղինակի ներկայութեանը՝ առանց երևակայելու, որ ինքն է այդ բառերուն տակ ծածկուած էակը։

Տիրան կը նայէր հնչիւն շեշտերով կարդացող Վերժինին, ու ժպիտի մը մէջ իր կարմրիլը խեղդել կ'ուզէր։

Բայց հպարտ ու խիստ զգայուն՝ դեռ ոչ մէկ ակնարկութիւն չէր ըրած աղջկան։ Մանաւանդ աղջիկն ալ իր կողմէն իր բոլոր մտերմութեան հետ ինքզինքը միշտ պարզ ու անտարբեր կը պահէր։

«Ան ալ ճիշտ ինծի պէս է. ամբչկոտ ու հպարտ». կը մտածէր Տիրան ետը շոյող բացատրութեամբ մը։ Ու լուռ կը սպասէր, թէ այս բոլորը շուտով ինչ ձև պիտի ստանար։ Եւ յաճախ մթընշաղի վայրկեաններուն կ'երթար դաշտերը առանձին թափառելու, յափշտակուած ու վառ դոյներով իրեն պատկերացընելով այն ամէնը։ որ վերջ ի վերջոյ իրենց մէջ պայթելու էր։

Ահա այդ միջոցին էր, որ մօտ շաբաթ մը առաջ, առանց նախապէս ոչինչ գրելու, ամրան զբաղարթ առաւօտ մը ներս վազեց Արշակ յանկարծ իր սենեակը ու կարօտի համբոյրներով գիրկը նետուեցաւ։

Գ

Իրիկուն էր։

Մաքր-գիւղի կայարանին առջև բաւական բազմութիւն կար։ Ոմանք անհամբեր շարունակ դնացքի գալու ուղղութեանը կը նայէին. միւսները կ'երթևեկէին զբօսնողի անտարբերութեամբ։

Աղմկող խմբերէն քանի մը քայլ անդին, փլաթֆորմի ճիշտ եզերքին անփոյթ դիրքով մը կանգնած էր Վերժին առանձին, և

ծոյլ շարժումով մը գետինը փուած աւազը կը խառնէր հովանոցին ծայրովը։

Ցարդէ գլխարկին լայն եզերքը արևի հետզհետէ տժգունող ճառագայթներէն կը հովանաւորէր անոր դէմքը։ Եւ քրէմ բարակ շրջազգեստին վրայէն մութ-կապտագոյն թեթև ժաքէտ մը անոր մէջքն ու կուրծքը սեղմ կը գրկէր՝ զովացող օդի իրիկուան քմահաճոյքներէն պատսպարելով։

Գնացքին սոյլը յանկարծ լսեցաւ, որ օդին հանդարտութիւնը սուր զարկով մը ծակեց։

Ու քիչ մը հեռուն ձիգ փուեցաւ ձերմակ մուխին մէջէմէջ օդակուող ոլորումը, կծիկէն քակուած թելի կտորի մը պէս։

Վերժին բնազդօրէն քայլ մը ետ գնաց։

Կառախումբը յաղթական մօտեցաւ, ու թափով կեցաւ։

Աղջիկը որոնող հայեացքով ուշադիր՝ վագոններէն դուրս թափուող բազմութիւնը կը դիտէր, երբ եռուէն իր անունը լսեց.

—Բարև՛ ձեզի, օրիորդ Պզտիկեան։

—Օ՛, բարև՛ ձեզի, պարո՛ն։

Եւ Արշակ դարձաւ իր միւս կողմը կեցած աղջկան.

—Մաննիկ, օրիորդի հետ ծանօթ չես կարծեմ։

—Պաշտօնապէս, ոչ. եղաւ պատասխանը։

Տղան իր քոյրն ու Վերժինը իրարու ներկայացուց։

—Արդէն շատուանց կը դանկայի ձեզի ծանօթանամ. ըսաւ Վերժին նոր բարեկամուհիին ձեռքը սեղմելով։

—Մթթէ. բայց ինչով եմ արժանացեր ձեր այդ ուշադրութեան։

—Ձեր ընտանիքի մասին մեր ծանօթներու շրջանին մէջ շատ է խօսք դարձած. մասնաւորապէս ձեր մասին. և պարզ խօսելով Տիկին ու Օրիորդ քննադատներու կարծիքը այնքան ալ նպաստաւոր չէ ձեր վերաբերմամբ։

—Մթթէ...

—Անտարակոյս. և խոստովանեցէք, որ իրաւունք ալ ունին. ինչպէս չմեղադրել աղջիկ մը, որ շարունակ մինչև Ղալաթիա կ'անցնի իր մասնաւոր դասերը առնելու. որ իր պարտաճանաչ հիւրերու կանոնաւոր այցելութիւնները ջերմեռանդութեամբ չի վերա-

լարձքներ. որ նոյն իսկ հիւրերը զբաղեցընել անդամ չգիտէ, օրինակի համար բամբասանքով. վերջապէս աղջիկ մը, որ այս և ասոնց նման անհերքելի մեղադրանքներու տակ ճնշուած է...

Ժպտեցաւ, ու ձեռքը կրկին անոր մեկնելով կցեց լրջօրէն.

—Մենք լաւ բարեկամուհիներ կը լինինք, չէ։

Եւ յանկարծ մոռցուած բան յիշողի ընդոստ շարժումով դարձաւ դէպի վագոնները.

—Երևի մարդու կը սպասէք. հարցուց Արշակ։

—Այո. եղբօրս. պատասխանեց աղջիկը առանց գլուխը շրջելու։ Եղբայրս իրիկունները սովորաբար այս գնացքով կու դայ. եկեր էի քիչ մը օդ առնելու. ըսի միասին կը վերադառնանք ու կայարան հանդիպեցայ։

Երեքն ալ պահ մը սպասեցին. մինչև աղջիկը համոզուեցաւ, որ վագոններէն այլ ևս իջնող չի կայ։

—Ինչպէս կ'երևի այսօր ուշացեր է. ըսաւ վերջապէս հազիւ լսելի ձայնով։

—Եթէ կը թոյլատրէք այս իրիկուն ալ մենք ձեզի կ'ընկերակցինք մինչև տուն. վրայ բերաւ Արշակ։

—Ա՛, ուրախութեամբ։

Եւ տղան երկուքին մէջը մտած՝ կայարանէն ելան։

Մաննիկ տասնըվեցի մօտիկ աղջիկ մըն էր։ Մէկ հայեացքը հերիք էր անոր դէմքին վրայ եղբօրը արծուի քիթին ու խոհուն աչքերը ճանչնալու համար։

Երաժշտութեամբ ոգևորուած, ու վարպետի ընդունակութիւններով՝ ամբողջովին նըւիրուած էր իր դաշնակի դասերուն, որուն կ'առաջնորդէր յայտնի իտալացի երաժիշտ մը։ Եւ քոյր ու եղբայր արդէն շատոնց ծրագրած էին, որ Արշակի Եւրոպայէն դարձին՝ անվիջապէս աղջիկը պիտի մեկնէր Միլան, իր ուսուցչին հայրենիքը։ Միւս կողմէն Արշակ թէ նամակներով, թէ անձամբ շարունակ կ'աշխատէր միջոց տալու քրոջը իր մտաւոր զարգացումը աւելի հիմնելու և ընդլայնելու։

—Ըստ երևոյթին նորէն դասէ կու գաք. նկատեց Վերժին պահ մը լռելէ վերջը՝ աչքով Մաննիկի անուրթին տակի նոտերու փաթոյթը ցոյց տալով։

—Ի հարկէ. ժպտեցաւ Մաննիկ։ Ես ուսուցչիս մօտէն. եղբայրս խմբագրատունէն. Ղալաթիա իրարու հանդիպեցանք։

—Հա՛, իրա՛ւ, պարո՛ն, ծածկեցէք դուք, ծածկեցէք. բայց ես ձեր գաղտնիքը բացած եմ արդէն։

—Ի՞նչ գաղտնիք. հարցուց տղան զարմացած և անորոշ անհանգստութիւն մը զգալով։

—Պարոն Տիրանը երէկ գիշեր մեզի էր. և ամէն բան պատմեց արդէն։ Ես հիմա գիտեմ. թէ ով է «Սլաք» ծածկանունին տակ թաքնուած յօդուածներուն հեղինակը։

—Ա՛, եթէ այդ է բոլորը, օրիորդ, շատ շահեկան բան մը չէ ձեր ըրած գիւտը։

—Այդ դուք չէք կրնար դատել։ Ձեր «Եւրոպական նամակներ»ը ես միշտ մեծ սիրով եմ կարդացած. ոչ, հաճոյախօսութիւն չէ ըրածս. այդ նամակներուն մէջ ինծի ամենէն աւելի գրաւողը անոնց պարզ, բաց ու անկեղծ տոնն է։ Բացի այդ իբրև կին մասնաւորապէս շնորհակալութիւն պիտի յայտնեմ ձեր մէ՛կ յօդուածի համար. «Կանանց դերը ժողովրդի կրթութեան գործին մէջ». կարծեմ այսպէս էր վերնագիրը։

—Կարծեմ. միայն դժուար թէ այս յարգանքին արժէ արդէն շատոնց մոռցած յօդուածս։ Կը յիշեմ. անցած ձմեռ էր. այն միջոցին այդ հարցով ես շատ էի ոգևորուած, ու նստեցայ գրեցի։ «Բայց, է՛, ի՞նչ օգուտ». կը մտածեմ հիմա. հիմա մեզի լուրջ, սիստեմատիկ ու դրական գործ պէտք է, ոչ թէ ցան-ցիր ու ոգևորուած յօդուածներ, որոնք կեանքի մէջ ոչինչ հետք չեն թողուր։

—Այդ ճիշտ չէ. նկատեց քոյրը կտրուկ։

—Այնպէս չէ՞, օրիորդ. վրայ նետուեցաւ Վերժին ու աւելցուց. պէտք չէ նաև մոռնաք, որ մեր կանացի այս անշարժ միջավայրին մէջ կնոջ դիրքով ոգևորուած և անոր պարտքը եղող գործունէութիւնը նկարագրող գրուածք մը արդէն ինքնին օգուտ մըն է, իդէալի անուշ ձայն մը, հրապուրիչ վէպ մը։

Տղան զարմացած աղջկան նայեցաւ։

—Թէև, ի հարկէ, շարունակեց Վերժին, կնոջ գործունէութեան մասին ձեր ունեցած գաղափարները մեզի համար դեռ շատ հեռա-

ւոր բաներ են. մեր կիներէն ձեր ըրած այդ պահանջները մինչև անգամ տարօրինակ են։

—Ինչու համար. հարցուց տղան այնպիսի շեշտով մը, ուր դիմացինի կարծիքը իմանալու վառ հետաքրքրութիւնը ինքըզինքը կը մատնէր։

Սակայն Վերժին տաքցած էր ու անկարող այդ նշմարելու. ժպտելով դարձաւ Մանոլիին.

—Հա՛, օրիորդ, ինչպէս կ'երևի ձեր եղբայրը մեր կանացի հասարակութեան դեռ չէք ծանօթացուցեր։ Եթէ ոչ, պարո՛ն, դուք շատ լաւ պիտի գիտնայիք, որ հոս մե՛նք, աղջիկներս, ո՛չ ձգտումներ ունինք, ո՛չ նպատակ, ո՛չ ալ որ և է հասարակական խնդիր մեզ լրջօրէն կը հետաքրքրէ. ի հարկէ, երբեմն կը խօսինք ընկերական կամ գրական այս ու այն հարցին վրայ, ինչպէս օրինակ այս վայրկեանիս, բայց միայն բերանխոսի համար։ Մենք մեր սեփական գաղափարներն անգամ չունինք. կը կրկնենք ինչ որ հասարակութիւնը մեզմէ կը պահանջէ, այսինքն ինչ որ սուտ մեծամտութիւնը կ'ըսէ. եթէ կարծիքները բաժնուած է՝ կը լռենք։ Գալով գործունէութեան, հասարակական դիրքի, աշխատանքի, ա՛, այդ մասին խօսելն անգամ ծիծաղելի է։ Դէ՛, այս ամէնը չափազանց կը համապատասխանեն, չէ՞, պարո՛ն, ձեր երևակայած պահանջներուն։

Արշակ, որ հետզհետէ քալուածքը ծանրացուցեր էր, վերջապէս բոլորովին կանգ առաւ փողոցին մէջտեղը՝ լարուած դէմքը Վերժինին դարձուցած։

—Ըսածներս ձեզի զարմանք պատճառեցին ըստ երևոյթին. նկատեց Վերժին ու ժպտեցաւ։

—Այո՛, բայց բոլորովին տարբեր կողմէ. եղաւ տղուն պատասխանը։

Ու երեքը միասին նորէն առաջ շարժուեցան։

Արշակ ակընթարթ մը վարանելէ վերջը աւելցուց.

—Այդ բոլորը դժբաղդաբար ինծի ալ շատ լաւ յայտնի է. և ճիշտ ատոր համար ալ քիչ մը առաջ այդ տեսակ յօդուածները անպէտք են ըսի։ Սակայն այս վայրկեանին ինծի հետաքրքրողը ուրիշ խնդիր է։ Ներեցէք ինծի, օրիորդ, բայց գիտէք, որ այդ կերպ խո-

սող անհատէ մը մարդ ակամայ պահանջկոտ կը դառնայ, և ակամայ հարց մը կուգայ լեզուիս ծայրը...

Եւ չգիտէր ինչպէս վերջացընէ քաղաքավարութեան սահմաններէն դուրս չդալու համար։

—Թէ ինչու ես ինքս ալ նոյն հոսանքով կ'երթամ. չէ, այս ըսել կ'ուզէք։

—Մօտաւորապէս։

Աղջիկը թեթև հեգնութեամբ քովընտի ակնարկ մը նետեց տղու դէմքին ու անտարբեր շեշտով մը պատասխանեց.

—Պահանջել դիւրին խնդիր է. ինչ կայ, ի հարկէ, կրնաք պահանջել. տղայ, ազնտ մեծցած, անկախ...

Եւ յանկարծ տոնը փոխելով վրայ տըւաւ տաքցած, գրէթէ զայրացած.

—Բայց թողնենք հասարակութեան ճնշումը, աւանդութիւնները, նախապաշարումները, որոնք կնոջ գործունէութեան առջև արդելք կը դնեն. ասոնք բոլորը մէկդի։ Բայց ըսէք խնդրեմ, ինչ կրնայ ընել աղջիկ մը մէկ կողմ ինկած, միայնակ, իր թեթև կրթութեամբ, առանց գիտնալու թէ ինչ բանի կարող է պէտք գալ և թէ ինչ կերպով. շատ ալ մտածէ բան մը ընել. միայն մտածելէն ինչ կելնէ. ընել, կարողանալ պէտք է. և մանաւանդ ընելիքը գիտնալ։

Արշակ հասկըցաւ, որ աղջկան զգայուն տեղին էր դիպած։

—Մեր միջավայրը, մեր կրթութիւնը, մեր ամբողջ կեանքը մեզի աղջիկներուս ոչինչ տըւած չէ, որ հասարակական գործունէութեան համար պէտքի դայ, ոչ դրդում, ոչ միջոց, ոչ պատրաստութիւն. մեզի ոչինչ տըւած չէք, մեզմէ ոչինչ պահանջելու ալ իրաւունք չունիք։

Վերջացուց աղջիկը՝ մայթին վրայ ինկած քարի կտոր մը հովանոցին ծայրովը ամուր մը փողոցին մէջտեղը նետելով։

—Ես ձեզի մեղայ.

Պատասխանեց Արշակ ձայնով մը. որուն կէսը եթէ կատակ էր, միւս կէսին մէջ զարմանքի ու խմնարհուելու շեշտը կար։

«Մեր սին ու անտարբեր ընտանեկան կեանքի մէջ այս դժգոհութեան ու բողոքի ծաղիկը ուրկէ է բուսեր». կը մտածէր միևնոյն ժամանակ։

Պահ մը քալեցին առանց խօսելու, մինչև Մաննիկ այդ կապը խզեց՝ յայտնելով որ լսած էր Վ.երժինի սիրուն ձայն ունենալու մասին. և խօսքը դարձաւ երաժշտութեան։

Փիչ մը վերջը հասած էին Պզտիկեաններու տան առջևը։

Բոլորն ալ կանգ առին։

—Է՛, քանի մը վայրկեան վեր հրամմեցէք. մայրս շատ կ'ուրախանայ. ըսաւ Վ.երժին զանգը քաշելով։

—Ա՛խ, ոչ. արդէն ուշ է. շնորհակալ ենք. առարկեց Մաննիկ։

—Ուրիշ անգամ մը. կցեց Արշակ։

—Աղէկ. այն ատեն խոստացէք, որ այս քանի մը օրը անպատճառ մեզի այցելէք։ Հա, օրիորդ Մաննիկ, եկէք խնդրեմ. ձեւականութիւններու չնայինք։ Եղբայրս ալ շատ գոհ կը լինի. ան արդէն ձեր վրայ հիացած է. աւարտեց Արշակի դէմքին ժպտելով։

—Հիացած։

—Ուրեմն այս երկու օրը, այո. պնդեց աղջիկը։

—Կու գանք, օրիորդ. խոստացաւ Արշակ ձեռքը անոր մեկնելով։

Հրաժեշտ առին. աղջիկը բացուած դուռնէն ներս ցատկեց, անգամ մը ալ գլխով ըրաւ. և դուռը գոցուեցաւ։

—Է՛, Մաննիկ, ի՞նչ կ'ըսես նոր բարեկամուհիդ. հարցուց Արշակ ճանապարհին քրոջը թեւը մտնելով։

—Զափազանց համակրելի ու խելացի աղջիկ է. պատասխանեց քոյրը. ես արդէն առաջուընէ գիտէի։

—Հա, դուն որ ամէն բան գիտես. ծիծաղեցաւ Արշակ։

—Հապա. գիտեմ նաև, որ քու վերջին յօդուածը մեծապատիւներդ շատ է կատղեցուցեր. մանաւանդ այդ սուակ ուտելու խնդիրը։

—Ո՞ւրկէ իմացար։

—Արաքսին ըսաւ. կը յիշե՞ս. ան, որ տաղտուկ կատի կը նմանի։ կ'ըսէիր։ Անցած իրիկուն անոնց տունն են եղեր բոլորը. այդ մասին խօսք է դարձեր. սաստիկ կատղեր են, թէ այդ հաշիւը ուրկէ քու ձեռքդ ինկեր է. իսկ քեզի համար, ի հարկէ, ալ ինչ ըսես ըսեր են։ Հապա ինչու կը պնդէի, որ նորէն կեղծ անունով գրես։

—Թող երթան վրաս խօսին, որքա՞ն հոգ։

—Դեռ լսէ. ներկայ եղողներէն մէկին ալ ելեր է, թէ բոլոր

յանցանքը մայրիկինն է, որ հերիք չէ տղան Եւրոպայի քաղաքներն է նետեր, հիմա ալ աղջիկը փողոցներն է ձգեր։

Արշակի դէմքը փոխուեց. ու կանգ առաւ.

—Դեռ լսէ. կրկնեց քոյրը հեգնոտ հանգստութեամբ մը. ազնըւաշուք տիկին մըն ալ բարեհաճեր է բացատրելու, որ իբրև թէ ես բեմ ելնելու կը պատրաստուիմ եղեր։

—Իրենց ինչ. բացականչեց տղան կատղած։

—Ես ինչ գիտնամ. երանի չէր տաղանդ ունենայի ու աշխարհահռչակ երգչուհի մը դառնայի։

Տղան ոչինչ չպատասխանեց. մթնած դէմքով կը մտածէր։

Քոյրը նկատեց.

—Քիթդ մի՛ կախեր. եթէ քու հոգդ չէ, կարծես իմ շատ հոգս է. բացականչեց արհամարոտ ձայնով մը, ու թեթեւ մը թեւին տակ եղբօրը ձեռքը սեղմեց։ Եւ վերջապէս մի՛ մոռնար, որ ամէն բան իր հակառակ կողմն ալ ունի։ Անցած օր Սիրքէճի կայարանէն ներս պիտի մտնէի՝ դուռն մէջ ութը-ինը երիտասարդ տղաք էին կեցեր. ես դեռ բոլորովին չէի մօտեցեր, որ մէջերնին փսփսուք մը ինկաւ. «քոյրն է» հասաւ ականջիս. և տեսնելու էիր ինչ յարգանքով երկու կողմ ճամբայ բացին, ինչպէս ինծի կը դիտէին. հազիւ ինքզինքս կայասրահը նետեցի։

Եւ այս բոլորը այնպէս միամիտ հպարտութեամբ մը պատմուած էր, որ Արշակ չկրցաւ չժպտիլ։

—Մի թէ՞. ծիծաղեցաւ։

Մայրիկը տան դուռն էր. կ'ըսպասէր։

—Ինչո՞ւ այսչափ ուշացաք. վախցայ որ նորէն վերջին գնացքին կը մնաք, և ձեր հանդիպեցաք իրարու. հարցուց մայրը իրեն մօտեցող ժպտուն զոյգին վրայ հպարտ ու երջանիկ հայեացք մը նետելով։

Հազիւ էին ներս մտեր, որ Մաննիկ մօրը վիզը ցատկեց.

—Մայրիկ, տեսնելու էիր նորէն ինչպէս ոգևորուած էր այսօր իտալացիս. ինչպէս գովելը չի դիտեր։ Հապա երէկ գիշեր որ չնըւագէի. «հերիք է, հերիք է» կ'ըսէիր։

—Է՛, ալ այդչափն ալ չեմ ուզեր. առարկեց մայրը։ Մէկ ալ անոր գովեստին շատ ականջ մի՛ դներ. իր աշակերտն ես ի հարկէ

պիտի գովէ. աւելցուց անտարբեր ձայնով մը, թէև ինքը աղջիկէն աւելի կարևորութիւն կուտար ուսուցչի խօսքերուն. և աղջիկէն աւելի ուրախ էր այդ վայրկեանին։

Արշակ փուեցաւ սեղանին քովը աթոռի մը վրայ ու ծոցէն լրագիրը հանեց.

—Մայր, փորս անօթի է. նկատելով հարևանցի։

—Հիմա, տղաս. մանչը տեղ ղրկեցի. գայ ու սեղան նստինք. պատասխանեց մայրը հոգածու, ու դուրս ելաւ իր պատրաստութիւնները տեսնելու։

Իսկ Մաննիկ քանի մը նոտեր մռընչալով՝ քաշեց գլխարկին ասեղը ու անցուց նորէն գլխէն հանած գլխարկին, ու վրայի հովէն խառնըւած փետուրները յարդարելով՝ վերի յարկը բարձրացաւ։

Քանի մը վայրկեան վերջը վերէն լսեցաւ դաշնամուրին վրայ նոյն նոտերու միատեսակ կրկնութիւնը։

Թանձրացող մութին մէջ նըւագարանին դէմը նստած ձեռքի վարժութիւններ կ'ընէր։

Դ

Արշակ իր խոստման համեմատ երեք-չորս օր վերջը այցելեց բժիշկենց։

Ու տեսակ մը ներքին անհանգստութեամբ էր, որ քաշեց անոնց տան զանգակը։

Ընտանիքը նոր էր ելեր ընթրիքէն. և ընդարձակ պարտէզին դուռն առջևը նստած կը խօսակցէր։

Մայրն ու զաւակները ուրախութեամբ դէմ վազեցին հիւրին ու բերին պարտէզ։

Ծառերուն տակ փոքրիկ կլոր սեղան մը կար դրուած, որուն վրայի լուսամփոփով ծածկըւած լամպէն ճառագայթի փունջեր կը սպրդէին շրջակայ թուփերուն թաւուտին մէջ՝ լոյսի ու ստուերներու շարժուն գրկախառնում մը յօրինելով։

Սեղանին վրայ դրուած էին պնակ մը նարինջ, մէկ-երկու գոնակ ու ըսուրկուած նարինջի կեղևներ. անոնց քովն ալ կիսահիւս ժանեակի կտոր մը, որուն թելին կծիկը գետին էր ինկեր, ու անգլիական կազմով փոքրիկ գիրք մը։

Հիւրը նստեցուցին սեղանին մօտ՝ բժիշկի ու քրոջը մէջ տեղը։

Տիկինը քաղաքավարութեան հարցերու շրջանը լրացուց։

—Օրիորդը ինչու չեկաւ. հարցուց Վերժին անրջոտ աչքերով տղու դէմքը զննելով։

–Այսօր քիչ մը յոգնած էր։ Իսկ ես եթէ այսօր ալ չի գայի՝ գալս անշուշտ նորէն քանի մը օր պիտի ուշանար, իսկ օրիորդի առջև անխոստանգպահ մնալ չէի դանկար։

Ու ժպտեցաւ՝ Վերժինին թեթև գլխու խոնարհութիւն մը ընելով։

Սկիզբը խօսակցութիւնը քիչ մը կաղ էր, բայց կամաց-կամաց ոտքի ելաւ։

Բնականաբար խօսքը նորէն եւրոպական կեանքին, համալսարանի և ուսանողական տարիներու շուրջը կը դառնար։

Բժիշկը սկսաւ իր յիշատակները քրքրել, որ երբեմն մեծ սիրով կ՚ընէր։ Արշակ ալ տաքցաւ։

Օրիորդը լուռ էր գրեթէ։ Նարինջները կը կեղևէր, կը հրամցընէր հիւրին ու եղբօրը. և ուշադիր կը հետևէր խօսակցութեան։

Մինչ տիկինը անդադար ներս կ՚երթար ու կու գար հազիւ երբեմն խօսակցութեան խառնըւելով։

Բժիշկի տաք-տաք բան մը պատմելու միջոցին էր, որ սպասուհին եկաւ յայտնեց, թէ հիւանդի կը կանչէին։

—Ահա այս ալ ձեզի իմ արհեստը. կցեց բժիշկը համառօտ կերպով իր պատմելիքը վերջացընելով։ Մարդու հանդիստ չեն տար ներեցէք, խնդրեմ, կաշխատիմ ըստ կարելւոյն շուտ վերադառնալու։

—Խնդրեմ, խնդրեմ։

—Ցամենայն դէպս մօտ օրերս իրիկուն մը ձեզի կու գանք. գէտէք, ես բժիշկ մարդ եմ ու վարժըւած եմ ամէն դուռ առջևս բաց տեսնելու։

Ի սրտէ ուրախ եմ։ Մեր տունն ու ես ամբողջովին ձեր տրամադրութեան տակն ենք. թէև ի հարկէ այնքան ալ խելացի բան չէ ինքզինքը բժիշկի մը տրամադրութեան տակ դնելը։

Բժիշկը խնդաց մեծաձայն. և հիւրը առժամանակեայ բարևելով՝ մօրը հետ մնաւ տուն։

Վերժինի դէմքէն ուրախ բան մը անցաւ։

—Իսկ դուք, օրիորդ, այսօր բնաւ չէք խօսիր. հարցուց Արշակ, երբ առանձին մնացին։

—Այո...

Զայնը երկընցուց աղջիկը ցրուած. և առանց կապի անմիջապէս աւելցուց.

—Գիտէք, պարոն Արշակ, այս չորս օր է անհամբեր ձեր գալուն կըսպասէի. եթէ նորէն ուշանայիք պարոն Տիրանի միջոցով խնդրէի պիտի, որ անպատճառ անգամ մը գայիք։

—Մի՞թէ. ըրաւ ոգան՝ ինչ ըսելիքը չդիտնալով։

—Այո. և չափազանց ուրախ եմ դիպուածէն, որ եղբայրս կանչեցին. ձեզի առանձին խօսելիք ունիմ։

—Խնդրեմ, օրիորդ. ինծի չափազանց կը հետաքրքրէ այդ։

—Կ'ուզէի նախ բան հարցընեմ. անցած իրիկուն դպրոցներու մասին երբ խօսք եղաւ, ի միջի այլոց յայտնեցիք, որ Լ. Թաղին դպրոցը ձեր ընկերները իրենց ձեռքն են առած, և թէ անոնց ուժեր կը պակսին, մանաւանդ գործին նըւիրուած ու քիչ-շատ շնորհով երկու վարժուհի կը փընտրեն։

—Է՞է. հարցուց ոգան այս յառաջաբանէն ոչինչ չհասկընալով։

—Արդ կ'ուզէի իմանամ, արդեօք ձեր ընկերները իրենց փընտրած վարժուհին գտան։

—Ձկարծեմ. այդ ապրանքը այնքան ալ շուտով գտնըւելիք բան չէ մեր հասարակութեան մէջ. սակայն ինչու՞ կը հարցընէք։

—Որովհետև ես ձեզի համար մէկը գտեր եմ։

—Իրաւ. չէ։

—Միայն առաջ ընեմ ըսեմ, որ իրմէն շատ խստապահանջ լինելու չէք. միջնակարգ կրթութիւն առած, անփորձ, դեռ այդ տեսակ գործերու մէջ ամենևին չեղած աղջիկ մըն է. բայց հետաքրքրասէր ու աշխատասէր. սրտանց ալ գործին նըւիրուիլ կ'ուզէ և կը խոստանայ բոլոր ճիգը թափել ձեր ընկերներուն պահանջը լրացընելու։

—Ձեր այդ հոգածութիւնը, օրիորդ, ինծի համար ճշմարիտ նոր անակընկալ մըն է. ընկերներս շատ պիտի ուրախանան։ Բայց ինչ է այդ աղջկան անունը. գուցէ ես ալ ճանչնամ։

—Ա՛, ճանչնալը ճանչնաք պիտի անշուշտ. այն պարզ պատճառով, որ մարդ անկարող է իր խօսակիցը չի ճանչնալու։

—Դուք... բացականչեց Արշակ աթոռէն վեր ցատկելով։

Վերժին կը ժպտէր՝ դողացող ժպիտով մը։

—Դուք... դուք կ'ուզէք ընկերներուս դպրոցը մտնէք իբրև...

—Իբրև վարժուհի. այո. ի հարկէ, եթէ բանի մը պէտք լինելուս հաւատան։

Արշակ ուրախութեան բուռն թափով մը նետուեցաւ դէպի աղջիկը, խլեց անոր երկու ձեռքերը, ու սկսաւ պինդ-պինդ սեղմել՝ աչքերը անոր դէմքին դամած։

—Դուք... դուք...

Աղջիկը ինքն ալ յուզուած շիկնեցաւ, ու աչքերը ձգեց գետին՝ կամաց մը ձեռքերը տղու ձեռքերէն ազատելով։

Տղան քայլ մը ետ գնաց։

—Սակայն ինչու այդչափ զարմացաք. հարցուց աղջիկը կամաց. մի՞թէ այդ աստիճան տարօրինակ է ըրած քայլս։

—Որովհետև... որովհետև ամենևին չէի սպասեր այդ քայլին, որովհետև այդպէս ինքնաբերաբար, որովհետև... այո, տարօրինակ է մեզ շրջապատող հասարակութեան մէջ։

—Մայրս. ընդհատեց յանկարծ Վերժին։ Անոր առջևը առայժմ ոչ մի խօսք. ընդհանրապէս, խնդրեմ, ոչ ոքի այդ առթիւ բան մի՛ ըսէք. դեռ չեղած բանի մասին խօսուիլը չեմ սիրեր։

Մայրը եկաւ նստեցաւ իր տեղը. աղջկան ըսաւ, որ հիւրին գինի լեցընէ. և սկսաւ տրտնջալ տղու. արհեստի դժուարութիւններէն, անյարմարութիւններէն։

Վերժին՝ գլուխը կրծքին՝ նարինջի կեղևի մը հետ կը խաղար ջղաձգօրէն։

Լամպի լոյսը ինկած էր անոր լանջին, վզին ու ծնօտին վրայ. և ճիշտ երկու շրթունքներու միացման գծին լուսամիտի եզերքի ստուերն էր։

Տղան տիկնոջ պատմութենէն ոչ մէկ բառ չէր լսեր։ Իսկ աչքերը անկարող էր հեռացընելու աղջկան ծնօտի գրաւիչ կորութենէն, և այդ լոյսն ու ստուերը իրարու կապող զոյգ մը կծկուած նուրբ շրթունքներէն։

Կը մտածէր. կ'ուզէր խօսի, ու տիկնոջ ներկայութենէն անտանելի կերպով կը ճնշուէր։

Վերժին ալ անհանդիստ էր. և չգիտէր ինչպէս մօրը այդ միակերպ ու անվերջ գանգատներուն վերջ տայ։

Երկուքին համար ալ հաճոյքի ահագին յորդում մը եղաւ, երբ տիկինը ձեռագործը վար դնելով, իր տղաներուն հետ միասին նորէն մնաւ տուն։

Արշակ իսկոյն վրայ ինկաւ.

—Եթէ ես չըսեմ, օրիորդ, արդէն ինքնին կը տեսնէք, թէ ձեր դիտաւորութիւնը ինծի որչափ ուրախութիւն կը պատճառէ։ Բայց նախ քան իմ ուրախութիւնը՝ կ'ուզէի, որ լաւ գիտնայիք ձեր ձեռնարկելիք գործի դէշ ու աղէկ կողմերը. գիտցած եղէք, որ դժուարութիւններու հանդիպելու էք։

—Ինչպէ՞ս։

—Նախ՝ գիտէք որչափ ձեզի դիմադրեն պիտի ձեր մայրը, նոյն իսկ ձեր եղբայրը։

—Այդ կէտը իմ վրաս ձգեցէք. եղբայրս կը ճանչնամ. ան ինծի լուրջ արգելք դնել չի կրնար. մայրս թէև հին խելքի, բայց խելացի ու բարի է. կը համոզեմ վերջապէս։ Իսկ ուրիշ։

—Նոյնը պիտի ըսեմ ձեր բոլոր ազգականներու, բարեկամներու մասին. ամենքը միաբերան պիտի կրկնեն, թէ այդ ձեզի անյարմար է, ամօթ է ու անպատշաճ. արդէն գիտէք, թէ մեր հասարակութիւնը ինչ աստիճան ստոր գաղափար ունի մեր վարժապետներու ու վարժուհիներու վրայ։

—Միթէ իրաւ լուրջ կը կարծէք, որ այդ բոլորի դատողութիւնները ինծի համար մեծ կարևորութիւն ունին. բարեբաղդաբար բաւական ազատ եմ մեծցած այդ կողմէն։ Ուրիշ։

Արշակ պահ մը լուռ աղջկան նայեցաւ. ու կցեց.

—Վերջապէս չկարծիք դիւրին գործ է նոյն իսկ ինքը դըպրոցը, ուսուցչութիւնը մանաւանդ փոքրիկներուն հետ. կ'ուզէ աշխատանք ու մեծ ոգևորութիւն։ Բայց այս ալ ըսեմ, որ քիչ-քիչ աշխատանքը կ'ըսկսի հեշտանալ, և ունի իր անփոխարինելի հաճոյքները. միայն սկիզբները. վստահ եղէք, շատ ծանր է լինելու. ընկերներէս մէկուն օրինակը աչքերուս առաջն է։

—Ես փոքրիկները կը սիրեմ. սկիզբները կ'աշխատիմ բոլոր ուժերովս. յոգնութիւնը փոյթս չէ. և վերջապէս լաւած գործի մը յարիլը իմ տենչանքս է։ Ուրիշ։

—Ուրիշ... կը մնայ ինծի խոստովանիլ, որ ձեզի հետ առաջին հանդիպումիս արդէն զգացի ոչ այնքան սովորական աղջկան մը դէմը գտնուիլս. բայց միայն հիմա կ'ըմբռնեմ, որ ձեր մասին կապուած գաղափարս դեռ բաւական թերի է եղած։

—Պարոն Արշակ, աժան գովեստներու բարեկամ չէք դուք. ձեր սկզբունքին հաւատարիմ մնացէք նաև... նաև աղջկան մը դիմաց։ Ուրիշ։

Ու ժպտեցաւ։

Ժպտեցաւ Արշակ ալ. յափշտակութեան ժպիտ մը.

—Ուրիշ... Ոչինչ։

Ու ձեռքերը կրծքին ծալելով՝ նետուեցաւ աթոռի թիկունքին։

—Գիտէք, պարոն Արշակ. ըսաւ աղջիկը ակընթարթ մը լռութենէ վերջը։ Հիմա կարգը իմն է խոստովանելու. եթէ ես այս քայլը կ'ընեմ՝ յոյսս ձեր վրայ եմ դրած. դպրոցական գործերէն ու կազմութենէն ես բան չեմ հասկընար, մարդ ալ չեմ ճանչնար. դուք երևի ինծի կը ներկայացընէք ձեր ընկերներուն, կ'աշխատիք որ ինծի միջոց ու դիւրութիւններ տան վերջապէս յոյսս նորէն ձեր խորհուրդներուն ու ձեռնտուութեան վրայ է իմ սկզբնական պատրաստութիւններուս համար. անշուշտ այդչափ բարի կը լինիք։

—Բարի... անկասկած, օրիորդ. այդ իմ պարտքս է. բոլոր ձեռքէս եկածը, բոլոր սրտովս։

—Արդէն ուրիշ պատասխան չէի սպասեր։ Հա, կը տեսնէք ձեր կարծածին չափ ալ միամիտ չեմ։

Ու իր ժպտուն աչքերը թաղեց տղու հայեացքին մէջ։

Արշակ ցընցուեցաւ այդ նայուածքէն։

Նորէն ներս եկաւ մայրը. ու ալ պինդ նստեցաւ։

Բաւական ուշ էր, երբ Արշակ գրէթէ ակամայ ելաւ ոտքի.

—Է՛, տիկին, ժամանակ է. երևի պարոն բժիշկը դեռ շատ կ'ուշանայ։

Մայր ու աղջիկ մինչև փողոցին դուռը հիւրին ընկերացան։

Տղան պինդ մը սեղմեց աղջկան ձեռքը. ու թեթև մը իրենին սեղմըւիլը զգաց։

Դուռը զոցւեցաւ։

Տուն երթալու բնաւ տրամադրութիւն չի կար։

Հանդարտ քայլերով ու մտախոհ ուղղըւեցաւ դէպի դաշտը, դէպի Ծովուն կողմը։

Լուռ գիշեր մըն էր. լուսին։

Ժայռոտ ափը գրեթէ սեպ կ'ինջնէր Ծովուն եզրը, ուր նեղ աւազի շերտին վրայ ալիքներուն փէշը մեղմ ճողբիւնով մէկ կը փռւէր, մէկ ետ կը քաշւէր։

Արշակ բաւական քալեց բարձր ափէն։

Ծառերու խմբակ մը եկաւ դէմը. տակը խոշոր քար մը կար ինկած։

Նստեցաւ քարին վրայ ու կրթընեցաւ ծառին. աչքերը Ծովի արծաթած խլրտուն մակերևոյթին յառած. ականջները ծառերու թեթև շրշիւնին տակ հմայուն. ու մտքին դէմ Վերժինը։

Երաժշտական սիրուն կտորի մը պէս գլխուն մէջ շարունակ կը դառնար աղջկան խօսքերը, ձայնը, շեշտը, նայուածքը, ժպիտը։

Երկար նստած էր այդպէս. անշարժ. կէս թմրած, կէս արթուն վիճակ մը. Ծովի խշրդուկէն, տերևներու շշուկէն ու իր անշարժութենէն ծնած թմրութիւնը. աղջկան պատկերին, անոր շարժումներուն ու խօսքերուն անդրադարձուցած արթնութիւնը։

Կէս գիշերը շատոնց անցած էր, երբ Արշակ եկաւ տուքի ու դէպի տուն ծռեցաւ։

«Ո՛ւժ ունի, ուժ. հիանալի աղջիկ է».

Կը կրկնէր ճամբան՝ սեղմած բռունցքը օդին մէջ ցընցելով։

(Շարունակելի)

ՍԻՐԵԼԻ՛ ԸՆԿԵՐ, ԴՈՒ ՄԻ՛ ԶԱՐՄԱՆԱՐ...

ԱԼԻՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Սիրելի ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ մատաղ կեանքիս եռուն հասակում
Այնքան տխուր է հնչում իմ քընար,
Վիշտ ու թախիծ ես կարդում իմ երգում...

Ծնուած հէգ երգիչ թշուառ էպոքի—
Միշտ մռայլ տեսայ երկինքը գլխիս.
Ես շատ վաղ ուսայ տանջանքը կեանքի,
Վաղ մտերմացաւ վշտի հետ հոգիս։

Անմեղ հասակից, օրօրոցիս մօտ,
Ուր պէտք է սկանչս մեղմ օրօր շոյէր,
Ուր պէտք է ժպտար կեանքի առաւօտ,—
Ես տեսայ միայն սև ու մութ օրեր...

Օ՛, անգին ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ ինձ չես տեսնում ուրախ, խնդալիս.
Արիւն-արցունքով ներկուած իմ քընար
Մարդկան վշտին է արձագանք տալիս...

1897 թ. Մոսկուա։

ՄԵՐ ԴԱՐԸ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՑՈՒՐԵԱՆԻ

Այսքան չարութիւն, այսքան անողոք
Բախտի հալածանք և թոյն տանջանքի,
Թշուառի արցունք, անզօրի բողոք...
Օ՛, մի՞թէ այս է կամքը երկնքի.
Մի՞թէ լոկ ծաղրի համար ես, Աստուած,
Խեղճին, անզօրին Դու կեանք պարգևած...

Մոսկւա. 1897 *թ.*

ԿԻՆ

Ա. ՉԵԽՈՎԻ — Թարգմ. Միք. Տէր-Մարտիրոսեանցի

(Շարունակութիւն և վերջ [1])

IV

Նախաճաշից յետոյ ես լացի ձեռքերս և մտածում էի՝ պէտք է գնալ կնոջս մօտ և յայտնել նրան ուղևորութեան մասին։ Ինչու համար։ Այդ ուշն է հարկաւոր։ Ոչ ոքի էլ պէտք չէ, պատասխանեցի ինքս ինձ. բայց ինչու չյայտնել, մանաւանդ որ այդ բանը նրան, ուրախութիւնից զատ, ուրիշ ոչինչ չի պատճառիլ։ Բացի այդ, գնալ-հեռանալ երեկոյեան կուլից յետոյ, առանց մի խօսք ասելու, բոլորովին անտաքտ մի բան կը լինէր. նա կարող է մտածել, որ ես իրենից վախեցայ, և միևնոյն ժամանակ նրա այն մտածմունքը, որ նա կ'ունենայ ինձ իր տանից դուրս անելու պատճառով, նրան կը վշտացնէ։ Չէ խանգարում նոյնպէս յայտնել նրան, որ ես էլ նուիրում եմ հինգ հազար ռուբլի, կազմակերպութեան մասին մի քանի խորհուրդներ տալ և նախազգուշացնել, որ նրա անփորձութիւնն այսպիսի մի բարդ և պատասխանատու գործում կարող է հասցնել ամենացաւալի հետևանքների։ Մի խօսքով ինձ մի բան ձգում էր դէպի կինս, և երբ ես նրա մօտ մտնելու համար զանազան առիթներ էի որոնում, արդէն հաստատ հաւատացած էի, որ կ'անեմ այդ քայլը։

---

[1]) Տես «Մուրճ» 1897 թ. № 7—8։

Երբ ես մտայ նրա մոտ, լույս էր և դեռ լամպերը չէին վառել։ Նա նստած էր իր աշխատելու սենեակում, որ գտնվում էր հիւրասենեակի և ննջարանի մէջ տեղում, և ցած, կռացած դէպի սեղանը, ինչ որ շտապ գրում էր։ Տեսնելով ինձ, նա ցնցվեց, կանգնեց և այնպիսի դիրք բռնեց, որպէս թէ ծածկելիս լինէր ինձանից իր թղթերը։

—Ներողութիւն, ես միայն մի բոպէով մտայ,—ասացի ես և, չգիտեմ ինչու, շփոթվեցի։—Ես պատահմամբ իմացայ, Natalie (Նատալի), որ դուք սովեալներին նպաստող խումբ էք կազմակերպում։

—Այո, կազմակերպում եմ։ Բայց այդ իմ գործն է,—պատասխանեց նա։

—Այո, դա ձեր գործն է,—ասացի ես մեղմօրէն։—Ես ուրախ եմ, որովհետև այդ համապատասխանում է իմ դիտաւորութիւններին։ Ես թոյլտուութիւն եմ խնդրում մասնակցել դրան։

—Ներեցէք, ես չեմ կարող թոյլ տալ,—պատասխանեց նա դարձնելով երեսը։

—Ինչու, Natalie,—հարցրի ես մեղմօրէն, զարմանալով նրա կիսադէմով։—Ինչու։ Ես էս կուշտ եմ, ես էլ ուզում եմ օգնել սովեալներին։

—Ես չեմ հասկանում, թէ դուք ինչացու էք այս գործում.—հարցրեց նա արհամարհանքով, ծիծաղելով և մի ուսը շարժելով.—ձեզ ոչ ոք չէ խնդրում։

—Ձեզ էս ոչ ոք չէ խնդրում, սակայն դուք իմ տանը կազմակերպել էք մի ամբողջ յանձնաժողով,—ասացի ես։

—Ինձ խնդրում են, իսկ ձեզ, հաւատացէք, որ ոչ ոք և ոչ մի ժամանակ։ Գնացէք, օգնեցէք այնտեղ, ուր ձեզ չեն ճանաչում։

—Ի սէր Աստուծոյ, ինձ հետ այդ տոնով մի՛ խօսէք։

Ես աշխատում էի համեստ լինել և հոգուս ամբողջ կարողութեամբ աշխատում էի սառնարիւնութիւնս չկորցնել։

Առաջին վայրկեանում կնոջս մոտ գտնվելը դուրեկան էր ինձ։ Ինձ տիրել էր ինչ որ քնքոյշ, մաստաղ, կանացի, վերին աստիճանի ազնիւ զգացմունք, հէնց այն, ինչ այնպէս պակասում էր ինձ վերին յարկում և առհասարակ իմ կեանքում։ Կինս հագած ունէր վարդագոյն ֆլանելից կրկնոց դեղնագոյն հաշեաներով—

այդ շատ երիտասարդացնում էր նրան և նրա շտապ, երբեմն խիստ շարժմունքներին քնքշութիւն էր տալիս։ Նրա լաւ, մոյգ մազերը, որոնց միակ տեսքն իմ մէջ երբեմն բուռն սէր էր յարուցանում, այժմ նրա երկարատև կռացած նստելուց դուրս էին թափւել կարգաւորութիւնից և անկանոն տեսք ընդունել, որի պատճառով էլ շքեղ ու փառաւոր էին թւում։ Սակայն այս բոլորը յայտնի է։ Իմ առաջ կանգնած էր մի սովորական կին, գուցէ և ոչ գեղեցիկ, ոչ վայելուչ, բայց նա իմ կինն էր, որի հետ մի ժամանակ ապրում էի ես և կ'ապրէի մինչև այսօր, եթէ չլինէր նրա դժբաղդ բնաւորութիւնը. դա միակ մարդն էր ամբողջ երկրագնդի վրա, որին սիրում էի ես։ Այժմ, տանից հեռանալուց առաջ, երբ ես գիտէի, որ նրան չեմ տեսնիլ մինչև անգամ լուսամուտից, նա այդպէս խիստ ու սառն լինելով անգամ, երբ ինձ զոռոզ ու արհամարհական ժպտով էր պատասխանում, դարձեալ ինձ թւում էր գրաւիչ, ես հպարտանում էի նրանով, տխրութիւնից ցանկանում լաց լինել և գիտակցում, որ նրանից հեռանալը սարսափելի է ու անկարելի։ Աւելի հեշտ է սպանել նրան, քան թէ թողնել, հեռանալ։

—Պաւէլ Անդրէիչ,—ասաց նա մի փոքր լռութիւնից յետոյ,—երկու ամբողջ տարի մենք միմեանց չէինք խանգարում և ապրում էինք հանգիստ։ Ինչու՞ յանկարծ կարիք զգացիք վերադառնալ անցեալին։ Ես երեկ բոլորը հասկացայ... Դուք եկաք, որ վիրաւորէք ու ստորացնէք ինձ,—շարունակեց նա, ձայնը բարձրացնելով. նրա դէմքը կարմրեց և աչքերը վառեցան ատելու թեամբ,—բայց զսպեցէք ձեզ. այդպէս մի՛ վարւէք, Պաւէլ Անդրէիչ! Վաղը ես խնդիր կը տամ, ինձ անցագիր կը տան և ես կը մտնեմ կուսանոց, այրիների կացարան, բարեգործական տուն...

—Ցիմարանոց!—գոռացի ես, չկարողանալով զսպել ինձ։—Ի՞նչ էք ճղաւում ինձ վրա։

—Նոյն իսկ ցիմարանոց! Աւելի լաւ! աւելի լաւ!—շարունակեց նա գոռալ, զայրացած աչքերով։—Այսօր, երբ ես Պետրովյուն էի, նախանձում էի սոված և հիւանդ պառաւներին, որովհետև նրանք չեն ապրում այնպիսի մարդու հետ, որպիսին դուք էք։ Նրանք ազնիւ են և ազատ, իսկ ես ձեր ողորմութիւնով ձրիակեր եմ, փչանում եմ շլայտութեան մէջ, ուտում եմ ձեր հացը, մխում

ձեր փողեր և փոխարէնը ձեզ տալիս եմ ազատութիւն ու ինչ որ հաւատարմութիւն, որը ոչ ոքի հարկաւոր չէ։ Որովհետև ինձ արձակում չէք տալիս, ես պէտք է պահպանեմ ձեր ազնիւ անունը, որպիսին չունէք։ Մինթէ քիչ է ձեզ իմ այդ սուտ դերը, ուրեմն էլ ինչ էք ուզում ինձանից։ Ի՞նչ։

—Անիծեալ պառաւային լոգիկա!—փնթփնթացի ես, սեղմելով ատամներս և շտապով դուրս եկայ հիւրասենեակը. բայց իսկոյն և եթ վերադարձայ և ասացի, եռանդօրէն աջ ձեռքս շարժելով.—դրական կերպով խնդրում եմ, որ իմ տանս այլ ևս ժողովներ ու խորհուրդներ չլինին! Իմ տանը միայն նրանց եմ ընդունում, որոնց հետ ծանօթ եմ, իսկ ձեր սինէքորներն խումբը, եթէ կարիք է զգում մարդասիրութեամբ պարապելու, թող իր համար ուրիշ տեղ փնտռէ։ Ես թոյլ չեմ տալ, որ իմ տան մէջ դիշերներով ուրախութիւնից «ուռա» գոչեն, նրանք կարող են հարստահարել ձեզ նման մի հոգեպէս հիւանդի։

Կինս կոտրատելով ձեռքերը, երկարատև հառաչանքով, որպէս թէ ատամները ցաւելիս լինէին, գունատ և իւրաքանչիւր վայրկեան գլուխը ցնցելով, շտապ անցուդարձ էր անում անկիւնից անկիւն։ Ես ձեռքս շարժեցի և դուրս եկայ հիւրասենեակ։ Կատաղութիւնն ինձ խեղդում էր և միևնոյն ժամանակ զսպում էի այն երկիւղից, որ չեմ կարող զսպել ինձ և կ'անեմ կամ կ'ասեմ այնպիսի բան, որի համար յետոյ կը զղջամ կեանքիս ամբողջ ընթացքում։ Եւ ես ամուր սեղմեցի ձեռքերս, կարծելով, թէ դրանով զսպում եմ ինձ։

—Այս ինչ բան է,—հարցնում էի ինքս ինձ։—Այս ինչ բան է։ Նա երբէք ինձ հետ մարդավարի չէ խօսում, այլ միշտ լարուած, նոյն հպարտ տոնը, նոյն ատող զոռոզութիւնը։ Ինչու համար։ Ես նրան ինչ եմ արել։ Անտեղի, յիմար, պառաւային լոգիկա! Երէկ նա ինձ դուրս արեց, որպէս երեխայի, իսկ այժմ վիրաւորեց, և այն տեղը հասցրեց, որ ինտելիգենտ, երևելի ու լաւ կրթուած մի մարդ լինելով, ես ստիպուած եմ դիմել կոպիտ հայհոյանքների։ Նա նպատի կազմակերպութեան անուան տակ տանս մի ամբողջ դաւադրութիւն պատրաստեց իմ դէմ, որպէս զի այդ սուրբ, պատասխանատու գործն աւելի շուտ առնի իր ձեռքն ու այդպիսով ինձ ստորացնի։ Նա շատ լաւ գիտէ, որ բոլոր իրաւունքներով և

առողջ մտքի տրամաբանութեամբ այդ գործը գաւառում պէտք է միայն ինձ պատկանէր։ Վիրաւորանքից աչքերիցս արտասուքները դուրս ցայտեցին, մի դրութիւն, որպիսին ինձ հետ երբէք չէ պատահել։ Յետոյ նա ինչ որ սոսր և վատ բան է տեսնում նրանում, որ ես նրան անցագիր չեմ տալիս։ Ես բռնաւոր և բռնակալ եմ, ես մի շուն եմ, որ պառկել է խոտի վրա և ուրիշին չէ թողնում։ Չէ՞ր մտածում նա, թէ կարող եմ արդեօք այդ մատաղահասին, այդ անփորձին, իր անբաղդ բնաւորութեամբ թողնել բաղդի կամքին այն աշխարհի մէջ, ուր մի տարուց էլ քիչ ժամանակում, շնորհիւ հասարակութեան ժամանակակից ուղղութեան, անխուսափելի կերպով կարելի է դառնալ թեթև վարքի տէր մի կին։ Բոլոր ժամանակակից, այսպէս անուանած, ինտելիգենտ կանայք, որոնք դուրս են եկել ընտանիքի հսկողութիւնից, իրենցից ներկայացնում են մի հօտ, որը կիսով չափ բաղկացած է դրամատիքական արեստը սիրողներից և կիսով չափ թեթև վարքի տէր կանանցից։ Պէտք է մտածել։ Նա պէտք է գիտենայ, որ ես, ինչ էլ որ չլինի, իր ամուսինն եմ և ես եմ պատասխանատու իր փոխարէն իմ խղճի և հասարակութեան առաջ։

Քիչ հանգստանալուց յետոյ ես վերադարձայ կնոջս մօտ։ Նա կանգնած էր նախկին դիրքով, որպէս թէ պահելիս լինէր ինձանից իր թղթերը։ Նրա սառն ու դունատ դէմքի վրայով դանդաղօրէն արտասուք էր հոսում։

—Ի՞նչպէս դուք ինձ չէք հասկանում!—ասացի նրան դառնութեամբ։—Ինչպէս դուք դեպի ինձ անարդար էք! Երդւում եմ պատուով, որ ես եկայ ձեզ մօտ ազնիւ դրդմամբ—մի ցանկութեամբ միայն—բարիք գործել։

Նա լուռ էր։

—Դէ, բաւական է, բաւական...—ասացի ես, զզացուած նրա արտասուքից ու դունատութիւնից։—Ես ներողութիւն եմ խնդրում... Եկէք խօսենք սառնարիւնութեամբ։

—Պաւէլ Անդրէիչ,—ասաց նա, ձեռքերը դարսելով կրծքի վրա, և նրա դէմքն ընդունեց նահատակի աղերսող արտայայտութիւն, ինչպէս լացող, վախեցած երեխաները խնդրում են, որ իրենց ապտժեն։ Ես շատ լաւ գիտեմ, որ ինձ կը մերժէք, բայց և այն-

պէս խնդրում եմ։ Հարկադրեցէք ձեզ ձեր կեանքում գէթ մի անգամ բարութիւն գործեցէք։ Արեցէք այդ բարի գործը դէթ եսականութեան, փառասիրութեան համար... Ես խնդրում եմ ձեզ, գնացէք ուրիշ երկիր! Այդ այն միակ բանն է, որ կարող էք անել սովեալների համար։ Մի բարկանաք։ Գնացէք, և երդւում եմ, ես կը ներեմ ձեզ բոլորը, բոլորը...

—Իզուր էք դուք ինձ վիրաւորում, Natalie,—հոգոց քաշեցի ես, զգալով հաշտութեան և ներելու ցանկութեան մի տեսակ դըրդումն։ Ես արդէն վճռել եմ գնալ, բայց ես չեմ գնալ, մինչև որ սովեալների համար մի բան չանեմ։ Այդ իմ պարտքն է։

—Ախ,—ասաց նա մեղմօրէն, և անհամբեր կերպով կնճռուեց։ Դուք կարող էք շինել շատ լաւ երկաթուղի կամ կամուրջ. բայց սովեալների համար ոչինչ չէք կարող անել։ Հասկացէք։

—Այո։ Դուք երէկ յանդիմանում էիք ինձ անտարբերութեանս համար և այն բանում, որ ես զուրկ եմ կարեկցելու զգացմունքից։ Ի՛նչպէս ինձ լաւ էք ճանաչում,—ծիծաղեցի ես։ Դուք հաւատում էք Աստծուն, ահա ձեզ՝ Աստուած վկայ, որ ես դիշեր, ցերեկ տանջւում եմ...

—Ես տեսնում եմ, որ դուք տանջւում էք, բայց սովն ու կարեկցութիւնն այդտեղ ոչինչ բաներ են։ Դուք մտատանջւում էք նրա համար, որ սովեալներն առանց ձեզ էլ մի կերպ կառավարւում են, և կառավարութիւնը, գաւառը և առհասարակ բոլոր օգնողները կարիք չեն զգում ձեր ձեռներեցութեանը դիմելու։ Աստուած սիրէք,—ասաց նա և ծիծաղեց բաս ձայնով,—չէ՞ որ ամբողջ գաւառի մէջ միակ ազնիւ և օրէնսդէտ մարդը դուք էք...

—Սուր չէր,—ասացի ես և լռեցի, որպէս զի խեղդեմ իմ մէջ կատաղութիւնս։—Ես եկայ, որպէս զի խօսեմ ձեզ հետ գործի մասին։ Նստեցէք, նստեցէք, խնդրեմ։

Նա չնստեց։

—Նստեցէք, խնդրեմ!—Կրկնեցի ես և ցոյց տուի նրան աթոռը։

Նա նստեց։ Ես նոյնպէս նստեցի, մտածեցի և ասացի.

—Խնդրում եմ ձեզ լրջօրէն վերաբերուել այն բանին, ինչ որ ես եմ ասում։ Լսեցէք... Դուք դրդուած մերձաւորի սիրուց, ձեր վրա էք վերցրել սովեալներին նպաստելու գործի կազմակերպութիւնը։

Այդ բանի դէմ, ի հարկէ, ես ոչինչ չունիմ, լիակատար կերպով համաձայն եմ ձեզ և պատրաստ եմ ցոյց տալ ձեզ ամենտեսակ գործակցութիւն, ինչպիսի յարաբերութիւն էլ որ չլինի մեր մէջ։ Բայց իմ ունեցած յարգանքի հետ դէպի ձեր միտքն ու սիրտը...ու սիրտը.— կրկնեցի ես, կկոցելով աչքերս ու շփելով ծնկներս,—ես չեմ կարող թոյլ տալ, որ այդպիսի մի ծանր, բարդ և պատասխանատու գործ, որպիսին օդնելու կազմակերպութիւնն է, դանուէր միմիայն ձեր ձեռքում։ Դուք կին էք, դուք անփորձ էք, անծանօթ կեանքի հետ, չափազանց հաւատ ընծայող, կարող էք խաբուել։ Դուք շրջապատել էք ձեզ այնպիսի օդնականներով, որոնց բոլորովին չէք ճանաչում։ Զափազանցրած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ յիշեալ պայմաններում ձեր դործունէութիւնն անկասկած կը թողնէ երկու տխուր հետեւանք։ Նախ, մեր գաւառը կը մնայ բոլորովին առանց օդնութեան, և երկրորդ, ձեր և ձեր օդնականների սխալների պատճառով ստիպուած կը լինէք զրկուել ոչ միայն ձեր կարողութիւնից, այլ և անունից։ Ծախքերն ու վատնումները, ենթադրենք թէ ես ծածկեցի, բայց ո՞վ ձեզ կը դարձնէ ձեր աղնիւ անունը։ Երբ, իբրև վատ կոնտրոլի և վատնումի հետեւանք, ձայն տարածուի թէ դուք, նոյն իսկ և ես, ժողովել ենք այդ դործի համար երկու հարիւր հազար, այն ժամանակ ձեր օդնականները կը դան ձեզ օդնութեան։

«Այս բոլորը լիովին ճշմարիտ է», մտածում էի ես։

Նա լուռ էր։

—Ոչ թէ ինքնասիրութիւնից, ինչպէս դուք էք ասում,— շարունակեցի ես,—այլ պարզ հաշուից, որ սովեալները չմնան առանց օդնութեան, իսկ դուք առանց մաքուր անուան, իմ բարոյական պարտքն եմ համարում խառնուել ձեր դործերում։

—Աւելի կարճ կարեցէք,—ասաց կինս ու ծիծաղեց։

Այդ ընդհատ, բասալին ծիծաղը, որպիսին պատահում է մըրսած կոկորդով մարդկանց հետ, մեր նախկին կռիւների ժամանակ ինձ համար ծառայում էր որպէս մի նշան, թէ կինս արդէն յոգնեց և վէճը մոռանում է վախճանին։ Այդ լինում էր սովորաբար կռուի սկզբից երեք կամ չորս օր յետոյ և այդ պատճառով այժմ կնոջս յոգնածութիւնն ինձ օտարոտի թուաց, չնայելով, որ մի ժամ էլ չկար, ինչ մենք խօսում էինք։

—Դուք բարի եղէք,—շարունակեցի ես,—և ցոյց տուէք, թէ մինչև օրս որքան էք մուտք ունեցել և որքան ծախսել։ Ցեռոյ իւրաքանչիւր թէ փողով, թէ բնական բերքով եղած մուտքի և իւրաքանչիւր նոր ծախքի մասին դուք պէտք է ամեն օր տեղեկութիւն տաք ինձ։ Դուք, Natalie, կը տաք ինձ նոյնպէս ձեր օգնականների ցուցակը։ Կարելի է, նրանք լիովին ազնիւ մարդիկ են, ես այդ քանում չեմ կասկածում, բայց և այնպէս անհրաժեշտ է ստուգել»։

Նա լուռ էր։ Ես կանգնեցի և անցուդարձ արի սենեակում։

—Եկէք պարապենք,—ասացի ես և նստեցի նրա սեղանի մօտ։

—Դուք այդ լրջօրէն էք ասում,—հարցրեց նա ինձ տարակուսանքով և երկիւղով։

—Natalie, խոհեմ եղէք,—ասացի ես աղաչելով, նրա դէմքից հասկանալով, որ ուզում է բողոքել։—Խնդրում եմ, լիովին հաւատացէք իմ փորձառութեանն ու ազնիւութեանը։

—Այնուամենայնիւ ես չեմ հասկանում թէ ձեզ ինչ է հարկաւոր։

—Ցոյց տուէք ինձ, թէ որքան էք ժողովել և որքան ծախսել։

—Ես գաղտնիքներ չունիմ։ Իւրաքանչիւր մէկը կարող է տեսնել։ Նայեցէք։

Սեղանի վրա ընկած էին հինգ հատ աշակերտական տետրակներ, մի քանի թերթ գրոտած փոստային թղթեր, գաւառի քարտէզն ու զանազան մեծութեան թղթի բազմաթիւ կտորներ։ Արդէն մութն ընկնում էր։ Ես մոմը վառեցի։

—Ներեցէք, ես դեռ ոչինչ չեմ տեսնում,—ասացի ես, թերթելով տետրակները։—Ո՞ւր է ստացած նէրների ցուցակը։

—Այդ նկատելի է ստորագրած թերթերից։

—Այո, բայց չէ որ ցուցակ էլ է հարկաւոր!—ասացի ես, ծիծաղելով նրա միամտութեան վրա։ Ո՞ւր են այն նամակները, որոնցով դուք ստացել էք նպաստները փողով և բնական բերքերով։ Pardon, մի փոքրիկ գործնական ցուցումն, Natalie. անհրաժեշտ է պահպանել այն նամակները։ Դուք իւրաքանչիւր նամակ համարով նշանեցէք և մի առանձին ցուցակում նշանակեցէք։ Նոյն ձեւով վարուեցէք և ձեր գրած նամակների հետ։ Սակայն այդ բոլորը ես ինքս կանեմ։

—Արեցէք, արեցէք...—ասաց նա բաս ծիծաղով։

Ես ինձանով շատ գոհ էի։ Գրաւելով կենդանի, հեռաքրքիր գործով, փոքրիկ սեղանով, միամիտ տեսարաններով և այն հիացմունքով, որպիսին խոստանում էր ինձ այս գործը կնոջս շրջանում, ես վախենում էի, թէ կինս յանկարծ կը խանգարէ ինձ և բոլորը տակն ու վրա կանէ որև է անսպասելի յարձակմամբ. այդ պատճառով ես շտապեցի և ոյժ գործ դրի ոչ մի նշանակութիւն չտալ այն բանին, որ նրա շրթունքները ցնցւում են և որ նա վախեցած ու շփոթուած, բռնուած գազանի պէս, այս ու այն կողմն է նայում։

—Ահա թէ ինչ, Natalie,—ասացի ես, չնայելով նրան։—Թոյլ տուեցէք ինձ վեր առնել այս բոլոր թղթերն ինձ մօտ։ Ես կը նայեմ, կը ծանօթանամ և վաղն իմ կարծիքը ձեզ կ'ասեմ։ Ձեզ մնաչկան այլ ևս ուրիշ թղթեր,—հարցրի ես, դարսելով տետրակներն ու թերթերը փաթեթներում։

—Տարէք, բոլորը տարէք!—ասաց կինս, լալով, ծիծաղելով և օգնելով ինձ դարսել թղթերը փաթոթներում։—Տարէք բոլորը։ Այդ էր բոլորը, ինչ որ մնացել էր ինձ կեանքումս... Դուք վերջինն էք խլում։

—Ախ, Natalie, Natalie!—հոգոց հանեցի նախատական ձևով։

Նա, բոթելով կուրծքս արմունկով և դիպչելով դէմքիս մազերով, դուրս քաշեց արկղը սեղանից և սկսեց այնտեղից սեղանի վրա թղթեր շպրտել. այդ միջոցին մանր փողեր էին թափւում ծնկներիս և յատակի վրա։

—Բոլորը տարէք,—ասում էր նա կերկերած ձայնով։

Դուրս թափելով թղթերը, նա հեռացաւ ինձանից և զոյգ ձեռքերով գլուխը բռնելով, ձգւեց թախտի վրա։ Ես ժողովեցի փողերը, արկղի մէջ ձգեցի և փակեցի ծառաներին մեղքի մէջ չձգելու համար, յետոյ երկու ձեռքով վեր առայ բոլոր թղթերն ու սենեակս գնացի։ Անցնելով կնոջս մօտից, ես կանգ առայ, և նայելով նրա մէջքին ու ցնցւող ուսերին, ասացի.

—Դուք դեռ ինչպիսի երեխայ էք, Natalie! այ-այ! Լսեցէք, Natalie. երբ դուք հասկանաք թէ որպէս լուրջ ու պատասխանատու է այս գործը, ինքներդ առաջինը շնորհակալ կը լինէք ինձանից։ Երդւում եմ։

Բարձրանալով իմ սենեակը, ես, առանց շտապելու, թղթերով զբաղվեցի։ Տետրակները ժապաւինած չեն. երեսներին համարներ չկան։ Նկատողութիւններն արուած են զանազան մարդկանց ձեռքով. ակներև է, որ տետրակներում տանտիրութիւն է անում իւրաքանչիւր մէկը, ով ցանկանում է։ Բնական բերքերով նպաստած մթերքների գինը ցուցակում չէ նշանակուած։ Այն հացահատիկը, որն այժմ արժէ 1 ռ. 15 կ., երկու ամսից յետոյ կարող է բարձրանալ մինչև 2 ռ. 15 կոպ.։ Այսպէս ինչպէս կարելի է։ Յետոյ՝ «Տրուած է Ա. Մ. Սոբոլին 32 ռ.» ՝ի՞նչ է տրուած։ Ինչո՞ւ համար է տրուած։ Ո՞ւր է բացայայտող դոկումենտը։ Ոչինչ չկայ և ոչինչ էլ չես հասկանում։ Դատաստանական քննութեան դէպքում, այս թղթերը միայն կը մթնացնեն գործը։

—Ինչպէս նա միամիտ է!—հիանում էի ես։—Նա դեռ որքան երեխայ է! Ինձ համար այդ բանը և տաղտկալի էր և ծիծաղելի։

V

Կինս ժողովել էր արդէն ութ հազար, դրան աւելացնելով և իմ հինգը—գումարը կը լինի տասերեք։ Սկսելու համար դա շատ լաւ էր։ Այն գործը, որ ինձ այնպէս հետաքրքրում էր և անհանգստացնում, վերջապէս գտնւում է իմ ձեռքում. ես անում եմ այն, ինչ որ չուզեցին ու չկարողացան անել ուրիշները՝ ես կատարում եմ իմ պարտքը—կանոնաւոր և լուրջ օգնութիւն եմ կազմակերպում սովեալներին։ Բոլորը, կարծես, իմ մտադրութիւնների ու ցանկութիւնների համեմատ են առաջ գնում. բայց ինչո՞ւ ես հանգիստ չեմ։

Ես չորս ժամւայ ընթացքում հետազօտում էի կնոջս թղթերը, պարզաբանելով նրանց միտքը և ուղղելով սխալները, բայց հանգըստութեան փոխարէն ինձ այնպիսի մի զգացում տիրեց, որպէս թէ մի օտար մարդ կանգնած լինէր իմ ետևում և անհարթ ձեռքերով մէջքս շփելիս լինէր։ Ինձ ինչ էր պակասում։ Օգնութեան կազմակերպութիւնն ընկել է յուսալի ձեռք, սովեալները կը կշտանան—էլ ինչ են ուզում նրանք ինձանից։

Թեթև չորսժամեայ աշխատանքն ինձ յոգնեցրեց չգիտեմ ինչու, այնպէս որ ես չէի կարողանում ոչ կորացած նստել, ոչ գրել։

Ներքևից երբեմն լսում էին հառաչանքներ—այդ կինս էր հեկեկում։ Իմ մշտապես խաղաղ, քնկոտ ու կեղծ բարեպաշտ Ալէքսէյը հէնց այն է մտնում էր սեղանին մոմերն ուղղելու—և չարութեամբ ու զզուանքով ինձ վրա էր նայում։

—Ոչ, պէտք է գնալ օտարութիւն—վճռեցի ես վերջապէս, թուլացած։—Հեռու այս ծանր տպաւորութիւններից։ Վաղը կը գնամ։

Ես ժողովեցի թղթերն ու տետրակները և գնացի կնոջս մօտ։ Երբ ես, խիստ ջարդուած ու յոգնած, երկու ձեռքով թղթերն ու տետրակները կրծքիս սեղմեցի և ննջարանս անցնելով, չեմոդաններս տեսայ, իսկ յատակից ինձ հասաւ լացի ձայնը, իմ ուղեղում յանկարծ ծագեց այս միտքը.—«Սակայն ինչպիսի անպիտանն եմ ես!»։

—Բոլորը յիմարութիւն է. յիմարութիւն, յիմարութիւն... փնթփնթացի ես, իջնելով սանդուխքներից։ Յիմարութիւն է... Այն էլ յիմարութիւն է, որպէս թէ ինձ ղեկավարում է ինքնասիրութիւնը կամ փառասիրութիւնը... Որպիսի դատարկ բաներ! Ինչ, սովեալների համար ինձ մատղ կը տան, թէ դեռապարտամենտի կառավարիչ կ'անեն։ Յիմարութիւն է, յիմարութիւն։ Այստեղ գիւղի մէջ ո՞ւմ դէմ պէտք է փառասիրութիւն անեմ։ Ես աշխատում եմ և չարչարւում դէպի մերձաւորն ունեցած սիրուցս... Այո...

Ես մութ կերպով զգացի, որ խաբում եմ և կեղծում, որ սէրը դէպի մօտակայ սովեալները, որոնց բոլորովին ես չեմ տեսել ու չեմ ճանաչում, այստեղ ոչինչ է. ես ամաչեցի և չգիտեմ ինչու, յիշեցի մի տող այն հին ոտանաւորից, որ երբեմն գիտէի ես մանկութեանս օրերում.—«Ինչպէս հաճելի է բարի լինել», և ես աւելի ամաչեցի...

Կինս նախկին դիրքով ձգուած էր թախտի վրայ—երեսնիվեր, գլուխը բռնած երկու ձեռքերով։ Նա լաց էր լինում։ Նրա մօտ կանգնած էր աղախինը վախեցած, տարակուսական դէմքով։ Աղախնին դուրս ուղարկեցի, թղթերը դարսեցի սեղանի վրա, մոտեցի և ասացի.

—Ահա ձեր դիւանատունը, Natalie։ Ամեն ինչ կարգի է բերուած, բոլորը լաւ է և ես շատ զոհ եմ։ Վաղը ես գնում եմ։

Նա շարունակում էր լաց լինել։ Ես դուրս եկայ հիւրասենեակ և նստեցի այնտեղ խաւարում։ Կնոջս հեկեկանքը, նրա հոգոցներն ու քիթ մաքրելը ինձ մի բանում մեղադրում էին, և որպէս զի ինձ արդարացնեմ, ես յիշեցի մեր ամբողջ կոիւը սկսած այն վայրկենից երբ իմ գլխում ծագեց կնոջս խորհրդի հրաւիրելու դժբաղդ միտքը, մինչև տեսարակներն ու այս լացը։ Այդ մեր ամուսնական կեանքի սովորական զայրագին վրդովմունքներիցն էր, այնքան յիմար և անմիտ, որի նմանը շատ անգամ էր պատահում մեր ամուսնութիւնից յետոյ. բայց այստեղ սովեալներն ինչացու են։ Ինչպէս պատահեց, որ նրանք մտան մեր կուրի մէջ։ Չէ որ սա սրբապղծութիւն է! Ճիշտ այնպէս, ինչպէս եթէ մենք, միմեանց յետևից վազելիս, անակնկալ կերպով եկեղեցւոյ բեմը բարձրանայինք և այնտեղ տուր ու դմբոց սկսէինք։

—Natalie,—ասում եմ ես հիւրասենեակից մեղմօրէն,—բաւական է, բաւական։

Նրա լացը դադարացնելու և այս տանջող վշտերին վերջ տալու համար, պէտք է դնալ կնոջս մօտ, մխիթարել նրան, փայփայել կամ ներողութիւն խնդրել։ Բայց ինչպէս անեմ այդ, որ նա ինձ հաւատայ։ Ես ինչպէս կարողանամ համոզել այդ անազատութեան մէջ ապրած և ինձ ատող վայրենի բադին, որ նա ինձ սիրելի է և ես կարեկից եմ իր տանջանքներին։ Կնոջս ես երբէք չէի հասկանում և այդ պատճառով երբէք էլ չէի իմանում, ինչ բանի մասին և ինչպէս խօսել նրա հետ։ Նա մի բարձրահասակ, կանոնաւոր կազմուածքով կին էր, գեղեցիկ ու հպարտ կիսադէմով. Նրա ուղիղ քիթը, սուր, դէպի վեր ուղղած կզակը և կիսով չափ վայր թողնուած արտևանունքները դէմքին տալիս էին արհամարհող վեհութեան և մեծամտութեան արտայայտութիւն։ Նա հագնւում էր շատ գեղեցիկ, և միայն մի բան կար տգեղ նրա արտաքինում—այդ նրա աւելորդ զգայնութիւնն էր և յաճախ կրկնւող խիստ ձևերը։ Նրա արտաքինը ես լաւ էի հասկանում և ըստ արժանոյն գնահատում, բայց նրա հոգեկան, բարոյական աշխարհը, խելքը, աշխարհայեցութիւնը, տրամադրութեան յաճախակի փոփոխութիւնները, ատող աչքերը, մեծամտութիւնը, շատ գրքերի ընթերցանութիւնը, որով շատ անգամ ինձ զարմացնում էր,

կամ, օրինակ, աբեղայական արտայայտութիւնը, որպէս երէկ էր— այդ բոլորն ինձ անյայտ և անհասկանալի էին։ Երբ նրա հետ ունեցած ընդհարումների ժամանակ ջանք էի թափում որոշել, թէ նա ինչպիսի մարդ է, այն ժամանակ իմ հոգեբանութիւնն այնպիսի որոշումներից հեռու չէր անցնում, որպիսի են, յիմար, ոչ լուրջ, դժբաղդ բնաւորութիւն, պառաւական տրամաբանութիւն.—և այդ ինձ համար կատարելապէս բաւական էր։ Իսկ այժմ, մինչ նա լաց էր լինում, ջերմ կերպով ցանկանում էի բաց անել նրա հոգին և ամենախորքը թափանցել։

Լացը դադարեց։ Ես մտայ կնոջս մօտ։ Նա նստած էր թախտի վրա զոյգ ձեռքերով բռնած ունենալով գլուխը և խորախորհուրդ ու անշարժ կրակին էր նայում։

—Ես վաղ առաւօտեան գնում եմ,—ասացի։ Ազնիւ խօսք եմ տալիս։ Վճռուած է։

Նա լուռ էր։ Ես քայլեցի սենեակում, հառաչեցի և ասացի.

—Natalie, երբ դուք խնդրում էիք ինձ գնալ-հեռանալ, ասացիք՝ կը ներեմ ձեզ բոլորը, բոլորը... Նշանակում է դուք ինձ ընդունում էք չափազանց մեղաւոր ձեր առաջ։ Խնդրում եմ, սառնասրտութեամբ և համառօտակի ձևակերպեցէք իմ յանցանքները ձեր վերաբերմամբ։

—Ես յոգնած եմ։ Ցեռոյ... ասաց կինս։

—Ինչ յանցանք,—շարունակեցի ես։ Ես ինչ եմ արել։ Կ'ասէք, որ դուք գեղեցիկ էք, երիտասարդ, ուզում էք ապրել, իսկ ես համարեա կրկնակի մեծ եմ ձեզանից և ձեզ առելի. բայց մի՞թէ սա յանցանք է։ Ես ձեզ հետ բռնի չամուսնացայ։ Էլ ինչ կայ. եթէ ուզում էք ազատ ապրել, գնացէք, ես ձեզ անցագիր կը տամ։ Գնացէք, կարող էք սիրել, ում ուզում էք... Ես էլ ապահարզան կը տամ։

—Այդ ինձ հարկաւոր չէ,—ասաց նա։ Դուք գիտէք, որ ես ձեզ առաջ սիրում էի և միշտ ինձ մեծ էի ընդունում ձեզանից։ Դոքա դատարկ բաներ են... Նա ցնցուեց, որպէս թէ ճանճի մօտենալուց և շարունակեց.—Ձեր մեղքը նրանում չէ, որ դուք մեծ էք, իսկ ես աւելի փոքր, կամ թէ ազատ լինելով ես կարող էի ուրիշին սիրել, այլ նրանում, որ դուք վատ, ծանր մարդ էք, չար էգոիստ, ոխակալ։

—Զգիտեմ, գուցէ... շշնջացի ես հանգիստ կերպով։

—Հեռացէք խնդրեմ։ Դուք ցանկանում էք մինչև առաւօտ ուտել ինձ, բայց նախատեսում եմ, որ ես բոլորովին թուլացել եմ և անկարող եմ ձեզ պատասխանել։ Դուք խօսք տուիք ինձ գնալ հեռանալ. շատ շնորհակալ եմ ձեզանից և ինձ աւել ոչինչ հարկաւոր չէ։

Կինս ցանկանում էր, որ ես դուրս գնայի, բայց ինձ համար հեռանալը դիւրին չէր։ Ես թուլացած էի և երկիւղ էի կրում իմ մեծ, անյարմար, զզւացնող սենեակներից։ Մանկութեանս օրերում, երբ որ և է տեղս ցաւում էր, ես սեղմւում էի մօրս կամ դայեակիս, և երբ դէմքս թաղցնում էի նրանց տաք հագուստի ծալքերի մէջ, ինձ թւում էր, թէ ես թաղնւում եմ ցաւից։ Այնպէս և այժմ. չգիտեմ ինչու ինձ թւում էր, որ իմ անհանգստութիւնից կարող եմ խուսափել միայն այս փոքրիկ սենեակում, կնոջս մօտ։ Ես նստեցի և ձեռքով ծածկեցի աչքերս լոյսից։ Լռութիւն էր տիրում։

—Ինչպիսի յանցանք!—ասաց կինս կերկերուն ձայնով, երկար լռութիւնից յետոյ, նայելով ինձ կարմիր արտօսրափայլ աչքերով։ Դուք շատ լաւ կրթուած և դաստիարակուած էք, շատ ազնիւ, շիտակ էլ կանոններով, բայց այդ բոլորի հետ միասին ուր էլ մնում էք դուք, ամեն տեղ տանում էք մի տեսակ ծանրահոտութիւն, փտութիւն, որ վերին աստիճանի վիրաւորիչ է և ստորացնող։ Դուք մոքերի ազնիւ ձևեր ունէք, ուստի և ատում էք ամբողջ աշխարհը։ Դուք ատում էք հաւատացողներին, որովհետև հաւատը անզարգացման և տմարդութեան արտայայտութիւն է, միևնոյն ժամանակ ատում էք և անհաւատներին նրա համար, որ նրանք հաւատ, իդէալ չունին։ Դուք ատում էք ծերերին անշարժութեան և պահպանողականութեան համար, իսկ երիտասարդներին ազատամտութեան համար։ Ձեզ համար թանգ են ժողովրդի շահերը, ուստի և դուք ատում էք ժողովրդին, որովհետև իւրաքանչիւրին զող և յափշտակող էք կարծում։ Դուք բոլորին ատում էք։ Դուք ճշմարիտ էք և միշտ կանգնած էք օրինական հողի վրա, ուստի և միշտ դատ ունէք գիւղացիների և հարևանների հետ։ Ձեզանից գողացան 20 տոպրակ հացահատիկ, և դէպի կարգն ունեցած սիրոյ պատճառով գան-

գաւեցիք գիւղացիների վրայ նահանգապետին և ամբողջ վարչութեանը, իսկ այստեղի վարչութեան վրայ գանգատուեցիք Պետերբուրգում։ Օրինական հող!—ասաց կինս և ծիծաղեց։—Օրէնքի և բարոյականութեան շահի տեսակէտից դուք ինձ անցագիր չէք տալիս։ Կա՛յ այնպիսի բարոյականութիւն և այնպիսի օրէնք, որ երիտասարդ, առողջ, ինքնասէր մի կին անցկացնէ իր կեանքը պարապ, նեղութեան ու մշտական երկիւղի մէջ և դրա համար ստանայ սնունդ և բնակարան այն մարդուց, որին նա չէ սիրում։ Դուք շատ լաւ գիտէք օրէնքները, շատ ազնիւ և ճշմարիտ էք, յարգում էք ամուսնութիւնը և ընտանեկան հիմքերը, իսկ այդ բոլորից դուրս եկաւ այն, որ ամբողջ ձեր կեանքում դուք ոչ մի բարի գործ չարեցիք, բոլորը ձեզ ատում են, բոլորի հետ վէճի մէջ էք և այս եօթ տարուայ ընթացքում, ինչ դուք ամուսնացած էք, եօթ ամիս էլ չէք ապրել ձեր կնոջ հետ։ Դուք կին չէք ունեցել, իսկ ես ամուսին չեմ ունեցել։ Ձեզ պէս մարդու հետ անկարելի է, ուժ չկայ ապրելու։ Ինձ համար առաջին տարիները ձեզ հետ ապրելը սարսափելի էր, իսկ այժմ ինձ ամօթ է... Այդպէս էլ անցան լաւ տարիները։ Մինչ պատերազմում էի ձեզ հետ, ես փչացրի բնաւորութիւնս, դարձայ խիստ, կոպիտ, վախկոտ, թերահաւատ... Է՛հ, այլ ևս ինչ ասել։ Մի՛թէ դուք կը ցանկանաք հասկանալ։ Գնացէք, Աստուած ձեզ հետ։

Կինս յենուեց օթոցին և մտածմունքի մէջ ընկաւ։

—Բայց և որպիսի գեղեցիկ, նախանձելի կեանք կը լինէր! մեղմօրէն ասաց նա, մտածմունքների մէջ նայելով կրակին։—Որպիսի կեանք! Այլ ևս վերադարձնել չի կարելի։

Ով ձմեռն ապրել է գիւղում և գիտէ այս երկար, տխուր, լուռ գիշերները, երբ մինչև անգամ շները չեն հաչում տխրութիւնից և թւում է թէ ժամացոյցն անգամ ձանձրանում է, այնքան զզուել է չխչխկալուց. ում որ այդպիսի գիշերներով վրդովել է արթնացող խիղճը և ով անհանգիստ կերպով տարուբերուել է այստեղից այնտեղ, ցանկանալով մերթ խեղդել, մերթ գուշակել իր խիղճը, նա կը հասկանայ թէ որպիսի բաւականութիւն պատճառեց ինձ կանացի այն ձայնը, որ լսւում էր փոքրիկ, յարմար սենեակում և ինձ ասում էր, որ ես վատ մարդ եմ։ Ես չհասկացայ,

թէ ինչ է ուզում իմ խիղճը, բայց կինս, որպէս թարգման, կանացի կերպով, բայց ֆպարզօրէն բացատրում էր ինձ նրա վրդովմունքները։ Ինչպէս և առաջ յաճախակի, խիստ անհանգստութեանս միջոցին, ես հասկացայ, որ ամբողջ դաղտնիքը ոչ թէ սովեալների մէջ է, այլ նրա, որ ես վատ մարդ եմ։

Կինս ուժից վեր բարձրացաւ և մօտեցաւ ինձ։

—Պաւէլ Անդրէիչ,—ասաց նա տխուր ժպիտով և այն աբեղայական արտայայտութեամբ, որ ես նրանում նկատել էի երէկ։

—Ներեցէք, ես ձեզ չեմ հաւատում. դուք չէք գնալ։ Բայց ես մի անգամ ևս խնդրում եմ։ Անեանեցէք սրան—նա մատնացոյց արաւ իր թղթերը—ինքնախաբէութիւն, պառաւական տրամաբանութիւն, սխալ, ինչպէս կամենում էք, բայց մի՛ խանգարէք ինձ։ Այս է բոլորը, ինչ մնացել է իմ կեանքում։ Նա շուռ եկաւ և լռեց։—Առաջ ես ոչինչ չունէի։ Իմ երիտասարդութիւնը կորցրի ձեզ հետ ունեցած կռիւներում։ Այժմ ես պինդ բռնեցի սրանից և կենդանացայ, ես բաղդաւոր եմ... Ինձ թւում է, թէ սրանով միջոց գտայ իմ կեանքն արդարացնելու համար։

—Natalie, դուք լաւ, գաղափարական կին էք,—ասացի ես, հիացած նայելով կնոջս,—և ինչ որ անում էք ու ասում, շատ գեղեցիկ է ու խելօք։—Իմ յուզումն թաքցնելու համար, ես շրջեցի սենեակում։—Natalie,—շարունակեցի ես մի բոպէից յետոյ,—գնալուց առաջ խնդրում եմ ձեզ, որպէս մի առանձին ողորմութիւն, օգնեցէք ինձ մի բան անել սովեալների համար!

—Ի՞նչ կարող եմ անել ես,—ասաց կինս և շարժեց ուսերը։ Մի՞թէ միայն այս ստորագրութեան թերթն է։

Նա քրքրեց իր թղթերը և գտաւ ստորագրութեան թերթը։

—Ստորագրեցէք փող, որքան կ'ուզէք,—ասաց նա. և նրա տոնից նկատելի էր, որ իր ստորագրութեան թերթին նա լուրջ նշանակութիւն չէր տալիս։—Իսկ որևէ այլ կերպ մասնակցել այս գործին դուք չէք կարող։

Ես վեր առայ թերթն ու ստորագրեցի. Անյայտ 5000։

Այդ «անյայտի» մէջ ինչ որ վատ, կեղծ, ինքնասէր բան կար, բայց ես այդ հասկացայ միայն այն ժամանակ, երբ նկատեցի, որ կինս խիստ կարմրեց և շտապով թերթը սղմեց թղթերի կոյտի

մէջ։ Երկուսովս էլ ամաչեցինք։ Ես զգացի, որ անհրաժեշտ է ինձ, ինչպէս էլ լինի, իսկոյն և եթ հարթել այդ անյարմար դրութիւնը, ապա թէ ոչ շարունակ կ'ամաչեմ և վագոնում և Պետերբուրգում։ Պէտք էր մի որ և է մտերմական, ճշմարիտ, սրտանց բան ասել։

—Ես օրհնում եմ ձեր գործունէութիւնը, Նատալի,—ասացի ես մտերմօրէն,—և ցանկանում եմ ձեզ ամեն տեսակ յաջողութիւն։ Բայց թոյլ տուեցէք հրաժեշտիս ժամին ձեզ մի խորհուրդ տալ։ Նատալի, ձեզ աւելի զգոյշ պահեցէք Սորոլի և ընդհանրապէս ձեր օգնականների վերաբերմամբ և մի՛ հաւատաք նրանց։ Ես չեմ կարող ասել, որ նրանք անազնիւ են, բայց անիդէա, առանց իդէալների ու հաւատի, կեանքի մէջ առանց նպատակի, առանց որոշ սկզբունքների մարդիկ են, և նրանց կեանքի ամբողջ խորհուրդը մանէթով է կենդանութիւն ստանում։ Մանէթ, մանէթ և մանէթ! Ես հոգոց քաշեցի։—Նրանք սիրում են դիւրին և ձրի հաց, և այդ տեսակէտից որքան աւելի զարգացած են դրանք, նոյնքան աւելի վտանգաւոր են գործի համար։

Կինս մօտեցաւ օթոցին և թեք ընկաւ։

—Իդէաներ, իդէական,—ասաց նա թոյլ և ակամայ,—գաղափարականութիւն, գաղափարներ, կեանքի նպատակ, սկզբունք... Այդ խօսքերը դուք ասել էք միշտ, երբ կամեցել էք մէկն ու մէկին ստորացնել, վիրաւորել կամ անախորժ բան ասել։ Ահա թէ դուք ինչպէս էք! Եթէ ձեր հայեացքներով և դէպի մարդիկն ունեցած ձեր սոյնպիսի յարաբերութիւններով ձեզ թողնեն մօտենալու գործին, այդ կը նշանակէ քանդել գործը հէնց առաջին օրը։ Ժամանակ է հասկանալու այս։

Նա հոգոց քաշեց և լռեց։

—Այդ բարքերի կոպտութիւն է, Պաւել Անդրէիչ, ասաց նա։ Դուք զարգացած էք և կրթւած, բայց իրապէս դեռ ոչչափ վայրենի էք։ Այդ նրանից է, որ դուք կրում էք փակ, ատեցող կեանք, ոչ ոքի հետ չէք տեսնւում, և ոչինչ չէք կարդում, բացի ձեր երկաթուղական գրքերը։ Բայց օրպիսի լաւ մարդիկ կան, օրպիսի գրքեր! Այո... Բայց ես յոգնեցի և դժւարութեամբ եմ խօսում։ Պէտք է քնել։

— Ուրեմն ես գնում եմ, Natalie,— ասացի ես։

—Այո, այո... Լաւ։ Merci...

Ես մի փոքր կանգնեցի և վեր բարձրացայ իմ սենեակը։ Մի ժամից յետոյ—այդ ժամի մէկ և կէսն էր—ես մոմը ձեռքիս ցած իջայ կրկին կնոջս հետ խօսակցելու։ Ես չգիտէի թէ ինչ պիտի ասեմ նրան, բայց զգում էի, որ նրան պէտք է մի ինչ որ շատ կարևոր և անհրաժեշտ բան ասել։ Նա աշխատելու սենեակում չէր։ Դէպի ննջարանը տանող դուռը փակ էր։

—Natalie, դուք քնած էք,—մեղմօրէն հարցրի ես։

Պատասխան չեղաւ։ Ես կանգնեցի դրան մօտ, հոգոց քաշեցի և գնացի հիւրասենեակը։ Այնտեղ ես նստեցի բազմոցի վրայ, հանգցրի մոմն ու մնացի նստած մինչև լուսալացս։

VI

Կայարան հասայ առաւօտեան 10 ժամին։ Սառնամանիք չկար, բայց խոշոր ձիւն էր գալիս ու անհաճոյ, խոնաւ քամի փչում։ Անցանք լիճը, յետոյ Թիստենու անտառը և սկսեցինք սարը բարձրանալ այն ճանապարհով, որն երևում էր ինձ լուսամուտներից։ Ես յետ նայեցի, որ վերջին անգամ տեսնեմ իմ տունը, բայց տեղացող ձիւնի միջից ոչինչ չէր երևում։ Քիչ յետոյ մեր հանդէպ, որպէս մառախուղի մէջ, երևացին խաւար խրճիթներ։ Այդ Պեստրովն էր։

«Եթէ երբ և է ես ցնորւեմ՝ մեղաւորը Պեստրովն կը լինի,— մտածեցի ես։—Նա ինձ հետամուտ է լինում»։

Մտանք փողոց։ Խրճիթների վրայ բոլոր ծածքերը տեղումն են, չկայ ոչ մի քանդւած ծածք—նշանակում է, իմ գործակատարը խաբեց ինձ։ Մի տղայ ման է ածում փոքրիկ սահնակով մի աղջիկ, մի ուրիշ երեխայի հետ միասին, մի ուրիշ երեք տարեկան տղայ, պառաւի պէս փաթաթւած գլխով և ահագին ձեռնոցներով, ձգտում է լեզուով բռնել օդում տարուբերուող ձնահատիկներն ու ծիծաղում է։ Ահա մեր հանդէպ է գալիս ցախով բեռնած մի սայլ, նրա կողքով գնում է գիւղացին և ոչ մի կերպ չի կարելի հասկանալ, արևոր է նա, թէ միրուքը ձիւնից է սպիտակել։ Նա ճանաչեց իմ կառապանին, ժպտում է նրան, ինչ որ մի բան ասում և իմ առաջ մե-

քենայօրէն գլխարկը վեր առնում։ Շները դուրս են վազում բակերից և հետաքրքրութեամբ ձիերիս նայում։ Ամեն ինչ խաղաղ է, սովորական, պարզ։ Վերադարձել են գաղթականները, հաց չկայ. խրճիթներում տորը ծիծաղում է, որը պատն է բարձրանում, բայց այդ բոլորն այնքան պարզ, որ մինչև անգամ հաւատալ չէ լինում, որ դա իսկապէս այդպէս է։ Ոչ անկարգ դէմքեր, ոչ օգնութիւն աղերսող ձայներ, ոչ հայհոյանք. ամեն կողմ լռութիւն, կեանքի ընթացք, երեխաներ, փոքրիկ սահնակներ, քրքրուած պոչերով շներ։ Ոչ մանուկներն են անհանգիստ, ոչ պատահող գիւղացիները. բայց ինչու համար այսպէս անհանգիստ եմ։

Իմ տան ներքին յարկում, իմ ծառաների սենեակում, այս մռայլ, լուռ խրճիթներում և շուրջս ամբողջ հազար վերստ և հեռուն ու հեռուն ընդհանուր աղքատութեան դէմ լուռ ու անձայն կերպով երկար ու խիստ կռիւ է առաջացել։ Նայելով ժպտող գիւղացուն, ահագին ձեռնոցներով տղային, խրճիթներին, յիշելով կընոջս, ես այժմ հասկացայ, որ չկայ մի այնպիսի թշուառութիւն, որ կարող լիներ յաղթահարել այս ուժեղ, մեծահոգի մարդկանց. ինձ թւում էր թէ օդում արդէն յաղթութիւն է տիրում, ես հրպարտանում էի և պատրաստ էի գոչել նրանց, որ ես ևս մարդ եմ, որ ես ևս նրանց հետ միևնոյն արիւնն ու միևնոյն հոգին ունիմ, բայց ձիերը գիւղից ինձ դաշտ հանեցին, ձիւնը ճախրում էր, քամին մռնչում և ես մենակ մնացի իմ մտքերիս հետ։ Մեծ ժողովրդական գործ կատարող մարդկանց միլիոնաւոր խմբերից ինքը կեանքն ինձ դուրս էր շպրտել, որպէս անպէտք, անկարող, վատ մարդու։ Ես խոչնդոտ եմ, ժողովրդի թշուառութեան մի մասնիկը անկարող եմ ամոքել. ինձ յաղթեցին, դուրս շպրտեցին և ես շտապում եմ դէպի կայարան, գնալու և թաղնուելու Պետերբուրգում Բոյշայա Մորսկայա փողոցի հիւրանոցում։

Մի ժամից յետոյ հասանք կայարան։ Նշանակ կրող մի պահապան և կառապանս իմ չեմոդանները կանանց սենեակը տարան։ Կառապան Նիկանորը գոտում խրած փեշով և բրդէ ոտնամաններով ամբողջովին ձիւնով թրջուած և գոհ, որ ես գնում եմ, ժպտաց ինձ սիրալիր կերպով և ասաց.

—Բարի ճանապարհ, ձերդ գերազանցութիւն։ Սատուած յաջողութիւն տայ։

Պահապանն ասաց, որ գնացքը դեռ չէ եկել հարաւեան կայարանից։ Պէտք էր սպասել։ Ես դուրս եկայ և, գիշերուայ անքուն ճանապարհից ծանրացած գլխով և յոգնածութիւնից ոտքերս հազիւ շարժելով, առանց որևէ նպատակի, դիմեցի դէպի ջրամբարը։ Շուրջս ոչ մի շունչ չկար։

—Ինչու՞ եմ գնում,—հարցրի ինքս ինձ։ Ի՞նչ է սպասում ինձ այնտեղ։ Ծանօթներ, որոնցից վաղուց արդէն հեռացել եմ, միայնութիւն, բեստորանական ճաշեր, աղմուկ, էլեքտրական լուսաւորութիւն, որից աչքերս են ցաւում... Ո՞ւր եմ գնում և ինչու։ Չէ՞ որ ապրելով Պետերբուրգում, ես ամեն օր պիտի զգամ, որ կեանքս մօտենում է իր վախճանին, այնտեղի կեանքի կարգն իր մրոտալութիւններով, անգործութեամբ և փոխադարձ ատելութեամբ այնպէս է, որ իւրաքանչիւր 35—40 տարի ապրողն իրեն հաշւում է արդէն գործը վերջացրած մարդ և մահուան մասին է մտածում։ Իսկ եթէ մնայի այստեղ, դեռ նոր միայն կարող էր սկսել իմ կեանքը։ Ինչու՞ եմ գնում։ Եւ մի սեսակ օտարոտի էր առանց կընոջս հետ խօսակցելու հեռանալ-գնալ։ Ինձ թւում էր, թէ ես թողել եմ նրան անորոշութեան մէջ։ Հեռանալիս հարկաւոր է նրան ասել, որ նա ճշմարիտ է, որ ես իսկապէս վատ, չնչին մարդ եմ։

Երբ ես ջրամբարից վերադարձայ, դռներում երևաց կայարանի գլխաւորը, որի վրայ ես երկու անգամ գանգատուել էի իր վարչութեանը։ Բարձրացնելով սիւրտուկի օձնքն և կուչ գալով քամուց ու ձիւնից, նա մօտեցաւ ինձ, և երկու մատերը դնելով գլխարկի եզրին, ցրւած, ձգձգւած յարգանքով և ատող դէմքով յայտնեց ինձ, որ գնացքն ուշանալու է 20 րոպէ և թէ արդեօք չՔմ կամենալ առ այժմ սպասել մի տաք սենեակում։

—Շնորհակալ եմ,—պատասխանեցի ես,—բայց հաւանական է, որ ես չգնամ։ Հրամայեցէք ասել իմ կառապանին, որ նա սպասէ։ Ես դեռ պիտի մտածեմ։

Ես անց ու դարձ էի անում պլատֆորմի վրայ և մտածում. գնա՞լ թէ ոչ։ Երբ գնացքն եկաւ, ես վճռեցի չգնալ։ Տանն ինձ սպասում էին կնոջս ծաղրն ու արհամարհանքը, տխուր վերին

յարկն ու իմ անհանգստութիւնը, բայց այդ իմ տարիքում այնուամենայնիւ դիւրին է և կարծես աւելի հարազատ, քան թէ երկու օր ճանապարհ գնալը օտար մարդկանց հետ դէպի Պետերբուրգ, ուր ես ամեն րոպէ պիտի դիտակցէի, որ իմ կեանքը մօտենում է իր վախճանին։ Ոչ, ինչ որ էլ լինի, աւելի լաւ է դէպի տուն... Ես դուրս եկայ կայարանից։ Օր-ցերեկով վերադառնալ տուն, ուր ամենքն էին ուրախ հեռանալուս համար, ամօթ էր։ Օրւայ մնացորդը մինչև գիշեր կարելի էր անցկացնել հարևաններիցս մէկն ու մէկի մօտ։ Բայց ո՞ւմ մօտ։ Ոմանց հետ ես լարուած յարաբերութիւնների մէջ եմ, ոմանց հետ էլ բոլորովին անծանօթ։ Ես մոռացայ և յիշեցի Իւան Իւանիչին։

—Գնանք Բրագինի մօտ,—ասացի ես կառապանին, նստելով սահնակում։

—Հեռու է,—հոգոց քաշեց Նիկանորը.—դուցէ 28 վերստ լինի, իսկ այն էլ հետը—30։

—Խնդրեմ, հոգիս,—ասացի այնպիսի տոնով, որպէս թէ Նիկանորն իրաւունք ունէր չհնազանդել ինձ,—գնանք, խնդրեմ։

Նիկանորը կասկածանքով շարժեց գլուխը և դանդաղօրէն ասաց, որ այդ դէպքում մէջ տեղում պէտք է լծել ոչ թէ Զերկեսին, այլ Գիւզացուն կամ Դեղձանիկին և անվճռական կերպով, մի կերպ սպասելով, որ ես կը փոխեմ վճիռս, երասանակները ժողովեց ձեռնոցներում, իսկ ձիերը որպէս թէ վիրաւորուած սրա կասկածանքից, շարժուեցան տեղներից։ Նա նստեց, շարժեց մարակը և ուրախ կերպով գոռաց։

«Անհետևողական վարմունքների ամբողջ շարք... մոռացում էի ես թաղցնելով դէմքս ձիւնից։—Ցնորւել եմ ես։ Բայց, թող...»

Մի տեղ շատ բարձր ու թեք զառիվայրում Նիկանորը զգուշութեամբ իջեցրեց ձիերին մինչև լերան կէսը, բայց կիսից ձիերը յանկարծ գլուխ առան և սարսափելի արագութեամբ դէպի ներքև փախան. նա ցնցուեց, բարձրացրեց արմուկները և բղաւեց այնպիսի մի ձայնով, որպիսին ես նրանից երբէք չէի լսել։

—Է՛հ, թռցնենք դեներալին! Սպանենք, նորերը գնենք, աղաւնեակներ! Է՛հ, զգուշացիր, տակովը կ՚անենք!

Միայն այժմ, երբ սահնակի անսովոր արագ թռչելուց շունչս

կտրեց, ես նկատեցի, որ Նիկանորը սաստիկ հարբած էր։ Պէտք է որ կայարանում խմած լինէր։ Զորի խորքում սառուցը ճեղքուեցաւ, ձիւնի ամուր կոշտացած մի կտոր պոկուելով ճանապարհից ցաւալի կերպով դիպաւ դէմքիս։ Փախչող ձիերը կանգնելու ոյժ չունենալով, շտապ թռցրին մեզ լերան վրայ նոյնպէս արագ, որպէս իջնելիս, և ես չկարողացայ Նիկանորին ձայն տալ, երբ իմ սահնակն արդէն սլանում էր հարթութեան վրայ, հին եղևնեայ անտառի մէջ, ուր բարձր եղևնիներն ամեն կողմից դէպի ինձ էին մեկնում իրենց սպիտակ ու թաւոտ թաթերը։

«Ես ցնորուել եմ, կառապանս էլ հարբած... մոռացում էի ես։ Լաւ!»

Իւան Իւանիչին ես տանը գտայ։ Նա ծիծաղից սկսեց հազալ. գլուխը դրեց կրծքին և ասաց այն, ինչ որ միշտ ասում է ինձ պատահելիս.

—Դուք շարունակ երիտասարդանում էք։ Ձեմ հասկանում թէ ինչպիսի ներկով էք ներկում ձեր գլուխն ու միրուքը. ինձ էլ տայիք։

—Ես, Իւան Իւանիչ, եկել եմ այցելութիւնը չեռ տալու,—խաբեցի ես.—մի՛ մեղադրէք. մայրաքաղաքի մարդ եմ, այն նախապաշարմունքներով, որ այցելութիւններ հարկաւոր են։

—Ուրախ եմ, հոգիս։ Խելքս կորցրի. սիրում եմ պատիւը... Այո։

Նրա ձայնից և երջանիկ կերպով ժպտող դէմքից ես կարող էի դատել, որ իմ այցելութեամբ ես չափազանց շոյեցի նրան։ Նախասենեակում մուշտակս վեր առան երկու պառաւներ, իսկ կախարանից կախ տուեց կարմիր շապկով մի գիւղացի։ Երբ ես ու Իւան Իւանիչը մտանք նրա փոքրիկ պարապման սենեակը, երկու բոբիկ աղջիկներ նստած էին յատակի վրայ և պատկերներ էին նայում. մեզ նկատելով, նրանք վեր թռան, դուրս փախան, և նոյն ժամին ներս մտաւ մի բարձրահասակ, բարակ, ակնոցաւոր պառաւ, երկար, դանակի նման ոտքերով, ողջունեց ինձ և վերցնելով քազմոցից բարձն ու յատակից պատկերները, դուրս դնաց։ Հարևան սենեակներից անընդհատ լսւում էին շշուկ և բոբիկ ոտքերի շրշիւն։

—Իսկ ես բժշկին եմ սպասում ճաշի,—ասաց Իւան Իւանիչը։

Խոստացաւ նշանակած տեղից դալ այստեղ։ Նա իւրաքանչիւր չորեքշաբթի ինձ մօտ է ճաշում։ Աստուած նրան առողջութիւն տայ։

Նա թեքւեց դէպի ինձ և պարանոցս համբուրեց։—Նշանակում է, եկաք, հոգիս, մի՛ բարկանաք.—շշնջաց նա սւացնելով։—Մի՛ բարկանաք, բարեկամ։ Այո։ Գուցէ և վիրաւորական է, բայց պէտք չէ բարկանալ։ Ես միայն մի բան եմ խնդրում Աստծուց մահւանից առաջ. ամենքի հետ ապրել խաղաղ, համերաշխ կերպով և ճշմարտօրէն։ Այո։

—Ներեցէք, Իւան Իւանիչ, ես ոտքս դնում եմ բազկաթոռի վրայ,—ասացի ես, զգալով, որ խիստ յոգնածութիւնից չեմ կարող ինքնուրոյն լինել և անառիթ ժպտում եմ. ես բազմոցի աւելի խորքում նստեցի և մեկնեցի ոտքս բազկաթոռի վրայ։ Ձիւնից և քամուց դէմքս այրւում էր և թւում էր, թէ ամբողջ մարմինս ծծել է իմ տաքութիւնն ու դրանից թոյլ եմ զգում ինձ։—Ձեզ մօտ լաւ է, շարունակեցի ես, բաւականութիւնից կկոցելով աչքերս։—Տաք, փափուկ, յարմար, մաքուր... Եւ սագի փետուրներ,—ծիծաղեցի ես նայելով դրասեղանին.—աւազաման... Բոլորը շատ լաւ է։

—Ա՞։ Այո, այո... Այդպէս, այդպէս... Դրասեղանն ու այս պահարանը շինել է ինքնուս ատաղձագործ Գլեբ Բուտիդան, զեներալ Ժուկովի ճորտը, իմ հօր համար՝ կարմիր փայտից։ Այո... Իր մասում մեծ արւեստագէտ։ Եւ սրբոց պատկերներ էր նկարում և երկրաչափ էր երբեմն և դասում ժամ էր ասում—հազարեան փեշակ էր, մի խօսքով... Այո։

Թոյլ, ննջող մարդու տոնով նա սկսեց ինձ պատմել ատաղձագործ Բուտիդայի մասին։ Ես լսում էի։ Յետոյ Իւան Իւանիչը դուրս եկաւ հարևան սենեակը, որ ինձ ցոյց տայ զեղեցկութեամբ և ճաշակութեամբ նշանաւոր կոմմոդը պոլիսանդրեան փայտից։ Ես նոյնպէս դուրս եկայ։ Նա մատով թըխկթխկացրեց կոմմոդին և ապա իմ ուշադրութիւնը հրաւիրեց զեղեցկաղիւս վառարանի վրայ զարդարւած նկարներով որոնց այժմ ոչ մի տեղ չես հանդիպիլ։ Վառարանին էլ թըխկթխկացրեց մատով։ Կոմմոդից, զեղեցկաղիւս վառարանից, բազկաթոռներից, ամուր և ոչ զեղեցիկ շրջանակներում կանւայի վրայ գործած բրդեայ և մետաքսեայ նկարներից բարե-

գթութիւն և անմահութիւն էր շնչում։ Կարծես մարդ յիշում է, որ սոյն այս բոլոր առարկաները կանգնած էին նոյն տեղերում և նոյն իսկ սոյն կարգով, երբ ես դեռ մանուկ էի և մօրս հետ տօնախմբութիւններին այստեղ էի գալիս, այնպէս որ հաւատալ չի լինում, թէ դրանք կարող են երբ և է գոյութիւն չունենալ։

Ես մտածում էի. որպիսի զարհուրելի տարբերութիւն Բուտիգայի և իմ մէջ! Բուտիգան ամենից առաջ ամուր և հիմնաւոր շինելով և հէնց այդ բանի մէջ գլխաւորը տեսնելով, մարդկային երկարակեցութեանը տուել է մի առանձնակի նշանակութիւն, չէ մտածել մահուան մասին և հաւանականաբար չէ հաւատացել նրա կարելիութեանը. ես էլ, երբ շինում էի իմ երկաթեայ և քարեայ կամուրջները, որոնք կարող են գոյութիւն ունենալ հազարաւոր տարիներ, երբէք չէի կանգնում սոյն մտքերի առաջ. «Այս յաւիտենական չէ... Այս ոչինչ բան է։ Եթէ ժամանակով որ և է մի խելօք արհեստների պատմութիւնը գրողի աչքովն ընկնեն Բուտիգայի պահարանն ու իմ կամուրջը, նա կ'ասի.—«Սոքա իրենց կարգում երկու նշանաւոր մարդիկ են. Բուտիգան սիրել է մարդկանց և իրեն թոյլ չէ տուել, թէ մարդիկ կարող են մեռնել և քայքայուել. այդ պատճառով էլ իր կարասին շինելիս աչքի առաջ է ունեցել անմահ մարդուն. իսկ ճարտարապետ Ասսորինը ոչ մարդկանց է սիրել, ոչ կեանքը. մինչև անգամ ստեղծագործութեան բաղդաւոր բոպէին նրան ընդդէմ չէին մահուան, քայքայման և վախճանի մասին ունեցած մտքերը և այդ պատճառով, նայեցէք, թէ նրա այս գծերն ինչպէս թշուառ, չնչին, մաշած և թոյլ են։

—Ես միայն այս սենեակներն եմ տաքացնում,—փընթփնթաց Իւան Իւանիչը, ցոյց տալով ինձ իր սենեակները։—Սկսած այն օրից, երբ կինս մեռաւ և որդուս պատերազմում սպանեցին, ես տօնական սենեակները փակեցի։ Այո... ահա...

Նա մի դուռ բաց արեց և ես տեսայ մի մեծ սենեակ չորս սիւներով, մի հին դաշնամուր և յատակի վրայ մի կոյտ սիսեռ. ցուրտ ու խոնաւութեան հոտ էր փչում այնտեղից։

—Իսկ միւս սենեակում այդու նստարաններն են դարսած.—փընթփնթաց Իւան Իւանիչը։—Մարդ չկայ, որ մազուրկա պարէ... Փակ է։

Մի աղաղակ լսեցաւ։ Այդ բժիշկ Սոբոլն էր գալիս։ Մինչ նա ցրտից դեռ քիթն էր տրորում և իր թաց միրուքը կարգի բերում, ես կարողացայ նկատել, որ նախ նա շատ տխուր կեանք է վարում, ուստի և Իւան Իւանիչին ու ինձ տեսնելը հաճելի էր նրան, և երկրորդ, որ նա պարզ և միամիտ մարդ էր։ Նա այնպէս էր նայում ինձ, որպէս թէ ես շատ ուրախ էի տեսնելով իրեն և շատ ես հետաքրքրւում իրենով։

—Երկու գիշեր չեմ քնել!—ասում էր նա, միամտաբար նայելով ինձ և սանրւելով։—Մի գիշեր ծննդկանի վրա էի չարչարւում, իսկ միւս գիշերը փայտոջիլներն էին կծում, մի գիւղացու մօտ էի գիշերում։ Հասկանում էք, քնել եմ ուզում, ինչպէս սատանայ։

Նա ինձ թեւանցուկ արաւ և սեղանատուն տարաւ այնպիսի արտայայտութեամբ, որպէս թէ դա բացի բաւականութիւնը, ուրիշ ոչինչ չէր պատճառիլ ինձ։ Նրա հասարակ վարմունքը, միամիտ աչքերը, տրորուած սերտիւկը, արժան փողպատն ու եօդաֆորմի հոտն ինձ վրա անախորժ տպաւորութիւն արին. ես ինձ վատ հասարակութեան մէջ զգացի։ Բայց այդ ոչ երկար։ Ինչպէս դաշտում, ինձ չկարողանալով տիրել, ենթարկւեցի Նիկանորին, քամուն և ձիւնին, այնպէս էլ այժմ ենթարկւեցի բժշկին։ Նա ինձ համար արաղ ածեց և ես անառիթ ժպտալով, խմեցի։ Նա իմ ափսէի մէջ ապուխտի կտոր դրեց—և ես խոնարհաբար կերայ։

—Repetitia est mater studiorum,—ասաց Սոբոլը, շտապելով միւս բաժակն էլ խմել։—Հաւատում էք, լաւ մարդկանց տեսնելու ուրախութիւնից մինչև անգամ քունս փախաւ։ Ես գեղջուկ եմ, միայնութեան մէջ վայրենացել, կոշտացել եմ, բայց և այնպէս դեռ ևս, պարոններ, ինտելիգենտ մարդ եմ և պարզութեամբ ձեզ ասում եմ. ծանր է ապրել առանց մարդկանց! Բերեցին սառը սպիտակ խոզուկ վայրենի բողկի և թթու սերի հետ, յետոյ իւղալի, շատ տաք կարտոֆիլի խոզի մսով և ցորենափլաւ, որից գոլորշին սիւնի պէս բարձրանում էր։ Բժիշկը շարունակում էր խօսել. և ես շուտով համոզւեցի, որ նա մի թոյլ, արտաքինով անպէտք և անբաղդ մի մարդ է։ Երեք բաժակով հարբեց նա, անբնական կերպով կենդանացաւ, տընքտնքալով ու չըփչփացնելով նա չա-

փաղանց շատ ուտում էր և ինձ մեծարում իտալական էկզելենց պատուանունով։ Անմեղաբար ինձ նայելով, որպէս հաւատացած, թէ ես շատ ուրախ եմ իրեն տեսնելուս և լսելուս համար, նա ինձ հաղորդեց, որ ինքն իր կնոջից վաղուց արդէն բաժանուել է և իր ռոճկի երեք քառորդը նրան է տալիս. որ նա ապրում է քաղաքում իր որդոց—տղայի և աղջկայ հետ, որոնց ինքը պաշտում է, որ ինքը մէկ ուրիշին է սիրում—այրի կալուածատէր, ինտելիգենտ մի կնոջ, բայց և որի մօտ սակաւ է լինում, որովհետև առաւօտից մինչև երեկոյ գործերովն է զբաղուած և բոլորովին ժամանակ չունի։

—Ամբողջ օրը կամ հիւանդանոցումն եմ կամ շրջագայութեան մէջ,—պատմում էր նա.—և երդւում եմ ձեզ, էկզելենցա, որ ոչ միայն սիրածս կնոջ մօտ գնալու, այլ մինչև անգամ մի գրքոյկ կարդալու ժամանակ չունիմ։ Տասը տարի է ոչինչ չեմ կարդացել! Տասը տարի, էկզելենցա։ Ինչ վերաբերում է նիւթականիս, այ հաճեցէք հարցնել Իւան Իւանիչին. պատահում է, որ ծխախոտ գնելու էլ ոչինչ չեմ ունենում։

—Բայց դրա փոխարէն վայելում էք բարոյական բաւականութիւն,—ասացի ես։

—Ի՞նչ—ասաց նա և կկոցեց մի աչքը։—Ոչ, աւելի լաւ է, խմենք։ Եթէ ձեր տատն էլ մեռնէր դանակով, ինչպէս անցեալ տարի իմը մեռաւ, այն ժամանակ դուք կը հասկանայիք, թէ այստեղ ինչ բարոյական բաւականութիւն կայ։

Ես լսում էի բժշկին և իմ մշտական սովորութեամբ նրան էլ էի վերագրում իմ սովորական չափերը—մատերիալիստ, իդէալիստ, մանէթ, կենդանական բնազդումն և այլն, բայց ոչ մի չափ չէր համապատասխանում նրան նոյն իսկ մօտաւորապէս. տարօրինակ բան, քանի ես միայն լսում էի և նայում նրան, նա ինչպէս մարդ ինձ համար բոլորովին պարզ էր, բայց հէնց որ նրան իմ չափերն էի վերագրում, այն ժամանակ նա իր ամբողջ անկեղծութեամբ և պարզ բնաւորութեամբ ներկայանում էր չափից դուրս բարդ, շփոթ և անհասկանալի բնաւորութիւն։ Այս մարդը մի՞թէ կարող է վատնել ուրիշի փողերը, հարցնում էի ինքս ինձ. ուրիշի հաւատարմութիւնն ի չարը գործ դնել և հակումն ունենալ դէպի ձրի հացը։

Եւ այժմ այս նշանաւոր խնդիրը, որ երբեմն լուրջ խնդիր էր ինձ համար, թուում էր միամիտ, մանր և կոպիտ։

Կարկանդակ բերին, յետոյ յիշում եմ երկար ընդմիջումներով, երբ մենք քաղցր օդի էինք խմում, բերում էին աղաւնու (ջրանիւթ) սօուս, ինչ որ կերակուր աղիքներից, տապակած խոզուկ, բադ, լոր, գոյնաւոր կաղամբ, պանրէ կարկանդակ, թան, մածուն և վերջապէս քաղցրաւենիով բլիներ։ Սկզբում, առանձնապէս կաղամբաթանն ու փլաւը մեծ ախորժակով կերայ, բայց յետոյ որոճում ու խրպշտում էի մեքենայօրէն, ակամայ ծիծաղելով և ոչ մի համ չզգալով։ Տաք կաղամբաթանից և սենեակում տիրող տապից դէմքս սաստիկ այրւում էր։ Իւան Իւանիչն ու Սոբոլը նոյնպէս կարմիր էին։

—Ձեր ամուսնու կենացը,—ասաց Սոբոլը։—Նա ինձ սիրում է։ Ասացէք նրան, թէ բժշկապետը ողջունում էր ձեզ։

—Աստուած վկայ բազդաւոր է!—հոգոց քաշեց Իւան Իւանիչը։ Զէ չարչարւել, անհանգիստ չէ եղել. այս ու այն կողմ չէ ընկել, բայց այնպէս դուրս եկաւ, որ նա այժմ առաջին անձնաւորութիւնն է ամբողջ դաւառում։ Համարեա ամբողջ գործը նրա ձեռքումն է, ամենքը նրա շուրջն են պտտւում՝ և բժիշկը և դաւառապետներն ու աղաները։ Իսկական մարդկանց վերաբերմամբ այս բանն ինքն իրեն է կաղմւում կարծես։ Այո... Խնձորենու համար չպէտք է չարչարւել, որ նրա վրա խնձորներ բուսնեն—իրենք կ'աճեն։

—Ուրեմն անհանգստանալ պէտք չէ։—Հարցրի ես։

—Ի՞նչպէս ասել։ Ինձ մօտ իւրաքանչիւր օր Աբրահամ անունով մի գիւղացի է գալիս, անհանգիստ լինում և ասում.

—«Մեր դաւառը ճիրը պէտք է ժողովրդին լիութիւն տայ, ձերդ մեծապատուութիւն, համեցէք, ստիպեցէք յաւիտեան աղօթել Աստծուն! Սով է, ժողովրդի մէջ աղաղակի ձայն էլ չէ մնացել։ Դու ինչու ես անհանգստանում, ասում եմ. դու, փառք Աստծոյ, կուշտ ես, հագուստ ու փող ունիս և ոչ ոք չէ խնդրում անհանգըստանալ։ Զէ լսում Աբրահամ! Սովեալները լուռ են, իսկ նա ծխախոտից բռնուածի պէս ամեն օր ինձ մօտ է վազում, գլուխ պատռում։ Այո։ Բայց ինչու։ Խիղճը մաքուր չէ։ Գաղտնի օղեստուն է պահում և փողերը տոկոսով տալիս։ Վաշխառու է... Իմ կեան-

քում նկատել եմ, որ անհանգիստ է լինում, տխրում, գլուխ դնելու տեղ չէ գտնում և հոգով ընկնում է միայն նա, ով մեղաւոր է, որի մէջ խիղճը մաքուր չէ և ով փոքրոգի է ու վախկոտ, իսկ բարի, ազնիւ, համարձակ և աներկիւղ մարդը միշտ ուրախ է նայում։ Հոգիս, եթէ ես արդար եմ Աստուծոյ և մարդկանց առաջ, այն ժամանակ թէկուզ երկիրն ամբողջ հինգ տարի չարդիւնաբերի, կամ թէ ջրհեղեղ լինի, այնուամենայնիւ ես ճշմարիտ կը մնամ և հանգիստ կը լինիմ։ Ե՛ս եմ ուրիշին կերակրում, թէ ինձ են կերակրում, ես եմ մէկին թաղում, թէ ինքս մեռնում—միշտ և ամեն հանգամանքում ես հանգիստ և ճշմարիտ կը լինեմ... Այո։

—Զեն անհանգստանում միայն անտարբերները, — ասացի ես։

—Ա՛. այո, այո...—փընթփնթաց Իւան Իւանիչը, չմբռնելով իմ ասածը։—Այդ ուղիղ է... Պէտք է անտարբեր լինել։ Այդպէս, այդպէս... Ցիրաւի... Աստուծոյ և մարդկանց առաջ միայն ճշմարիտ եղիր, այնուհետև թէկուզ խոտ էլ չբուսնի։

—Էկզելենցա,—ասաց Սոբոլը հանդիսաբար.—Նայեցէք չրջապատող բնութեանը. քիթդ կամ ականջդ օձիքի տակից հանես թէ չէ՝ ցուրտը կը տանի. մի ժամի չափ դաշտում մնաս՝ ձիւնի տակ կը թաղուես։ Իսկ գիւղը հէնց այնպէս է, ինչպէս Ռիւրիկի ժամանակն էր. ոչնչով չէ փոխուել. նոյն պեչենեգներն ու պոլովցիներն են։ Միայն այն ենք իմանում, որ այրւում ենք, սովում ենք և ամեն կերպ բնութեան հետ կռւում։ Բայց ինչ եմ խօսում։ Այո! Հասկանում էք, եթէ լաւ մտածենք, դիտենք ու քննենք, թոյլ տուեցէք ասել, այս փլաւը, կը տեսնենք, որ սա կեանք չէ, այլ հրդեհ է թատրոնում! Ով որ այդեղ է ընկնում կամ վախից աղաղակում և սրան նրան դիմում, նա կարգի առաջին թշնամին է։ Պէտք է ուղիղ կանգնել, ուշի ուշով դիտել և ոչ մի ձայն չհանել! Այստեղ արդէն ժամանակ չկայ հոգով ընկնելու և մանր բաներով զբաղւելու։ Երբ գործ ունիս բնութեան տարերքի հետ, նրա դէմ կանգնեցրու նոյն տարերքը—հաստատ եղիր, չընկճուող, ինչպէս քար! Այդպէս չէ՞, պապի,—դարձաւ նա Իւան Իւանիչին և ծիծաղեց։—Ես ինքս անկիրթ կին եմ, մի փալաս, մի թթւած բան, ուստի և թթուուտը տանել չեմ կարող! Ընչին զգացմունքներ չեմ սիրում! Մէկը դիւրութեամբ է համակւում, երկրորդը վա-

խում է, երրորդն իսկոյն ներս կը մտնէ այստեղ և կ'ասէ.—«Ինչպէս չէ, տասը տեսակ կերակուր են կերել և սովեալների մասին են խօսում!» Ընչին ու անմիտ բան! Զորրորդը կը յանդգնիմանէ ձեզ, էկզելենցա, որ դուք հարուստ էք։ Նոյնպէս ընչին բան! Հինգերորդը... Ներեցէք ինձ, էկզելենցա, շարունակում էր նա բարձրաձայն, ձեռքը դրած սրտին.—բայց այն, ինչի վերաբերմամբ գործի էք դրել քննչին, որով և նա գիշեր ու ցերեկ ձեր գողերին է փնտռում—ներեցէք, այդ նոյնպէս ընչին բան է ձեր կողմից։ Ես խմած եմ, ուստի և այս բանն այժմ եմ ասում, բայց հասկանում էք, մանր բան է։

—Ո՞վ է խնդրում նրան անհանգստանալ, չեմ հասկանում,—ասացի ես կանգնելով. յանկարծ ես անտանելի դրութիւն, ամօթ և վիրաւորանք զգացի ու մտեցայ սեղանին։—Ո՞վ է խնդրում նրան անհանգստանալ։ Ես բոլորովին չեմ խնդրել... Սատանան տանի նրան!

—Երեքին բանտարկեց և բաց թողեց։ Դուրս եկաւ, որ նրանք չեն, և այժմ նորերին է փնտռում,—ծիծաղեց Սոբոլը։—Մեղք է!

—Փառք Աստուծոյ, որ բաց թողեց։ Ես երբէք չեմ խնդրել նրան անհանգստանալ,—ասացի ես, յուզմունքից պատրաստ լաց լինելու։—Ինչի՞, ինչի՞ համար է այս բոլորը։ Այո, ես մեղաւոր էի, ես վատ էի վարւում, բայց նրանք ինչո՞ւ են աշխատում, որ ես աւելի մեղաւոր լինիմ։

—Էհ, էհ, էհ, էհ!—ասաց Սոբոլը, հանդստացնելով ինձ։—Էհ, ես խմած եմ, այդ պատճառով էլ ասացի։ Իմ լեզուն—իմ թշնամին է։ Է՛հ,—հոգոց քաշեց նա,—կերանք, օղի խմեցինք, խօսեցինք, իսկ այժմ կարելի է և պարկել։

Նա վեր կացաւ հացից, Իւան Իւանիչի գլուխը համբուրեց և կշտութիւնից տատանւելով, սեղանատնից դուրս եկաւ։ Ես և Իւան Իւանիչը լուռ ծխում էինք։

—Բարեկամ, ես ճաշից յետոյ չեմ քնում,—ասաց Իւան Իւանիչը.—իսկ դուք համեցէք կահասենեակն ու հանդստացէք։

Ես համաձայնեցի։ Կիսաղօտ, շատ տաք մի սենեակում, որ կահասենեակ էր կոչւում, պատերի երկայնութեամբ ձգւած էին երկայն, լայն օթոցներ ատաղձագործ Բաւտիգայի ամուր և ծանր

գործերը։ Նրանց վրայ փռուած էին բարձր, փափուկ, սպիտակ, երևի ակնոցաւոր պառաւի ձեռքով յարդարած, անկողիններ։ Մի անկողնում, դէմքն օթոցի յենարանին դարձրած, Սոբոլն էր քնած արդէն, առանց սերտիւկի ու կօշիկների. միւսն ինձ էր սպասում։ Նախ սերտիւկս հանեցի, ապա բոլորովին հանելով և ենթարկելով յոգնածութեանը, Բուտիգայի ոգուն, որ սաւառնում էր խաղաղ կահասենեակում և Սոբոլի թեթև, դուրդուրող խռմփոցին հանգիստ պառկեցի։

«Ես ցնորուել եմ և վատ ու չնչին մարդ եմ,—մտածում էի ես, թագցնելով դէմքս տաք բարձի մէջ.—բայց այս մասին ես ոչ ոքի չեմ ասիլ։ Թող...»

Եւ նոյն ժամին ինձ սկսեցին պատկերանալ կինս, նրա սենեակը, կայարանի կառավարիչը—ատեցող դէմքով. ձեան կոյտերը, հրդեհը թատրոնում. թատրոնը ներսից վառւում է, իսկ ես անտարբերու թեամբ, որպէս թէ ոչինչ չէ եղել, ընկնածներին եմ բարձրացնում և բացատրում նրանց, թէ որ կողմն է դուռը. յետոյ թատրոնից տուն եմ գնում առանց շփոթուելու և առանց հարց տալու ինձ, թէ հրդեհն ինչից առաջացաւ—այդպէս էլ լաւ է։

—Այնուամենայնիւ այս լաւ է, որ քննիչը նրանց արձակել է, ասում եմ ես...

Ես զարթնում եմ իմ ձայնից, մի բոպէաչափ տարակուսանքով նայում Սոբոլի լայն թիկունքին, նրա ժիլետի ճարմանդին և հատ գարշապարներին, յետոյ կրկին պառկում եմ ու քնում։

Երբ ես զարթեցի երկրորդ անգամ, արդէն մութ էր։ Սոբոլը քնած էր։ Ես հոգով հանգիստ էի և ցանկանում էի շուտով տանը լինել։ Ես հագնուեցի և դուրս եկայ կահասենեակից։ Իւան Իւանիչը նստած էր կաբինետում մեծ բազկաթոռի վրայ բոլորովին անշարժ և նայում էր մի կէտի. նկատելի էր, որ իմ քնած ամբողջ միջոցին նա նոյն ընդարմացման դրութեան մէջ է եղել։

—Լաւ է!—ասացի ես, յորանջելով։—Ինձ այնպէս է թուում, որ ես Զատկի թաթախումից յետոյ եմ զարթել։ Այսուհետև յաճախ կը գամ ձեզ մօտ։ Ասացէք խնդրեմ, ձեզ մօտ երբ և է ճաշել է կինս։

—Պա... պա... պա... Պատահում է,—փլնթփնթաց Իւան Իւա-

նիչը, ոյժ գործ դնելով, որ շարժուի։—Անցեալ շաբաթ օրը այստեղ ճաշեց։ Այո... Նա սիրում է ինձ։

Քիչ լռութիւնից յետոյ ես ասացի։

—Ցիշում էք, Իւան Իւանիչ, դուք ասում էիք, որ իմ բնաւորութիւնը վատ է, որ այսպէս ապրելը ծանր է։ Ես համաձայն եմ ձեզ հետ։ Բայց ինչ պէտք է անել, որ բնաւորութիւնս փոխուի։

—Զգիտեմ, հոգիս... Ես տամուկ ու փքուած մարդ եմ, անկարող եմ այլ ևս խորհուրդներ տալ... Այո... Իսկ այն ժամանակ ասացի ձեզ, որովհետև սիրում եմ ձեզ, սիրում եմ և ձեր կնոջը, սիրում էի և ձեր հօրը... Այո։ Ես շուտով կը մեռնեմ և ինչ կարիք կայ թագցնել կամ խաբել ձեզ։ Ուրեմն և կասեմ. շատ եմ սիրում ձեզ, բայց չեմ յարգում։ Այո, չեմ յարգում։

Նա դարձաւ դէպի ինձ և ասաց շշշնջալով ու հոգոց քաշելով.

—Անկարելի է ձեզ յարգել, հոգիս։ Ըստ երևոյթին, դուք որպէս թէ դրական մարդ էք։ Ձեր արտաքինն ու շարժուածքի վայելչութիւնը Ֆրանսիական նախագահ Կարնոիինն են, ինչպէս մօտ օրերս տեսայ... Այո... Դուք բարձր էք խօսում, դուք խելօք էք, աստիճանաւոր մարդ էք. ձեզ հասնել դժուար է, բայց, հոգիս, ձեր հոգին իսկական չէ... Նրանում ոյժ չկայ... Այո։

—Մի խօսքով, սկիւթացի,—ծիծաղեցի ես։—Իսկ կինս։ Ասացէք մի բան կնոջս մասին։ Դուք նրան աւելի լաւ էք ճանաչում։

Ես ուզում էի կնոջս մասին խօսել, բայց Սոբոլը մտաւ ներս և խանգարեց։

—Քնեցի, լաց եղեցի,—ասաց նա, միամտօրէն նայելով ինձ.—բոմով թէյ կը խմեմ և դէպի տուն։

VII

Արդէն երեկոյեան ժամի 8-ն էր։ Նախասենեակից մինչև պատշգամբ, բացի Իւան Իւանիչը, մեզ ճանապարհակցում էին ամեն տեսակ բարի ցանկութիւններով և աւելորդախօսութիւններով դիւղացի կանայք, ակնոցաւոր պառաւը, աղջկերք և դիւղացիք. իսկ ձիերի մօտ, խաւարի մէջ, կանգնած էին և շարժւում ինչ որ մարդիկ լապտերներով, սովորեցնում էին մեր կառապաններին ինչ-

պէս և ուրտեղից անցնել և մեզ բարի ճանապարհ էին մաղթում։ Ձիերը, սահնակներն ու մարդիկ սպիտակ էին։

—Ո՞րտեղից է նրա մօտ այսքան մարդ,—հարցրի ես, երբ իմ եռաձին և բժշկի երկձին կամաց դուրս էին գալիս բակից։

—Դրանք բոլորն էլ նրա ճորտերն են,—ասաց Սոբոլը։—Կանոնադրութիւնը դեռ նրան չէ հասել։ Ոմն հին ծառաներից իր կեանքն է անցկացնում այդտեղ, միւսներն էլ դէհ զանազան որբեր են, որոնք ապրելու տեղ չունին. կան և այնպէսները, որոնք զոռով են ապրում, չես կարող խռկել։ Հրաշալի ծերունի է։

Կրկին նոյն արագ գնացքը, արբած Նիկանորի օտարոտի ձայնը, քամին, չհալւող ձիւնը, որ լցւում էր աչքերս, բերանս և քուրքիս իւրաքանչիւր մի ծալքը։

«Այ թէ թռցնում է ինձ հա!» մտածում եմ ես, իմ զանգակները միանում են բժշկի զանգակների հետ, քամին սուլում է, կառապանները քաջալերում են և այդ մոլեգին աղաղակի մէջ ես յիշում եմ իմ օտարոտի, վայրենի կեանքում տեղի ունեցող այդ եզակի օրւայ բոլոր մանրամասնութիւնները, և ինձ թւում է, որ ես իսկապէս ցնորւել եմ կամ թէ ուրիշ մարդ դարձել։ Այն, ինչ ես եղել եմ մինչև օրս, ինձ խորթ և չափազանց հակառակ է թւում։

Բժիշկը ետևից էր գալիս և ամբողջ ժամանակը բարձրաձայն խօսակցում էր իր կառապանի հետ։ Երբեմն նա հասնում էր ինձ, զուգընթաց գնում միշտ նոյն միամիտ հաւատով, որ ինձ շատ հաճելի է այդ, ծխախոտ էր առաջարկում, լուցկի խնդրում, կամ ասում.

—Իսկ դուք, էկզելենցա, պարզ մարդ էք. առաջ ես ձեզ բոլորովին ուրիշ բան էի երևակայում։

—Խփիր, Վասկա! Անցիր հազարանոցներից! Է՛յ, զոչաղներ!

Եւ բժշկի ձիերը Սոբոլի ու նրա Վասկի բարձրաձայն և չարածնունդ ծիծաղի ազդեցութեան տակ առաջ էին ընթանում։

Իմ Նիկանորը վիրաւորւեց և եռաձին պահեց, բայց երբ բժշկի զանգակների ձայնը դադարեց այլ ևս լսելուց, բարձրացրեց ձեռքերը, բղաւեց և իմ եռաձին կատաղածի պէս առաջ սլացաւ։ Մենք մտանք ինչ որ մի գիւղ։ Ճրագներն ու խրճիթների ստւերա-

գծերն էին նկատուում։ Մէկը կանչեց. «Է՛հ, անպիտաններ!». երկու վերստի չափ սլացանք, բայց դեռ փողոցը շարունակուում էր և նրա վերջը չէր երևում։ Երբ ես հասայ բժշկին և սկսեցինք կամաց գնալ, նա լուցկի խնդրեց և ասաց.

—Ահա, կերակրեցէք այս փողոցը! Իսկ այստեղ այդպիսի հինգ փողոց կայ, պարոն։ Կանգնեմ, կանգնեմ!—ձայն տուեց նա։—Դէպի պանդոկը! Պէտք է տաքանալ և ձիերին հանգստացնել։

Պանդոկի մօտ կանգնեցինք։

—Իմ թեմում այսպիսի գիւղ մէկը չէ,—ասում էր բժիշկը, բաց անելով ճախարակի ճըռռոցի հետ ծանր դուռը և ինձ առաջ ներս թողնելով։ Օրը ցերեկով նայում ես այսպիսի մի փողոցի, ծայրը չէ երևում, դեռ նրբափողոց էլ կայ, ուր մարդ գլուխն է կորցնում։ Դժուար է միտքը ժողովել և մի բան անել։

Մենք մտանք մի «մնքուր» սենեակ, ուր խիստ կերպով սփռոցի հոտ էր բուրում։ Մեր մտնելուն պէս նստարանից վեր ցատկեց մի քնաթաթախ գիւղացի բաճկոնակով և բաց թողած շապկով։ Սոբոլը զարհուրելի խնդրեց, իսկ ես թէյ։

—Դժուար է մի բան անել,—ասում էր Սոբոլը։ Ձեր ամուսինը հաւատում է դրան, ես խոնարհւում եմ նրա առաջ և յարգում նրան, բայց ինքս խորին կերպով չեմ հաւատում, էկզելենցա։ Քանի որ մեր յարաբերութիւնները դէպի ժողովուրդը կը կրեն սովորական բարեգործութեան բնաւորութիւն, ինչպէս դէպի մանկանց ապաստարանները կամ դէպի խեղանդամ զինուորների տները, մենք միայն խորամանկութիւններ կանենք, կը նենգենք, կը խաբենք մեզ և աւելի ոչինչ։ Բրրր! Այս գարեջուր չէ, այլ ինչ որ զահրումար!—մրրթմրթաց նա կնճռոտելով և ցնցելով ամբողջ մարմնով, բայց միևնոյն ժամանակ աշխատելով խմել ամբողջ շիշը մինչև վերջը։—Մեր յարաբերութիւնները պէտք է գործնական լինին, հիմնուած հաշուի, գիտութեան և ճշմարտութեան վրա։ Իմ Վասկան իր ամբողջ կեանքում ինձ մօտ է աշխատել. նա որդիք չունի. նա աղքատ է և հիւանդ։ Եթէ ես հիմայ նրան տալիս եմ օրական 15 կոպէկ, դրանով ցանկանում եմ կրկին վերադարձնել նրան իր նախկին բանուորի դրութիւնը, այսինքն ամենից առաջ պաշտպանում եմ իմ շահերը,—բայց միևնոյն ժամանակ, չգիտեմ ինչու, այդ

15 կոպէկն անւանում եմ օգնութիւն, նպաստ, բարի գործ։ Այժմ խօսենք այսպէս։ Ամենահամեստ հաշուով՝ մարդուն 7 կոպէկ և ընտանիքը 5 անդամից բաղկացած հաշուելով, 1000 ընտանիք կերակրելու համար օրական հարկաւոր է 350 մանէթ։ Այս թուով որոշւում են մեր գործնական պարտաւորական յարաբերութիւնները դէպի 1000 ընտանիք։ Այն ինչ մենք տալիս ենք օրական ոչ թէ 350, այլ միայն 10-ը և ասում ենք, թէ սա նպաստ է, օգնութիւն է, որի համար և ձեզ ամուսինն ու մենք բոլորս բացառապէս լաւ մարդիկ ենք. և կեցցէ մարդասիրութիւնը։ Այսպէս, հոգիս։ Ախ, եթէ մենք աւելի քիչ խօսէինք մարդասիրութեան մասին և աւելի շատ հաշուէինք, դատէինք և բարեխղճաբար վերաբերուէինք դէպի մեր պարտաւորութիւնները! Մեզանում որքան մարդասէր, զգայուն մարդիկ կան, որոնք ջերմ կերպով վազում են դռնից դուռ ստորագրութեան թերթը ձեռներին, բայց իրենց գերձակների և խոհարարուհիների վարձը չեն տալիս։ Մեր կեանքում տրամաբանութիւն չկայ, ահա ինչ! Տրամաբանութիւն!

Մենք լռեցինք։ Ես մտքով հաշուեցի և ասացի.

—Ես կը կերակրեմ ½հազար ընտանիք երկու հարիւր օրւայ ընթացքում։ Վաղն եկէք խօսելու այդ մասին։

Ես գոհ էի, որ այդ բանը պարզօրէն ասացի և ուրախ էի, որ Սոբոլն ինձ աւելի պարզ պատասխանեց.

—Լաւ։

—Ճաշից յետոյ մենք կլիմայի մասին էինք խօսում,—ասացի ես։

—Այո, այսպիսի կլիմայի, այսպիսի տարածութիւնների, անխուսափելի-ցաւալի քաղաքակրթութեան և այսպիսի զարմանալի տմարդութեան միջոցին (ես չիշեցի, թէ ինչպէս էի մինչև այժմ), որի մէջ իմ ամբողջ կեանքն եմ անցրել, մանաւանդ երբ ծառայութեան մէջ էի, մեր միակ փրկութիւնն է—մի կողմից հասարակ, մարդավարի, մէկը միւսին ճշմարտութիւնն ասելու թոյլատրող յարաբերութիւններ, իսկ միւս կողմից—կատարեալ անտարբերութիւն։ Երկիւղը, յուսահատութիւնը, մեր մշտական ջանքերն ինքնասպանութեան համար—այդ բոլորը միայն բարդում են վտանգը։ Սակայն գնանք։ Ժամանակ է։

Մենք վճարեցինք ինչ պէտք էր և դուրս եկանք պանդոկից։

—Սիրում եմ այսպէս գլուխը կորցնել,—ասաց Սորոլը, նստելով սահնակում։—Էկզելենցա, լուցկի շնորհեցէք. ես իմս պանդոկում մոռացայ։

Քառորդ ժամից յետոյ նրա երկաթին յետ մնաց և փոթորկի ձայնից նրա զանգակներն այլևս չէին լսւում։ Գալով սուն, սեռնակներովս անցայ, աշխատելով լաւ մտածել և կարելիին չափ պարզ կերպով որոշել իմ դրութիւնը։ Կնոջս ասելու պատրաստի ոչ մի բառ չունէի։ Գլուխս չէր գործում։

Առանց մտածելու և ոչ մի դարձւած, ես իջայ ներքև կնոջս մօտ։ Նա կանգնած էր իր սեռնակում նոյն վարդագոյն կրկնոցով և նոյն դիրքով, որպէս թէ պահպանում էր ինձանից իր թղթերը։ Նրա դէմքը տարակուսանք և ծաղր էր արտայայտում։ Նկատելի էր, որ նա իմանալով իմ վերադարձը, պատրաստւել էր ոչ լաց լինել, ոչ խնդրել և ոչ իրեն պաշտպանել, ինչպէս երէկ, այլ ծիծաղել ինձ վրայ, պատասխանել ինձ արհամարհանքով և վարւել վճռողապէս։

—Natalie, ես չգնացի,—ասացի ես.—բայց այդ խաբէութիւն չէ։ Ես ցնորւել եմ, ծերացել, հիւանդ եմ, ուրիշ մարդ եմ դարձել—ինչպէս ուզում էք, հասկացէք... Ես իմ նախկին ես-ից հեռացայ սարսափով, արհամարհում եմ նրան և ամաչում նրա փոխարէն, իսկ այն նոր մարդը, որ ինձանում է երեկւանից սկսած, չէ թողնում ինձ գնալ, հեռանալ։ Մի խռկէք ինձ, Natalie!

Նա անքթիթ աչքերով նայում էր դէմքիս, հաւատում էր և նրա աչքերում անհանգստութիւն էր փայլում։ Հիացած նրա ներկայութեամբ, տաքացած նրա սենեակի ջերմութեամբ, ես փնթփընթում էի, որպէս ցնորքի մէջ, ձեռքերս մեկնած ունենալով դէպի նա.

—Ես ձեզ ասում եմ. բայի ձեզանից ես ոչ մի մտոը մարդ չունիմ։ Ես ոչ մի բոպէ չեմ դադարել տխրելուց ձեր վերաբերմամբ և միայն յամառ ինքնասիրութիւնը խանգարում էր ինձ խոստովանել այդ բանը։ Այն անցեալը, երբ մենք ապրում էինք որպէս մարդ և կին, չէ վերադառնալու և պէտք էլ չէ, բայց դուք ինձ ձեզ ծառայ արեցէք, վերցրէք իմ ամբողջ կարողութիւնը և բաժանեցէք, ում ցանկանում էք։ Ես հանգիստ եմ, Natalie, ես զոհ եմ... Ես հանգիստ եմ...

Կինս, որ անքթիթ աչքերով և հետաքրքրութեամբ դէմքիս էր նայում, յանկարծ կամացուկ ճչաց, լաց եղաւ և վազեց հարևան սենեակը։ Ես վեր բարձրացայ իմ սենեակը։

Մի ժամից յետոյ ես արդէն նստած էի սեղանիս մօտ և «երկաթուղիների պատմութիւնն» էի գրում, իսկ սովեալներն ինձ չէին խանգարում այդ անելու։ Այժմ ես այլևս անհանգստութիւն չեմ զգում։ Ոչ այն անկարգութիւնները, որ ես տեսայ, երբ մօտ օրերս կնոջս և Սոբոլի հետ շրջում էի Պետրովսկի խրճիթները, ոչ չարագուշակ լսածներս, ոչ շրջապատող մարդկանց սխալները, ոչ իմ մօտալուտ ծերութիւնը—ոչ մէկն ինձ չէ անհանգստացնում։ Ինչպէս պատերազմի ժամանակ թռչող ռումբերն ու գնդակները չեն խանգարում զինուորներին խօսել իրենց գործերի մասին, ուտել և ոտնամանները կարկատել, այնպէս էլ սովեալները չեն խանգարում ինձ հանգիստ քնել և պարապել իմ անձնական գործերով։ Ցանը, բակում և հեռու շրջակայքում եռում է այն գործը, որին բժիշկ Սոբոլը «Բարեգործական օրգիա» է անուանում։ Կինս յաճախ ինձ մօտ է գալիս և իր աբեղայական արտայայտութեամբ անհանգիստ կերպով աչքի է անցնում իմ սենեակները, որպէս թէ ընտրելիս լինի, ինչ որ կարելի է տալ սովեալներին, «իր կեանքն արդարացնելու համար», և ես տեսնում եմ, որ նրա շնորհիւ շուտով մեր կարողութիւնից ոչինչ չի մնալ և մենք աղքատ կը լինինք, բայց այդ ինձ չէ յուզում և ես ուրախ ժպտում եմ նրան։ Այն օրից, երբ ես անտարբեր մարդկանց հետ միասին մնայ միևնոյն գնդի մէջ, ես էլ դարձայ անտարբեր, և ես լաւ եմ։ Թէ ինչ կը լինի յետոյ, այդ չգիտեմ։

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ԱՐՇԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Տանջելիր, բայց լռիկ. քո արցունքները
Թող մարդկային տեսք չարատաւորէ,
Թող հոգուդ խորքում դառն հաւաճները
Ծփան ալեկոծ, վիշտը չը նիրհէ,
Բայց ոչ խաղով անմիտ
Երևան ճակատիդ։

Թագցրու ամեն ինչ և արհամարհիր
Անբան ամբոխի վշտակցութիւնը—
Նա կեղծ է, թունոտ և ոչ սիրալիր,
Պատրանք ահաւոր, որ սրբութիւնը
Իր մօտումն անցնելիս
Ոտնատակ է տալիս։

Ահա քեզ նոր կեանք. ապրիր միայնակ,
Հեռու յոյսերից չարաչար խաբող,
Եւ անցող վիշտը, հոգսը դըժընդակ
Թող մաշէ կուրծքդ հողին կարօտող,
Մինչև գայ օր մահուան,
Եւ իջնես գերեզման...

1897 թ. յուլիսի 29. Բաղու։

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

ՎԷՊ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

(Շարունակութիւն [1])

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻԱՍԹԱՓՈՒՄՆԵՐ

IV

Դեբիւտի օրը, ներկայացումից երկու ժամ առաջ, Ոսկերչեանը հապճեպ շորերը հագաւ և ճամպարեց դէպի թատրոն։ Իւր ծանօթներից Պրոսպէկտում նա հանդիպեց Սեւումեանին, որի երեսին նայեց ցրւածութեամբ և շտապ անցաւ մօտովը։ Սեւումեանը զարմացած ետ նայեց։ «Ինչու սա ինձ չպիտի բարեւէր», մտածեց նա. «չվաստակած և ենթադրական փառքովն է հպարտացել? Թէ իմ նախկին ծանօթներին է հետեւում, որոնք այլ ևս չեն բարեհաճում արժանացնել ինձ իրանց ողջունին?...»

Եւ նա ծիծաղեց սարդոնական կծու քրքիջով ու, գլուխը թափահարելով, խօսեց քթի տակից.

—Դեռ սպասեցէք. ես ձեզ հետ հաշիւներ ունիմ!...

---

[1]) Տես «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3, 4, 5, 7—8.

Ինչպէս օձը, որը վշում է և կարծես տանջող պահանջ է զգում շանթել իւր ոտնահարողին, այնպէս էր Սևումեանը իւր թշնամիների վերաբերմամբ, մանաւանդ այդ երեկոյ։ Երկար տատանումներից յետոյ նա վճռել էր այդ օր գնալ այցելութեան «Ճառագայթի» խմբագրին։ Բայց խմբագրութեան բացուած դուռը նոյն րոպէին զոցւել էր նորա առաջ սրբագրիչի լակոնական պատասխանով.

—Նա չէ կարող ընդունել։

Սևումեանը տեսաւ իրան ոչնչացած, զգաց, որ ամեն բան վերջացաւ, մարեց յուսոյ վերջին ճառագայթը, կտրւեց այդ խմբագրութեան հետ ունեցած վերջին կապը։ Բայց այդ խմբագրութիւնը մի ահագին բանակ էր, և այդ բանակի առաջ նա տեսաւ իրան դէմ յանդիման կանգնած... Բեմի ետև գնալուց առաջ Ոսկերչեանը ինքն էլ չ'իմացաւ, ինչու, քայլերը ծռեց դէպի հանդիսարանը, որ այդ րոպէին բոլորովին մութ էր և դատարկ։ Կարծես տեղումը գամուած՝ յառած աչքերը դարձրել էր նա դէպի վարագուրած բեմը և աշխատում էր երևակայել իրան միևնոյն ժամանակ երկու դերի մէջ՝ Ոսկերչեանը բեմի վրայ, Ոսկերչեանը հանդիսատես։

Յետոյ նա դահլիճից դուրս եկաւ և գնաց բեմի ետև։ Նեղլիկ նրբանցքի մէջ նա պատահեց Զիլչագեանին, որը՝ ձեռքերը ետևին դրած և սուլելով անց ու դարձ էր անում։

—Ա, դու այստեղ ես, Զիլչագեան? ասաց Ոսկերչեանը բարևելով։

—Այո, բաւական ժամանակ է, որ եկել եմ։

—Ուրիշ ոչոք չկայ?

—Ո՛չոք։

Բայց շուտով կուլիսների կողմը սկսեց կենդանանալ։ Մէկը միւսի ետևից երևում էին դերասանները և դերասանուհիները։ Իրարանցում և շարժում նրբանցքից դէպի կուլիսները, բեմից դէպի նրբանցքը, մի սենեակից դէպի միւս սենեակը։ Որը զգեստի հոգսն է քաշում, որը շտապեցնում է վարսաւիրին։ Մէկը սպիտակ ու վարդագոյն սնգուրով ներկում է ճակատը, այտերը և շրթունքը, միւսը զգեստաւորուած և փողպատը կապելով սիրունանում է հայելու առաջ, մի երրորդը իւր օտարոտի շորի վրայ է սրախօսութիւններ անում։ Ոմանք վարագոյրի ծակոտիքից հետաքրքիր աչ-

քով նայում են դէպի դահլիճը և, շտապելով ընկերների մօտ, գոչում են.

—Պարոններ, շտապեցէք. դահլիճը լցւում է!

Երկրորդ զանգը տրւած էր։ Բայց հանդիսականների մի մասը դեռ ճեմում էր ֆոյէում։ Գարեգին Զառիկեանը անց ու դարձ էր անում այնտեղ օր. Վարթումեանի հետ, և երջանիկ ժպիտը չէր հեռանում ոչ մէկի, ոչ միւսի շրթունքից։ Օր. Աշխէնը երթևեկում էր Ազատեանի հետ, և դէսից դէնից զրոյց էին անում։ Դրան մօտ երևաց այդ ժամանակ Սևումեանը, որը, տեսնելով օր. Զառիկեանին իւր ոխերիմ թշնամու հետ, ձևացաւ, թէ նորան չկատեց, և առանց բարև ելու անցաւ կողքիցը։ Օր. Աշխէնը, նորան տեսնելուն պէս, դարձաւ խօսակցին և ասաց.

—Պարոն Ազատեան, ձեր բարեկամը։

—Ասացէք «նախկին բարեկամը», որովհետև այժմ—հօ դուք գիտէք?...

Երբ օրիորդը յայտնեց իւր զարմանքը Սևումեանի վերաբերմամբ, որ նա այնքան կարճ միջոցում կարողացաւ այն աստիճան փոխուել, որ գրեթէ անճանաչելի է դարձել, Ազատեանը նկատեց.

—Դուք սպասեցէք, օրիորդ. յետոյ աւելի լաւ կը ճանաչէք այդ մարդուն։ Ես կը պատռեմ այն դիմակը, որ նա կրում է երեսին, և դուք կը տեսնէք նորա իսկական կերպարանքը։

Յետոյ նա հարցրեց.

—Դուք յիշում էք, օրիորդ, որ Սևումեանը մի քանի ամիս առաջ ինչպիսի եռանդով էր աշխատում իւր մատենադարանի համար?

—Այո, այո, ի հարկէ։

—Լաւ է, մի չէք հետաքրքրւում իմանալ, թէ ինչ եղաւ այդ խնդիրը?

—Ես մի քանի անգամ հարցրել եմ այդ մասին, նա միշտ ինձ պատասխանում էր, թէ դա իւր նուիրական գաղափարն է, որ վաղ թէ ուշ պիտի իրագործի։

—Բայց եթէ ես ձեզ յայտնեմ, որ այդ խնդիրը նա ձգել է Լետա գետը, այն ժամանակ?

—Ինչպէս թէ?...

—Ինչ որ նա ասում էր, բոլորը բառեր, բառեր, բառեր էին։

—Ուրեմն նա չպիտի բանայ?

—Երբէք։

—Բայց ինչու? Չէ որ նա մի գումար էր ժողովել դորա համար?

Ազատեանը պատմեց իւր գիտցածը մատենադարանի մասին և աւելացրեց վերջումը։

—Սևումեանը կարծում է, թէ այդ ինդիրը ձգձգելով մի բան կարող է վաստակել։ Բայց ոչ. ես այդ բոլորը հրապարակ պիտի հանեմ!

—Եւ այդ բոլորը անում է Սևումեանը, նա, որի ազնուութեան մասին ես այնքան մեծ կարծիք ունէի... Ասաց օր. Աշխէնը, անցողակի հայեացք նետելով Սևումեանի վրայ, որը այդ բոպէին թատրոնասէրների մի խմբի մէջ կանգնած՝ խօսում լսում էր և երբեմն կասկածոտ աչքով երեսը դարձնում Ազատեանի և օր. Զաուիկեանի կողմը։

Նոյն այդ խմբի մէջ մի քանի պարոններ գուշակութիւններ էին անում Ոսկերչեանի դեբիւտի անյաջողութեան նկատմամբ։

—Անկարելի բան է,—խօսում էր թատրոնասէրներից մէկը՝ մեծ ու կլոր աչքերով և գլուխը թափահարում այնպէս, որ լերկ կատարը, պղնձեայ գաւաթի պէս, փայլփլում էր դազի լուսոյ ճառագայթներից,—անկարելի բան է, որ այդ Ոսկերչեանը, չեմ ասում յաջող, գոնէ փոքր ինչ տանելի կերպով կարողանայ իւր դերը կատարել։

—Ինչ նրա բանն էր Կոռռադոն? Նկատեց մի այլ պարոն խըռպոտ ու հաստ ձայնով.

—Ասում են, իրան շատ երևակայում է։

—Այո, իրան մի երևելի արտիստ է կարծում։

—Նորա հախիցը պէտք է դալ!

—Դեռ մի տեսնենք, ինչպէս կը լինի։

Այդ չկամեերից մէկը կամ միւսը, խմբից հեռանալով և հանդիպելով այս կամ այն ծանօթին, խօսք էր բաց անում Ոսկերչեանի մասին և վաղօրօք մարգարէանում նորա կրելիք ֆիասկոն։ Այդպիսիները կարծես դիտմամբ աշխատում էին բարձրաձայն խօսել, որպէս զի կողմնակի անձինք էլ իմանան, թէ ինչ կարծիք

ունին նոքա նոր դերասանի մասին։ Դոցա շնորհիւ, հասարակութեան մի մասը ոչ բարի զգացմունքներով էր տոգորուած Ոսկերչեանի վերաբերմամբ։ Իսկ մի անբախտութիւն է արտիստի համար, երբ նա երևում է բեմի վրայ դեր կատարելու այնպիսի հանդիսականների առաջ, որոնք եկել են թատրոն կանխակալ կարծիքներով և նախապաշարուած նորա դէմ։ Դահլիճի տրամադրութիւնը մի անհասկանալի զօրութեամբ իսկոյն հաղորդւում է դերասանին, և եթէ լաւ է այդ տրամադրութիւնը, նա ոգևորւում է, նորա վստահութիւնը մեծանում է, աւելի համարձակ է փոխում քայլերը, իսկ եթէ վատ, այն ժամանակ նորա հոգին ընկճւում է, սիրտը ճընշւում, նա կորցնում է իւր ինքնավստահութիւնը, որ այնքան կարևոր պայման է յաջողութեան, նորա ներշնչման թևերը կտրատւում են, լեզուն կապ է ընկնում, շարժումները կաշկանդւում են։

Առաջին արարածում Ոսկերչեանը դեր չունէր։ Այդ միջոցին նա խնամքով պատրաստում էր իւր գրիմը վարսաւիրի օգնութեամբ։

Շուտով պիտի սկսէր երկրորդ արարածը, որի մէջ առաջին անգամ պիտի երևար Ոսկերչեանը։ Վերջին զանգը տրուած էր։ Բեմի վրայից դերասանները շտապով հեռացան։ Սցենարիուսը կամենում էր նշան տալ, որ վարագոյրը բարձրացնեն։ Բայց նոյն վայրկենին Ոսկերչեանը արագութեամբ իրան ձգեց բեմը, ձեռքը սրտի վրայ և քիչ կռացած ձախ կողմի վրայ, նետուեց բազկաթոռի մէջ և ասաց սցենարիուսին.

—Քիչ սպասիր...

Նորա սիրտը ուժգնապէս բաղխում էր։ Աչքերը սևանում էին։ Գլուխը պտոյտ էր գալիս։ Նորան թուաց, որ այդ բոպէին մոռացել էր դերը սկզբից մինչև վերջ։ Բայց կարճատև հանգստութիւն, բոլորը անցաւ։

—Դէ, այժմ կարող ես,—ասաց նա և շտապեց ծածկուել կուլիսի ետև։

Վարագոյրը բարձրացաւ։

Քիչ յետոյ երևաց Ոսկերչեանը։

Հէնց որ մոնսինեօրի հարցումներին հետևեցին Կոռուապոյի լակոնական պատասխանները, հանդիսարանի առաջի շարքերից լսեցին ձայներ.

—Բարձր! բարձր!

Այդպէս գոչեցին այն պարոնները, որոնք ներկայացումից առաջ խմբուած էին ֆոյէում և խօսում էին Ոսկերչեանի դէմ։

Ոսկերչեանը, իւր անփորձութեան պատճառով, դեռ անծանօթ էր թատրոնի ակուստիկային պայմաններին, և նորա արտասանած բառերը սկզբում չհասան մինչև դահլիճի ծայրը։ Բայց ուշադրութեան արժանին այն հանգամանքն է, որ «բարձր, բարձր» կանչողները ոչ թէ նոքա էին, որ չլսեցին Կոռուաղօլի խօսքերը, այլ նոքա, որոնք պարզ լսեցին և հասկացան, թէ ինչ ասաց արտիստը։

Ինչ և իցէ։

Ոսկերչեանը շփոթուեց այդ խօսքերի վրայ։ Նորան թուաց, որ այդ նկատողութիւնը մի թշնամական ցոյց էր։ Նա խօսում էր մոնսինեօրի հետ, բայց միևնոյն ժամանակ նորա ուղեղի մէջ ուրիշ բան էր կատարւում։ «Ովքեր կը լինէին այն պարոնները», մտածում էր նա, «որոնք գոչեցին. «բարձր, բարձր!» Եթէ դա պատահէր փորձի ժամանակ, նա կ'ընդհատէր խաղը, աչքերը կ'ոլորէր յանդուգն թշնամու վրայ, իսկ այժմ...» Նա խօսում էր մոնսինեօրի հետ, լսում էր նորան, շարժում էր գլուխը և ձեռքերը, նա կատարում էր դերը, բայց մինչև գործողութեան վերջը նորա ականջին շարունակ հնչում էր ատելի ձայնը. «բարձր! բարձր!»

Երբ Ոսկերչեանը դուրս եկաւ բեմից, նա իրան զգաց այնպէս ոչնչացած, կարծես մէկը ապտակ էր զարկել երեսին, և ինքը չէր կարողացել պատասխանել զարկողին։ Ընկերներից ոչ մէկի երեսին չնայեց, ոչ մէկի կարծիքը չուզեց իմանալ։ Ինքը իրանից դժգոհ էր, ինքը իրանից ամաչում էր։ Միթէ այդ բաւական չէր? Մռայլած դէմքով նա շտապեց դէպի իւր նկուղը, ձեռքի ափով ետ հրեց սենեկի միափեղկ դուռը այնքան ամուր, որ նա պատին զարնուելով ինքն իրան զոցուեց նորա ետևից։ Սրտնեղութեամբ ընկաւ աթոռի վրայ, բռնեց ձեռքով իւր գլուխը և բռունցքի մէջ այնպէս սկսեց ոլորեց մազերը, որ արմատները ցաւեցին, և գանգի մաշկը տեղից շարժուեց։

Ֆոյէում հաւաքուել էին մեզ ծանօթ թատրոնասէր պարոնները, տաքացած խօսում վիճում էին, և, ըստ երևութին, Ոսկերչեանի անունը մեծ զայրոյթով էր արտասանւում։

—Ո՛չ, պարոններ, սա յանդգնութիւն է! խօսում էր Թատրոնի մոլեռանդ երկրպագուներից մէկը։—Ինչպէս է համարձակուել այդ թշուառականը բեմ դուրս գալ ահագին հասարակութեան առաջ և այն էլ Կոռռադոյի պատասխանատու դերի մէջ!

—Նորան հարկաւոր է խայտառակել լրագիրներում! կրակի վրայ կրակ էր աւելացնում մի ուրիշ պարոն, և ակնոցների տակից պսպղում էին աչքերը։

—Այո՛, չպէտք է խնայել! գոչում էր մի երրորդը։

—Ես Նորանից լաւ կարող եմ կատարել այդ դերը!

—Դու Նորանից հազար անգամ լաւ կը կատարես!

—Բայց ես ոչ մի կերպ չէի համարձակուիլ!

—Նա մինչև անգամ իրան պահել չգիտէր բեմի վրայ!

—Իսկ զգացմունքից—բոլորովին զուրկ է!

—Ձայն—ամենևին չունի!

—Այո՛, բեմական չէ!

Թատրոնասէրների մի այլ խմբի մէջ, որը աւելի ներողամիտ էր երևում սկսնակի վերաբերմամբ, աւելի մեղմ կարծիքներ էին յայտնում Ոսկերչեանի մասին։

—Երևում է իսկոյն, որ դեռ անփորձ է,—ասում էր մէկը։

—Եւ պահանջել աւելի մի նոր սկսող դերասանից—անկարելի է,—նկատում էր երկրորդը։

—Ձայնը բաւական լաւ է և բեմական։

—Բայց երբեմն շատ ցածր է խօսում։

—Ո՛չ, այնուամենայնիւ շնորհք երևում էր։ Ապագայի յոյսեր տալիս է։

—Գրիմը լաւ չէր։

—Դէ գրիմը—դժուար բան է։ Դա մի արուեստ է, որ դերասանը միայն կամաց-կամաց կարող է սովորել և կատարելագործել։

—Ես դժուարանում եմ առայժմ իմ կարծիքը յայտնել։ Արտիստը իւր կարողութիւնը ցոյց կը տայ միայն այն ժամանակ, երբ կլանուած է իւր դերով։ Ոսկերչեանը կարծես իւր դերի մէջ չէր...

Երրորդ արարուածի մէջ Ոսկերչեանը համեմատաբար աւելի լաւ էր։ Նորա խաղի մէջ երևում էր ջերմութիւն և կենդանութիւն։ Երկու բաժակ գինին էր արդեօք պատճառը, թէ այն բար-

կութիւնը, որով նա այս անգամ ոտ դրեց բեմի վրայ, նա ոգևորուած էր։ Ինչպէս մարդ յուսահատական կռուի մէջ, իւր մօտալուտ անկումը գուշակելով, լարում է իւր բոլոր ոյժերը և տաքանում, այնպէս էր Ոսկերչեանը երրորդ գործողութեան մէջ։ Նա սկսել էր տպաւորութիւն գործել, այնպէս որ դահլիճում տիրում էր կատարեալ լռութիւն՝ դադարել էր չկամութեան ձայնը։ Զառիկեանները և օր. Վարթումեանը նստած էին միևնոյն կարգում իրար մօտ, և նոքա հրճւանքով հաղորդեցին միմեանց իրանց կրած զգացմունքները։

—Հիմա լաւ է, այնպէս չէ?

—Այո, գեղեցիկ է։

—Այսուհետև լաւ կը գնայ։

Բայց շուտով խաղը կրկին թուլացաւ, և ահա ինչու։ Ցուշարարը, սխալմամբ, թէ դիտմամբ, Աստուն է յայտնի, երկու թերթը միասին է շուռ տալիս և յուշարարում է բոլորովին ուրիշ բան, այնպէս որ, եթէ իւր դերը լաւ չիմանար Ոսկերչեանը և կրկնէր յուշարարի խօսքերը, դուրս կ'գար մի անհեթեթ բան, մի կատարեալ խայտառակութիւն Ոսկերչեանի համար։ Թէև նա անգիր գիտէր իւր դերը և շարունակեց անսայթաք արտասանել, բայց այդ հանդամանքը փոխեց նորա տրամադրութիւնը, նա զայրացաւ, և քիչ էր մնում՝ հեռանար բեմից և հրամայէր իսկոյն վարագոյրը իջեցնել։ Ոսկերչեանի սրտի մէջ վախ ու կասկած էր ընկել։ Նորան թւում էր, որ շատերը իւր ընկերներից դաւադրութիւն են կազմել իւր դէմ և ուրախ կը լինեն, եթէ նա տապալուի։ Ցուշարարի սխալը դաւադրութեան միապայոյց էր, նորա կարծիքով, և այդ բանի մէջ նա տեսաւ չարդիտաւորութիւն։ Արարածի վերջը բոլորովին փճացաւ, ի մեծ ցնծութիւն նորա չարակամների։

Երբ վարագոյրը իջաւ, Ոսկերչեանը բարկութեամբ գոչեց յուշարարի վրայ, ասելով.

—Ինչու կամեցաք ինձ սխալի մէջ ձգել?.

—Ներողութիւն, պարոն Ոսկերչեան։ Ի հարկէ, հօ դիտմամբ չէր? Ես սխալեցի և փոխանակ...

—Դուք սխալեցիք?!...

—Ապա ինչ էք կարծում?

Քանի որ անկարելի էր ապացուցանել, թէ յուշարարի արածը մի սխալմունք էր թէ չար դիտաւորութեան գործ, ուստի Ոսկերչեանին մնում էր միայն իւր զայրոյթի կրակը հանգցնել և շտապ հեռանալ Նորա մօտից։ Նորա աչքին դիպաւ յանկարծ Ջամբազեանի երեսը, և նա պարզ նկատեց Նորա դէմքին հազիւ զբսպուած բաւականութեան չարախնդաց ժպիտը։ Նա տեսաւ իւր ընկերներին, որոնք կուլիսների ետև Նրբանցքի ծայրում կանգնած էին և կամաց խօսում։ Նա լսեց մէկի ձայնը, որ ասում էր.

—Հասարակութիւնը դժգոհ է...

«Բայց ահա և Սևումեանը։ Նա ինչի համար է եկել բեմի ետև դերասանների մօտ։ Արդեօք նա չէ այդ լուրը բերել դահլիճից? Ահա Մուրադեանը մօտեցաւ և բարևեց։ Նոքա խօսում են և, ինչ տարակոյս, Ոսկերչեանի խաղն են դատափետում։ Ջամբազեանն էլ գնաց Նորա մօտ։ Եաղօ, Եաղօ! Այն ինչ ժպիտ է Նորա դէմքին!... Իսկ Զիչագեանը, Աստուած, ինչպէս քծնում է Սևումեանին! Չէ որ Սևումեանը-բեցենզենտ է!... Այսպէս էր մտածում Ոսկերչեանը, նայելով շուրջը, և իզուր էր որոնում մէկին, որ մօտ գար, խրախուսէր, սիրտ տար Նորան։

Ոսկերչեանը մտաւ սենեակը և մենակ սկսեց անց ու դարձ անել այնտեղ՝ ձեռքերը կրծքին ծալած, տխուր, կորագլուխ։

Այդ ժամանակ դրան մէջ երևաց բարձրահասակ մի պարոն և, Ոսկերչեանի անունը տալով, մօտեցաւ Նորան և ձեռք տուեց։ Դա ծանօթ բժիշկ էր։

—Դուք տկար էք, պարոն Ոսկերչեան? հարցրեց նա, ակնոցի միջից նայելով Նորա երեսին,

—Ես—տկար? եղաւ Ոսկերչեանի զարմացական պատասխանը։

—Այո, ինձ ուղարկեցին այստեղ։ Ուրեմն դուք առողջ էք? Ոչինչ չէ պատահել?

—Կատարեալ առողջ։

—Ներողութիւն, պարոն Ոսկերչեան։ Շատ ուրախ եմ, որ առողջ էք,—ասաց բժիշկը և իսկոյն դուրս եկաւ գնաց։

«Այս ինչ հանելուկ էր?» մտածեց Ոսկերչեանը և զարմանքով նայեց բժշկի ետևից։ Բայց հանելուկը առայժմ մնաց հանելուկ, չնայած որ նա գրեթէ իւր բոլոր արւեստակիցներին հարցրեց այդ

մասին։ Ոչ ոք չկարողացաւ կամ չկամեցաւ ասել, թէ ով կամ ինչ նպատակով էր բժիշկ ուղարկել Ոսկերչեանի մօտ.

Վերջին արարւածում, ինչպէս յայտնի է, Կոռռադօն մեռնում է։ Եւ Ոսկերչեանը սրւակով թոյն ընդունեց և ջղաձգութեան ցնցումներով մեռաւ։ Նորա մեռնելը, ինչպէս երևաց, շատերին դուր եկաւ, որովհետև, վարագոյրը իջնելուց յետոյ, անմիջապէս հեռևեցին ծափահարութիւնները, և սկսեցին կանչել Ոսկերչեանին։ Թատրոնում միշտ պատահում են ներողամիտ հանդիսատեսներ, որոնք շատ բան չեն պահանջում դերասանից ծափահարելու համար։ Նոքա գոհ են, որ արտիստը իրանց զւարճութեան համար թոյն է խմում և մեռնում։ Այդպիսի ծափահարութիւնների Ոսկերչեանը այդ երեկոյ արժանացել էր մի քանի անգամ։ Բայց այդ ցոյցը նորան ամենևին չուրախացրեց։

Դեբիւտը անցաւ անշուք։ Ինչ որ երազում էր, չիրականացաւ։ Ո՛չ աղմուկ, ո՛չ բուռն կեցցէներ, ո՛չ տեղացող ծաղիկներ, ոչ ծածանւող թաշկինակներ... Այդ բոլորից և ոչ մէկը չտեսաւ Ոսկերչեանը։ Եւ ահա նա պիտի դնար իւր կացարանը մեն-մենակ, սիրտը կոտրւած, տխուր, նա պիտի տանէր իւր հետ անփառունակ, անշուք դեբիւտի գերեզմանաքարի պէս կուրծքը ճնշող ծանր տրտաւորութիւնը։

—Իմ դեբիւտը իմ փայփայած երազներից մէկն էր, և նա օդը ցնդեց! մրմնջաց Ոսկերչեանը, դուրս գալով թատրոնից։

V

—Ա՛խ, մի հանգիստ քուն, մի ինքնամոռացում! ասաց նա, մտնելով իւր սենեակը։

Եւ անմիջապէս հանեց շորերը ու պառկեց։

Առաւօտեան արթնացաւ շատ վաղ, չնայած որ քնել էր շատ ուշ։ Հէնց որ աչքերը բաց արաւ, նոյն ակնթարթում անցած երեկոն, որի հերոսն էր նա, պատկերացաւ նորա առաջ։ Զարմանալի բան. կարծես սկի քնած չլինէր այդ գիշեր. այնքան թոյլ էր, յոգնած էր, այնպէս ճնշւում էր կուրծքը, այնպէս ծանր էր շնչառութիւնը։ Սառած աչքերը առաստաղի վրայ բևեռած՝ նա ընկած

էր անշարժ, և միտքն էր միայն, որ շարժւում էր ուղեղի մէջ և կրկնապատկում հոգեկան ցաւը։

Ինչ յոյսեր էր դրել նա իւր դեբիւտի վրայ, և ինչ դուրս եկաւ? Զարաբախտ երեկոյ! Զորս ժամ շարունակ նա տանջեց նորան, չարչարեց, սպանեց և կիսամեռ կիսակենդան դիակի պէս ձգեց նորան մահճի մէջ!...

Դեբիւտ! Դա այն անխիղճ, անողոքելի դատաւորն է, որ յաճախ որոշում է սկսնակների վիճակը, խորտակում է յոյսերը, սևացնում ապագան և կեանքի վերջակէտը դնում!

Այս ինչ տեղը նա բոլորովին փչացրեց։ Այն ինչ տեղը նա կատարեց սովորածի հակառակ։ Մի գործողութեան մէջ նա երկու անգամ շփոթւեց։ Մի տեսարանում նա բաց թողեց մի քանի կարևոր խօսքեր։ Մի անգամ նա մոռաւ բեմ մի քիչ աւելի ուշ։ Այդ բոլորը անփորձութեան հետևանք էր։

Բայց ինչու *շրջապատողներն* էլ միացել էին այն չար ոգու հետ, որը կարծես վճռել էր միանգամից տապալել ջահել դեբիւտանտին?

Այն *ով* էր, որ հասարակութեան միջից գոչեց. «բարձր, բարձր?» Ինչու *յուշարարը* կամեցաւ նորան շփոթեցնել և ծիծաղելի դարձնել հանդիսականների առաջ? Իսկ *ընկերները*, ընկերները... նոքա ինչու էին ուրախացել? Իսկ *ըժկին* ով էր ուղարկել և ինչ նպատակով էին ուղարկել?... Այդ պէտք է իմանալ, անպատճառ պէտք է իմանալ!

Բայց այնուամենայնիւ հետաքրքրական է ինչ տպաւորութիւն է գործել նա հասարակութեան վրայ։ Կարելի է, իւր սեփական անձի ամենախիստ դատաւորը հէնց ինքն է, որ կայ? Գուցէ հանդիսականներից շատերը գոհ են մնացել?

Երեկոյեան, երբ դասի գնայ Վարթուհեանների մօտ, նա կարող է հանդիպել օրիորդին։ Ա՛խ, նա, նա ինչ կ'ասէ? Արդեօք չհիասթափեց? Արդեօք չփոխեց իւր կարծիքը Ոսկերչեանի մասին?

Դասից յետոյ նա կ'երթայ Զառիկեանների մօտ։ Այնտեղ նա կարծիքներ կը լսէ, կարծիքներ առանց շողոքորթութեան, առանց չափազանցութիւնների։ Նա կ'իմանայ այնտեղ, թէ ինչ էին խօսում հասարակութեան մէջ իւր խաղի և ընդունակութիւնների

մասին։ Այնտեղ նորան կը խրախուսեն, կը մխիթարեն։ Ամենից շատ այժմ նա քաջալերութեան է կարօտ։

Բայց այդ բոլորը—երեկոյեան։ Իսկ այժմ? Ինչպէս համբերել մինչև երեկոյ? Արդեօք մի չ'անցնել Պրոսպեկտով? Այո, այո, այդ լաւ կը լինի։

Ոսկերչեանը վերկացաւ, հագնուեց, խմեց թէյը և սլապիրոսը կպցնելով դուրս եկաւ փողոց։ Երկինքը ամպած էր, անձրև էր գալիս, փողոցներում ցեխ և վազող առուակներ։ Իւր ծանօթներից նա ոչ մէկին չպատահեց։ Ով պիտի ախորժէր զբօսնելու այդ անպիտան եղանակին?

Նա վերադարձաւ իւր բնակարանը։ Սենեկի դրան մօտ նա դրեց չորանալու բաց հովանոցը, ինքը մտաւ ներս, և մահճակալի վրայ ձգելով՝ կրկին խորասուզուեց մտածմունքի մէջ...

Երեկոյեան նա գնաց Վարթումեանների տունը։ Նախասենեկում զիլ մետաղաձայն հաչոցով նորա առաջ դուրս եկաւ փոքրիկ շնիկը, որին այնքան սիրում փայփայում էր օրիորդը, որը իրան այնքան լաւ էր զգում օրիորդի գրկում և նորա համար մի կենդանի խաղալիք էր։ Իսկոյն նա ճանաչեց սովորական հիւրին և ուրախ-ուրախ պոչը շարժելով առաջ ընկաւ և կանգնեց դրան մօտ, կարծես ուզում էր նորան դահլիճ հրաւիրել։ Ոսկերչեանը, ներս մտնելուց առաջ, վերցրեց շնիկին, շոյեց գլուխը և վիզը, համբուրեց նորա մաքուր-սպիտակ դանդուրները, որոնց, ով գիտէ, քանի անգամ է դիպել նորա շրթունքը, յետոյ վայր դրեց յատակի վրայ և, երբ կամենում էր դուռը բաց անել, երգի ձայն լսեց դահլիճից։

—Վա՛հ, Գարեգինն է!... Ուրեմն նա այստեղ է?... Այս լաւ է!

Ասաց ու գնաց ներս։

Դաշնամուրի առաջ նստած էր օր. Վարթումեանը և դաշնակցելով երգչին՝ նւագում էր, և նորա կողքին կանգնած էր Գարեգինը այնքան մօտ, որ նորա թեւը կիպ կպած էր օրիորդի ուսին. նա երգում էր «Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով»։

Իսկոյն ընդհատուեց նւագը և երգը։

—Շարունակեցէք, շարունակեցէք, խնդրեմ,—ասաց Ոսկերչեանը՝ տեղումը կանգնելով։

Գարեգինը մեքենաբար ետ քաշուեց օրիորդի մօտից, օրիորդը ետ ընկաւ աթոռի թիկունքի վրայ։ Երկուսն էլ կարծես շփոթուեցին, կարծես այդ բոպէին ոչոքի չէին սպասում, կարծես ուրիշի ներկայութիւնը նոցա անհաճոյ երևաց։

Ոսկերչեանը գիտէր, որ Զառիկեանները և Վարթումեանները միմեանց մօտ գնալ գալ ունին, ինչպէս ծանօթներ։ Բայց նա չէր սպասում, որ մի այսպիսի տեսարանի կարող է հանդիպել։ Գարեգինը և Մարիամը մենակ դահլիճում։ Մէկը երգում է, միւսը նուագում։ Երջանիկ զոյգ! Բախտաւոր ժամ!

Բայց ինչու Ոսկերչեանին տեսնելուն պէս՝ երկուսն էլ շփոթուեցին? Ինչ շփոթուելու բան կար?

Դա առաջին անգամն էր, որ կասկած ընկաւ նորա սրտի մէջ իւր բարեկամի և իւր սիրոյ առարկայի փոխադարձ համակրութեան մասին։ Ինչ զարմանալու բան կը լինի, եթէ ստուգուի, որ նոքա դէպի իրար անտարբեր չեն? Երկուսն էլ գեղեցիկ, առողջակազմ, երկուսն էլ խենթի պէս սիրում են երաժշտութիւնը, երկուսն էլ ունևոր։ Բայց ո՛չ. եթէ այդպիսի բան լինէր, Գարեգինը անշուշտ չէր ծածկիլ իւր սրտակից բարեկամից. չէ որ սա համարեա ոչ մի գաղտնիք չգիտէ, որ թաղցրած լինէր նորանից?

Բայց... բայց ինչու շփոթուեցին?

Այս բոլոր հարցերը արագութեամբ անցան Նորա մտքով այնքան կարճ ժամանակամիջոցում, որքան հարկաւոր էր մօտենալու և երկուսին էլ բարևելու համար։

Օրիորդը խնդրեց, որ նստի։ Բայց նա ասաց, թէ պէտք է պարապի Սերեսժայի հետ։ Օրիորդը կրկնեց խնդիրքը, նա նստեց։

Վայրկենական լռութիւն, որի միջոցին երեքն էլ ժպտում էին և իրար երեսի նայում։

Առաջինը սկսեց Գարեգինը.

—Հը՛, Արտաշէս, ինչպէս ես երեկուանից դէսը?

—Փառք Աստծուն, ապրում ենք,—պատասխանեց Ոսկերչեանը։

Կրկին լռութիւն։

—Դուք բաւական լաւ կատարեցիք ձեր դերը,—լռութիւնը խանգարեց այս անգամ օրիորդը։

—Շնորհակալ եմ,—գլուխ տալով ասաց Ոսկերչեանը և ինքն

էլ զարմացաւ, որ մի այսպիսի սառը, պաշտօնական խօսակցութիւն է սկսուել։

Գարեգինը, իբրև մի անձ, որ լաւ ճանաչում էր Արտաշէսին և գիտէր, որ նա փափագում էր կարծիքներ լսելու, ասաց.

—Ի հարկէ, քո խաղի մասին մենք կը խօսենք։ Բայց ասա՛ առաջ. զուտ արդիւնք որքան եղաւ?

—Դեռ յայտնի չէ։

—Մօտաւորապէս?

—Լաւ էր։ Ես գոհ եմ։

Այդ խօսքի վրայ սեղանատան դուռը բացուեց և շեմքին երևաց Աշխէնը։ Ոսկերչեանին տեսնելուն պէս՝ նա իսկոյն կանգ առաւ դրան մօտ, մռայլ յոգնածութիւն շինեց դէմքի վրայ, երկարամեայ տանջանքներ կրած մարդու պէս գլուխը թեքեց դէպի մի ուսը և աշխատելով նմանեցնել իւր ձայնը երէկուայ Կոռռադոյի ձայնին, արտասանեց.

—Մոնսէյնեօր!

—Bravo, bravo! Ծափահարեց Գարեգինը, և բոլորեքեան ծիծաղեցին Աշխէնի այս կատակի վրայ։

Իսկոյն խօսակցութիւն բացուեց Ոսկերչեանի դերիւտի մասին, այդ խօսք ու զրոյցը գնալով տաքացաւ և վիճաբանութեան կերպարանք ստացաւ։ Օրիորդներից մէկը հաւանել էր այս ինչ տեղը, միւսը, ընդհակառակը, այդ տեղը չէր հաւանել, այլ ուրիշ տեսարան էր հաւանել։ Միայն երրորդ արարածն էր, այն էլ սկիզբը, որ երկուսին էլ հաւասարապէս դուր էր եկել։ Դերիւտանոը կամեցաւ իմանալ, թէ ընդհանրապէս ինչպէս անցաւ իւր խաղը։ Օրիորդ Աշխէնը պատասխանեց, թէ բաւական լաւ էր, ոչինչ։

—Իսկ հասարակութիւնը? հետաքրքրութեամբ հարցրեց Ոսկերչեանը։—Ասում են, շատ դժգոհ է մնացել, հա?

—Մինչև անգամ շատ? մէջ մտաւ Գարեգինը, որը մինչ այդ ժամանակ լուռ էր և կարծես հերթի էր սպասում խօսելու։—Այդ ով ասաց? Հասարակութեան անունով մենք կարող ենք խօսել միայն այն դէպքում, երբ մի բան կամ բացարձակ լաւ է՝ ամենքի համար, կամ բացարձակ վատ։ Քանի որ այդ չի կարելի ասել երէկուայ ներկայացման մասին, ուստի և ոչինչ չի կարելի ասել հասա-

բակութեան կարծիքի մասին։ Յունաստանում, երբ կամենում էին պարգևատրել մրցող հեղինակներին, ներկայացումից յետոյ ժողովրդի միջից ընտրում էին հասկացող մարդիկ, որոնք վճռում էին այն՝ թէ ում է պատկանում առաջին մրցանակը և ում՝ երկրորդը։ Մեր մէջ այդ չկայ։ Ուրեմն ոչինչ չենք կարող ասել, գոհ թէ դժգոհ մնաց հասարակութեան մեծ մասը կամ ինքը հասարակութիւնը։ Հօ ձայներ չհաւաքեցինք? Այսքանը միայն հաստատ է, որ Արտաշէսի մասին լսում էին երկու իրար հակառակ կարծիքներ՝ ոմանք քո մէջ տեսնում էին տաղանդ, որ դեռ սաղմի մէջ է, իսկ միւսները ափաշկարա ամեն բան ուրանում էին և ոչինչ չէին կամենում լսել քո ընդունակութեան մասին։ Հասարակութեան անունով թող խօսեն այն բեցենղենտները, որոնք ամեն անգամ իրանց քմահաճոյ կարծիքը ուզում են կապել հասարակութեան շլինքին!

Արտաշէսը ցանկացաւ լսել յատկապէս իւր բարեկամի կարծիքը, և Գարեգինը քննադատութեան ենթարկեց նորա խաղը. ցոյց տուեց այն բոլոր տեղերը, որոնք լաւ չէին մտածուած, թոյլ անցան, տպաւորութիւն չգործեցին։ Բայց միևնոյն ժամանակ յիշեց ուշադրութեան այն տեսարանները, որոնց մէջ երևաց ջերմութիւն, մինչև անգամ կրակ ու ոգևորութիւն։

—Մի խօսքով,—շարունակեց նա,—ակներև էր, որ դու ունիս բեմական ձիրք. բայց այս էլ պարզ էր, որ քեզ պակասում էր փորձառութիւն։ Ոսկերչեանին թուում էր, թէ բարեկամը դիտմամբ մեղմ ոճ էր գործածում և խնայում էր իրան, ուստի և ասաց՝ հոգոց քաշելով.

—Ո՛չ, ես վճռացրի իմ դերը, բոլորովին վճռացրի! Ես կարող էի շատ աւելի լաւ կատարել, եթէ ինձ հանգիստ թողնէին։

Եւ նա սկսեց գանգատուել հասարակութեան այն մասից, որը իրան պահել չգիտէ թատրոնում և արդէն սկզբից սառը ջուր է ածում դերասանի վրայ և հանգցնում է կրակը, իւր արուեստակից ընկերներից, որոնք խնդում էին նորա անյաջողութեան վրայ, յուշարարից, որը կարծես միացել էր նոցա դաւադրութեան և աշխատում էր նորան շփոթեցնել ամեն անգամ, հէնց որ նա սկսում էր ոգևորուել և տպաւորութիւն գործել։ Յետոյ նա պատմեց բժշկի խորհրդաւոր երևալու մասին և հարցրեց.

—Դուք դահլիճումն էիք, դուք, կարելի է, գիտէք. ասացէք ինձ, խնդրեմ, այդ ինչ հանելուկ էր?

Գարեգինը ոչինչ չգիտէր այդ մասին. նա, երևի, բուֆէտն է գնացած եղել։ Իսկ օրիորդներին յայտնի էր միայն այսքանը, թէ դերասաններից մէկը յանկարծ ուշաթափուել է, բժիշկ են ուղարկել, որը ուշքի է բերել նորան։ Ոսկերչեանի համար հանելուկը մնաց կրկին հանելուկ, և նա վճռեց այդ մասին տեղեկանալ բժշկից։

Յետոյ նա գնաց պարապելու իւր աշակերտի հետ։ Պարապմունքը վերջացնելուց յետոյ նա եկաւ դահլիճ։ Այնտեղ նստած էին տիկին Վարթումեանը, օր. Աշխէնը և Գարեգինը. օր. Մարիամը չկար։ Նա հեռացաւ դահլիճից նոյն այն րոպէին, երբ Արտաշէսը դուռը բաց արաւ, որ մտնի։ «Այս ինչ է նշանակում?» մտածեց Ոսկերչեանը. «զուցէ իմ ներկայութիւնը նորա համար արդէն սկսել է անտանելի դառնալ?» Արդէն կամած էր ընկել նորա սիրտը, և նա օրիորդի իւրաքանչիւր անմեղ շարժուածքի մէջ սկսել էր ետին նպատակ տեսնել։ Սառանց ձեռք տալու, նա գլուխը խոնարհելով ցտեսութիւն ասաց, որ մեկնի։ Տիկին Վարթումեանը խնդրեց, որ մնայ և միասին ուրախ ժամանակ անց կացնեն։ Ոսկերչեանը տրամադիր էր մնալու։ Բայց երբ Գարեգինն էլ սկսեց խնդրել, որ մնայ, նա սրտումը բարկացաւ և ասաց կտրակի.

—Ո՛չ, չեմ կարող! ու հեռացաւ անմիջապէս։

Գարեգինը, մանաւանդ տիկինը և օրիորդը, քիչ չզարմացան Ոսկերչեանի այս կոպիտ պատասխանի վրայ։

VI

Ոսկերչեանը կարծում էր, որ իւր դեբիւտի իսկական գնահատութիւնը գտնելու է լրագրական ռեցենզիաների մէջ։ Նա մտածում էր. «քննադատները ցոյց կը տան, անշուշտ, իմ բոլոր պակասութիւնները, չեն ղլանալ, ի հարկէ, իրանց բարի խորհուրդները տալ սկսնակին, և՝ եթէ նշմարել են տաղանդի գէթ մի նշոյլ, երևի, քաջալերութեան մի խօսք էլ է կ'ասեն»։

Ահա այսպիսի յոյսերով առաւօտեան կանուխ նա դուրս եկաւ բնակարանից և գնաց առնելու այն օրաթերթերը, որոնց մէջ, իւր հաշուով, այդօր պիտի երևային վերջին ներկայացման զեկուցումը

ները։ Գնեց «Ճառագայթի», «Ժամանակի» համարները և շտապեց իսկոյն վերադառնալ իւր սենեակը։ Փողոցով անցնելիս նա անհամբերութեամբ բաց արաւ «Ճառագայթը», որ կարդայ, բայց, տեսնելով, որ կառքերի դղրդոցը և երթևեկող մարդկանց աղմուկը չեն թողնում իրան ուշադրութիւնը կենտրոնացնել կարդացածի վրայ, բարւոք համարեց ծալել լրագիրը և, դրպանը դնելով, քայլերը արագացնել։

«Ճառագայթի» կարծիքը ամենից թանկ էր նորա համար, ուստի սենեակը մտնելուն պէս՝ առաջին գործը եղաւ կարդալ նախ այդ թերթի բեցենզիան։

Բայց ինչ բեցենզիա, ինչ բան! Դորա փոխարէն, ներքին լուրերի բաժնում մի ութը տասը տող էր միայն զետեղուած, որ անցած ներկայացման էր վերաբերում։ Այնտեղ ասուած էր, թէ այս ինչ օրը կայացաւ այս ինչ ներկայացումը, և Կոռաադոյի դերը կատարում էր պ. Ոսկերչեանը։ Եւ յետոյ թէ՝ ժողովուրդ շատ կար թատրոնում, բայց ներկայացումը այնքան էլ յաջող չէ կարելի համարել։ Ոսկերչեանը կատարում էր դերը անգոյն և ոչ մի տպաւորութիւն չգործեց հանդիսականների վրայ. նա լաւ կ'անի, եթէ սկսի ցածրից և կամաց-կամաց բարձրանայ, որպէս զի ստիպուած չլինի յետոյ կամաց-կամաց ցած իջնել։ Մի քանի դերակատարների մասին ասուած էր թէ՝ այս մէկը լաւ էր, այն մէկը վատ էր, այն երրորդն էլ միջակ էր։

—Եւ այսքան միայն? Գոչեց նա զարմանքով. արի՞ ու բան հասկացիր այս չոր ու ցամաք զեկուցումից! Իւրաքանչիւր բառից սառը անտարբերութիւն է փչում, իսկ քաջալերական—և ոչ մի խօսք!...

Ցոյսը կտրած «Ճառագայթից», նա ձեռքն առաւ «Ժամանակը»։ Սորա բեցենզիան մի ընդարձակ բան էր և բռնել էր ամբողջ երկու սիւնեակ ու կէս տեղ։ Երբ նա ուզում էր կարդալ յօդուածը, նորան թւաց, թէ իւր բոլոր էութիւնը բռնկեց մի օտարոտի զգացմունքով, որը ոչ ուրախութիւն էր, ոչ վատ նախազգացում, ոչ երկիւղ, այլ այդ զգացմունքների մի տարօրինակ խառնուրդ։ Սրտի զարկերը արագացան, այնպէս որ նա ստիպուած էր մի պահ դադար առնել՝ կազդուրուելու համար։

Յետոյ շարունակեց ընթերցումը՝ թեք ընկած մահճակալի վրայ և արմունկը յենած բարձին։ Ցանկարծ, կարծես մեծ գնդասեղի ծակոց զգալով մարմի վրայ, սթափեց և ուղղեց նստած տեղումը։ Ամեն մի վայրկենից յետ նորա դէմքը աւելի և աւելի լուրջ կերպարանք էր ստանում։ Երեսի և ճակատի կաշին գնալով ակօսւում կծկւում էր, այտերը տաքանում էին, և աչքերը կուչ գալիս։ Քթի վերևում եղած խորշը լցւել էր ճակատի իջած կնճիռներով, որոնք երբեմն դողում էին ջղային ցնցումներից։ Սկզբում նորա սրտի խորքից զայրոյթով դուրս էին թռչում զանազան բացականչութիւններ, և ներքին յուզմունքը աստիճանաբար աճում աճում էր։ Բայց յետոյ, երբ դրւածքի ոճը դարձաւ խիստ կծու և արդէն անտանելի, նորա ձեռքը, բազէի ճանկերի պէս, կծկւեց յանկարծ, թերթը ճմլւեց ամուր սղմւած բռունցքի մէջ, և բարկութեամբ լցւած՝ նա վեր թռաւ ու տեղումը կանգնեց։

—Դու, դու ես կամենում խեղտել իմ տաղանդը? Գոչեց նա բարձր ձայնով, կրճտացնելով ատամները և աչքերը յառելով ճմըլւած թերթի վրայ։ Ես քեզ այսպէս պիտի խեղտեմ, այսպէս պիտի խեղտեմ!... Այդ ասելով՝ նա աւելի սաստիկ էր սեղմում իւր բռունցքը և բաց ու խուփ անում ձեռքի թերթը։

Բայց տեսնենք, թէ այն ինչ հրէշ էր նստած յօդւածի մէջ, որ կարողացաւ այն աստիճան ցնցել, տակնուվրայ անել դիւրաբորբոք երիտասարդի հոգին։

Քննադատութիւնը սկսւում էր այն բանից, որ ներկայացումը շատ անյաջող էր, Ոսկերչեանի խաղը ոչ մի տպաւորութիւն չգործեց, և հասարակութիւնը, ափսոսելով իւր կորցրած ժամանակը և փողը, խիստ դժգոհ հեռացաւ թատրոնից։ Յետոյ բացատրւում է պատճառը, թէ ինչու այդ այդպէս եղաւ։ Դորա պատճառը, բեցենզենտի կարծիքով, նախ այն էր, որ գլխաւոր դերակատարը, այսինքն Ոսկերչեանը, չէր հասկացել իւր դերը և, երկրորդ այն, որ նա չունի բեմական ձիրք և զուրկ է աստուածային կրակից։

Բայց այս չէր, ի հարկէ, որից Ոսկերչեանի զայրոյթը բռնկեց։

Ով ինչ կարող է ասել, եթէ քննադատը չէ հաւանում սորան կամ նորան?

Բանը այն է, որ այդ մեղմ նախաբանից յետոյ դալիս կիտ-

ւում էին իրար վրայ հայհոյանք, ատեր և զրպարտութիւններ, որոնք վերաբերում էին ուղղակի Ոսկերչեանի անձին, նորա բնաւորութեանը, նորա պատուին։ Ցօղւածի անուանարկու ոգին էր այն հրէշը, որ սատանեց սկսնակ գործիչի բոլոր էութիւնը։

«Ինչպէս երևում է,— ասուած էր յօղւածի մէջ,—այդ պարոնը մի չափազանց յանդուգն և փառամոլ պատանի պէտք է լինի, որ համարձակւել է մի ինտելիգենտ հասարակութեան առաջ բեմ դուրս գալ, այն էլ այնպիսի պատասխանատու դերի մէջ, որպիսին է Կոռռադոյի դերը։ Դպրոցական նստարանի վրայ, ի հարկէ, փառքի դափնիք չեն բաժանում, և ահա նա կարծել է, թէ այնքան հեշտ է բեմի վրայ քաղել այդ դափնիքը։ Եւ նա պատժւեց իւր յանդգնութեան համար, որովհետև կրեց մի սարսափելի Ֆիասկո»։

Ոսկերչեանի ընկերներից մի քանիսը փող էին հաւաքել և գնել մի ընծայ (ժամացոյց), որ և մատուցին նորան ներկայացման ժամանակ։ Այդ առիթով բեղենդենտը ասում է հետևեալը.

«Մենք կասկածում ենք, թէ հանդիսականների միջից դտնւէին գէթ մի հինգ հոգի այն աստիճան միամիտ, որ, չնայելով իրանց փողը, ախորժէին ընծայ գնել և մատուցանել մի դերասանի, որը ոչինչով չարժանացաւ որևէ ընծայի։ Բայց, ի հարկէ, հանելուկը կը պարզւի, եթէ յայտնենք, որ պարոնի երկրպագուները հետևեալ օրը պիտի շտապեն վերադարձնել ընծան ժամագործի տիրոջ, որից վերցրած էին մի երեկոյի համար»։

Իւր տեղումը ասուած էր, թէ դեբիւտանտը արժանացաւ ծափահարութիւնների մի քանի անդամ։ Այդ մասին բեղենդենտը գրել էր հետևեալը.

«Եթէ կամենայ արտիստը անպատճառ ծափահարութիւններ լսել, շատ հեշտ կարող է հասնել այդ նպատակին։ Դորա համար հարկաւոր է վարւել այնպէս, ինչպէս պ. դեբիւտանտը—ծրի տոմսակները բաժանել ընկերների և ծանօթների մէջ և այնուհետև համարձակ դուրս գալ բեմ...»

Մի քիչ յետոյ քննադատը շարունակում է.

«Բայց, ի հարկէ, փողով գնուած ծափահարութիւնները—չէին խանգարում խելքը գլխին և ճաշակի տէր մարդկանց սուլոցներով

դիմաւորել և սուլոցներով ճանապարհ դնել բաղմաչարչար Կոռադոյին։

Գրաածքի իւրաքանչիւր բառի համար, ինչպէս տեսնում է ընթերցողը, հեղինակը մի մի ծանր պատասխանատուութիւն է առնում իւր վրայ, և այդ բոլորի տակ—ոչ անուն, ոչ ազգանուն!

Ոսկերչեանը զայրացած էր Նոյնչափ այս գաղտագողի յարձակման, որչափ և յօդուածի բովանդակութեան վրայ, և արագ անց ու դարձ անելով սենեկի մէջ, կրկնում էր շարունակ.

—Ա՛խ, մի իմանամ, թէ ով է սորա հեղինակը, մի իմանամ՝ ով է!... Ես գիտեմ, թէ ինչ կանեմ!...

Այդ խօսքերը ասում էր նա, քանի որ դեռ ևս լարուած դրութեան մէջ էին ջղերը, և սրտի մէջ արիւնը կարծես եռում էր։

Բայց յետոյ կամաց-կամաց նորա զայրոյթը սկսեց իջնել, և նա զգաց, թէ ինչ սպանիչ վհատութիւն է գալիս իւր վրայ։

Եւ նա պառկեց։

Միթէ նա այնքան փոքրոգի է և թուլասիրտ, որ առաջին անյաջողութիւնից յետոյ այն ասոիճան կարող էր վհատել? կամ նշանաւոր մարդկանց օրինակները միթէ այնքան անզօր են, որ չպիտի կարողանան նորան ոտի կանգնեցնել, ոյժ տալ, եռանդ ներշընչել հոգուն? Միթէ ամօթ չէ նորա համար, որ նա, փոխանակ արհամարանքով և հպարտութեամբ սլանալու իւր թշնամիների գլխի վրայից, անդամալուծի պէս ընկած՝ հառաչներ է արձակում և գալարում ձեռքերը? Չէ որ Տալմային սուլեցին, երբ առաջին անգամ նա բեմ դուրս եկաւ? Բայց նա չվհատեց, այլ կրկնապատկեց ոյժերը և դարձաւ հռչակաւոր Տալմա! Չէ որ Դեմոսթենէսին սուլեցին, երբ նա առաջին անգամ ամբիոն բարձրացաւ? Բայց նա չվհատեց, այլ իւր հանճարի և քրանաջան աշխատանքի օգնութեամբ տիեզերական անուն վաստակեց և դարձաւ Ցունասատանի պարծանքը! Չէ որ Բայրնի առաջին գրական դեբիւտը ծաղրի մատնեցին, և կրիտիկանների վոհմակը խորհուրդ տուեց, որ նա վայր դնի իւր գրիչը? Բայց նա չվհատեց, այլ իւր հանճարի զօրութեամբ դարձաւ բանաստեղծների թագաւոր!...

Այսպէս էր մտածում՝ Ոսկերչեանը։ Բայց նորան, ի հարկէ, յայտնի չէր, որ մինչդեռ մեծ բոցը էլ աւելի սաստկանում է փչող

հողմերից, փոքրիկ բոցը ամենաթույլ հողմից էլ հանգչում է։ Տալմա, Դեմոսթենէս, Բայրն մեծ բոցեր էին, որոնց համար թշնամիների յարձակումները հրանիւթ առարկաների նշանակութիւն ունեցան, և այդ պատճառով աւելի մեծ ոյժով բռնկեցին. բայց Ոսկերչեանը—արդեօք նա էլ մեծ բոց էր?...

Ինչ և իցէ։ Այսպիսի մոածմունքից, ըստ երևութին, խրախոյս և դրդում ստանալով, Ոսկերչեանը վեր կացաւ տեղից և, գլխարկը ծածկելով, ասաց.

—Ես պէտք է հաստատ իմանամ, թէ ով է այն թշնամին, որ իմ պատիւը ոտի տակ է տուել ամբողջ հասարակութեան առաջ!

Այդ ասելով նա դուրս եկաւ սենեկից։

(Շարունակելի).

ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԵԼ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

Անդիմադրելի և անսասան են բնութեան օրէնքները։ Ցաւիտենական, անփոփոխ, ոչ մի արտաքին ուժի, ոչ մի գերբնական աղդեցութեան չենթարկուող։ Բնական օրէնքը ճակատագրական անհրաժեշտութեան ամենաճիշտ արտայայտութիւնն է (Մոլեշոտ)։ Ինչ որ դուրս է այդ հասկացողութիւնից, դուրս է և գիտութիւնից, քանի որ այդ վերը յիշած անհրաժեշտութիւնն է միայն, որ պայմանաւորում է դրական գիտութեան գոյութիւնը։ Երևակայեցէք, որ բնութեան ընթացքը պատահականութիւնների է ենթակայ, որ մի գերբնական էակ, ըստ իւր քմահաճութիւնների, միջամտում է երբեմնապէս և փշրում բնական երևոյթների շղթան... այն ժամանակ օրէնք ասած բանը այլ ևս չէր լինի, այլ կըլինէր կամայականութիւն, ապա ուրեմն և գիտութիւնը անհնար կըլինէր։

Բնութեան օրէնքը մարդկային կամայական օրէնքների նման չէ, նա անխախտելի է և երբէք բացասութիւններ չի ճանաչում. նա անողոք է, բռնակալ, առանց խղճմտանքի ու կարեկցութեան. արգելեցէք կայծակին հարուածել ու շանթահարել մարդկանց, արգելեցէք երկրաշարժին, հրաբխային լեռներին, որ նրանք չժայթքեն և մահ ու աւերակ չփռեն իրենց շուրջը, արգելեցէք սև մահին, որ իւր համատարած ճանկերով ողբ ու հեծկլտանք չտարածէ

[1]) Տես Մուրճ 1897 թ. № 2—3, 5, 7—8։

ամենուրեք, սպառնացէք նրան կամ նրա Աստծուն, կամ թէ ծնկաչոք աղօթեցէք, աղերսեցէք... օրհասն անխուսափելի է։ Նա վրայ է հասնում համաճարակ ախտի նման, մանգաղը ձեռքն առած հնձում, տանում է մեր մատաղ, թանկագին ուժերը, նա ականջ չի դնում մայրերի աղիողորմ ձայներին և խլում է նրանց գրկից անմեղ, նորածիլ մանուկներին. նա ամեն տեղ թողնում է մարդկային հեկատոմբներ, կսկիծ ու արտասուք, յուսահատութիւն ու թշուառութիւն...

Եւ միլիոնաւոր բարեպաշտ սրտերից մրմնջող աղօթքներն ու աղերսանքները անզօր են հանդիսանում այդ տարրային ուժի առաջն առնելու, կամ գէթ փոքր մեղմացնելու նրա բարկութիւնը. Աստուած անողոք է...

Բնական օրէնքները նոյնն են թէ այստեղ երկրագնդի վրայ և թէ տիեզերքի հեռաւոր կէտերում։ Ամեն տեղ իշխում են նոյն նիւթն ու ոյժը, նրանց մշտնջենաւոր շարժողութիւնը միևնոյն յաւիտենական օրէնքներով։ Տիեզերքն անծայր, անվերջ... Մենք, որ համարում ենք մեզ ստեղծագործութեան կենտրոնն ու վերջին խօսքը, մենք միայն մի փոշի ենք երկրագնդիս վրայ, որը նոյնպէս մի փոշի է տիեզերքի անհուն մթնոլորտում. և մարդկային պատմութիւնը սկսած ամենանախնական ժամանակներից մի վայրկեան է միայն համեմատած այն յաւիտենականութեան հետ, որը սկիզբ է առնում երկնային մարմինների ծագման շրջանից։

Ներժուում են մոլորակները տիեզերքի անսահման տարածութեան մէջ հեռու, շատ հեռու իրարից։ Կան աստղեր, որոնցից լոյսի ճառագայթները հասնում են մեզ բիւրաւոր տարիների ընթացքում և այդպիսի անթիւ, անհամար աստղեր լողում են մշտնջենապէս տիեզերական անվերջ ովկիանոսում, առանց երբէք իրար խանգարելու։ Կայ մի ոյժ որ շղթայում է նրանց բոլորին և պահպանում է յաւիտենական հաւասարակշռութիւն ու ներդաշնակութիւն տիեզերքում։ Դա ձգողական ոյժն է, որի գտնելու փառքը Նիւտոնին է պատկանում։

Տարածութիւնը դատարկ չէ. մեզ թւում է որ այդպէս է,

բայց իրօք այնտեղ կայ շարժուող նիւթ, որի թանձրութիւնը, ա-պա ուրեմն և դիմադրական ոյժը՝ շատ չնչին է [1]։ Դա «եթերն» է, այն անհրաժեշտ մեդիումը, առանց որի արեգակի լոյսը, որ նոյնպէս շարժողութիւն է, չէր կարող անցնել դէպի երկրագունդը և ուրիշ մարմիններ (Հէլմհոլց)։—

Տիեզերական շէնքի ծագման և էվոլիւցիայի մասին առաջին շատ թէ քիչ գիտական մեկնաբանութիւնը, ինչպէս արդէն յիշել ենք նախընթաց էջերում, պատկանում է Կանտին (1724—1804), որը համարւում է շատերից երկրորդ վիթխարի հանճարը (Սոկրատէսից յետոյ) բոլոր ժամանակների փիլիսոփաների մէջ։ Սա մի չնաշխարհիկ մարդ։ Նա իր ամբողջ կեանքը մինչև խոր ծերութիւնը անցկացրեց իր հայրենի Կեոնիգսբերգում. ունէր մի կայան քաղաքից քիչ հեռու, ուր գնում էր նա առաւօտ, երեկոյ և վերադառնում էր միշտ նոյն ուղղութեամբ, երբէք չծռելով ճանապարհը։ Եւ այդպէս մինչև իր մահը [2]։ Այնտեղ էր կատարում նա իր խորաղնին սպեկուլիացիաները «զուտ բանականութեան» և «Kategorik Imperativ»-ի մասին, այնտեղ էր նա քաղցրութեամբ երազում մարդկային ցեղի ապագայ հաւասարութիւնն ու համերաշխութիւնը, այնտեղից, այն խուլ, անդորր միջավայրից էր դիտում նա բնութիւնը, տիեզերքը իրենց չքնաղ, աստուածային վեհութեան մէջ, այնտեղից մտքի հսկայական թռիչքներով սլանում էր նա դէպի եթերային բարձունքները և ճգնում էր բաց

---

[1]) N. Helmholtz, Wissenschaftliche Yorträge.

[2]) Կենսագրողը վկայում է, որ Կանտը այդ սովորութեան մի անգամ միայն դաւաճանեց իր ամբողջ կեանքում, մի անգամ միայն ծռեց նա իր ճամբան և այն էլ ֆրանսիական մեծ յեղափոխութեան արհաւիրքների ազդեցութեան տակ, երբ Կեոնիգսբերգի փիլիսոփան տենդալին անհամբերութեամբ շտապում էր մի օր դէպի Ֆրանսիայից եկող սուրհանդակը, լուրեր առնելու համար։ Աբստրակցիաների ու երազների աշխարհում դեգերող ծերունին ապշած էր մնացել, լսելով, որ արդէն իրականութեան մէջ սկսում են մարմնանալ հաւասարութեան ու եղբայրութեան սկզբունքները։

անել տիեզերական հոյակապ շէնքի միջ գաղտնիքը, այնտեղ, նոյն խաղաղ բնակավայրում հեղինակեց նա իր հռչակաւոր աշխատութիւնը երկնային համաստեղութիւնների ծագման ու զարգացման մասին։ Նա երբէք չճանապարհորդեց, նա մարդ չտեսաւ, աշխարհ չտեսաւ. նրա աշխարհն էր հին և նոր փիլիսոփայութիւնը, նրա ընկերները իր հատորներն էին, և նա եղաւ աշխարքիս խոշորագոյն, հաղւադէպ ու հսկայ մտածողներից մինը։

Մի փոքր զրուցեցէք ընթերցողի հետ այդ մեծ հանճարի երկնային զբօսանքների մասին, ծանօթանանք նրա նշանաւոր գրուածքի բնագրի հետ, որը, ինչպէս ասում է, ամբողջ դարագլուխ կազմեց։ Մօտ 200 երեսից բաղկացած մի փոքրածաւալ գիրք է, խորագիրը «ընդհանուր բնական պատմութիւն և երկնքի թէորիան», (Allgemeine Naturgeschichte und Theorie des Nimmels)։ Հրատարակուած է 1755 թուին անանուն։ Թերևս դարձեալ կրօնն է եղել Կանտի զգուշութեան պատճառը։ Դա խիստ հաւանական է, որովհետև գրուածքի մի ընդարձակ առաջաբանում նա մերթ խնդրագին ու երկչոտ, մերթ համարձակ ու խրոխտ ոճով խօսում է կրօնի կողմից լինելիք արգելքների մասին և կարծես թէ մի կերպ աշխատում է արդարացնել իրեն, ցոյց տալ, որ իր թէորիան այնքան էլ չի հակասում կրօնական դոգմաներին։ «Ես տեսնում եմ—ասում է նա, որ առջևս մեծամեծ դժուարութիւններ կան, սակայն ես փոքրոգի չեմ լինի։ Իր ընդարձակ, դժուարամարս փիլիսոփայութեան մէջ նա կարող էր կատարելապէս անկախ լինել կրօնի հեղինակութիւնից, կարող էր հրատարակել, որ կրօնն է բարոյականութեան վրայ հիմնուած և ոչ բարոյականութիւնը կրօնի վրայ, և այլն և այլն—այդ բոլորը արաւ նա, առանց հալածանքների ենթարկուելու. բայց դժուար քայլ էր 1755 թուականին մի այդպիսի փոքրիկ, համեմատաբար աւելի հասկանալի ու տարածուող գործ հրատարակել... Յիշեցէք Դարւինի տաքտիկան տես դարուս 60-ական թուականներին, որի մասին գրել ենք արդէն. կղերը ամեն տեղ կղեր է...

«Իմ նպատակն է ցոյց տալ - յայտնում է Կանտը իր առաջաբանում—թէ ինչպէս են առաջացել տիեզերական մարմինները և նրանց շարժողութիւնը բնութեան ամենասկզբնական դրութիւնից

մեքենայական օրէնքների շնորհիւ։ Եւ իսկոյն խոստովանում է նա գործի դժուարութիւնը. «մի կողմից—ասում է նա—մարդկային բանականութեան ուժերն են անբաւարար, միւս կողմից էլ կրօնն է սպառնում»։

Ի սկզբանէ... տիրում էր քաոս։ Ոչ մի կազմակերպուած մարմին, ոչ արեգակ, ոչ երկիր, ոչ ուրիշ մոլորակներ—ոչինչ։ Միայն յաւիտենական նիւթն էր սաւառնում տիեզերական անհուն մթնոլորտում, նիւթն անեղ, անժամանակ, անսկիզբ և անքանակ։

Այդ սկզբնական տարրը կէս-ամուր, կէս-հեղուկ, գազային դրութեամբ լցնում էր բովանդակ տարածութիւնը։ Տաքութեան աստիճանը անհերևակայելի բարձր էր։ Գործում էին երկու ուժեր. 1) ձգողական կամ կենդրոնաձիգ ոյժը (Attraction) և 2) կենդրոնախոյս՝ յետ մղող ոյժը (Répulsion), երկուսն էլ անկախ որ և է կամայական ներշնչումներից։ Տիեզերական էվոլիւցիայի երկու հիմնական ուժերն են դրանք։ Կենսաբանութեան (բիոլոգիայի) մէջ դրանց համապատասխանում են ժառանգականութեան և յարմարման [1]) հակումները։ Իսկ եթէ շատ հեռու գնանք փիլիսոփայական ընդհանրացումների մէջ, կարող ենք ընդունել, որ այդ երկու տիեզերական օրէնքները կառավարում են նոյնպէս սոցիալական (հասարակական) էվոլիւցիան, մէկը համապատասխանելով ինքնապահպանութեան կամ էգոիզմի (Répulsion), միւսը՝ ալտրուիզմի կամ հասարակական համերաշխութեան (Attraction, sociabieité) բնազդումներին։

Կանտի նիւթը ուրեմն շաղկապուած է որոշ ճակատագրական օրէնքների հետ, որոնք չէզոքացնում են հրաշքի ու պատահականի գաղափարը։

Մառախուղային քաոսի մէջ դեռ ևս ոչ մի ձև ու կերպարանք չկար։ Կար սակայն բնական մի ձգտում կերպարանափոխութեան, ձգտում դէպի կարգ ու որոշ կազմակերպութիւն, դէպի մի ամբողջ սիստեմ, համակարգութիւն, որ և աստիճանաբար գոյացաւ միլիո-

---

[1]) Դոցա մասին խօսեցինք Մուրճ № 7—8։

նաւոր դարերի ընթացքում։ Անշարժութիւնը քաոսի մէջ միայն մի վայրկեան է տևում—ասում է Կանտը, ապա սկսւում է շարժուել նիւթը, ինքն իրեն կեանք ու օրէնք տալով [1])։ Զգողական ոյժի շնորհիւ տիեզերքում ծաւալւած նիւթի թանձրագոյն տարրերը ամեն կողմից իրենց շուրջն են քաշում պակաս թանձրութիւն ունեցող նիւթը։ Վերջինս, հետզհետէ աւելի և աւելի թանձրանալով ու կենդրոնանալով որոշ կէտերում, ծնունդ է տալիս շատ թէ քիչ ամուր ու խոշոր զանգւածների, որոնք գտնւում են անդադրում շրջանառութեան մէջ։ Այդպէս են գոյացել և այն միլիոնաւոր արեգակները, որոնցից իւրաքանչիւրը իր շուրջը պտտող համաստեղութիւններով կազմում է մի-մի սիստեմ։

Մոլորակներ դեռ ևս չկային. նրանք աստիճանաբար ծնունդ առան։ Մեր մոլորակային ամբողջ սիստեմը (խօսենք միայն մերի մասին) ամփոփւած էր մի հսկայական գնդաձև զանգւածի մէջ, որը ենթակայ էր անընդհատ շրջանառութեան պրոցէսին։ Այդ պրոցէսի ընթացքում կենդրոնաձիգ և կենդրոնախոյս ոյժերը գործում էին անբաժան։

Առաջինը քաշում էր մարմնի մասնիկները դէպի կենդրոնը, երկրորդը ձգտում էր միշտ յետ մղել, հեռացնել նրանից։ Գնդաձև զանգւածը շարունակ պտոյտ գալով, ստանում էր հետզհետէ էլիպսոիդի կերպարանք։ Եւ որքան աւելի էր պտտւում նա, նոյնքան աւելի էր թանձրանում, նոյնքան աւելի էր փոքրանում նրա ծաւալը, տրամագիծը, նոյնքան աւելի էր արագանում պտտելու պրոցէսը, որը իր ամենաբարձր աստիճանին հասնում էր հասարակածի մօտ (Equator)։ Այդտեղ և կենդրոնախոյս ոյժը ամենասաստիկն է. վրայ է հասնում մի վայրկեան, երբ կորչում է հաւասարակշռութիւնը կենդրոնաձիգ և կենդրոնախոյս ուժերի մէջ տեղը. վերջինս յաղթահարում է և կատաղի ոյժով պատռում մարմնի մի մասը ու նետում է նրան ազատ տարածութեան մէջ,

---

[1]) Այստեղ մի խոշոր սխալ է թագնւած ժամանակակից գիտութեան տեսակէտից. Կանտը կարծես թէ ընդունում է առաջին զարկը, «սկիզբն սկզբանց»... բայց յաւիտենական շարժողութեան մէջ առաջին սկզբնաւորութեան մասին խօսք անգամ չի կարող լինել։

ուր նա սկսում է նոր, ինքնուրոյն շրջանառութիւն, իւր մայրզանգուածի պէս, նոյն օրէնքներով։ Նա այլ ևս մի մոլորակ է։ Այդ ճանապարհով են գոյացել բոլոր մոլորակները, այդպէս է գոյացել մեր մայր-երկիրը։

Ահաւասիկ Կանտի թէորիայի կմախքը։ Ինչպէս տեսնում ենք, նա զուտ մեքենայական—մոնիստական է և չի ճանաչում ոչ մի անհատական, գերբնական ստեղծողի։ Զուր չէ բացականչում ինքը փիլիսոփան. «տուէք ինձ նիւթ—և ես նրանից կը ստեղծեմ ձեզ ամբողջ աշխարքներ»։ Երկար ժամանակ անչայտ մնաց այդ թէորիան, գուցէ աւելի ճիշտ կը լինէր ասել՝ հիպոթէզը։ Ասում են, որ մինչևիսկ հանճարեղ Լապլասը (†1827) չէր լսել նրա գոյութեան մասին, երբ գրում էր իր «Exposition du systeme de monde»-ը (տիեզերքի սիստէմը)։ Սակայն նա ևս անկախ կերպով և աւելի ճիշտ փորձերով հասաւ Կանտի հիմնական եզրակացութիւններին։ Այդ թէորիան այսօր կոչւում է Կանտի և Լապլասի անունով։ Նա կը շարունակէ ոյժ ու հեղինակութիւն ունենալ, մինչև որ երևան կը գայ նրանից աւելի գիտականն ու հիմնաւորը։

*
* *

Թերևս միլիոնաւոր տարիներ կամ դարեր են անցել, մինչև որ տիեզերքը, անընդհատ կերպարանափոխուելով, հասել է կատարելագործման ներկայ աստիճանին։ Էւոլիւցիան շարունակւում է։ Կենդրոնաձիգ և կենդրոնախոյս ուժերը գործում են յաւիտենականապէս և դեռ քանի քանի նոր-նոր աշխարհներ սլիտի առաջացնեն նրանք ժամանակի և տարածութեան անվերջութեան մէջ։

Անվերջութիւն... Ոչ ոք չի կարող քեզ չափել։ Աշխարհները օր են քեզ համար, իսկ մարդիկ—վայրկեան, հազարաւոր արեգակներ գուցէ գահաւիժում են այսօր, հազարաւորները գոյանում են մութից. ամեն բան չքանում է, իսկ դու մնում ես կանգուն...

Աստղաբաշխութիւնը վկայում է արդէն, որ կան հանգած արեգակներ։ Ուրեմն մեր արեգակն ևս դատապարտուած է վաղ թէ ուշ հանգչելու...

Իսկ նա ամեն բանի աղբիւրն է, բոլոր շարժումն ու կեանքը երկրագնդի վրայ գալիս են արեգակից։ Նա մեզ լոյս ու ջերմու-

թիւն է մատակարարում։ Նա տաքացնում է ջուրը, գոլորշիացնում է նրան. գոլորշիները վեր են բարձրանում, թանձրանում են, անձրևի, ձիւնի կերպարանքով թափւում երկրագնդ՛ս բարձրութիւնների վրայ, գետեր են գոյացնում. սրանք ոռոգում են դաշտավայրերը և ամեն տեղ կեանք են տարածում, քանդում, քերում են լեռներն ու ապառաժները, քարի ու հողի կոյտերը մղում են դէպի ծովը ու ովկիանոսը,—և այնտեղ դարերի ընթացքում կառուցւում է երկրային կեղևի գէօլոգիական վիթխարի շէնքը։ Արեգակի ջերմութիւնը ստեղծում է համատարած, ճոխ բուսականութիւն ամեն տեսակ օրգանական սննդարար նիւթերով, առանց որոնց չեն կարող գոյութիւն ունենալ ոչ անասունները, ոչ էլ ասունները։ Զարմանալի չէ—ասում է Հէլմհոլց, որ մեր նախնիքները Հնդկաստանում, Պարսկաստանում արեգակի մէջ աստուածութեան մարմնացումն էին տեսնում։

Արեգակի ջերմութիւնը այնքան է, որ իր մակերևոյթի ամեն մի քառակուսի ոտնաչափի վրայ իւրաքանչիւր ժամում կարող է այրել մօտ 1.500 ֆունտ ածուխ (Հէլմհոլց)։ Ո՞րտեղից է այդքան ջերմութիւնը։ Գէօլոգիան հաստատում է, որ արեգակը միլիոնաւոր տարիներ արդէն լուսաւորել է աշխարհս (ենթադրւում է 22 միլիոն տարի)։ Այդ հսկայական էներգիան առաջանում է արեգակի մշտնջենական շարժման և թանձրացման պրոցէսից, որի միջոցին տեղի է ունենում, ինչպէս ասել ենք, մարմնի մասնիկների փոխադարձ ձգողութեան ոյժը անհերևակայելի չափերով։ Եւ չնայելով, որ միլիոնաւոր տարիներ շարունակ արեգակը թանձրացել և ջերմութիւն է արձակել, այնուամենայնիւ այսօր նրա տեմպերատուրը հասնում է մօտաւորապէս 28.000.000 աստիճանի, ուր բազմատեսակ մետաղներ գտնւում են գազային կամ կէս-հեղուկ դրութեան մէջ [1]։

Ենթադրում են, որ դեռ 17 միլիոն տարի կ՛անցնի, մինչև որ արեգակը կը թանձրանայ երկրագնդի չափ։ Դեռ ևս ուրեմն 17 միլիոն տարուայ համար լոյս ու ջերմութիւն կ՛արտադրէ և ապա... կը հանգչի... կը թագաւորէ յաւիտենական խաւարը, աշխարհս կը

[1]) Helmtholtz, Wissenschaftliche Vorträge.

կործանելի վերջնականապէս... Բայց ոչ, հոռետես լինելու տեղիք չունինք։ 17 միլիոն տարին յաւիտենականութիւն է. ով գիտէ այդքան ժամանակամիջոցում մեր սերունդները որ աստիճան յարմարուած կը լինին գոյութեան նոր պայմաններին, և կամ լոյսի ու ջերմութեան ինչ նոր աղբիւր կը ծագի...

Վերջացրինք մեր ճանապարհորդութիւնը երկնային բարձրութիւնների վրայ, այժմ իջնենք նորից մեր մայր-երկիրը։

(Շարունակելի)

ՂՈՉԱՂԸ

ԻԲՐԵԻ ՏԻՊԱՐ ՀԱՅ ՎԻՊԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Աղելեան, Ա.—Տգիտութեան զոհեր.—Մուրճ 1896 *թ.* № 5—12 1897 *թ.* № 1—3 -4*)*

(Շարունակութիւն և վերջ [1]*)*

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ

II

«Ղոչաղի» յարաբերութիւնները երկու կարգի մարդկանց հետ են. ընտանիքի անդամների ու բարեկամների և իր ու օտար համայնքի անդամների հետ, ուրիշ խօսքով՝ իրայլինների և օտարների հետ։ Օտարի վրայ «ղոչաղը» նայում է որպէս մի միջոցի, որով կարող է հասնել իր նպատակին. այսինքն կարող է ծառայեցնել իր «տուն լցնելու» ձգտումների իրագործելուն։ Օտարն ինքն ըստ ինքեան որպէս անհատ, որպէս նոյնիրաւ մի մարդ «ղոչաղի» համար չկայ. նա չի ճանաչում օտարի շահերն ու իրաւունքները։ Պատահեց՝ կըտաչ-կըձգի, կըխեղդի, արիւնը կը ծծի, իրան ապահովելու համար օտարի տունը դլխին կը քանդի։ Օտարից ծծելը, նրա ունեցածը խլելն ու սեփական տունը լցնելը զանազան ձևերով է լինում։ Համբարձումը իր նպատակներին հասնելու համար ձեռնարկում է չարչիութեան։ «Ի՞նչ են իմանում, էշ մարդիկ են», ասում է նա ուրիշ համայնքների անդամների համար. և այդ հանգամանքն աչքի առաջ ունեցած, նա ամեն կերպ օգտւում է նրանց «իշութիւնից». ամեն տեսակ ապրանք բարձած ջորիներին նա տանում ցրում է գիւղերում. որին ապառիկ է տալիս, որին՝ վճարի կէսն առնելով, որին՝ ապրանքն ապ-

---

[1]) Տես Մուրճ 1897 *թ.* № 7—8։

բանքի հետ փոխելով։ Ում ապառիկ է տալիս՝ թուղթ է առնում. և այդ թղթերն են, որ լետոյ գիւղացու հոգեհանն են դառնում։ Զինուած այդ մանր թղթերով Համբարձումը կարճ միջոցում լցնում է իր տունը, դատարկելով ուրիշներինը։ Եւ այդ բոլորն ի հարկէ «քաղցած չմեռնելու, փող չտա ձգելու, առաջ գնալու համար»—նպատակներ, առանց որոնց «ղոչաղի» գործունէութիւնը միտք չունի. առանց այդ նպատակների չի կարելի «ղոչաղ» երևակայել։

«Ղոչաղները» իրանց գործունէութեան հէնց այդ կողմով միայն ահագին չարիք են ներկայացնում։ Բանն այն չէ, որ «ղոչաղն» այսօր է հարստահարում գիւղացուն, այսօր է նրան իր գերին դարձնում. այդ չարիք է, սակայն ոչ դժուար ուղղելի չարիք. դրա առաջը դեռ կարելի է մի նշանաւոր չափով առնել. ամենախոշոր նշանակութիւն ստանում է «ղոչաղի» գործունէութեան երկրորդ կողմը։ Ադելեանը իր վէպում մի տեղ դուրս է բերել այդ կողմը [1]։ Ուշադրութեամբ դիտելով, մենք տեսնում ենք, որ Համբարձումը իր գործունէութեամբ ուժեղ զարկ է տալիս մի երևոյթի, որ վնասակար և քայքայիչ նշանակութիւն ունի գիւղական, ինչպէս և ամեն մի այլ, կեանքի համար։ Այդ՝ աւելորդ և վնասակար պահանջների ստեղծելն է։ Այստեղ Համբարձումի գործունէութիւնը ստանում է այլ բնաւորութիւն. ինքն իրան բաւականութիւն տուող գիւղացու մէջ պահանջներ են առաջ գալիս, որոնց ինքը չի կարող բաւականացնել և ուրմն ուրիշի կարիք պիտի ունենայ. ստացւում է ծախսի մի ուրիշ տեղ, որ կարող էր չլինել։ Գիւղացին, որ հազիւ կարողանում է իր անհրաժեշտ պահանջներին բաւականացնել, ձեռք է բերում նոր պահանջներ (հէնց, օրինակ, թէյ խմելը), որոնց բաւականութիւն տալու համար նա պիտի պարտք անի. ինքը չունի այնքան, որ ուրիշ տեղից առնելու կարիք չունենայ. տնտեսական կեանքն աւելի արդիւնաւոր չի դառնում, որ զգալի չլինի նոր ծագած պահանջների ճնշող նշանակութիւնը։ Համբարձումը հաւատարիմ է ղոչաղութեան դաւանանքին, նա միայն ուզում է «տուն լցնել», առանց նայելու իր գործունէութեան թէ մէջ երեսին, որ նրան հասկանալի է և մատչելի, ինչպէս օրինակ՝—գիւղացու պարտքաւորելը, նեղ դրութեան մէջ ընկնելը, և թէ ձախ երեսին՝ — նոր պահանջների ծագելը. և նոյն իսկ եթէ հասկանայ էլ իր գործունէութեան այդ երկրորդ նշանակութիւնը ուշադրութիւն չի դարձնելու նրա վրայ։ Այսպիսով «ղոչաղի» արածը միայն այս օրայ համար չէ որ նշանակութիւն ունի, այսօրը մի կերպ կըմթնի, բանն այն է, որ նա ծանր հանգամանքներ է ստեղծում վաղայ, ապագայի համար։ Կռիւը վաշխառութեան դէմ աւելի հեշտ է, քան սո-

---

[1]) Տես Մուրճ, 1896 թ. № 5, «Տգիտ զոհեր». գլ. Է։

վորական դարձած աւելորդ և վնասակար պահանջների դէմ... Ադելեանի դիտած այդ երևոյթը արժանի է ամենախորին ուշադրութեան. մեր լոգուածի ծրագրից դուրս էր այդ, դրա համար էլ մենք չշարունակեցինք միայն և անցանք, թէև հէնց մենակ այդ երևոյթը կարող էր մի մեծ լոգուածի նիւթ դառնալ, քանի որ նա առաջ է քաշում գիւղի կեանքի համար մեծ նշանակութիւն ունեցող մի խնդիր։

«Ղոչաղը» նախանձոտ է. ամեն մի «առաջ գնացող, փող չետ ձգող» մարդ նրա թշնամին է, հակառակորդը։ Տեղն ընկած տեղը նա առիթը ձեռքից բաց չի թողնում այդպիսի մէկին վնասելու, որովհետև նա իր գործունէութեամբ և լաջողութեամբ դէմ է գնում իրան. այսպէս թէ այնպէս շշափում է նրա շահերը։ Երբ Համբարձումի մաքսանենգութիւնը լայտնւում է և գալիս են նրա տունը խուզարկելու, ճարպիկութեամբ ազատւելով՝ նա կողմնակի կերպով լայտնում է, որ ինքը չէ մաքսանենգը, այլ նա՝ ով իրան մատնել է թշնամաբար։ Խուզարկողները գնում են խուզարկում Համբարձումի ցոյց տւած մարդու տունն էլ, ուր ոչինչ չեն գտնում, որովհետև կասկածի տակ ընկածը իր գլխի ճարը տեսել էր առաջուց։

Անդելեանը մեզ չի ծանօթացնում թէ ինչ վերաբերմունք ունի «ղոչաղը» դէպի համայնքի, գիւղի գործերը. Կարելի է մակաբերել, որ շատ էլ հոգացողներից չեն, եթէ մէջ տեղը չեն շշափւում անձնական շահերը։ Համայնքի գործերը շատ քիչ կարող են զբաղեցնել մի մարդու, որ ամեն տեղ նայում է թէ չի կարելի արդեօք պղտոր ջրում ձուկ որսալ, «տուն լցնել»։ «Ղոչաղի» բնաւորութեան հիմնական գիծը՝ եսականութիւնը շատ նեղացնում է նրա շահերի շրջանը. Նրան չեն կարող զբաղեցնել համայնքի շահերն ու գործերը։ Այսպէս ուրեմն «ղոչաղը» օտարների, իր և օտար համայնքի անդամների և նրանց շահերի վրայ նայում է իր «տուն լցնելու» տեսողութեան նեղ անկիւնով։ Ամեն սահման, որից այն կողմը կարող է անցնել, «ղոչաղն» անցնում է, առանց նայելու թէ այդ որքան օգտակար կամ ձեռնտու է օտարին։

Բարեկամական կապերը ղոչաղութեան աչխարհում շատ թոյլ են և կարող են խզւել շատ շուտով։ «Ղոչաղի» լանդգնութիւնը, որ շատ նենգադործած կարգերից թռչում է անցնում, չի կանգնում և բարեկամական ու ազգակցական կապերի առաջ։ Ինչ որ կայ, այն էլ ձևի համար է։ Համբարձումը ձևի համար է կանչում իր բարեկամներին, որ դան խորհրդակցեն Գալուստի նշանադրութեան մասին. և այդ անում է, որ խօսելու առիթ չտայ, գլխացաւանք չպատճառեն լեռոյ։ «Պրտի դան հացներս ուտեն, չայներս խմեն, ուրիշ հօ ոչինչ», ասում է Համբարձումը բարեկամների համար։ Դեռ հեռու-բարեկամները ոչինչ։ Համբարձումենց Ազատը իր հօրեղբօրից է խլում կիսովի բակը, և այդ «ղոչաղների» աչքում

վատ բան չէ, մինչև անգամ գովելի են այդ՝ և դրա նման վարմունքները։ Սինոդ Ղուկասը այդպէս անարդար վարող մարդուն դնում է իր որդիների առաջ, որպէս մի նմանելու արժանի օրինակ։ Բաւական է որ մի առիթ լինի և «զոչաղը» առանց խարութեան նոյն կերպ կը վարուի իր խնամու, բարեկամի հետ ինչպէս կը վարուէր օտարի հետ։ Գրիգորը սեփականում է իր եղբօր՝ Ծատնի հողերի մի չաղ պատառը և եղբօր աղջկանը մարդու տալիս մնացած մասը դնում է նրա վրայ օժիտի տեղ։ Զարմանալի էլ չէ նրա վարմունքը. ամենալաւ առիթն է «տուն լցնելու». նա հօ ձեռքից բաց չի թողնելու այդ առիթը։ Երբ Գալուստը թողնում է Նոյզառին, Գրիգորը, զինուած օրէնքի պաշտպանութեամբ՝ իր փեսային՝ Գալուստին դարձնում է մշտական եկամուտի մի աղբիւր։ Եւ որ աստիճան տմարդի, չոր ու անպիտան կերպով է վարում նա այն ամեն դէպքում, երբ «տուն լցնելու» յաջողութիւն կարող է ունենալ։ Զոքում է Գալուստի վզին և ձգտում է նրա բոլոր կենսական հիւթը ծծել, աղքատանալ թէկուզ դրանով Գալուստը։ Գրիգորը՝ «զոչաղներից» այդ ամենածարաւին, 35 ռ. առնելու համար առանց խղճի խայթոցի, կատարեալ դահճի սառնութեամբ իր ութ տարեկան եղբօր աղջկան տալիս է երեսուն տարեկան տղամարդու՝ Գալուստին։ Պարզ է, որ «զոչաղները» ինչպէս ամենտեղ ու ամեն դէպքում, այնպէս էլ բարեկամական և ազգակցական յարաբերութիւններում, միայն շահի աղբիւր են ուզում տեսնել. ուրիշ նպատակներ չեն մտնում զոչաղութեան ծրագրում։

«Ինչ այծը կ'անի թրիմին, թրիմն էլ կ'անի այծին», ասում է ժողովրդի առածը։ Բարեկամներն էլ նոյն ձեւն են վճարում, նոյն կերպ են վարում։ Նրանց համար աւելի նշանակութիւն ունի իրանց կերած մի փոր հացը, քան բարեկամի վիճակը։ Բոլոր բարեկամները խօսքը մէկ արած համաձայնում են Համբարձումի հետ Գալուստին ու Նոյզառին նշանելիս, թէև դուրս գալուց յետոյ իրանք են դատապարտում Համբարձումի անխղճութիւնը։ Այսպէս, ամենքի համար էլ իրանց շահերից դուրս ուրիշ աւելի բարձր շահ չկայ։

«Զոչաղութիւնը», որպէս տիրող սկզբունք, ամեն բան ձգտում է ստորադասել իրան և ստորադասել է կենսական շատ գործառնութիւններ։ Ընտանեկան կաղմն ամբողջովին նրա ցոյց տուածով է շարժւում։ Ընտանիքի անդամների առաւելութիւնը կամ պակասութիւնը չափւում է նրանց կատարած դերովը «տուն լցնելը» յաջողեցնելու գործում. որքան մէկը եռանդով է ծառայում այդ նպատակին, այնքան նա աւելի լաւ մարդ է։ «Զոչաղի» գնահատութեան չափը «տուն լցնելն» է։ Ընտանիքի անդամը առանց «տուն լցնելուն» ծառայելու ինքն ըստինքեան միտք չունի։ Բոլոր թանկագին կապերը, քնքուշ յարաբերութիւնները զոչաղի ընտանիքում տեղի են տալիս չոր հաշիւներին և չարչիական վերաբերմունքին դէ-

պի ընտանիքի անդամները։ Սինոդ Ղուկասը ոչ այնքան օտարութիւնից եկած որդու վիճակով է հետաքրքրւում, որքան նրա բերած փողով. և չան լափը գլուխն է տալիս երբ իմանում է, որ Գալուստը օտարութեան մէջ «ղոչաղ» չի եղել։ Թռռների մէջ նա շահասիրական ձգտումներ է ծնեցնում և բարկանում է, որ իր թոռը, Սինոդ Ղուկասի թոռը, մոռացել է փող խնդրել թռչող աստղից։ Որդին հիւանդութիւնից մեռնում է, բայց նա հազիւ է համաձայնում թողնել նրան գնալ բժշկելու և միայն զիջում է հարսի աղերսանքին՝ երբ Համբարձումը յայտնում է թէ բացի առողջութեան մասին մտածելը, նա ապրանք է առնելու թէ չէ ինչպէս կարելի է. «տունը չի լցւում» և ծախս պիտի անել!... Համբարձումի կինը մի շատ լաւ սրտի տէր աղջիկ է, հարևաններին օգնող, ուրիշի մասին մտածող, բայց հայր ու որդի բռնանում են նրա վրայ և շատ խիստ կշտամբում, որովհետև նրա բնաւորութեան այդ կողմերը հակառակ են ղոչաղութեան դաւանանքին, նրա պահանջներին։

«Տուն կրելը» տիրում է ամեն բանի վրայ ղոչաղների աշխարհում. նա մի կառավար է, որի ձեռքում հաւաքւած են ղոչաղների բոլոր արարմունքների սանձերը։ Ամուսնութեան նման մի գործը նոյն իսկ ստորադասւում է նրան։ Այդ ինդրում գերակշիռ կողմը նիւթականն է. սէրը, յարգանքը և ուրիշ դասի զգացմունքներն ու նրանց հետ կապւած շահերը ղոչաղութիւնը չի ճանաչում։ Աղջիկն ամենից առաջ վրան ապրանք, հող պիտի ունենայ և գերակշռութիւնը միշտ այն աղջկայ կողմն է, ով աւելի հարուստ է, ում վրայ շատ հող ու ապրանք կայ, թէկուզ նա Նոյզառի պէս մի խելառ լինի։ Հողի համար է, որ Համբարձումը Գալուստին ստիպում է թողնել Սաթենիկին. Սաթենիկը հող չունի, թէև շատ լաւ աղջիկ է։ Ինքը Համբարձումը անշուշտ լաւ գիտէ, որ իր արածը վատ բան է՝ Գալուստի և Սաթենիկի մասին խօսում են ամբողջ գիւղում. այժմ եթէ տղան թողնի, աղջկայ անունը վայր կընկնի—բայց այդ բոլորը խոչընդոտներ են, որոնք կանգնում են «ղոչաղի» շահերի առաջ. և «ղոչաղի» յանդգնութիւնը այդ պատւարներն էլ է ոտնակոխ անում։ «Տուն կրելը» չէ՞ հարկաւոր... Ամուսնութեան միջոցով «տուն կրելը» միւս ձևերից պակաս չէ. և թող ոչ մի ցաւակցութիւն, ամօթ, պարտականութիւն չկանգնի այդ նպատակի իրագործման առաջը! Եւ վայ նրան ով տան շահերի դէմ կերթայ։ լինի նա հարազատ եղբայրը՝ նոյն է. ղոչաղը նրա հետ կը վարւի այնպէս ինչպէս օտարի հետ, համարելով իր թշնամին։ Գալուստը իրաւացի կերպով վախենում է թէ եղբայրը կարող է ամեն բան տակովն անել և իրան դնել դուռ ձգել։ Թէ ինչ հետևանքներ առաջ կը բերի մի ամուսնութիւն, որ միայն շահի վրայ է հիմնւած—դրա մասին ոչ ոք չի մտածում. այսօր աւելացաւ մի քանի արտ. բաւական է. վաղն ինչ լինում է թող լինի։ Եւ մթէ Սիմին նոյն ղոչաղութեան գոհը չէ մասամբ։

Այն որ աղջիկը կ'երթար Ֆատեի պէս մի խելառ մարդու Միթէ Սիմոն անառակ զառնալու մեղքը «ղոչաղների» վզին չի դրելու։ Եւ հէնց նրա ու Գալուստի լարաբերութիւնները միթէ «ղոչաղութեան» արգասիք չեն... Եւ այսպէս, եթէ ղոչաղութեան ծայրը բռնած մտնէք Ադելեանի վէպի մէջ, դուք կարող էք ամէն ծակ ու ծուկ լաւ տեսնել, և հասկանալ նրանց առաջ բերող մօտաւոր և գլխաւոր պատճառը։

Մի լետադարձ հայեացք ձգելով ասածներիս վրայ, մենք տեսնում ենք, որ «ղոչաղները» ամբողջական բնաւորութիւններ են. մարդիկ—որոնց մտածմունքների, խօսքերի և գործերի մէջ չկայ երկուութիւն. նրանք առանց տատանուելու վճռում են անել այն, ինչ լաւ են համարում՝ իրանց տեսակէտից, ինչ օգտակար է իրանց համար։ Խիստ հետեողական մարդիկ լինելով, նրանք տեսականում լաւ համարածը իսկոյն մտցնում են գործնական կեանքում և իրար հրելով աշխատում են ուղիղ գծով դիմել իրանց նպատակին ոտնատակ տալով ճանապարհին պատահած ամէն բան։ Կասկածն ու վարանմունքը հեռու է նրանցից. նրանց աշխարհայացքը նեղ է, շահերը սահմանափակ, ուղեղը ողմած։ Եւ ղոչաղութիւնը այդ տեսակ մարդկանց շնորհիւ միայն կարող է ապրել։

Ղոչաղութիւնն այսպիսով բացատրում է այն անկանոն լարաբերութիւններն ու ապականութիւնը, որ սկսել են աւելի ու աւելի մեծ ծաւալ ստանալ գիւղի կեանքում։ Բայց ինքը, ղոչաղութիւնն ինչի հետեանք է. որոշ դասի մարդկանց այդ որոշ յատկութիւնը անշուշտ ունի իր երևան գալու պատճառները։ Լաւ դիտելով Ադելեանի ներկայացրած կեանքը մենք տեսնում ենք, որ գիւղում ահագին կռիւ է ընկել ապահով դիրք ստեղծելու համար. աշխատում է ամէն ոք հող ու վոդ, կարողութիւն ու կալք ձեռք բերել. կին առնելիս մարդիկ առաջ նրա ունեցած հողին են նայում—այս բոլորից մենք կարող ենք մակաբերել (վէպում չիշատակութիւն չկայ այդ մասին), որ գիւղական կեանքի տնտեսական կողմն ինչ որ կաղում է, վատ դրութեան մէջ է։ Տնտեսական պայմանները, որոնք ամէն կեանքի գլխաւոր հիմքերից մէկն են կազմում, իրանց փոփոխուելովը ահագին ազդեցութիւն են անում և նրա վրայ գտնուած չէնքի՝ կեանքի վրայ։ Այդ գայլային ձգտումները դէպի ապահով, անսասան դիրք ստեղծելը, այդ տուն կրելու մոլեգին ծարաւը, այդ աւերիչ կոյր հոսանքը, որ իր առաջ շատ քիչ բան է տեսնում—հետեանք է գլխաւորապէս տնտեսական պայմանների անկանոնութեան. ինչ անկանոն պայմաններն են դրանք՝ անյայտ է. բայց որ նրանք կան և նրանք են մեծ դեր խաղում, այդ երևում է ամբողջ վէպից։ Այս պարզ է ուրեմն, որ գիւղի կեանքում տեղի ունեցած մի շարք անկանոն և ոչ ցանկալի երևոյթների պատճառը ղոչաղութիւնն է, որ իր հերթին արդիւնք է գլխաւորապէս տնտեսական վատ պայմանների։

«Տգիտութեան զոհերում» բոլոր «ղոչաղների» ձգտումների մէջ մի ընդհանուր գիծ կայ, որ մենք ուզում ենք աւելի լաւ չեչտել. այդ այն է, որ բոլորը աշխատում են մի տեսակ արտօնեալ դիրք ձեռք բերել. կարծէք բնազդաբար համոզուել են, որ ղոչաղների կուլին և ընդդիմութեան դիմանալու համար հարկաւոր է ապահով դիրք ձեռք բերել ու մի կողմ քաշուել. դրանից աւելի լաւ միջոց չի կարողացել մտածել «ղոչաղութիւնը»։ Ուստի ամեն մէկն աշխատում է կուլից անվնաս և շատ աւարով դուրս գալ ու հեռուից հանդիսատես լինել միւսների կուլին։ «Ղոչաղների» անընդհատ ձգտումը շատ անգամ լարում է մինչ այն աստիճան, որ այլ ևս անընդունակ է դառնում տեսնել այն նպատակը, որի լինելովը միայն նրա գոյութիւնը միտք ունի. «ղոչաղը» տարուում է իր ձգտման պրոցեսով, ձգտելը նրա համար դառնում է պահանջ ու նպատակ, սիրում և հիւանդ է դարձնում նրան, Իւան Բոսիխ'ի [1]) պատմած ջհուդի նման, որ անընդհատ աւելի ու աւելի հարստանալը իր նպատակն էր դարձրել։ Այդպէս, օրինակ, Համբարձումը հէնց իր հարստանալու ձգտման զոհն է դառնում, մի ձգտման, որ իր գաղտնակէտին հասած՝ նպատակ էր դառել և իսկական նպատակը աչքից հեռացրել, մի կողմն էր քաշել։

III

Այդ սիրապետող, քայքայիչ ոյժը՝ ղոչաղութիւնը մենակ չէ գիւղում, նա միահեծան չէ։ Նա ունի իր հակառակորդ ոյժը, որ ընդհարուում է նրա հետ, մեծ մասամբ անուղղակի կերպով և կուլ է բռնուում։ Կուլը պարբերաբար կամ այս կողմին է տալիս յաղթանակը, կամ այն։ Այդ ոյժը—ոչ ղոչաղների ոյժն է։ Ոչ ղոչաղները գիւղում մի այլ դաս են կազմում, որ շատ խիստ տարբերուում է ղոչաղներից։ Առաջին յատկութիւնը որ աչքի է զարնուում այդ այն է, որ եսականութիւնը այս կարգի մարդկանց գլխաւոր յատկութիւնը չէ. նրանք ունեն ալլասիրութեան մի մեծ պաչար։ Օտարը ոչ ղոչաղի համար թշնամի չէ, այլ առնուազն հարևան, ընկեր, որի կարիքը նա զգում է, որից այս կամ այն փոխադարձ կախումն ունի։ Ոչ ղոչաղը գիւղի կեանքում ալլասիրութեան ներկայացուցիչ է։ Նրա գործնական ծրագրի հիմքում մեծ տեղ է բռնում օգնութեան գաղափարը, մի բան, որ կատարելապէս բացակայում է ղոչաղների գործունէութեան ծրագրում, նրանց դաւանանքում։ Սինոդ Ղուկասն իր որդիներին այսպիսի խրատ է տալիս. «Հարևանից-բանից հեռու կացէք. դուք եղէք և միայն ձեր գլուխը։ Ղոչաղ կացէք, ուրիշին խաբեցէք, ունեցածը խլեցէք, ինքներդ վայելեցէք, որ ասեմ տղայ էք» (Մուրճ 1896 թ. № 5, էջ 562)։ Այստեղ չկայ օգնելու գաղափար. զարմանալի էլ չէ. նա

---

[1]) Гл. Успенскій, Соч. т. II. Власть земли.

հակառակ է «տուն կրելուն»։ Այդպէս չեն ոչ զոչաղները։ Ոչ զոչաղները երկու տեղ են. ընտանիքում և համայնքում. այդ երկու շրջանումն էլ նրանք օգնութեան սկզբունքով են շարժւում։ Ընտանիքում գործող ամենալաւ ոչ զոչաղը Վառվառն է՝ Համբարձումի կինը։ Նա օգնում է հարևաններին որքան կարող է և ինչով կարող է, չնայելով որ դրա համար մեծ նախատինք է կրում ամուսնուց ու պատրոնից։ Նա անկարող է հասկանալ, որ կարելի է մարդամէջ ապրել, հարևան ունենալ և նորա օգնութեան կարիքը չզգալ։ Այդ ինքն ըստ ինքեան մի դժուար հասկանալի բան է. ընկերութեան մէջ ապրող մարդիկ միշտ փոխադարձ օգնութեան կարիք ունին և իրար օգնելով է որ կարող են ապրել, նոյա գնալ։ Այստեղ մեր առաջն է երկու հակառակորդ սկզբունքների ընդհարումը—խիստ անհատական սկզբունքի և ընկերական, համայնական։ Մէկը ձգտում է հասկանութեան չահերին ստորադասել ամեն բան, իսկ միւսն աշխատում է աւելի կամ պակաս լայն շրջանի, ընդհանուրի չահերին գերակշիռ դիրք տալ։ Եւ ահա այդ երկու հակառակորդ սկզբունքներն են, որոնք կռւի են մտած իրար հետ. թէ որ կողմը կը յաղթի այժմ, դժուար է ասել. շատ հանգամանքներ կան, որոնք պայմանաւորում են մէկի և միւսի յաջողութեան հաւանականութիւնը։ Անգիտակցական, բնազդական կռիւ է այդ, ուր մի կողմը կանգնած են նեղ, անձնական և քայքայիչ բնաւորութիւն կրող ձգտումները, միւս կողմը լայն, համայնական, ընկերական և ստեղծելու ու վերանորոգող յատկութիւններով օժտւած չահերն ու ձգտումները։ Խուլ է կռիւը, յայտնի կերպով դէմ յանդիման չեն դուրս եկել ախոյեանները, կռւի ղեկավարները։ Այդ խուլ, տարրական կռիւը մտաւորող (осмыслить) մարդիկ չկան գիւղական կեանքում. և մի կռիւ, որից մի նշանաւոր չափով կախւած է գիւղական ժողովրդի ապագայ կազմը, թողնւած է բաղդի խաղերին!...

Ոչ զոչաղների հոգին աւելի հարուստ է, չահերն աւելի լայն շրջան են ընդգրկում, ունին աւելի նուրբ և բարձր կարգի զգացմունքներ, աւելի ցաւակցող և ուրիշի դրութեան մէջ մտնելու ընդունակ սիրտ։ Նրանք չունին «զոչաղների» ամեն արդելք, ինչ աւեսակ արժանիք ու նշանակութիւն էլ ունենայ նա—ոսնակոխ անելու յանդգնութիւնը. նրանք ունին հանրակեցութեան յայտնի նորմաներ, որից այն կողմը երբէք չեն անցնում։ Խիղճ, ամօթ, պատկառանք, սէր ու յարգանք և դրանց նման այլ յատկութիւններ նրանց շրջանում կարելի է գտնել միայն։ Պատւասիրութիւնը նրանց մօտ աւելի է զարգացած և աւելի լաւ բնաւորութիւն ունի։ Այդպէս է, օրինակ, Վառվառը, ոչ զոչաղների այդ ամենալաւ ներկայացուցիչը ընտանեկան շրջանում։ Ամեն անգամ մեծ սիրով է նրան հեղինակը մէջ բերում և հիանում նրա համբերատար ու մաքուր բնաւորութեան, անձնազոհ ու սիրող սրտի և առողջ խելքի վրայ։ Այդ կինը մի

իսկական նահատակ է «ղոչաղների» աշխարհում. իր թալ ուժերով, առանց չուսահատելու նա կռիւ է մղում Նրանց դէմ, ամէն լաւ բան ինչ ձեռքից գալիս է չի զլանում իր մերձաւորին. «ղոչաղութեան» խաւար երկընքում նա միակ լուսաւոր աստղն է։ Նա այն հերոսներից է, որոնք հիացնում ու յափշտակում են մարդկանց ոչ իրանց արտաքին շուքով և աչք շլացնող փայլով, այլ որոնք ազդում են շատ խոր իրանց ներքին դեղեցկութեամբ։ Վերլուծութեան համար նա շատ լաւ նիւթ է ներկայացնում. բայց մենք պիտի թողնենք նրան այս անգամ, որովհետև նա մեզ իր հասարակական կողմով է հետաքրքրում և ոչ ինքն ըստ ինքեան։ Այդ նոյն տիպին է պատկանում և Սաթենիկը, «տանու աղջիկների» այդ լաւագոյն ներկայացուցիչը, և նրա հայրը Մկրտիչը, որ մի «խեղճ մարդ է», ինչպէս գիւղացիք են ասում, այսինքն «ղոչաղ չէ», ուրիշին չի կեղեքում։

Գիւղը իր խորքերից դուրս է հանել նոյն դասին պատկանող, բայց ուրիշ տեսակ մարդիկ, որոնք շատ չեն և «հաղուագիւտ ծաղիկներ են», ինչպէս ասում է հեղինակը, բայց և որոնք այնուամենայնիւ կան։ Այդ մի նոր և զեռ թարմ ուժէ, որ ասպարէզ է դուրս գալիս ղոչաղութեան գարշապարը կծելու և նրան թունաւորելու և մեռցնելու համար։ Սրտի բաբախումով մարդ հետևում է այդ նոր մարդկանց գործունէութեան, գործելու եղանակներին և ձգտումներին։ Դուշակում ես, որ առաջդ ինչ որ առողջ ուժ է կանգնած, որ նա կարող է բարեյաջող պայմաններում հսկայական ծաւալ ստանալ ու տիրել գիւղական կեանքի հոսանքին, նրան իր հասկացածին պէս ընթացք տալու համար։ Այդ նոր ուժի կրողները նոյն ոչ ղոչաղները, «խեղճ մարդիկն» են, միայն իրանց յատնի յատկութիւնները գիտակցող և հասարակական ցաւերն ու շահերը հասկացող։ Այդ մարդիկ երկու տեսակ են. մէկը բուսել է գիւղի կեանքի խոր ծոցից, բարեյաջող պայմաններում գտնելով գիտակցութեան եկել. ապրելով գիւղում աւելի լաւ է հասկանում նրա կարիքները և նրանց լցուցանելու միջոցները և հէնց այդ պատճառով նրա գործունէութիւնն աւելի հիմնաւոր է և արդիւնաւոր, ինքը որպէս ուժ տեղական, ապրուն և շատ աւելի ազդեցիկ. միւսը գիտակցութիւնը դուրսն է ձեռք բերել առանց մղած լինելու կեանքի պայմաններից և բարի ցանկութիւններով կեանք է մտել, այնտեղ յատնի ձևով գործելու։ Այս ուժն աւելի զգացմունքի վրայ է հիմնուած քան խելքի, աւելի քիչ է ճանաչում ցաւերի իսկական պատճառները և նրանց դէմ կռուելու միջոցները, քան զգում նրանց մնասակար և կործանիչ լինելը. գիտակցութեան պակասութիւնը դարձնում է նրան ոչ այնքան կայուն, հաստատ և տեղական. այդ ուժը գործում է բռնկումներով։

Առաջիններից են Մովսէսն ու Պետրոսը։ Համայնքի ցաւը նրանց

ցան է, կարիքները նոյնպէս. նրանք ապրում են համայնքի կեանքով, սրտին մօտ պահած նրա շահերը. որքան կարող են և ինչպէս հասկանում են ծառայում են իրանց համագիւղացիների շահերին. կարգի են բերում համայնքի գործերը, վարում են դատերը։ Նայելով նրանց գործունէութեան վրայ այնպէս, ինչպէս ցոյց է տուել հեղինակը, մենք տեսնում ենք, որ նրանք իրանց ջանքն ու եռանդը մաշում են «ղոչաղ»-ների գործունէութեան հետևանքների դէմ կռուելով, առանց հասկանալու սակայն նրանց բուն պատճառը։ Այդ մարդիկ վէպում հաղիւ գծած են. ինչ որ ասում ենք նրանց մասին, մենք հիմնում ենք նրանց ընդհանուր գծերով քաշած պատկերի վրայ։ Վէպում ոչ մի տեղ նրանք կարգին մտածած ծրագրով չեն ընդհարւում «ղոչաղների» հետ. միայն վերջիններս մի տեսակ քաշւում են առաջիններից։ Միմիայն հետևանքների հետ կռուելը շատ է վնասում գիւղական կեանքի ցանկալի ուղղութեամբ առաջ գնալուն. գիւղը ղեկավարում են «ղոչաղները», իսկ նրանց մեղքերը քաւում են սրտացաւ ոչ ղոչաղները և այդպէս շարունակ կտրում են այն աւելորդ մսի կտորը, որն ինչպէս հին հեքիաթում աղջկայ ճակտին՝ շարունակ և անընդհատ դուրս է գալիս գիւղական կեանքի երեսին։ Այս անդամահատութիւնը անկասկած մեծ ուժ ու եռանդ է պահանջում— բայց որպէս չարիքի դէմ կռուելու միջոց ժամանակաւոր է։ Եթէ այդ մարդիկ, որոնք իրանց անմիջական շահերով կապւած են համայնքի հետ— որ և նրանց լաջողութեան և ունեցած ազդեցութեան գլխաւոր պայմաններից մէկն է—ընդունակ լինէին թափանցել իրերի խորքը, հասկանալին երևոյթների իսկական պատճառները, այն ժամանակ նրանց գործունէութիւնն աւելի արդիւնաւոր կը լինէր, ձեռք առած միջոցները՝ արմատական և ստացած հետևանքները՝ տևողական։ Բայց այդ մարդիկ զուրկ են լուրջ պատրաստութիւնից, նրանց ունեցած պաշարը լրագրի տաածից հաղիւ է միայն այն կողմը անցնում—իսկ լայնի է թէ լրագրի տաածն ինչ ողորմելի բան է. իրանք լրագիրները չեն հասկանում այն խնդիրների իմաստն ու կարևորութիւնը, որ առաջ է քաշում գիւղի, գաւառի կեանքը, և ծանօթ չեն այն կեանքի հետ, ուր այդ խնդիրները հրապարակ են դուրս գալիս։ Ոչ ղոչաղների ձեռնածուն և առաջնորդը բարի բնազդն է, բարի ցանկութիւնները, և աւելի լայն բնաւորութիւնները— այս բոլոր լաւագոյն լատկութիւններն էլ ազդելու և ներգործելու փոքր ասպարէզ են գտնում լաւ դէնք չունենալու պատճառով։ Այնուամենայնիւ, որպէս թարմ, հզօր և արդարութիւն բերող մի նոր ուժի կրողներ, նրանք արժանի են խորին ուշադրութեան և մանրազնին ուսումնասիրութեան. ապագայում նրանք են լաղթանակելու։ Այդ մարդկանց չատանալովը պիտի հող պատրաստուի այն ինտելիգենցիայի համար, որ կը դգայ վերջապէս իր պարտիքը դէպի ժողովուրդը, որ զինուած գիտութեամբ, կ'երթայ

գաւառ, գիւղ վճարելու այն քրոմնքի փոխարէն, որին նա պարտական է իր աւելի կամ պակաս բարձր հասարակական դիրքով. այդ մարդիկ չառաջնորդեց զօրքերն են, որ մաքրում, չարդարում են ասպարէզը պարտաճանաչ և պարտավճար ինտելիգենցիայի համար։

Ղոչաղութեան հակառակ ոյժը կրող մարդկանց երկրորդ տեսակը այն պանդուխտներն են կազմում, որոնք վերադարձել են հայրենի գիւղը։ Պանդխտելու ստիպուած այդ երիտասարդները մի կողմից բաղդաւոր վիճակ են ունեցել. այնտեղ, օտար երկրում, իր պարտքը հասկացողներից մէկը բաց է արել նրանց աչքերը իրանց ցաւերը տեսնելու, զգալուն է դարձրել դէպի համայնքի կարիքները ու չարիքները և նրանց աւելի գիտակցական դարձնելով ճանապարհ դրել կուսելու գիւղական կեանքի լայնի թշնամիներից մէկի՝ վաշխառութեան դէմ։ Վէպի այդ մասը, որ հասարակական տեսակէտից մի չատ կարևոր տեղ է բռնում, ըստ արժանոյն լաւ չէ մշակուած. նա ինքը, առանձին վերցրած, կարող էր մի չատ լաւ գործ դառնալ։ Բացի մի դէպքից և մի քանի կցկտուր տեղեկութիւններից, այդ մարդկանց մասին մենք ուրիշ բան չգիտենք. բայց և այնպէս եղածն էլ բաւական է ընդհանուր գծերով ցոյց տալու համար նրանց նշանակութիւնը գիւղի կեանքում։ Գիւղի կեանքը, անշուշտ քաղաքից եկած պանդուխտների շնորհիւ, այսպէս ասած դուրս է եկել իր ափերից, նա ունի պահանջներ, որոնց ինքը չի կարող բաւականացնել—բնականաբար զգացում է մի միջնորդի կարիք։ Պահանջների չատանալը լառաջադիմական ուղղութիւն ունի, նա չատանում է միւս կողմից Համբարձումի նման մարդկանց ջանքերով։ Այսպիսով գիւղացու ծախսի մատեանի մէջ մի նոր էջ է բացւում, որ կարելի է միայն պարտքով լցնել, և գիւղացիք պարտք են անում... Պանդխտութիւնից դարձած ջահիլները, լիչելով իրանց ուսուցչի ասածները, մի լաւ դնգտում են Համբարձումին և գիւղից խռկում. սակայն իրանց արածով նրանք ձգում են վաշխառուի պատիւը, բայց նրա անհրաժեշտութեան առաջը մազի չափ անգամ չեն առնում։ Փիլիպոսը չլինի՝ Մարկոսը լինի—միևնոյն է։ Գիւղացին ներկայումս աղքատ է. ինչու—այդ ուրիշ խնդիր. իրողութիւնն այս է, որ նա աղքատ է։ Նա պարտք անելու կարիք ունի. ինչքան կուզես թակիր վաշխառուին, գիւղից դուրս արա, նրա կարիքը կայ, նա անհրաժեշտ է ներկայ պայմաններում։ Մթթէ կան այնպիսի միամիտներ, որոնք կարծում են թէ վաշխառուին թակելով է, որ կարելի է նրա դէմն առնել. ոչ, այդտեղ աւելի էական միջոցներ են հարկաւոր, որ ձեռք առնուեն։ Պանդուխտ գիւղացիների ուսուցիչը մի սխալ է արել, և մեծ սխալ. նա ցոյց է տուել կարիքը, բայց նրա առաջարկած միջոցը չատ չնչին է (գուցէ նա իսկի միջոց չի էլ ցոյց տուել—որ, ի հարկէ, աւելի վատ) ատամնայաւի համար նա հանգստացնող դեղ է տուել և ոչ

արմատական անող։ Անկասկած նա ունեցել է բարի ցանկութիւններ, բայց նա էլ լրագրաղաւակ է երևում, թեթև և վայր ի վերոյ տեղեկութիւններով ու անծանօթ գիւղական կեանքի հիմնական պայմաններին և հանգամանքներին։ Ահա թէ ինչն է պատճառը, որ ջահիլները մեծ եռանդով կռւի են մտնում և իսկապէս շատ քիչ բան շահում։ Սակայն ինչ և իցէ, բայց եղածից դժգոհ լինելու տեղիք չկայ. այնուամենայնիւ մի աստիճան է ստացւում, որ տանում է դէպի գիտակցական մաքառումը գիւղական կեանքի չարիքների դէմ։ Պանդխտառու քաղաքների դերը այստեղ դուրս է նկարւում մեծ ոյժով. ինչքա՜ ասես չի կարելի պատւաստել այդ մարդկանց, որ հեռաւոր գիւղերից են գալիս! Մնալով բազդի ձեռին, նրանք ապականւում են և այդ ապականութիւնը լուսաւորութեան անունով շաղ տալիս խաւար բայց դեռ ոչ բոլորովին փչացած գիւղերում, ստեղծելով պայմանների աւելի բարդ խմբումներ, որոնք գիւղացուն՝ շատ թանկ են նստում այժմ և թանկ են նստելու ապագայում։ Կեանքը գնում է իր բնական ընթացքով և «զոչաղները» սիրան ուզածին չափ և սիրան ուզած ձևով ձուկ են որսում անտէր ու անտիրական գիւղի կեանքի պղտոր ջրում! անուշադրութեան մատնւած այդ կեանքն արդէն ընկնում է, փչանում, և նրա մասին ոչ ոք չի մտածում!

Այսպէս ահա «զոչաղութիւնն» ունի հակառակորդ ոյժ, որ դեռ իր կոչումը լաւ չի հասկանում. լանձնւած իր մաքուր ու բարի բնազդներին, նա ցանկանում է իր հասկացած ձևով աղդել և ցանկացած ուղղութիւնը տալ կեանքի հոսանքին։ Սակայն նրան պակասում են գործելու եղանակներ և բուն պատճառներն ըմբռնելու կարողութիւն։ Նրան պակասում են ընդունակ, բանիմաց առաջնորդներ։ Գաւառական ինտելիգենցիան (ինտելիգենցիան!), որի համար է ասած թէ անունը կայ՝ ամանում չկայ, ոչ հետաքրքրւում է այդ կարիքներով, ոչ խառնւում է այդպիսի գործերում, ոչ էլ կարող է այդպիսի մի ծանր գործ լանձն առնել։ Զրկւած լուրջ պատրաստութիւնից, անկարող ըմբռնելու գիւղական կեանքի բարդ խնդիրները, առանց առաջնորդող հասարակական և սոցիալական լայն հասկացողութեան և սկզբունքների, անկամք ու անեռանդ նա մի կերպ քարշ է տալիս գոյութիւնը ամօթ բերելով իր անւան։ Իսկ «մոռացւած աշխարհն» ապրում է իր կեանքով ենթարկւած տարրալին ուժերի կռւից առաջացող աւերածութեան։ Ո՞վ է մտածելու այդ խաւար ու աղքատ ժողովրդի մասին, ո՞վ է ցանկալի ուղղութիւն տալու նրա կեանքի ընթացքին։ Նրան ղեկավարելու հաւակնութիւն ունեցողների փքուն խօսքերը հասկացող և որտացաւ փոքրամասնութեան համար կորցրել են իրանց արժէքը. նրանք մնանկներ են, որ չարունակում են հարուստ ձևանալ։ Ո՞րտեղից պիտի սպասի ուրեմն գիւղը իր մասին մտածողներ, ո՞վ պիտի ուսումնասիրի նրա բազմաթիւ կարիքները և հրապարակ դնի կենսական մեծ նշանակութիւն

ունեցող ինդիրները։ Ցիշեցէք ձեր պարտականութիւնը, դուք, որ զդալ կարող էք ժողովուրդի նեղ կացութիւնը! մի՞ք մոռանալ, որ ձեր հասարակական դրութեամբ անձամբ պարտական էք այն ժողովուրդին, որ այժմ օգնութեան կարիք ունի. զինուէք գիտութեամբ, պարտքի գիտակցութեամբ և ասպարէզ դուրս եկէք! Պարտքը տալու ժամանակը վաղուց է հասել!...

IV

«Էս ինչ բանի մէջ ընկաւ ես, մտածում է Գալուստը, երբ գիւղում լալտնւում է նրա և զոքանչի յանցաւոր յարաբերութիւնը և Սիմոն. չղութեան լուրը. սաղ գիւղացոց առաջ խայտառակւած եմ։ Սրանից յետոյ էլ ես ինչպէս պիտի մարդամէջ դուրս գամ։ Վառվառն էլ է իմացել, քրոջ էլ։ Աւ՛խ, պա եթէ ես մի հասած աղջիկ տարած լինէի, էս բանը կը պատմէր։ Ախր ինչո՞ւ էս բանն արեցի. խելքս որտեղ էր կորել... (Մուլ.ճ. 1897 № 1, էջ 75)։

Գալուստի այս հոգեկան դրութիւնը հեղինակն այսպէս է բացատրում։ «Այսպէս յաճախ տանջւում էր Գալուստը իր զղջման և խղճի խայթոցի տակ։ Այդ տանջանքն օր օրի վրայ սաստկանում էր, որովհետև ամօթաբեր գաղտնիքը չուտով բոլորովին լալտնի պիտի դառնար իր մօտիկներին» (նոյն տեղը)։ Հեղինակի խօսքերի երկրորդ մասը չի համապատասխանում իրականութեան. «ամօթաբեր գաղտնիքը» արդէն «բոլորովին լալտնի էր Գալուստի մօտիկներին». Վառվառին էլ, քրոջն էլ։ Ինքն ըստ ինքեան, որպէս միտք, հեղինակի ասածը սխալ է։ Խղճի խայթոցները մարդուն հետևում են ամեն տեղ և ամեն ժամանակ, և նրանց պատճառած տանջանքի սաստկութիւնը քիչ կախում ունի այն բանից թէ յանցանքը արդէն ամենին է լալտնի. մինչև անգամ բաւարար հիմքերով կարելի է հաստատել, որ շատ դէպքերում խղճի խայթոցներն այնքան աւելի ուժեղ են, որքան յանցանքը ծածուկ է, քան ընդհակառակը։ Վերջապէս հեղինակի բացատրութիւնն ամբողջովին սխալ է։ Գալուստի մտածմունքից երևում է, որ նրան խիղճը չի տանջում, այլ այն՝ որ այլ ևս մարդկանց երեսը չի կարող դուրս գալ, որ բոլոր գիւղը գիտէ իր յարաբերութեան մասին դէպի զոքանչը։ Այստեղ չկայ նոյն իսկ յանցանքի գիտակցութիւն. ծուղակն ընկած մի մարդ է ձեր առաջ, որ կորցրել է խելքը, չի իմանում ինչ անի։ Զլինէր այդ կողմնակի հանգամանքը՝ յանցանքի լալտնւելը, Գալուստին երևի շատ էլ չէր զբաղեցնի իր արարմունքը։ Պարզ է, որ հեղինակը թիւրիմացութեան մէջ է ընկել, սխալ է հասկացել մէջ բերած դէպքը։

«Քամու բերածը քամին կը տանի»։—Այս խօսքերը դրած են վէպի առաջին մասի գլխին. այս խօսքերով է արտայալտւում իբր թէ առաջին մասի իմաստը։ Առաջին մասը ամբողջովին նւիրած է Համբարձումի գոր-

ծունէութեան։ Այդ մարդը ամեն տեսակ միջոցներով ձգտում է ապահով, անկախ դիրք ստեղծել։ Նա մաքսանենդ է, անսիրտ վաչխառու, հարստահարող ցեց-վաճառական. նա «իր տակը պնդացնելու» համար հողով, ապրանքով աղջիկ է առել. նոյնը նա մտադիր է կրկնել և Գալուստի վերաբերմամբ. հոգին պատրաստ է ծախել, միայն թէ հարստանալ։ Եղբօրը պանդխտութեան է ուղարկում, որ փող աշխատի, ինքը կառավարում է տունն ու իր տնտեսութիւնը. անհաւատալի եռանդ ու ջանք է գործ դնում, հիւանդ ժամանակ նոյն իսկ իր անձի վերաբերմամբ չարչիութիւն է անում, որ «փող աշխատի, առաջ գնայ, տուն լցնի»։ Դուք տեսնում էք մի մարդ, որ չան պէս չարչարւում է, քաի ու քրանքի մէջ կորչում իր վատ թէ լաւ, այդ ուրիշ խնդիր, նպատակին հասնելու համար։ Բայց անյաջողութիւն է պատահում, ապրանքը բռնում է ոսկմանից անցկացնելիս, և նա պիտի ահագին տուղանք վճարի։ Մեծ չարչարանքով ձեռք բերած հարստութիւնը ձեռքից գնում է, երկար ժամանակաց վաստակը քարը քսւում։ Հեղինակը Համբարձումի հարստութիւնը, որ մեծ ջանքի ու չարչարանքի պտուղ է, համարում է «քամու բերած», իսկ նրա կորչիլը՝ «քամու տարած»։ Եվ ինչն է ուրեմն, որ քամու բերած չէ։ Դարերով ձեռք բերած գիտութիւնը, հազարաւոր տարիների քաղաքակրթութիւնը եթէ չանկարծ, որևէ արտաքին ուժի ներգործութեան չնորհիւ, ոչնչանալ, կորչի, նշանակում է «քամու բերած էր ու քամին տարաւ»։ Հարիւրաւոր մարդկանց աշխատանքով չինած ջրանցքը, որ ջուրը տանի — այդ նշանակում է «քամու բերածը քամին տարաւ»։ Մինթ ահագին չարչարանքով ձեռք բերած հարստութեան կորչելը «քամու տանել» է։ Ո՛չ. ինչ որ ձեռք է բերւած չարչարանքով ու քրանքով-նա «քամու բերած» չէ։ Ժողովուրդն այդ առթիւ ուրիշ բան կ'ասէր. «հառամ դադածը մարդուս չի մնալ» և այս առածը, որի մէջ որոշ չափով ճշմարտութիւն կայ, աւելի լաւ կ'արտայայտէր վէպի առաջին մասի իմաստը։ Ուրիշ բան է, եթէ Համբարձումը հարստութիւն ժառանգած լինէր և կորցնէր—այդ ճիշտ որ քամու բերած ու քամու տարած կը լինէր։ Այստեղ նոյն թիւրիմացութիւնն ենք տեսնում, միայն աւելի խոշոր երևոյթի վերաբերմամբ. այստեղ նոյն ներկայացրած երևոյթների իսկական միտքը չհասկանալն է։ Մենք մոտեցանք ամենամեծ թիւրիմացութեան, որ վերաբերում է ամբողջ վէպին։

«Տգիտութիւնն է, որի պատճառով մարդը իր համար կորստաբեր հանգամանքներ է ստեղծում և դառնում նոցա գերին։ Վերջը թակարդի մէջ ընկած թռչունի պէս թրպրտալով՝ նա լինում է այդ հանգամանքների զոհը» (Մուրճ, 1896, № 9, էջ 1095)։ Այս աֆորիզմը, որ հեղինակին է պատկանում, դրւած է վէպի երկրորդ մասի ճակատին, իսկ նոյն աֆորիզմի երկրորդ մասը՝ վէպի երրորդ մասի ճակատին։ Այդ տողերում ամփոփած է

ըստ հեղինակի վէպի, այսպէս ասած, փիլիսոփայականը, իմաստը, իդէան։ Ըստ երևոյթին այդ աֆորիզմը Գալուատին և վէպի մի քանի ուրիշ գործողներին ունի աչքի առաջ և ոչ բոլոր գործող անձերին. այնպէս որ նրանցից շատ կարևորները հեռու են այդ աֆորիզմից, չեն մտնում նրա տակ։ Ալպիսով վերնագիրը մի քիչ բովանդակութեան յարմար չի գալիս. բայց այդ այնքան էլ մի մեծ բան չէ։ Մենք կը վերլուծենք այդ աֆորիզմը ինքն ըստ ինքեան, ապա կը նայենք թէ որքան նա յարմար է գալիս վէպի բովանդակութեան, ճիշտ է արտայայտում նրա իմաստը, թէ որքան այդ եզրակացութիւնը ուղիղ է արուած վէպում ներկայացրած փաստերի հիման վրայ։

«Ցգիտութիւնն է, որի պատճառով մարդ իր համար կորստաբեր հանգամանքներ է ստեղծում և դառնում նոցա գերին». հարց. միայն տգիտութիւնը։ Իսկ ինքը տգիտութիւնն ինչի հետևանք է. մթէ միայն տգիտութիւնն է պատճառը, որ «մարդ իր համար կորստաբեր հետևանքներ է ստեղծում», կամ մթէ գլխաւոր պատճառն է նա։ Մարդը ինքն ըստ ինքեան և մարդը ընկերութեան մէջ այնպիսի բարդ երևոյթ է, որ նրա վիճակի այսպէս կամ այնպէս լինելը մի պատճառի կամ պատճառների մի չարքի արդիւնք չի կարող լինել։ Բարդ երևոյթները բազմաթիւ մանր ու խոշոր պատճառների արդիւնք են, պատճառներ, որոնք ընդհարւում են իրար հետ, կցւում, խաչւում, խճճւում, այնպէս որ դժւար է լինում խելքը չկորցնել այդ լաբիրինթոսի մէջ, ուր մարդու աչքերը շաղւում են պատճառների խաչտճամուկ տեսքից։ Դրանց մէջ կան գլխաւոր և երկրորդական դեր խաղացողներ, առաջնակարգ և աղդեցութեան լայն շրջան ունեցողներ, ինչպէս և ընդհակառակն։ Տգիտութիւնը կամ մտալին տարրը առանձին անհատի և հասարակութիւնների կեանքում մեծ դեր է խաղում. բայց բոլոր երևոյթները, որոնք պատահում են անհատին և հասարակութեան չի կարելի այդ միակ պատճառի տակ դնել. մտալին տարրը որպէս գործող գլխաւոր դերը չի խաղում, այլ միայն գլխաւոր դերերից մէկն է խաղում։ Ինքը տգիտութիւնը ենթակայ է տնտեսական պայմանների աղդեցութեան, քաղաքական այս կամ այն կաղմը նրան այս կամ այն գոյնն է տալիս։ Եթէ նոյն իսկ, որ և է երևոյթի նախնական պատճառները քննելով, կծիկի ծայրից բռնած Ադամի մօտ գնանք, դարձեալ միայն տգիտութեան՝ մտալին տարրին չենք պատահելու, որպէս երևոյթներ առաջ բերող միակ կամ գլխաւոր պատճառի, ուր մնաց թէ մենք միայն նրան հանդիպէինք մի այնպիսի երևոյթ վերլուծելիս, որ պարփակած է ժամանակի և տարածութեան որոշ սահմաններում։ Ասելու համար՝ թէ «Տգիտութիւնն է, որի պատճառով... և այլն»—առնւազն ըիսկ է հարկաւոր։ Մի ուրիշը նոյն հաւանականութեամբ կարող է ասել. «աղքատութիւնն է, որի պատճառով... և այլն...» և՝ նոյնքան իրաւունք կ'ունենայ, որքան

առաջին աֆորիզմի ասողը. երկուսն էլ և ճիշտ կը լինեն և՛ սխալ. ճիշտ այն մտքով, որ ասածների մէջ ճշմարտութեան մի մաս կայ, և սխալ՝ որ ասածների մէջ ամբողջ ճշմարտութիւնը չէ։ Այսպէս ուրեմն Ադելեանի աֆորիզմը ինքն ըստ ինքեան առած միակողմանի է, իսկ բացատրութեան ձևը սխալ, որովհետև իր վէպում դուրս հանած երևոյթները մի պատճառի է վերածում. տեսնենք որքան աֆորիզմը յարմարւում է հեղինակի տուած կեանքին։

Գրականութեան պատմութեան մէջ անսովոր երևոյթ չէ, որ հեղինակն իր գրածքի ընդհանուր միտքը այնպէս չի հասկանում ինչպէս ընթերցողը, կամ թէ ուղղակի սխալ է հասկանում։ Նոյնը պատահել է և Ադելեանին։ Հեղինակ Ադելեանը և մտածող Ադելեանը ձեռք ձեռքի տուած չեն գնում վէպի մէջ, այլ բաժանուած և իրարից բաւականին հեռու։ Տգիտութեան զոհերից ամենագլխաւորը Գալուստն է. վերլուծենք այդ մարդուն։ Գալուստը հաստատուն կամքից զուրկ մարդ է. այս է նրա բնորոշ յատկութիւնը։ Նա հակւած չէ դէպի «զոչաղները», գայլալին հակումներ չունի, աւելի յարում է «ոչ զոչաղներին»։ Բանն այնպէս է եկել, որ նա պիտի զոչաղ լինի. այսպիսով խեղճը անյարմար դրութեան մէջ է, ինչ որ իր տեղը չէ։ Միամիտ, պարզ և խաբւող մարդ է, դրա համար էլ նրա վաճառականական ձեռնարկութիւնները անյաջող են անցնում. փող չի կարողանում ձեռք ձգել և միշտ ամօթով է մնում հօր ու եղբօր մօտ։ Համբարձումը կորցրել է հարստութիւնը. անհրաժեշտ է տունը նորից ոտքի կանգնեցնել. ինքը հիւանդ է և աշխատելու անկարող, եղբայրը «զոչաղ» չէ և անշնորք։ Մնում է կողմնակի միջոցով հարստանալ։ Համբարձումն առաջարկում է Գալուստին ամուսնանալ խելառ Ցատնի ութ տարեկան աղջկայ հետ։ Գալուստը սիրահարւած է. նա ցանկանում է այլ կերպ տնօրինել իր վիճակը, բայց նրա զգացմունքներն ու մտադրութիւնները դուրս են «զոչաղութեան» դաւանանքի շրջանակից։ Կռիւն անխուսափելի է. բայց Գալուստը անկարող է թուլ կամքի պատճառով դէմ դնել խոչնդոտներին և իր գիտցածն անել։ Նա ընկճւում է և հպատակում եղբօր՝ տան շահերի ներկայացուցչի՝ պահանջներին։ Մնացածն ինքն ըստինքեան հասկանալի է։ Ութ տարեկան կնոջ տեղ Գալուստին կնութիւն է անում իր զոքանչը, որ լղանում է, երեխայ է ծնում և խեղդել տալիս երեխային։ Ստեղծւում են մի շարք բարդ հանգամանքներ։ Գալուստը նոր կին առնելու յուսով արձակում է կնոջը և դրանով ընկնում մի անսիրտ «զոչաղի»՝ Գրիգորի ճանկը, որ աշխատում է նրա արիւնը ծծել, վերջին կոպէկը սրկել։ Հոգևոր կառավարութիւնը ըստ սովորութեան ուշացնում է արձակման հրամանը։ Գալուստը անկարող լինելով համբերել, մի գիշեր ծածուկ պակւում է։ Գիւղացիները, մանաւանդ ծերերը, խիստ կերպով հալածում են նրան, որպէս ապօրինի կին պահողի։

Այս բոլորից դուրս գալու մի ելք է մնում միայն. սպանել տալ Նոյզառին և այդպիսով լուծել խճճված հանգույցը։ Գալուստն իրագործում է այդ, բայց լանցանքը լայտնուում է և լանցաւորները աքսոր են գնում։

Ինչումն է այստեղ Գալուստի տգիտութիւնը։ Մթթէ Գալուստը տգիտութեան զոհ է։ Գալուստի կեանքում երկու գործոն մեծ դեր են խաղում. կամքի թուլութիւնը և «ղոչաղութեան» պահանջները. և նա հէնց այդ երկու գործոնների զոհն է որ կայ. տգիտութիւնն այստեղ գործ չունի, որպէս առաջնակարգ պատճառ. նրա վիճակի վրայ շատ մեծ ազդեցութիւն է անում և հոգևոր կառավարութիւնը, ներկայանալով որպէս մի մարդակորոյս գործոն և շատ ճիշտ է նկատում Մովսէսը վէպի վերջում, որ նա՝ հոգևոր կառավարութիւնը, պակաս մեղաւոր չէ այս գործում։

Դուք տեսնում էք, որ հեղինակն ընկել է թիւրիմացութեան մէջ, սխալ բացատրութիւն տալով իր վէպում նկարագրած երևոյթներին «ղոչաղութիւնը», որ տիրապետող դեր է խաղում վէպում, շատ քիչ է նրա ուշադրութիւնը գրաւել. մի պատճառ, որով բացատրուում են գիւղական կեանքի երևոյթների մի մեծ շարքը, նրա առաջ տեղի է տուել մի բացատրութեան, որ իսկապէս ոչինչ չի բացատրում լիովին։ Մենք այդ հետևանք ենք համարում այն բանի, որ Ադելեանն իր դիտած կեանքը բացատրող հիմունքների համար ալլ տեղ է դիմել։ Առաջ նա դիմում էր Գլ. Ուսպենսկուն, այժմ, հաւանօրէն, Տոլստոյին (վէպի մի քանի տեսարանները և երևոյթների բացատրութիւնը զգալի կերպով լիշեցնում են լայտնի ռուս գրողի Власть тьмы պիէսը)։ Բայց նկատելի է և այս, որ ճանապարհին նա չօշափել է, թէև ամբողջապէս չի ըմբռնել, նաև «ղոչաղութեան» տիրապետող դերը. ահա թէ ինչու լօգուածի սկզբում ասինք թէ Ադելեանը փորձեր է անում մեր կեանքի հիմունքները փնտռելու։

Վերջացնում ենք մեր լօգուածը այն գիտակցութեամբ, որ չկարողացանք Ադելեանի վէպի հարուստ նիւթը սպառել։ Այդ նշանաւոր գրական երևոյթը մեծ նիւթ է ներկայացնում զանազան տեսակէտներից քննելու համար։ Մեր նպատակն էր «ղոչաղութեան» ու «ղոչաղների» և նրանց հակառակ ոյժի նշանակութիւնը ցոյց տալ ու պարզել հեղինակի սխալը։ Վստահանում ենք կարծել, որ մեր լօգուածը կարդալուց լետոյ, այդ երկու խնդիրն էլ բաւականաչափ պարզած են ընթերցողի համար...

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—*Անյազը. Փիլոսոփայական զրոյց, արտատպած Մուրճ ամսագրից.* 1897 *թ. Թիֆլիս, տպար. Մ. Դ. Ռոտինեանցի,* 60 *էջ. գինը* 15 *կոպէկ։*

Կար մի ժամանակ, երբ մարդ ասւած արարածը կարծում էր թէ երկինքն իր ոսկէ զարդերով, արեւն ու լուսինը իրանց լուսով, ցամաքն ու ծովը, լեռն ու անտառը իր համար են, որ կան. կարծում էր թէ ամպը գոռալիս իրան է ահ տալիս, արեւը փայլելիս իրան է ժպտում և իր համար է, որ խոտը ծլում է ու ծառը ծաղկում։ Անցաւ այդ անգիտութեան ժամանակը։ Մարդը հասաւ այն տեղը, որ մտածեց թէ իրան, տիեզերքի այդ փոչուն՝ համարել տիեզերքի կենդրոնը, ամեն ինչ նրա համար եղած ընդունել՝ լիմարութիւն է և կարճամտութիւն։ Շրջեց մտածելու երեսը և եղրակացրաւ, որ բնութեան նպատակը, նրա հոգածութեան առարկան մարդը չէ, ոչ էլ մարդու վիճակը։ Սակայն նա չոչնչացրաւ բնութեան նպատակը. նա մտածեց, որ թէև այդ նպատակը մարդն ու իր վիճակը չեն, բայց կայ նա, միայն նրա ինչ լինելը մենք դեռ չդիտենք։ Վոլտերը ասում էր, որ մենք այդ նպատակն անկարող ենք իմանալ, որովհետև «մեր բանականութիւնը վերին բանականութեան մի մասն է միայն, նրա հոսմունքն է. ինչպէս ուրեմն մենք կարող ենք նոյն այդ բանականութեան դիտաւորութիւնների մէջ թափանցել»։ Այս աշխարհայացքն էլ երկար իշխեց և դեռ իշխում է մարդկանց մտքերի վրայ մինչև այսօր։ Դեռ սովորական է բնութեան նպատակներ վերագրելը։

Ահաւասիկ ձեզ մի իմաստուն. արաբացի է նա և կեանքը դիտած։ Նա էլ է տիեզերքին նպատակներ վերագրում։ Նկել է այն եղրակացութեան, որ «քանի մարդուս (ինչպէս և տիեզերքի) գոյութեան վերջնական նպատակը անլայտ մնայ, խուսափի մեր հասկացողութիւնից, այնքան կեանքը մնալու է միշտ այսպէս դառն ու տանջալից»։ Ինչպէս տեսնում էք, իմաստունը ինչպէս տիեզերքի, այնպէս էլ մարդու կեանքի վերջնական նպատակի վերա-

բերմամբ կասկածներ չունի։ Իմաստունը հաստատ հաւատացած է, որ նպատակ կայ, միայն «խուսափում է»։ Նա տանջւում է իր անգիտութիւնից և սկսում է եռանդով փնտռել։ Շատ այս ու այն կողմն ընկնելուց յետոյ՝ այս եզրակացութիւնն է հանում իր փորձից, որ մարդկութիւնը այն ժամանակ միայն կարող է հասկանալ այդ խորհրդաւոր նպատակը, երբ հիմնովին տապալւի կեղծութեան վրայ կանգնեցրած այս կազմակերպութիւնը և երբ բացարձակ անկեղծութիւնը լինի ամենասովորական տիրող բարոյականը...»։ Այսպէս՝ նա չի դրտնում «խորհրդաւոր, խուսափող նպատակը», նա միայն կարծիք է կազմում այն ժամանակի կազմակերպութեան մասին, երբ պիտի հասկացւի այդ «նպատակը»։

Մեզ յայտնի են ծագման և յանգման կէտերը. նպէնք նրանց և ճանապարհին, որ միացնում է այդ երկու կէտերը։

Հեղինակն ասում է, որ իմաստունը համոզուած էր թէ կայ այդպիսի մի վերջնական նպատակ, «որովհետև չէր կարող ըմբռնել թէ ինչպէս կարելի է, որ այդ ներդաշնակաւոր, որոշ օրէնքների ենթարկուած յորձանքը չունենար մի կէտ նպատակի և որ այդ բոլորը գոյութիւն ունենար աննպատակ, դիպուածով միայն...»։ Համոզուել կամ համոզուած լինել կարելի է միայն որոշ իրողութիւնների՝ փաստերի վրայ հիմնուած. ինչ իրողութիւնների վրայ է հիմնած, սակայն, իմաստունի համոզմունքը. ըմբռնել չկարողանալու վրայ. ուրիշ հիմք չունի։ Թէև նա կարող է չըմբռնել թէ ինչպէս կարելի է որ տիեզերքը նպատակ չունենայ, բայց այդ դեռ չի նշանակում, որ տիեզերքը ունի նպատակ, այս մէկ. և երկրորդ՝ դեռ չի նշանակում, որ կարելի է համոզուած լինել թէ կայ նպատակ։ Նա կարող է միայն հաւատալ, որ կայ նպատակ, բայց ոչ համոզուած լինել։ Այսպէս ուրեմն, իմաստունի կարծիքը վերջնական նպատակ լինելու մասին, հաւատի արդիւնք է միայն։

Ինչ իրողութիւններ կարող է բերել իմաստունը ապացուցելու համար, որ երբ անկեղծութիւնը տիրելիս լինի, մարդու խելքը պիտի կարողանայ գտնել, հասկանալ գաղտնի, խուսափող նպատակը. ինչ իրողութիւններ կան, որոնք հաւանական են դարձնում այդ կարծիքը։ Վերջապէս ինչ հիման վրայ նա կարծում է, որ մեր թավանցողութեան առաջ պատուար դնողը կեղծիքն է։ Իմաստունը ոչ մի փաստ չունի, գրքոյկի մէջ ոչ մի ապացոյց չի բերում. նա միայն ասում է, իսկ ասել դեռ չի նշանակում ապացուցել կամ հաւանական ենթադրութիւն անել։ Նա ասում է և իր ասածի ճշմարիտ լինելուն հաւատում։ Այսպիսով՝ նա հաւատով սկսում է և հաւատով վերջացնում. նա հաւատում է, որ կայ նպատակ և հաւատում, որ այդ նպատակը կը գիտակցւի ներկայ կազմակերպութեան հիմնովին տապալւելուց յետոյ... Իմաստունը տրամաբանօրէն չի դատում, նա իսկի չի էլ դատում նոյն իսկ. նա միայն խօսում է, բացականչում և հաւատում.

նա ոչ ոքի չի կարող համոզել, որ իր ասածները ճշմարիտ են. նա շատ-շատ կարողանալ ներշնչել. ինչ հիմնուած է հաւատի վրայ, այն չի կարելի ապացուցել...

Ահա մի քանի ապացոյց, որ այդ իմաստուն ասածը կարդին մտածել չի իմանում և խելքը գլխին մարդ չէ։ Իմաստունը մի կրօնապետի է պատահում, որ Նրան խորհուրդ է տալիս. «Դիմիր բարձրեալին և նա թող կամ լուսաւորէ քո միտքը և կամ խաւարեցնէ, որ կամ գտնես ինչ որ փնտռում ես, կամ թէ չունենաս փնտռելու այդ վարդը... Դիմիր Աստծուն, նուիրիր քեզ Նրան և Տէր ընդ քեզ...»։ Իմաստունը այդ խրատը չի հասկանում, որ պատիւ չէ, ի հարկէ, նորին իմաստունութեան. նա կրօնապետի խրատի կարևոր մասը թողած, մտածել է սկսում Նրա վերջին մասի վրայ՝ «նուիրիր քեզ Աստծուն»։ Եթէ մենք «նուիրիր քեզ»ը այնպէս հասկանանք ինչպէս իմաստունը, ապա կրօնապետի խրատը անորոշ է. ինչպէս թէ՝ «դիմիր Աստծուն» (աղօթքով, ի հարկէ) և «նուիրիր քեզ Աստծուն», որ այլ բան է իմաստունի հասկացածով։ Իսկ եթէ այդ վերջին խօսքերը՝ «նուիրիր քեզ Աստծուն» հասկանանք այն մտքով թէ ամբողջապէս, քո ամբողջ էութեամբ դիմիր Բարձրեալին, նուիրիր Նրան, ինչպէս մենք ենք կարողանում հասկանալ, այն ժամանակ իմաստունը չգիտէ իսկ թէ ինչ է անում։ Նրան ասում են «դիմիր Բարձրեալին», նա գնում է քարոզում կատարելութիւն, Աստծուն։ Նոյն իսկ եթէ ընդունենք, որ կրօնապետի խրատն անորոշ է, այն դէպքում էլ իմաստունն իրան իմաստունավարի չի պահում։ Ի՞նչ հիման վրայ նա «դիմիր Բարձրեալին» խորհուրդը մի կողմ է ձգում և վերցնում է «նուիրիր Նրան» խրատը. միթէ նա չի կարողանում հասկանալ, որ քարոզելով Աստծուն, նա կարող է միայն առ ժամ մի հանգստացնել իր փնտռողութեան փոթորիկը, բայց վերացնել պատճառն անկարող է. միթէ նա չի հասկանում, որ քարոզութիւնը Նրան չէր ըմբռնել տալու վերջնական նպատակը. էլ ինչի իմաստուն է նա... Այդ դեռ բաւական չէ, երբ Նրան բռնում են՝ բանտարկում, նա իրան տես եկած կրօնապետին կշտամբում է՝ թէ «դու ինձ սխալ ճանապարհի վրայ դրիր, ծերունի...»։ Իսկ ծերունին էլ ձայն չի հանում. անչուշտ ծերացած լինելուց մոռացել էր իր խրատը!... Նա չի ասում թէ՝ որդի, ես քեզ ասի գնա դիմիր Աստծուն, որ կամ միտքդ լուսաւորի՝ գտնես փնտռածդ, կամ խաւարեցնի միտքդ. և ոչ թէ գնա, քարոզութիւն արա։

Մի ուրիշ ապացոյց.

Իր ուղածին հասնելու համար՝ գաղտնի նպատակը հասկանալու համար, նա ճանապարհներ է փնտռում, գտնում է սրա-նրա խորհրդով, գնում է այդ ճանապարհներով և տեսնում, որ կեղծիք չատ կայ նոյն ճանապարհով գնացողների մէջ. նա երես է դարձնում. սխալ է ճանապարհն, ասում է։ Բայց եթէ մի ճանապարհ ցխոտ է, չի նշանակում թէ նա չի տանում լայտնի տեղ, եթէ իմաստունի ճանապարհը կեղ-

ծիքապատ է, այդ դեռ չի նշանակում, որ նա չի կարող հասցնել հասկանալու կէտին (եթէ ընդունենք, ի հարկէ, իմաստունի հետ, որ կայ «նպատակ»)։

Երկու տեղ (էջ 8 և 24) իմաստունը լայտնում է թէ իր ցաւը ծանրանում է մանաւանդ, որովհետև գիտէ թէ չի կարողանալու հասկանալ։ Ցեսէք. գիտէ, որ չի կարողանալու հասկանալ ինչ էլ որ անի, և ձգտում է, կաչուց դուրս է գալիս, որ հասկանայ։ Ի՞նչ կասէք մի մարդու, որը գիտէ թէ չի կարող վերջ ի վերջոյ չմեռնել և ձգտում է անմահ մնալ. անշուշտ նրա ուղեղը բժշկի կարիք ունի. իմաստունն ինչով է պակաս այդ տեսակ մարդուց...

Այսպիսի անհետևողականութիւններ և սխալ դատողութիւններ բաւականին կան։

Գալով իմաստունի կարծիքներին ըստ էութեան՝ այս կասենք, որ վերագրել տիեզերքին նպատակ, նշանակում է ընդունել երկուսից մէկը. կամ, որ տիեզերքը ընդունակ է գիտակցելու, իր համար նպատակ դնելու և նրան ձգտելու, կամ, որ կայ մի վերին բանականութիւն, ըստ ոմանց ճարտարապետ, արուեստագէտ և այլն, որ գրել է տիեզերքի համար մի նպատակ և ուղղել նրան դէպի նա։ Հարցնում ենք. ինչ փաստեր ունին, որ բնութիւնը գիտակցելու ընդունակ է, ինչ ապացոյցներ կան ճարտարապետի գոյութեան, ով կարող է այդ կարծիքները մատչելի դարձնել մեր ըմբռնողութեան, ով կարող է մեզ համոզել և ինչով... Ոչ ոք չի կարող. այդ անկարելի է։ Այդ չի անում նաև իմաստունը։ Իսկ ինչ որ չի կարելի ապացուցել, նրան կարելի է միայն հաւատալ, կամ չհաւատալ, նայած մարդու ուղեղի կազմութեան, սաւացած կենսական փորձին, կրթութեան... Ինչ վերաբերում է երջանկութեան՝ ով կարող է ասել, որ «նպատակի» հասկանալը մեզ կարող է երջանկացնել, կեանքը քաղցրացնել, տանջանքները վերացնել. մենք այժմ երջանիկ չենք. ենթադրենք թէ իմացանք այն նպատակը, որին դիմում է այս մեր ապերջանիկ կեանքի հոսանքը. մենք կ'երջանկանանք... էլ չեմ ասում, որ նպատակի գոյութիւնը տիեզերքի մէջ՝ մի առասպել է...

Ի վերջոյ մի նկատողութիւն ևս. զուրէ հեղինակը իմաստունին համարում մի սիմբոլ Պռոմեթևսի կողքին դրելու արժանի. բանը որ սիմբոլ լինելուն հասաւ, իմաստունը կարճամիտների, անտրամաբան մարդկանց և նախապաշարուածների սիմբոլ է միայն...

Գրուածքը մտածելու նիւթ է տալիս։

Ն. Աղբալեանց։

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.—*Աստուածաբանական գիտութիւնները։* Վաղարշապատ, 1893 թ. 154 էջ։

Հայոց հոգևորականութիւնը դարերի ընթացքում ունեցել է այն առաւելութիւնը, որ կամ ոչինչ չէ գործել, կամ գործել է բէալական ուղղութեամբ։ Կրօնը հարստահարելուց, կրօնի անունով դատարկախօսութիւններ անելուց նա հեռու է եղել։ Ուրիշ խօսքով ասած՝ նա շատ անգամ է եղել անգործունէութեան մատնուած։ Բայց եթէ սորա նման անգործ լինէին կաթոլիկ վիսուսականները, Ֆրանսիայից նոցա չէին արտաքսիլ։

Բայց մեր օրերում հասարակութիւնը թէ անմիջապէս ու թէ մանաւանդ մամուլի միջոցով պահանջեց, որ մեր հոգևորականները զարթնեն, աշխատեն, գործեն, արդիւնք բերեն։ Սակայն շատերը սխալ հասկացան հասարակութեան պահանջը։ Նոքա սկսեցին գործել... Բայց կան գործողութիւններ, որոնք աւելի ապարդիւն են, քան կատարեալ անգործունէութիւնը։

Օրմանեանի օրերից էջմիածնում մի հոսանք է բացուել, որ սպառնում է տարածուել հասարակութեան մէջ։ Մեր երիտասարդ հոգևորականները սկսել են վազել արտասահման հայոց ազգի համար «Աստուածաբանական գիտութիւններ» բերելու։ Լայպցիգի, Հալլէի և Ենայի գերմանական աստուածաբանները ուրախացան, թէ ահա արևելեան եկեղեցիներից մէկը զարթնում է։ Մեր հասարակութիւնն էլ «զարթնեց»։ Նա սկսեց իւր բարեգործական ընկերութիւնների, եկեղեցական գանձանակների և մասնաւոր նուէրների միջոցով նպաստել աստուածաբանական ապրանքների առուտուրին։ Զանազան կողմերից սկսեցին երիտասարդներ ուղարկել այդ նպատակով։ Եւ այս երիտասարդներից մէկն է պ. Տէր-Միքելեան, որը աւարտել է ուսումը Ենայի համալսարանում։

Երիտասարդ հեղինակի նպատակն է պարզել աստուածաբանութեան էութիւնը։ «Սակայն ինչ է այդ գիտութիւնը—ասում է նա յառաջաբանի մէջ—դորան պէտք է համառօտակի պատասխանէ մեր այս գրութիւնն, որ պահանջւում է գրեթէ ամենուրէք։ Այդ հարցը տրւեց ինձ նախապէս ի Կ. Պոլիս քանի մի շաբաթներում, մանաւանդ խմբագրութիւնների մէջ, որոնց՝ այլ և շատ ուրիշների՝ պատասխանն է այս»։ Հեղինակը մի առ մի բացատրում է կարճ կերպով աստուածաբանական գիտութիւնների և նոցա ճիւղաւորութիւնների բովանդակութիւնը, մասնաւորացնում է խօսքը հայոց եկեղեցւոյ վերայ, և չէ զլանում դէպքը եկած տեղում ակնարկներ անել մեր կեանքի և յառաջադիմութեան մասին և այլն։ Թողնելով մի այլ անգամի պ. Տէր-Միքելեանի աշխատութեան կշռադատութիւնը, այսօր նպատակ ունինք միայն փոքրիկ

գրախօսութեան միջոցով ընթերցողին ճաշակ տալ գրքի ոգու և ուղղութեան մասին։

Հեղինակը կամենում է վերագրել աստուածաբանութեանը գործնական անհրաժեշտ նպատակներ։ Նա ուզում է ապացուցանել, թէ առանց աստուածաբանական կրթութեան մարդկութիւնը ընդհանրապէս ու հայազգը մասնաւորապէս չէ կարող բաղդաւոր լինել։ Պարոնը գտնում է թէ «Կ. Պոլսից սկսեալ մինչև Կովկասի խորին անկիւնները լսում են կարօտութեան ձայներ՝ չթողնելու ժողովուրդը քաղաքակրթութեան շաւղից չեղուելու. եկեղեցին՝ կրթութեան և մարդկային սրտի խաղաղութեանց այդ հզօր հաստիչը պէտք է կենդանանայ, չպէտք է թոյլ տայ անհասին՝ կախուելու բնութեան ճըղուղից ու պատուելու նորա անողոք ճախարակի մէջ...»

Տեսնենք թէ ինչ տրամաբանութեամբ է վերլուծում պարոնը իւր մտքերը։ «Բայց որովհետև փորձն ևս չկարէ օգուտ տալ, եթէ մարդի հոգին իւր ստեղծագործող զօրութիւնը չզարգացնէ և նորա հոսանքները չբանայ, ուստի ամենայն յառաջադիմութեան նախընթաց պիտի լինի դեռ մեր հոգու կամ բանականութեան զարգացումն և ծաւալումը...» «Արդ՝ թէ կրթելու նպատակով զբաղեցնենք մարդկային միտքը արտաքին աշխարհով, նոյնքան միակողմանի կը լինի զարգացումն, որչափ եթէ միայն մեր ներքին հոգեկան աշխարհի մէջ ուղղենք նորա մտածողութիւնները»։ «Հայեցողութիւններն առանց դաղափարների կոյր են, գաղափարներն առանց հայեցողութիւնների դատարկ» ասում է Կանտ, վասնորոյ և ճանաչողութիւնը կը լինի միայն զոյգ միացմամբ։ Ճիշտ այդպէս ևս մարդի արտաքին աշխարհը ներքին աշխարհի հետ պէտք է միութիւն կազմէ, կամ միաւոր ընթանայ, որպէս զի մարդ չերկպառակուի։ Կեդրոնացրէք յառաջադիմութիւնը միայն արտաքին աշխարհի դիտութեան մէջ և դուք կը քանդէք կ'աւերէք մարդկանց հոգևոր խաղաղութիւնը, երջանկութիւնը, բարոյական ամբողջ կազմակերպութիւնն և հիմնաքարը»։

Բայց արդեօք մեր երիտասարդ աստուածաբանը հասկանում է իւր ասածները։ Հակառակ դէպքում նա պիտի չկարողանայ բացատրութիւնտալ մեր հետևեալ հարցերին։

1) Եթէ «փորձը չկարէ օգնել»՝ ինչպէս պէտք է «ամենայն յառաջադիմութեան նախընթաց լինի դեռ մեր հոգու կամ բանականութեան զարգացումն և ծաւալումը»։ Միթէ մարդու միտքը, սիրտը, դատողութիւնը կարող են զարգանալ առանց փորձի։ Հեռու պահէք մի մարդու ի ծննդէ արտաքին տպաւորութիւններից, թողէք նա ոչ լոյս տեսնէ, ոչ ձայներ լսէ, ոչ ճաշակէ, ոչ չոչափէ, ոչ ծեծուէ, ոչ լաց լինի... Կը զարգանայ արդեօք նորա հոգեկան աշխարհը։ Ո՞վ չգիտէ թէ ինչպէս աղաւաղւում է, թուլանում է մարդու հոգեկան աշխարհը (այսինքն՝ միտքը դատողութիւնը...) աչքի, ականջի կամ որ և է զգայարանի պակասութիւնից։

2) Այդ ինչ ներքին և արտաքին

աշխարհներ է սահմանում մեր հեղինակը։ Որոնց է վերջանում մէկը և սկսւում միւսը։ Օրինակ՝ որ աշխարհին է վերաբերում մեր տեսողութիւնը։ Մենք գիտենք, որ տեսողութեան մէջ դեր են խաղում լուսեղէն ճառագայթները, մեր աչքը և տեսողական նեարդը. սոքա բոլորն էլ արտաքին աշխարհի երևոյթներ են։ Իսկ թէ տեսողութեան մէջ մի այլ, ներքին աշխարհին պատկանող, երևոյթ նոյնպէս դեր է խաղում, և թէ ինչի մէջն է կայանում այդ երևոյթը, մենք ոչինչ չգիտենք։ Ուրեմն այստեղ կամ ներքին աշխարհ գոյութիւն չունի, կամ եթէ ունի էլ, մենք նորա մասին ոչինչ չգիտենք ու չենք էլ կարող գիտենալ, որովհետև խեղճ արարածներ ենք, տիեզերական սունկեր .. Ուրեմն ինչպէս մենք զբաղեցնենք մեր միտքը «այլ և ներքին աշխարհի առարկաներով»։ Մարդկային միտքը ստեղծել է բազմաթիւ և բազմատեսակ գիտութիւններ։ Տիեզերքի երևոյթների իւրաքանչիւր դասակարգի ուսումնասիրութիւնը մի գիտութիւն է կազմում։ Իսկ ինչ որ միտքը ըմբռնում է, այն բոլորը արտաքին աշխարհին է վերաբերում։ Բայց մտքիցը խոր եթէ կայ էլ որ և երևոյթ, մենք նոցա ուսումնասիրել չենք կարող։ Թերևս հեղինակը լ նկատի ունի աստուածաբանական երևոյթները... Սակայն սոքա հաւատալու կամ չհաւատալու երևոյթներ են, որոնք գիտութեան հետ որ և է կապ ունենալ չեն կարող, որովհետև մենք հրեշտակների հետ չենք համբուրել և սատանաների դէմ կռիւ չենք մղել... Գիտենալու համար անհրաժեշտ է տպաւորութիւններ ստանալ, սոցանից գաղափարներ ստեղծել և գաղափարները տրամաբանութեան պրոցեսներին ենթարկել, իսկ հաւատալու համար ոչինչ չէ հարկաւոր։

3) Զէ՞ սխալւում արդեօք երիտասարդ հեղինակը, անտեղի մէջ բերելով Կանտի սկզբունքներից մէկը, որը բոլորովին խնդրին չէ վերաբերում։ Կանտը «գաղափարներ» ասելով հասկանում է այն ձևերը (տարածութիւնը, ժամանակը), առանց որոնց մարդկային միտքը չէ կարող երևակայել որևէ երևոյթ։ Օրինակ մենք չենք կարող երևակայել մի մարմին, որը տարածութեան մէջ տեղ չբռնէ և մի շարժողութիւն, որը կատարւում է առանց ժամանակ զործ դնելու։ Իսկ հեղինակը մէջ է բերում Կանտի այդ սկզբունքը ու սորանից եզրակացնում, թէ ուրեմն «մարդի արտաքին աշխարհը ներքին աշխարհի հետ պէտք է միութիւն կազմէ (նա իսկի ջոկ էլ չէ), կամ միայար ընթանալ, որպէս զի մարդ չերկպառակի»։

4) Եւ վերջապէս ինչով է ապացուցանում մեզ պարոնը, որ եթէ «կեդրոնացնէք լառաջադիմութիւնը միայն արտաքին աշխարհի գիտութեան մէջ, դուք կը քանդէք, կաւերէք մարդկանց հոգևոր խաղաղութիւնը, երջանկութիւնը, բարոյական ամբողջ կազմակերպութիւնն և հիմնաքարը»։ Մարդկանց անբաղդութիւնը լառաջանում է կանոնաւոր անունդի անբաւարարութիւնից, թարմ օդի բացակայութիւնից, բնակարան ու հագուստ չունենալուց,

վիճասակար սովորութիւններից, հասարակական անարդար յարաբերութիւններից, փոխադարձ անհամբերողութիւնից և այլն և այլն։ Բոլոր այդ երևոյթները պատկանում են արտաքին աշխարհին... Մարդկային միտքը կը ղննէ, կը քննէ, կուսումնասիրէ և կ'ըմբռնէ նոցա... մարդու, այդ զարմանալի արարածի, հնարագիտութիւնը կը պատերազմէ ու կը յաղթէ նոցա... Ապա թէ մարդը բաղդաւոր կարող է լինել։ Իսկ ինչ վերաբերում է մարդու հոգեկան աշխարհի երկպառակութեան և սրանից յառաջացած տանջանքներին, դոքա յառաջ են գալիս զանազան սոփեստների ստեղծած ֆանտաստիկական անմտութիւններից... Նայեցէք բնութեան մէջ։... Մետաղափայլ ձկնիկները պագում են պարզ ջրի մէջ, գոնզգոյն թռչնիկները չեն կշտանում երգելուց, փոքրիկ նապաստակը ուրախ ցատկոտում է փափուկ խոտերի մէջ... Իսկ մարդը, աշխարքի իրաւատէրը, տանջւում է տարակուսանքների մէջ, վերջ չէ գտնում իւր կասկածանքներին, սրտի հովութիւնը կորցնում է աներևոյթ կրակից։ Ինչու... Որովհետև ինքնախաբ մեծամտութեամբ լցրել են նորա սիրտը անտեղի սարսափներով, թունաւորել են նորա մտապատկերները պոչաւոր սատանաներով... Մեղք չէ...

Պարոն Տէր-Միքէլեանի աշխատութիւնը նորութիւն է հայոց գրականութեան համար։

Ս. Թառայեան։

ԼՈՒՆԿԵՒԻՉ. Վ.—*Երկրի եւ երկնքի մասին։* Ռուսերէն ձեռագրից թարգմ. Կ. Գ. 14 նկարներով։ Հրատ. Թիֆլիսի հայոց Հրատար. Ընկերութեան։ 1897 թ. Թիֆլիս, տպարան Յ. Մարտիրոսեանցի, 74 էջ, գինն է 10 կոպէկ։

Այս գրքոյկը պատկանում է հայոց Հրատարակչական Ընկ. «Հանրամատչելի գիտնական ժողովրդական գրադարան» անուանած գրքերի շարքին, և գրած է այնպէս, որ ոչ գիտնական է, ոչ ժողովրդական է և ոչ էլ կարելի է որ նա հանրամատչելի լինի, այն աստիճան նա խակ գրած է, թէ իբր բացատրութիւն և թէ իբր շարադրութիւն։ Տարիներ առաջ նոյն հեղինակի «Բնախօսութիւնը» քննադատութեան առնուեց «Մուրճի» մէջ, և գրախօսի ցոյց տուած սխալները այնքան շատ էին, որ բաւական պիտի համարէին հրատարակչական ընկերութեանը զգուշացնելու համար՝ գրքի հեղինակի վերաբերմամբ։ Բայց ահա մեր առաջը գրած մի գրքոյկ, որի համար մասնագէտ բնագէտ լինելն անգամ չի պահանջւում, այն աստիճան տարրական են մեր ժամանակում գրքի մէջ բացատրած գիտելիքները։ Եւ սակայն, այդ հասարակ բաներն էլ բացա-

տրած են այնպէս, որ տեղ-տեղ ոչ ոք ոչինչ չի հասկանալ, տեղ-տեղ առաջ բերած ապացոյցները ոչ թէ գիտնականների լայտնագործած ճշմարտութիւններն են ապացուցանում, այլ գիրքը կազմողի ծայրաստիճան անշնորքութիւնը։

Երևակայեցէք, թէ սա ինչ է նշանակում, որ այս փոքրիկ գրքոյկից ամբողջ 12 երես նուիրած է այս խնդրին թէ ինչով է ապացուցում երկրի կլոր լինելը, և քերւում է մի հատ և այն էլ, սուտ ապացոյց։ Մեր հեղինակը երկրի կլոր լինելուն ուրիշ ապացոյց չգիտէ, բացի այն, որ եթէ երկրի մի կէտից շարժուելու լինէք դէպի երկրի մի կողմը ուղիղ գծով, դուք կրկին նոյն կէտին կը դաք երկրի միւս կողմով. Թիֆլիսից որ դուրս գաք դէպի արևելք, դուք կ'անցնէք Ասիա, Մեծ ովկիանոս, Ամերիկա, Ատլանտեան ովկիանոս, Եւրոպա, և կրկին կը գաք Թիֆլիս։

«Այո՛, դուք նորից Թիֆլիսումն էք, որովհետև ամբողջ երկրի բոլորքը չրջան կատարելով, ձեզ համար աննկատելի կերպով վերադարձաք նոյն տեղը՝ միայն թէ հակառակ կողմից»

բացականչում է հեղինակը, կարծելով թէ դրանով բան ասաց։ Այո՛, դուք նորից Թիֆլիսումն էք, որովհետև վերադարձաք նոյն տեղը Թիֆլիս...! Ինչ սքանչելի բան! Եւ այդ ապացուցանում է թէ երկիրը կլոր է! Եւ տեսէք թէ հեղինակը որքան սքանչացել է իւր այդ թութակի պէս բերան արած սուտ ապացոյցով, որ, հիացման մէջ թէ դորանով հանրամատչելի գիտնական ժողովրդական վերջնական կտրական ապացոյց է տուել հայ ժողովրդին, նա չարունակում է.

«Եւ իրաւ՝ եթէ երկիրը տափակ լինէր, մինչև ձեր մահն էլ (!!) որ առաջ գնալիք, երբէք ոչ մի ծայրի չէիք հասնի (?!), կամ թէ վերջ ի վերջոյ ձեր առաջ կը բացուէր մի անհատակ անդունդ (?!!), որից դէնն անցնել անհնարին կը լինէր»։

Հասկացէք, ընթերցող. Լունկևիչը, իւր Գիւլնազարեանցով Թիֆլիսից ճամբուելով դէպի արևելք, մի ծայրի հասան, որովհետև երկիրը կլոր է... Եւ այդ ծայրը չէր լինիլ («ոչ մի ծայրի չէիք հասնի»!), եթէ երկիրը տափակ լինէր... և այս դէպքում Լունկևիչի և Գիւլնազարեանցի առջև կը բացուէր մի անդունդ։ Ակամայ ուրախանում է մարդ, որ երկիրը կլոր է, ապա թէ ոչ այդ խեղճերը վայր կը գլորուէին ցած... անդունդի խորքերը! Եւ այս դոնքիշոտական ու սանխո-պանչուական ճամբորդութեան սկիզբը դնում է իսկապէս մի... ճանճ։

«Ասենք թէ մի կլոր խնձորի վրայ մի ճանճ է նստել։ Նըստեց, նստեց և չանկարծ ուզեց քիչ ման դալ. ահա ճանճը շարժուեց իր տեղից և սկսեց ուղիղ գնալ միշտ դէպի առաջ՝ ոչ աջ ծուեելով, ոչ ձախ»։ (Օրինակ վերցնելով պ.պ. Լունկևիչից և Գիւլնազարեանցից)։ «Ինչ էք կարծում, այդպէս առաջ գնալով ճանճը ուր կ'երթայ»՞

(էջ 7)։

Եւ ահա Լունկևիչ և նորա թարգման Գիւլնազարեանց վճռում են «հանելուկը» և լալտնում, որ ճանճը կը վերադառնալ իւր առաջեան տեղը։

«Հիմա տեսնենք թէ ինչ կը լինի եթէ ճանճի տեղ մի մարդ» (ոչ,—երկու մարդ՝ Լունկևիչ և Գիւլնազարեանց) «վեր կենալ և ճանապարհորդէ, — ի հարկէ այս անդամ արդէն ոչ թէ խնձորի», (Լունկևիչ և Գիւլնազարեանց ի հարկէ մի խնձորի վրայ չէին տեղաւորուիլ), «այլ երկրի վրայ» (Նոյն տեղ)։

Եւ գնում են մեր ճանապարհորդները Թիֆլիսից դէպի արևելք և երկրի միւս կողմից կրկին վերադառնում Թիֆլիս։ Խնձորը խօ կլոր էր, ուրեմն և երկիրը կլոր է, որովհետև այնտեղ ճանճը կրկին իւր տեղը վերադարձաւ, այստեղ էլ Լունկևիչը և Գիւլնազարեանց նորից Թիֆլիս վերադարձան...։

Այսպիսի երևխայական ոճով և երեխայական «ապացոյցով» պ. Լունկևիչ առաջարկում է և հայոց հրատարակչական ընկերութիւնը ընդունում է հայ ժողովուրդ լուսաւորել, նորան հանել նախապաշարմունքից։ Եւ առաջ բերածը միակն է, որով կամենում են ապացուցել երկրի կլոր լինելը! Դոնէ առաջ բերածը ապացոյց լինէր, թէկուզ միակ առաջ բերածը լինէր։ Բայց հէնց ցաւն էլ այն է, որ դա բնաւ ապացոյց չէ։ Վերցրէք մի գիրք ձեր ձեռքը, թող ճանճը դրքի (ուրեմն ոչ խնձորի նման կոլոլ այլ տափակ առարկայի) վրայ նստէր և չարժուէր և սկսէր ուղիղ գնալ միշտ դէպի առաջ, ոչ աջ ծռելով, ոչ ձախ։ Կրկնում ենք Լունկևիչի հարցը. «ինչ էք կարծում այդպէս առաջ գնալով ճանճը ուր կերթայ»։ Ի հարկէ ճանճը կը վերադառնար նոյն տեղը, ուր նա սկզբում կանգնած էր։ Էլ որտեղ ճանճը անդունդի հանդիպեց։ Երևակայեցէք որ մեր երկիրը կոլոլ չլինէր, այլ լինէր տախտակի պէս տափակ—բոլորտիքը ցամաքներով և ծովերով ու ովկիանոսներով, որպէս այժմ. միթէ այդ դէպքում Լունկևիչ և Գիւլնազարեանց պիտի վախենային թէ Թիֆլիսից միշտ ուղիղ գծով գնալով չպիտի կարողանային միւս կողմից Թիֆլիս վերադառնալ?! Ինչ երեխայամտութիւն!!! Թէ գուցէ դուք հայ ժողովուրդը այնքան բթամիտ էք կարծում, որ ենթադրում էք թէ նորա մէջ չի գտնուիլ մի սրամիտը, որը ձեր լեզուն կապէր մի այդպիսի պարզ հարցմունքով... Բայց ուր է ձեր խիղճը, որ «գիտնական» նիւթից էք խօսում ժողովրդի հետ, և նորան տալիս այնքան սուտ ապացոյց մի ճշմարտութեան համար, որի դիւտով այնքան փառաւորուել են Կոպերնիկոս, Գալիլէյ...։

Ուզում էք հանրամատչելի լինել և միևնոյն ժամանակ գիտական (և ոչ սուտ) ապացոյց սովրեցնել ժողովրդին երկրի կլոլութեան մասին, առաջ բերէք գոնէ այս, որ հարթ տեղերում հեռից մի բարձր շինութեան միայն վերի ծայրն է երևում, ապա, մօտենալիս, միջին մասը, և ապա մօտիկից միայն ստո-

րին մասը. առաջ բերէք նաւը ծովի վրայ, ուր հեռւից միայն կայմի ծայրն է տեսնւում, և ապա մօտենալիս միջին մասը, և ապա միայն ստորին մասը. մի երևոյթ, որ կարող է բացատրւել միմիայն երկրի կոլոլութիւնով։

Կամենում էք իմանալ թէ ինչու արեգակը միատեսակ չի տաքացնում երկիրը տարւայ չորս եղանակներին, և թէ ինչպէս են առաջանում այդ չորս եղանակները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ,—կարդացէք հրատ. ընկերութեան հրատարակած պ. Լունկեիչի այս գրքոյկը, և դուք, համոզած եղէք, որ... ձեր մի ժամանակ գիտցածն էլ կը մոռանաք։ Խօ վերը տեսաք թէ ինչպէս մարդ կարող է «նորից Թիֆլիսում լինել»։ «որովհետև վերադարձաւ նոյն տեղը՝ Թիֆլիս»։ Մօտաւորապէս այդպէս է բացատրւում թէ ինչու է մի ժամանակ տաք, միւս ժամանակ ցուրտ. որովհետև մի ժամանակ արեգակը շատ է տաքացնում, միւս ժամանակ քիչ է տաքացնում. ինչու, որովհետև մի ժամանակ արեգակի ճառագայթները ուղիղ են ընկնում, միւս ժամանակ՝ թեք են ընկնում. ինչու. որովհետև երկիրը մի ժամանակ արեգակի մի կողմն է, միւս ժամանակ՝ մի ուրիշ կողմը. ինչու արեգակի մի կողմը լինելով՝ ճառագայթները ուղիղ են ընկնում, այլ կողմը լինելով՝ թեք են ընկնում և թէ ինչ է վերջապէս թեք ընկած ճառագայթ.—դէ այդ հարցերին միայն սատանան գիտէ թէ ինչ պիտի պատասխանել։ Թող փորձի համար մի քանի հոգի միասին կարդան դրքոյկի էջ 23 (սկսելով այս տողից՝ «Երկիրը, ինչպէս մենք հէնց նոր ասացինք, և այլն») մինչև էջ 25-ի գրեթէ վերջը, և թող այդ մի քանի հոգին լինեն նոյն իսկ հրատ. ընկերութեան խմբագրական մասնաժողովի ամենիմաց անդամները—և մենք համոզւած ենք որ Լունկեիչի բացատրութիւնը միմիայն կը դրդի նոցա՝ իրար աչքերին հարցական նշաններ նետել...

Ցուրտ է, որովհետև թեք է. թեք է, որովհետև երկիրն արեգակի այս ինչ կողմն է (կարծես արեգակի մի կողքը տաք է, միւս կողքը ցուրտ)։

Մի գրքի մէջ, որ նւիրւած է երկրի ձևի և շարժումների բացատրութեանը, չկայ լիշատակւած Կոպերնիկոսի անունը, և կայ միայն Գալիլէյի անունը, որը, ինչպէս լայտնի է, նւիրւած էր Կոպերնիկոսի մտքերի պրոպագանդային։

Անասելի անպէտք է ամբողջ բացադրութիւնը։ Երկրի մասին տարրական գլխաւոր գիտելիքներն են՝ երկրի կոլոլութիւնը ու նորա չափսերը և երկրի շարժողութիւնը ա) իւր շուրջը և բ) արեգակի շուրջը։ Կոլոլութիւնը ապացուցւում է մի միայն մի հատ կեղծ ապացոյցով, ինչպէս տեսանք. երկրի իւր շուրջը պտտելու բացատրութեան մէջ (գլուխ Դ.) չի ասւած մի այսքան հարկաւոր և տարրական բան թէ նայ, երկիրը, որ կողմից դէպի որ կողմն է պտտում. չէ՞ որ պէտք է բացատրել թէ ինչու արեգակը արևելքից է

սկսում երեալ և արևմուտքում անհետանում, գրքի մէջ չէք գտնիլ պատասխանը այդպիսի մի պարզ հարցին. ինչ եմ ասում՝—չի ասած նոյն իսկ թէ երկիրը քանի ժամուայ մէջ է պտտում իւր շուրջը!... Եւ չետոյ իւր թէ բացատրում են տարաւոր եղանակները (գլուխ Ե), և «բացատրում է» մի զարմանալի խակ ձևով. այդ խակութեան աստիճանը ներկայացնել դժուար է. պէտք է կարդալ և մանաւանդ մի ուշիմ և սովորել ցանկացողին կարդալ տալ ու ապա հարցեր տալ նրան՝ իմանալու համար թէ նա ինչ հասկացաւ։ Տարաւոր եղանակները բացատրել անհնարին է առանց մի քանի գիտելիքների, որ սակայն չի տալիս Լունկևիչը։ Տարաւոր եղանակները կարելի է հասկանալ առանց բացատրելու թէ երկիրը, արեգակի շուրջը բոլորելիս ինչ դիրքով է շրջում? Եւ սակայն հրատարակչական ընկերութիւնը մի գիրք է տպում երկրի շարժումների մասին, ուր չի ասած թէ ինչ դիրք է պահպանում երկիրը՝ արեգակի շուրջը շարժուելիս. ընդհակառակը, դեռ Լունկևիչը ամեն ջանք է գործ դրել որ իւր անհմուտ ընթերցողը ծուռ հասկանայ իրողութիւնը և նորա գլխում չփոթութիւն լառաջանայ։ Երևակայեցէք, որ չի բացատրում թէ այդ ինչպէս է լինում որ երկրի մի մասը մի քանի ամիս աւելի է արեգակ տեսնում քան ուրիշ ամիսներին. և այնքան երկրորդական բան է համարում Լունկևիչը այդ հանգամանքը, որ նա իւր բացատրութեան մէջ (տես էջ 23—24—25) չեշտը դնում է միմիայն ճառագայթների ուղիղ և թեք ընկնելու վրայ, առանց նոյն իսկ բացատրելու թէ այդ ինչպէս է պատահում որ արևի ճառագայթները մի ժամանակ աւելի ուղիղ են ընկնում երկրի վրայ, այլ ժամանակ՝ աւելի թեք։ Անշնորհքութիւնը անսահման է այս գրքում։ Նոյնիսկ հատ հատ ոճերը միայն չփոթելուն են ծառայում։ Օրինակ, «բայց երկիրը ոչ մի տեղ կանգ չէ առնում, նա էլի առաջ է գնում ու նորից բռնում է այնպիսի տեղ, ուր ընկնում են ուղիղ ճառագայթներ» (էջ 25, տող 8—11)։ Սա ինչ է նշանակում։ Մթթէ երկիրը երբ եւ իցէ բռնում է մի դիրք, ուր նորա որեւէ կէտի վրայ ուղիղ ընկնելիս չլինեն արևի ճառագայթները?! Ակնյայտնի է մեզ համար, որ Լունկևիչը ուզում է ասել, թէ երկիրը, արեգակի շուրջը պտտելիս, նորից մի այնպիսի տեղ է հասնում, ուր արևի ճառագայթները աւելի ուղիղ են ընկնում մի որոշ կէտի (օրինակ Կովկասի) վրայ։ Բայց հանրամատչելի գիրք էք գրում. չէ՞ որ ոճի սխալներն էլ կը սխալացնեն ընթերցողին։ Եւ ինչ ոճեր են. հետևեալները. «Այժմ եթէ մեր նկարին լաւ նայենք, կը տեսնենք որ երկիրը վերեւն է գտնուում» (էջ 24)... «Երբ երկիրը էլի առաջ կերթայ և արեգակի ձախ կողմը կը հասնէ...»։ Արեգակի աջ կողմը որն է, ձախ կողմը որն է, այդ ինչ գիտական ոճեր են...?!

Մենք հատ-հատ բայց գրքի ամեն տեղ ցրուած անճիշտ և իբր թէ հանրամատչելի լինելու համար գործածուած անհամ ոճերի վրայ երկար կանգ չենք առնիլ, որովհետև

գրքի գիտական մասը այնքան անասելի կոպիտ թերութիւններ և սխալներ ունի, որ գիրքը դարձնում են անպէտք և նոյն իսկ վնասակար։ Մեր ժամանակում գրել երկրի մասին այնպէս, որպէս հայոց հրատարակչ. ընկերութեան տուած այս գիրքն է, իւր սխալ և կամ թերի բացատրութիւններով—վնասակար գործ պիտի համարել և ամօթանք հայոց գրականութեան համար։

Խօ ասացինք թէ ընթերցողը այս գրքից չի իմանալ թէ երկիրը որ կողմից դէպի որ կողմն է պտըտում իւր շուրջը. բայց չի էլ ասած թէ երկիրը որ կողմից դէպի որ կողմն է շրջում արեգակի շուրջը, եթէ այդ պատկերացնելու լինենք նկարի վրայ։ Չի ասած թէ ընթերցողը ինչպէս կարող է իմանալ երկրի շարժիլը արեգի շուրջը արտաքին նշաններով (աստղերի երևալը մի եղանակում և անչատանալը տարաւ միւս եղանակում) և այլն, և այլն շատ տարրական բաներ։

Դորա փոխարէն Լունկեիչը որ ամենատարրական գիտելիքները չի աւանդում, պատժում է իւր ընթերցողներին ենթադրութիւնները թէ ինչպէս է կազմել տիեզերքը!

Հերիք ենք համարում նաև ապքանը մի գաղափար տալու համար թէ ինչպէս է հասկանում Հայոց Հրատ. Ընկեր.-ը հանրամատչելի ժողովրդական գիտական գրքեր կազմելու գործը։ Վերջ չէր լինիլ եթէ այս գրքի բոլոր անհեթեթ պակասութիւնների մասին խօսելու լինինք։

«Այս անսահման տարածութեան մէջ, որտեղ այժմ լողում են մեր լուսատուները, այն ժամանակ կար միայն մի մեծ գունդ։ Քարեր, հողեր, մետաղներ, հանքեր և ջուր—այս բոլորը այն ժամանակ չոգի էին։ Անասելի տաքութիւն էր տիրում ամեն տեղ. այդ տաքութեան շնորհիւ բնութեան մէջ ամեն տեղ և ամեն կողմ բացի չոգիից ոչինչ չկար։ Վերջապէս չոգին քիչ-քիչ սկսեց պակասել։ Քարերի և մետաղների չոգիները սկսեցին կամաց-կամաց սառել։ Այդ չոգիները հետզհետէ միախառնուեցին և կազմեցին մեծ մեծ կաթիլներ, որ վերջ ի վերջոյ միացան միմեանց հետ։ Չոգիների փոխարէն դոյացաւ մի մեծ, հսկայական մեծութեան կրակեղէն գունդ, որ ամբողջովին կազմուած էր հալուած քարից, հալուած հողից և մետաղից։ Այդ գունդը անհամեմատ մեծ էր մեր այժմեան արեգակից...։ Այդ կրակէ գանդուածը, այդ ամենի գունդը պտտում էր իր շուրջը, և պտտելիս նորանից պոկում էին ահագին կտորներ, որոնք իբրև նոր կրակեղէն գնդեր նոյնպէս սկսում էին պտըտել։ Այդ պոկուած գնդերից մէկը ձեզ լաւ ծանօթ է։ Դա մեր լուսատուն է, մեր արեգակը։

Ա. Ա.

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մի քանի օր է ինչ շրջում ենք Հալաբար թաղում գտնուող երկու մեծ տներում տեղաւորցրած գաղթականների մէջ. և թէ ինչ զարհուրելի իրողութիւնների ենք ներկայ եղել, ինչեր ենք տեսել ու զգացել-չատ չուտով հրապարակ կը հանենք։ Այս մի քանի էջով նպատակ ունենք ծանօթացնել Մուրճի ընթերցողներին համառօտակի մեր տեսածի ու զգացածի հետ։ Մենք շրջել ենք այս թուի սեպտեմբերի 26-ին և նրանից մի քանի օր յետոյ։ Տեղեկութիւնների և հաղորդած իրողութիւնների ճշգրտութիւնը կարող է վկայել ամեն մի բարեխիղճ և անկողմնապահ անձնաւորութիւն եթէ նեղութիւն քաշի բարձրանալ մինչև Հալաբարի ծայրերը և անձամբ տեսնի և հարց ու փորձ անի գաղթականներին։ Մեր ասածներին աղբիւր են ծառայել այն ամենը, ինչի մենք ականատես և ականջալուր ենք եղել։ Այս բացատրութիւնը կարևոր է, որովհետև ով գիտէ, ընթերցող էլ կայ, ընթերցող էլ...

Հալաբարի յետ ընկած փողոցներում Բար. Ընկ. վարձել է երկու տուն, ուր տեղաւորուած են 300 գաղթական տաճկաստանցի հայեր՝ ծեր, պառաւ, երիտասարդ, ամուսնացած, աղջիկներ, տղաներ և մանուկներ, ոտաբոբիկ, գլխաբաց, պատառոտուած շորերով, հիւանդ, զունատ ու տանջուած։ Երկու տունը բաղկացած է 17 մեծ ու փոքր սենեակներից, որոնցից մէկը մի երկար ներքնատուն է, աղի-սաչէն յատակով և ցուրտ ու մութ։ Մէլիք-Բէգլարովի տունը 10 յարմար սենեակներ ունի, որոնք փայտատակ են, բաւականաչափ ամբողջ ապակիներ ունեցող փեղկերով լուսամուտներ ունին։ Տասնեմէկերորդ սենեակն է միայն այդ տան մէջ, որ մի ներքնատուն է, 3—4 կիսապատուհաններով և մի զունով։ Այդ ներքնատանը, որ ունի 17 խոր. սաժ. օդ միայն, խոնաւ դեռնի վրայ թափուած են 30 հոգի՝ կին, երեխայ, ծեր ու երիտասարդ. 4—5-ը հիւանդ, միւսները հաղիւ առողջ. ինչ կը լինի անկուշտ փորով, քրքրուած շորերով ու անանկողին մարդու օրը, որ քնում է սառ յատակի վրայ ու գիշերը ցրտից սրբխսրթում է։

Ճիշտ է, Բարեգործական ընկերութիւնը դրանցից մի քանիսին վերմակ է տուել, բայց նախ՝ անբաւարար չափով. երկրորդ՝ վերմակներ են, որոնց միջից լոյսը երևում է. կարծես մաղի զործածք լինեն։ Մի

հիւանդ մարդ պատմում էր, որ իրանց տուած մի վերմակը ձգում է երեխաների վրայ (ինչպէս դա, այնպէս էլ չատերը ներքնակ չունին), իսկ ինքն ու իր կինը քնում են բաց գետնին։ Հիւանդ կին, չրջապատուած հիւանդ մանուկներով, քրքրուած ինչ որ կտորներ է ձգել տակն ու մէջքը խոնաւ պատին դէմ տուած, լաց է լինում... Փարթամութեան մէջ ապրող պարոններ ու տիկիններ, կարողանում էք երևակայել այս դրութիւնը!... Թող չկարծեն թէ մենք զիտմամբ ներքնատունն ենք ընտրել տպաւորութիւն անելու համար, օգնութեան չուսով. վայ այն օգնութեան, որ տպաւորութիւն անելով պիտի ձեռք բերուի։ Ահա ձեզ հէնց առաջին պատահած սենեակը՝ Մէլիք-Բէգլարովների տուն, սենեակ № 1, որ ունի միայն 6 խոր. սաժ. օդ, որից մի սաժէնի տեղն էլ ռուսական վառարանն է բռնում՝ և աղիւսէ չատակ-իր մէջ է առել 8 հոգի, որոնք, փառք Աստծուն, անկողին ունին, բայց... օդ չունին։ Այսպիսի երջանիկներ՝ անկողին ունեցողներ քիչ կան։ Մէլիք-Նուբարովի տան 6 սենեակներում տեղ գտած բազմութեան ամենամեծ մասը ոչ անկողին ունի, ոչ բաւականաչափ ջուր, ոչ նոյն իսկ դուլ ջրհորից ջուր հանելու համար, ոչ կերակուր ուտելու աման և ոչ դդալներ։ Ամեն սենեակ, բացառութեամբ մէկի, մի կուժ ունի միայն ջուր բերելու համար, որ առաւօտ երեկոյ տանում լցնում են. նկատեցէք, որ օրական երկու կուժ ջրով մարդիկ և՛ պիտի լուացուեն, և՛, թէ որ կարողանան, չորից-բանից լուանան, և՛ նոյն ջրից խմեն։ Այդ ջրի սովը աչքի կընկնի իր այլանդակութեամբ մանաւանդ, երբ աչքի առաջ ունենաք, որ 6 սենեակներից ամեն մէկում տեղաւորուած են 11—42 հոգի, վերցրած ամենափոքր ու ամենամեծ թիւը։ Այդպիսի մեծ թիւով, նրանք ապրում են այնպիսի սենեակներում, որոնց պատուհանները ջարդուած են. ուստի և, ցուրտ չլինելու համար, փեղկերը փակած. մութ, մէջը լի գարշահոտութիւն, հիւանդներ, մանրաոտք... զարհուրելի է! Մտածեցէք մի րոպէ, որ ըստ առողջապահների 1 սաժ. օդը այն սահմանն է, որից այն կողմը չի կարող անցնել մարդու և բնութեան սակարկութիւնը. իսկ այնտեղ, սենեակներից մէկում, օրինակ, ուր միայն 30 խոր. սաժ. օդ կայ, ապրում են 42 մարդ, մէջները չերկու հիւանդ, իսկ մի ուրիշ սենեակում 20 մարդ ապրում են 12 խոր. սաժէն օդով...

Բայց ընակարանների անլարմարութիւնները մի կողմ թողած՝ տեսնենք ուրիշ կողմից լաւ են գոնէ, թէ Աստուած խեղճերի գլխին ջուխտ ձեռով է տուել։ Ամենից առաջ այս պիտի նկատել, որ ոչ ոք բաւականաչափ կերակուր չի ստանում։ 24 ժամայ ընթացքում դիւղացի մարդուն տալիս են 1 ֆունտ հաց և մի աման լոբիջուր պաս օրերը, ու հին մսի երկու փոքրիկ կտոր ինչ որ չորւի պէս բանի մէջ՝ ուտիս՝ օրերը։ Ամենքը կիսակուշտ են օրերն անց կացնում։ Մի մայր դանդատւում էր, որ երեխաներն են շատ լաց լինում, թէ չէ իրանք ոնց լինի կ'ապրեն. իրանց

բաժնից կտրում տալիս են երեխաներին, որ չժընդժընդան, իսկ իրանք կիսակուշտ օր են մթնացնում։ 5 ամիս է անցել այն օրից, երբ տոմսակով գնացել են բաղնիք. կանայք գանգատւում են, որ նրանց գլուխը ջուր ու սապոն չի տեսել այն օրից դէսը և շորերը կեղտում փթում են։ Տանտիկիններ են, մարդ ու որդու տէր, սովոր տունը մաքուր պահելուն. իսկ այժմ լացք չեն անում. ոչ տաք ջուր ունին, ոչ սապոն, ոչ թեչտ, ոչ պղինձ։ Մեծ ծախս կընստէր Բարեգործական ընկերութեան վրայ եթէ մի տաք ջրի «կուբ» պահէր, որտեղից թէ լացքի, թէ գլուխ լւանալու և թէ թէյի համար ջուր վերցնէին։ Այսպէս են. կիսակուշտ, հիւանդ կամ կեղտոտ, անվերմակ ու սոներքնակ, դեռնախշտի և անմխիթար... Ոչ ոք չի եկել նրանց այցելելու, ոչ ոք չի հարցրել նրանց ցաւն ու կարիքը. Բարեգործ. Ընկերութեան գրասենեակի մէջ էլ հետ. ները մարդավարի չեն վարւում ինտելիգենտ պարոնները... Մենք փաստեր ունենք, որ և հրապարակ կը հանենք։ Մի անգամ եկել են այցելութեան խորհրդի քարտուղարն ու վարչութեան անդամներից մէկը։

Հիւանդներ կան, ծանր հիւանդներ՝ տեղաշորերում պարկած, որոնց ոչ մի բժիշկ չի այցելել, ոչ մի դեղ չեն տուել։ Հիւանդանոց չեն գնում, որովհետև վախենում են թէ մահացնեն (մոլորութիւն է անշուշտ...). մէկ էլ որ երբ մեռնում են, չեն թողնում դիակը տեսնեն։ Մի 14 տարեկան տղայ այնպէս լուսիչ կերպով գանգատւում էր իր վիճակի մասին, որ արտասունքը չէր կարելի պահել.—հօրս տարան, մեռուցին, ասում է. ջամդաքը բէլա չցուցին—իր երկու մանր եղբայրների հետ որբ է մնացել խեղճը։ Այստեղի պայմանների հետ դեռ չեն հաշտւել մարդիկը։ Հիւանդութիւնները կարելի է ասել բացառապէս առաջ են գալիս վատ սնունդից և չոր դետնի վրան պառկելուց։ Մենք տեսանք նաև հիւանդանոցը, որ նոյնպէս պակասութիւններ շատ ունի—կը գրենք. բայց ամենալաւ տպաւորութիւնը էլի այդ հաստատութիւնն է անում իր մաքրութիւնով և բաւարար պայմաններով։ Այստեղ չեմ կարող չլիշատակել մի տիկնոջ անուն՝ Տիկ. Հայկանուշ Մարտիրոսեանց, (Թիֆլիսի Գրանդ-Օտել հիւրանոցի տիրոջ ամուսինը) մի կատարեալ անձնազոհ՝ ինչպէս պատմում են, մի տիպ, որին արժէ որ հետևեն մեր մեծախոս օրիորդներն ու տիկինները։ Այդ կինը շաբաթը երկու-երեք անգամ այցելում է հիւանդներին, անում ձեռքից եկածը, հոգում է նրանց մասին մօր ու քրոջ պէս և լուռ, անաղմուկ կատարում իր պարտքը. բոլոր հիւանդանոցի ծառայողները հիացմունքով են խօսում նրա մասին։ Հիւանդները գոհ են նաև երիտասարդ բժ. Ռօտինեանի հոգացող վերաբերմունքից։

Դաղթականների մի ստւար մասը գործի ընդունակ մարդիկ են. կարելի էր գուցէ նրանց այստեղ այնտեղ տեղաւորել, գործ ճարել նրանց համար, աշխատելու միջոց տալ։ Անցեալ օրերը մի զէյթունցի եկել խընդ-

բում է, որ նրան մի գործ տան, մի պարապմունք գտնեն նրա համար։ Մի հակայ էր ուղղակի։ «Փառք Աստուծոյ, հիւանդ էի, այժմ առողջ եմ, կարող եմ աշխատել» ասում է։ Ի՞նչդ է պակաս, հարցնում են. հացդ կայ, քնելու տեղդ կայ. կեր ու կաց։—Մենք մարդ չենք, ասում է. նամուս չունենք, ինչ կը վայելի ինձի անգործ մնալ։ Ամեն բան կ'անեմ, գործ գտէք միայն. այս էր խնդրում։ Եւ այսպէս է գաղթականների մեծ մասը։

Կանայք պարապ օրեր են մթնացնում։ Մեր հարցին՝ թէ կը կարեն իրանց ամուսինների, իրանց և մերձաւորների, ուրիշների համար շորեր, վերմակ ու ներքնակ.—ամենքը ուրախութեամբ դրական պատասխան տուին։ Հագուստ էլ կը կարեն, վերմակ էլ կը մեղդակեն. միայն կտոր տրուի նրանց։ Մի թէ չէր կարելի կազմակերպել մի այդպիսի գործ։ Շորեր են տալիս, տանում հագնում են, տեսնում են իրանց բանը չէ, իրանց սովորական շորերը չեն, տանում ծախում են. լետոյ վեր են կենում ասում թէ գաղթականները շոր են ծախում! Ի՞նչ անեն մարդիկ, երբ Քեաւառցուն, գիւղական կոշտ պալմանների որդուն, եւրոպական բրիւկ են տալիս. դէ պիտի ծախեն էլի!։ Մինչդեռ իր կինը կամ երկրացին գիտէ թէ ինչ տեսակ շորն է նրան սազական. կտոր տան, կը կարի, կը հագնի։

Լաւ դիտելով գաղթականների դրութիւնը, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ամեն չարիք առաջ է գալիս գաղթականների վիճակով ոչ բաւականաչափ լուրջ զբաղելուց և օգնութեան գործի որևէ կազմակերպութիւնից զուրկ լինելուց

Ն. Աղբալեանց
Վ. Փափազեան.
Ս. Զուրաբեան.

P. S. Դեռ երէկ Մելիք-Բէգլարովների տանը տեսանք 40 հոգուց բաղկացած մի նոր գաղթականութիւն, ցնցոտիներով, կիսամերկ, անշոր, անանկողին, մէր ու մանուկ, մեծ ու ծծկեր, ծեր ու ջահել, որոնք 2 օր էր ինչ եկել էին և տեղ չունէին գիշերելու. այս ամբողջ դիշերն ու երէկ անձրևը նրանց ծեծում էր վերից, իսկ իրանք կուչ եկած ցնցոտիների մէջ, մայրը մանուկը կրծքին կպցրած, թափուած էին բաց երկնքի տակ, քամու և ցրտի բերանին թողած... Եկածներն ինչ օրում են, որ սրանք ինչ օրում լինեն։ Ցամենայն դէպս «որ ունի ականջս լսելոյ՝ լուցէ». չուտափոյթ օգնութեան հասէք!...

ՆՈՅՆՐ

1897 թ. հոկ. 3։

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. ՍԵԻՆԱՆԻ

XV

Ամառնային ներկայացումները։—Թատրոն եւ բարեգործութիւն։—Բաքւայ Թատրոն։

Ամառւայ վերջանալու հետ վերջացան նաև գաւառական քաղաքներում տրւող ներկայացումները, որոնք մի քանի քաղաքներում այնքան պարբերական են դարձած, որ ժողովուրդը սպասում է նրանց հետաքրքրքրութեամբ։ Տ. տ. Մէլիքեան, Փառանձէմ, պ. պ. Աբելեան, Պետրոսեան, Ցարուիթիւնեան և ուրիշներ միացած՝ Երեւանից լետոյ Կարսում ևս երեք ներկայացում տալուց լետոյ ուղեորւեցան Շուշի, որտեղ ամբողջ ամառ անընդհատ շարունակւեցան ներկայացումները։ Ի միջի այլոց խաղացւեցին «Օթելլո», «Ռին», «Բաղդասար աղբար», «Մեծապատիւ մուրացկաններ», «Վենետիկի վաճառական» և այլն։ Ներկայացումների նիւթականը ևս բաւարար էր։ Օր. Մարի-Հրանուշ և պ. Վրոյր գնացին Սղնախ և Թէլաւ իւրաքանչիւրում երկու ներկայացումն տալու, որից լետոյ օր. Մարի-Հրանուշ օր. Վարդիթերի հետ գնացին հիւսիսային Կովկաս, Արմաւիր, Պեատիգորսկ, Եկատէրինոդար, իսկ պ. Վրոյր՝ Մանգլիս ամառանոցը և այնտեղից Ախալքալաք։ Դերասան Աղայեանցը ևս ներկայացումներ է տւել Կարս և Ալէքսանդրապոլ։

Աւելորդ չենք համարում մի երկու խօսք ասել թէ Թիֆլիսում և թէ գաւառական քաղաքներում տարածւած մի «հիւանդութեան» մասին. մի ցաւ՝ որին կարելի է ուղղակի անւանել «բարեգործական հիւանդութիւն»։ Շատ հաստատութիւններ, օրինակ «Բարեգործական ընկերութիւն» իւր ճիւղերով, «Հրատարակչական ընկերութիւն», շատ լաճախ դպրոցներ, հքաւոր ուսանողներ և այլն ներկայացումների միջոցով—բնականաբար

օրէնքի թոլատրած չափով ու ձևով—օգտուում են թատրոնից և ներկայացումներից, ու առհասարակ թատերասէրների ներկայացումներն են լինում, որոնց համար իրանց տոմսակը զանազան խուսափողական պատճառներ մէջ բերող պարոնին կպցնելու համար չարունակ չեչտում են.

—Դիտէք, մեր նոր բացող դպրոցի համար է...

—Վերցրէք այս տոմսակները, այսինչ ուսանողի համար է...

—Դաղթականների համար է, սոված են, մերկ են, թշուառ են... և շատ խելօքներ, որոնք ոչ մի տրամադրութիւն չէին ցոյց տալիս տոմսակ վերցնելու, մտածում են.

—Վատ չի լինի եթէ վերցնեմ. և՝ թատրոն կ'երթամ և բարեգործութիւն արած կը լինեմ. «մի քարով երկու թռչուն»...

Եւ վերցնում է, պինդ մեխելով իւր գլխում թէ «թատրոն պէտք է գնալ բարեգործութիւն անելու համար», և թէ «ամէն մի ներկայացում ունէ մի բարի նպատակ...»

Դուրս է գալիս դաւառներում ճանապարհորդող դերասանի աֆիշը և հասարակութեան բոլոր դասակարգերը հարցնում են.

—Ի՞նչ բանի համար է...

և զարմանքը պատում է նրանց, երբ լսում են թէ ներկայացման արդիւնքը մտնելու է ներկայացման գոյութիւն տուող դերասանի գրպանը։ Դուք ոչ մի կերպով չէք կարող համոզել դրանց որ՝ սա ոչ թէ սիրողների, այլ դերասանի ներկայացումն է, որի միակ ապրուստը այդ ներկայացումներից գոյացած արդիւնքն է։ Հետևանքը այն է լինում որ թատրոնի և նրա նշանակութեան մասին այդ թիւր ու սխալ գաղափարը, ամրանալով հասարակութեան մէջ, միանգամայն վնասում է գործին և արգելք դառնում նրա աստիճանական զարգացման։ Հասարակութիւնը թող լաւ ըմբռնէ որ թատրոնը ոչ թէ պիտի օժանդակէ, այլ օժանդակի, թատրոնը ոչ թէ պիտի օգնէ այլ պիտի օգնութիւն վայելէ, որպէս զի կարողանայ ծառայել իւր կոչմանը։ «Թատրոն» և «գծծութիւն» երբէք չեն հաշտուի միմեանց հետ։

Հետևեալ բնորոշ դէպքը պատմեցին ինձ. պ. Վրոլրը Ա. քաղաքում դիմում է մի ինտէլիդէնտ պարոնի, խնդրելով որ մասնակցի իւր ներկայացմանը։ երկար թախանձանքից յետոյ պարոնը խոսքեր համար համաձայնում է դեր վերցնել։ 1 – 2 ժամից յետոյ այդ պարոնը բռնում է պ. Վրոլրին և հարցնում.

—Ասացէք խնդրեմ, ինչ նպատակի համար է այս ներկայացումը։

—Իմ ներկայացումն է, բնականաբար և արդիւնքը իմը կը լինի, պատասխանում է դերասանը։

—Միթէ որ և է բարեգործական հիմնարկութիւն մաս չունէ ձեր ներկայացումից։

—Ո՛չ։

—Ուրեմն ներեցէք, ես չեմ կարող մասնակցել...

Եւ դեռ ոչ թէ ամբոխը, այլ ամբոխից ջոկուած ինտելիգենտն է այսպէս խօսողը։

Վերջացնելով մեր խօսքը կ'ասենք. քանի որ թղթախաղը ճարակած է մեր բոլոր շրջաններում, քանի որ անընպատակ քէֆերի բոլոր ծանրութիւնը կրում ենք անտրտունջ, քանի որ օղին, գինին, գարեջուրը առատօրէն ղեղում է մեր սեղանները և մենք անմրմունջ տանում ենք այդ բոլոր չռայլութիւնը, «թատրոնը» իրաւունք ունի իւրը պահանջելու. և թող հաստատ համոզուենք որ թատրոնը ոչ թէ պիտի օգնէ, այլ թատրոնը իրաւունք ունէ հասարակութեան նիւթական և բարոյական օժանդակութիւնը վայելելու։ Թատրոնը օգնել է և պիտի օգնէ զանազան բարեգործական հիմնարկութիւններին, բայց որոշ դէպքերում և որոշ չափով։

Վերջապէս Բաքուում կազմակերպուեց դերասանական խումբ պ. Համբարձում Մէլիքեանի վարչութեան տակ. խմբումն է նաև հայ բեմի դոհարը, տ. Սիրանոյշ, և յայտնի կոմիկ դերասան Թուրեան։ Հրաւիրուած են Թիֆլիսի համարեա բոլոր դերասանները, և ցաւում ենք որ այս րոպէին չենք կարող խումբը կազմող բոլոր դերասանների ցանկը ներկայացնել, քանի որ մի քանիսների հետ դեռ ես բանակցութիւնները չեն վերջացած. թէ այս և թէ ռէպէրտուարի մասին յաջորդ անգամ։ Թատրոնական վարչութիւնը 6 ամսով է պայմանաւորում դերասանների հետ, իրան իրաւունք վերապահելով, վեց ամսից յետոյ երեք ամիս ևս պայմանաժամը աւելացնել՝ միևնոյն պայմաններով. զորանով խումբը կապած կը լինի 9 ամսով։ Խումբը Բաքուից դուրս ևս կ'ունենայ ներկայացումներ, ինչպէս օրինակի համար Թիֆլիսում և մի քանի գաւառական քաղաքներում։ Մեր աչքում մեծ կարևորութիւն ունէ և այն հանգամանքը, որ յայտնի դրամատիկական դերասանուհի տ. Հրաչեայ իւր աջակցութիւնը խոստացել է թատրոնական վարչութեան. յարգելի տիկինը, իրրև զարգացած ճաշակի տէր և նուրբ զգաբեստագէտ, անչափ օգնութիւն կարող է մատուցանել խմբի ռեժիսորական մասին։ Ի դէպ.

—Ո՞վ պիտի լինի խմբի ռէժիսորը.

ահա այն գորգեան հանգոյցը, որի նպաստաւոր լուծելուն աշխատում է Բաքվի թատրոնական վարչութիւնը, հաւատացած լինելով որ շատ բան է կախուած դրանից։ Թատրոնական վարչութեանը ցանկանում ենք տոկունութիւն և յաջողութիւն։

ԱՐԱԲԵՍԿ

(«Դոլովիադա» թ.՝ «Մշակիադա»)

Ներկայ սեպտեմբերից մինչև հոկտեմբերի 6-ը Թիֆլիսը զբաղուած էր քաղաքագլխի ընտրութեան խնդրով։ Ինչ խօսք որ օրաթերթերը պիտի ուրախ լինէին որ այդպիսի մի դէպք է ներկայանում, ուր մամուլը, եթէ արդէն չի կարող զեկավարի դեր վարել, գէթ կարող է լաւ խորհրդատուի և լուսաբանողի դեր կատարել ու այդպիսով պարտքի տակ չմնալ հասարակութեան առջև։ Այդ դէպքից բոլոր թերթերը հաւասար կերպով չօգտուեցին. ամենից ուրախը եղան «Տիֆլիսկիյ Լիստոկ» և իմ ընթերցողներին քաջ ծանօթ «Մշակ»-ը։ Մի ամսաչափ լիցած թերթերը այդ խնդրով ապրեցին.—և լուրեր, և մանրատառ լօղուածներ, և առաջնորդողներ—մի խօսքով, մի՛ թերթի բոլոր բաժինները զինուորական ծառայութեան կոչեցին, մի ամիս ժամանակով։ Խնդրեմ մի փոքր ուշադրութիւն այս երկտող գրութեանս, ուր ընթերցողներս պիտի ծանօթանան Մշակ'ի քրտնաթոր և քաջամարտիկ ծառայութեան հետ քաղաքագլխի ընտրութեան շրջանում։

Կարճ պատմութիւնս դոկումէնտային է։

Սեպտ. 8-ին «Նովոե Արազրենիե» առաջ բերաւ այն անունները, որոնց մասին ամենից շատ խօսք կար իրաւասուների շրջաններում քաղաքապետի պաշտօնի համար (Կ. Ալիխանեան, Գ. Եւանգուլեան և Կոնստ. Ռէյտէր)։ Եւ ահա, Նովոե Արազրենիեի դէմ Մշակը (№ 105) բացականչում էր...

«Որտեղից է լրագիրը (Նով. Արազր.) դուրս բերել Գէորգ Եւանգուլովի անունը, այդ մեզ համար գաղտնիք է»։

Իբր թէ Եւանգուլեանի մասին չէին խօսում։ Բայց տեղեկութիւնների կիսատ-պռատութիւնը դեռ ոչինչ, համեմատելով այդ լրագրի (Մշակի) այս ինքնըստինքեան լուրջ թւացող խօսքերի հետ, այնէ՝—

«Մենք մեր պարտքը կը համարենք իւրաքանչիւր հաւանական թեկնածուին հրապարակով քննադատել, առանց մազի չափ անդամ թաղցնելու իրողութիւնը»։

Խոստմունքը հանդիսաւոր էր։ Մշակը իւր պարտքն էր համարում, «առանց մաղի չափ անգամ թագցնելու իրողութիւնը», խօսել բոլոր հաւանական թեկնածուների մասին։ Մի քանի օր անցած այդ թերթը (№ 108) հրատարակում էր անուններ, որոնց մասին, իւր ասելով, խօսում էին. այդ անունների մէջ Մշակը դրել էր «Գէորգ Եւանգուլով»-ի անունը, որի առիթով ինքը ասել էր թէ «որտեղից է դուրս բերել լրագիրը (Նով. Աբազ.)։ Գէորգ Եւանգուլովի անունը, այդ մեզ համար գաղտնիք է»։ Բայց Մշակը չտապեց աւելացնել հետևեալը.

> «Այդ անձերից մեծ մասը... հրաժարւում են քւէարկւել, իսկ մի երկուսը, ինչպէս Եւանգուլով, չանս չունեն ընտրւելու»։

Ուրեմն առաջին դէպքում «Եւանգուլով»-ի անունը հրապարակ դնելը մի «գաղտնիք էր», երկրորդ դէպքում Եւանգուլեանի թեկնածութիւնը արհամարելի էր, որովհետև «չանս չունէր ընտրելու»։

Հոտառութեան խնդիր. ով կարող է վիճել! Բայց այդ դեռ ոչինչ։ Սեպտ. 24-ին որոշւեց արդէն որ թեկնածուներ մնում են Կ. Ալիխանեան և իշխ. Թումանով։ Եւ ահա Մշակը նորից սպառնում է.

> «Այդ երկու թեկնածուների մասին մեր կարծիքը կը յայտնենք միւս անգամ։ Մնացած անունների մասին մենք չենք գրի, քանի որ նրանք վերջնականապէս հրաժարւել են քւէարկւելուց»։ (Մշակ № 111)։

Դա կրկնութիւն էր իւր երկու շաբաթ առաջ տւած հանդիսաւոր խոստումի՝ առանց մաղի չափ անգամ թագցնելու իրողութիւնը՝ քննադատել. բայց այս անգամ արդէն միայն Ալիխանեանին և իշխ. Թումանեանին։ Մշակ'ի գործը հեշտացել էր. բազմաթիւ թեկնածուներից միայն երկու վիշեալներն էին մնացել։

Եւ ահա, մի երկու օր անցած (№ 112) Մշակը, կամենալով մեծ գործի տեղ ծախել այն, որ ինքը խոստացել է քննադատել բոլոր հաւանական թեկնածուներին, արդէն զգալով իւր այդ գերազանցութիւնը, մի ներքին բաւականութեամբ նախատում էր ուրիշ թերթերին.

> «Տեղական լրագիրներից, ասում էր նա, և ոչ մէկը կարծիք չյայտնեց այն մի խումբ անունների մասին՝ (Ռէյտէր, Օպոչինին, Ալիխանով, Թամամշեւ, Թումանով, Մղեբրով, Իւանենկո, Եւանգուլով), որոնց մասին խօսք կար. և նոյն իսկ այժմ, երբ այդ անձանց մեծ մասը հրաժարւեցին և մնացին հազիւ երկու հաւանական թեկնածուներ, էլի մենք չենք նկատում մամուլի կողմից յանկութիւն՝ բաց անելու դրանց արժանաւորութիւնները և պակասութիւնները։ Եւ մամուլի այդ տեսակ օրգանները դեռ պրետենզիա ունեն իրանց հասարակաց կարծիքի զեկավարներ համարելու...»

Սա արդէն երրորդ հանդիսաւոր կլօունական խոստումն էր «առանց մազի չափ թագցնելու իրողութիւնը»՝ քննադատել, քննադատել, քննադատել....

Եւ չտեսանք ու չտեսանք այդ քննադատութիւնը...

Մի մոռանաք սակայն, որ առաջին հանդիսաւոր խոստումը մենք քաղեցինք Քալանթարի թերթի № 105-ից, իսկ այս վերջին տողերը մենք քաղում ենք № 112-ից, որ ասել է առաջինը սեպտեմբերի 9-ի գրածից, երկրորդը սեպտ. 25-ի գրածից, և դեռ այն էլ առաջնորդողից, որ հանաք մասխարութիւն չկարծէք... Տասնուվեց օր էր անց՝ել առաջին խոստումից մինչև վերջին լիշածս, իսկ մինչև ընտրութիւնները մնում էր միայն մի տասնեակ օր. պէտք էր չտապել՝ առանց մազի չափ անգամ թագցնելու իրողութիւնը՝ քննադատել, քննադատել, քննադատել. Բնած էք, ինչ է. Մշակ՝ը խոստանում է և այն էլ այդքան անգամ, իսկ դուք դեռ չէք լսում նորա հրաւէրը ուշադիր լինելու. ուշադիր եղէք, հանդիսականներ, Մշակը խոստանում է, առանց մազի չափ անգամ թագցնելու քննադատել, անողորմ քննադատել... Սոսկալի բան!

Բայց փոխանակ թեկնածուներից խօսելու, Մշակ՝ը զբաղւում էր նախ լորդորելով Տիֆլիսկիյ Լիստոկ՝ին որ սա, ի սէր Աստուծոյ, փրկէ իրան՝ Մշակին՝ քննադատելու պարտաւորութիւնից.

> „Тифлисскій Листокъ“ լրագրի ձայն բարձրացնելը, ասում էր նա, թէև մի փոքր ուշ» (իսկ որ!) «ի հարկ է, գովասանքի է արժանի. ափսոս միայն, որ լրագիրը» (այսինքն Տիֆլիսկիյ Լիստոկ՝ը) «ուղղակի չէ կանգնում այն բոլոր անունների վրայ, որոնք հրապարակ են եկել բացարձակ, չէ լալոնում թէ դրանցից որն է ամենահամապատասխանը քաղաքի և ազգարնակութեան շահերի համար...»

(Մշակ № 112). Այո, շատ ափսոս...

Բայց դորանով չբաւականացաւ նա. մի քանի օրից յետոյ (Մշակ № 114, «Ժամավաճառութիւն չէ արդեօք» լոգուած) Մշակ՝ը, տեսնելով որ Տիֆլիսկիյ Լիստոկ՝ում լոյս են տեսնում ընթերցողների նամակներ („Письма читателей“), ուր մէկը առաջարկում է քաղաքագլուխ ընտրել իշխ. Իլ. Ճաւճաւաձէին, միւսը Զուրաբովին, երրորդը՝ Ալ. Մատինեանին, չորրորդը՝ իշխ. Բեհրուզեանին, և այլն, Մշակ՝ը, ասում եմ, անհանդստութեան մէջ է ընկնում, թէ իրա ուզածը ախար այդ չէ, դա ժամավաճառութիւն է. և ահա նորից աղաչանք-պաղատանք Տիֆլիսկիյ Լիստոկ՝ին, որ, ի սէր Աստուծոյ, խօսի քաղաքագլխութեան իսկական թեկնածուների մասին, որովհետև ինքը Մշակը իրանից լոյս չունի, թէև այնքան անգամ խոստացել էր և նոյնիսկ խոստման մասին առաջնորդող էր գրել...

«Եթէ „Тифлисскій Листокъ“ և ուրիշ լրագիրները հրաւէր

կարդալին քննադատելու մի Ռէյտէրի, մի Թումանովի, մի Ալիխանովի հաւանական թեկնածութիւնները, այդ անշուշտ կը նպաստէր գործին...»

Այո, շատ կը նպաստէր...

Իսկ Մշակ'ի խոստումը? չէ որ մենք արդէն հասանք սեպտեմբերի 30-ին... մինչև ընտրութիւնը մնում է միայն 6 օր...

Տիֆլիսկիլ Լիստոկ անսաց Մշակի խնդրանաց և պաղատանքներին։ Եւ իրօք, իւր № ում առ 26-ն սեպտեմբերի Տիֆլ. Լիստոկ'ը, առաջ բերելով Մշակ'ի լօդուածը (առաջնորդողը!), լայտնեց թէ «Գալ անդամ մենք մեր կարծիքը կը լայտնենք քաղաքագլխութեան այն թեկնածուների մասին, որոնց հրապարակ բերաւ իրաւասուների 24 սեպտ. ժողովը»։

Ուրախացաւ մեր «Մշակը», որ Տիֆլիսկիլ Լիստոկը վերջապէս պիտի նրան դժուարութիւնից հանէ։

Տիֆլ. Լիստոկ այդ խոստացել էր անելու, այժմ էլ Մշակի խնդրանքների առիթով կրկնեց, և... կատարեց. այդ թերթը մէկը միւսի յետեից տաւ լաւ թէ վատ՝ նկարագրեր Ալիխանեանի և Թումանովի։ Եւ Մշակը, որը այդքան դիմումներ էր անում Տիֆլ. Լիստոկին, վախեցաւ նոյն իսկ օգտուել այդ թերթի տւածից. դեռ սիրտ չէր անում մի թեկուզ «մշակական» կարծիք լայտնելու Ալիխանեանի ու Թումանովի մասին. նա սպասում էր...

Ինչ բանի?—Ներշնչանքի ի վերուստ...

Եւ ահա բաղդը նորից օգնութեան հասաւ այդ լրագրին։ Ես խօ ասացի, որ մի անդամ արդէն բաղդը օգնութեան հասաւ նորան. նա խոստացել էր բոլոր հաւանական թեկնածուների (Ռէյտէրի, Օպոչինինի, Ալիխանեանի և ուրիշների) մասին խօսել առանց մազի չափ ծագցնելու իրողութիւնը. լեռուլ, 15 օր անցած, գործը հեշտացաւ երբ ձայնաւորները սեպտեմբերի 24-ի մասնաւոր ժողովում վճռեցին միայն երկու կանդիդատ ունենալ՝ Ալիխանեանին և Թումանովին. դորանից լետոլ էր Տիֆլ. Լիստոկ'ին ուղղած Մշակ'ի աղաչանք-պաղատանքը, ի սէր Աստուծոլ, կարծիք լայտնել այդ երկուսի մասին, որ ինքը, Մշակը, իմանալ թէ ինչ կարծիքներ լայտնի իւր ընթերցողներին։ Բայց ահա, Մշակի բաղդից, Ալիխանեանն էլ հրաժարական տաւ... և նորա տեղը հին կուսակցութիւնը նշանակեց «Եւանգուլովի» թեկնածութիւնը։

Քալանթարը խօ խոստանում էր դրել միայն հաւանական թեկնածուների մասին. և Եւանգուլեանցը ի հարկէ հաւանականներից չէր... այդ ասաց Մշակը մի անդամ, երկու անդամ, երեք անդամ։ Ալիխանեան, երևի համբերութիւնը կտրած այն բանից որ Քալանթար այսքան երկար ձգձգում է իւր խոստումը կատարել, և կամ աւելի լաւ՝ երևի ազատելու համար Քալան.

թարին ան-քան քրտնելուց իւր խոստացածը կատարելու համար... հրաժարական տուաւ...

Եւ ահա Ալիխանեան (որը ամենայն հաւանականութեամբ ոչ մի հայ լրագիր չի կարդում) մի հնար գտաւ թէ պատժելու Մշակին և թէ խղճալով՝ սորան փրկելու խոստմնազանցութեան անպատուութիւնից. նա, Ալիխանեան, ինքը հրաժարուելով՝ առաջ քշեց Եւանդուլեանի թեկնածութիւնը. դա՝ պատիժն էր Մշակին. բայց Ալիխանեան կարող էր գիտենալ որ եթէ Մշակը ընդունակ է որ և է բան գրելու մէկի մասին, դա կը լինէր Եւանդուլեանցի մասին. այդ կը լինէր փրկութիւնը Մշակի համար։ Եւ Մշակ՝ը չտապեց վերջապէս օգուտել այդ հանգամանքից. նա իսկոյն գրեց (№ 116, հոկտ. 2) մի երկար լօղուած Եւանդուլեանի մասին, պնդելով, և դուշակելով թէ՝

«Եւանդուլով (...) փառաւոր կերպով կը սեւանայ հոկտեմբերի 6-ին»։ Եւ իրօք... դուրս եկաւ ճիշդ հակառակը. «Եւանդուլով» ընտրուեց Թիֆլիսի քաղաքագլուխ հոկտեմբերի 6-ին...

Մենք կարծում ենք որ Մշակը էլի երախտապարտ պիտի լինի պ. Եւանդուլեանի առաջ. չլինէր սա՝ Քալանթարը մինչև հիմա էլ դեռ կը քրտնէր իւր լօղածները գրելու համար, ուր նա պիտի քննադատէր, քննադատէր, քննադատէր բոլոր թեկնածուներին՝ «առանց մազի չափ Ցազցնելու իրողութիւնը»...

Խեղճ մազ! որքան չնչին բան ես դու! բայց, ով մազ, մխիթարիր որ կայ նաև մի խեղճ մամուլ, ուր գրողներ կան քեզնից էլ չնչին...

ԼՈՒՍԻՆԻ։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՆԹԻ ՆՈՐ ՎԷՊԸ «Վերժին» սկսում է ներկայ համարից և վերջանալու է տպագրութեամբ Մուրճ'ի դեկտեմբերի դրքում։

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ՝ բժիշկ Թադէոս Զաքարեանց այս տարի դոքտորական քննութիւն տալով պիտի թողնի զինուորական բժշկի ծառայութիւնը, որի մէջ նա էր վերջին 5—6 տարիները՝ դալ տարեայ սկիզբները Բաքու փոխադրուելու համար։

Բժ. Գարեգին Սարգսեանց Ադուլիսից, ուր նա կար վերջին երկու տարիները իբր մասնաւոր բժիշկ, ներկայ սեպտեմբերին Պարիզ ուղևորուեց՝ այնտեղի հիւանդանոցներում ժամանակաւորապէս աշխատելու համար։

Արսէն վարդապետ Ղլըտճեան, Աստրախանից, ուր նա կար վերջին տարին, ուղևորուեց Մոսկւա՝ որի համալսարանում պիտի լսի պատմական և իրաւագիտական առարկաներ։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂ. ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ։ Հայոց եկեղ. ծխական դպրոցների մասին եղած Բարձրագոյն հրամանը մենք Մուրճ № 6 արդէն հաղորդեցինք։ Այդ հրամանը ապա տպուեց «Պետական Համբաւաբերի» մէջ սեպտեմբեր ամսին։ Դորա հետևանքն է ահա Վեհափառ Կաթողիկոսի հետևեալ կոնդակը, ուղղած թեմական առաջնորդներին։

«ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Կոնդակաւ Մերով ի 19 այսր սեպտեմբերի թ. 948, պատուիրեցաք Սինոդի ս. Էջմիածնի առաքել առ թեմական իշխանութիւնս վիճակացն Հայոց Ռուսաստանի ի կատարումն զվաւերական պատճէն գրութեան Տ. նախարարին ներքին գործոց ի 12 յունիսի սոյն 1897 ամի № 3148, որ յաղագս ենթարկելոյ տեսչութեան նախա-

բարութեան ժողովրդական լուսաւորութեան զանազան եկեղեցական ծխական դպրոցաց Մերոց, որք չեն են փակեալ։

Արդ ի լրումն կոնդակին Մերոյ, տեսլոյ ՉԻ-ն օգոստոսի սոյն ամի թ. 779, պատուիրեմք առ ի պահպանել զմիօրինակութիւն ի գործողութիւնս համօրէն թեմական իշխանութեանց ի կարգել անդ զաղբիւրս տնտեսական ապահովութեան դպրոցացն, զնախահաշիւս տարեկան ելմտից այնոցիկ՝ նախ քան նոցունց ուսումնարանական տեսչութեան՝ յիւրաքանչիւր նուագի նախապէս մատուցանել Մեզ ի տես և ի հաւանութիւն, հանդերձ կարեւոր բացատրութեամբք, թէ յեկամտից անտի որպիսիք ուստի իցեն, այն է ի կալուածոց եկեղեցեաց կամ ի տոկոսեաց գրամագլխից կամ ի կամաւոր տրոց ժողովրդեան կամ յուխտատեղեաց և այլն։

Բայց յայսմանէ պատուիրեմք փութալ զեկուցանել Մեզ, թէ որպիսիք յանշարժ գոյից և յաղբերաց եկամտիցն դպրոցաց հնարհեալ են ի Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութենէ ի պէտս պահպանութեան դպրոցացն։

Յաւելումք ասել՝ եթէ հոգաբարձութիւնքն ևս ոչ փակեալ դպրոցաց համարին իսկ լուծեալ ըստ կարգին կառավարութեան այնոցիկ։

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց։

Ի 25 սեպտեմբերի 1897 ամի և ըստ Տումարիս ՌՅԽԵ. ի հայհայրապետութեան Մերում Դ. ամի, ՅԱրարատեան Մ. Աթոռ ս. Էջմիածնի Վաղարշապատ թ. 971.

Ս. ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ. կատարեց սեպտ. 14-ին, մայր վանքի մէջ։ Հարց կար վանքի բազում հանդէսը կատարելու. բայց եպիսկոպոսները ընդդիմացել էին այդ մտադրութեանը, և առ այդ ունէին հիմնաւոր պատճառներ։ Ժողովուրդը մօտակայ տեղերից էր ու հաշւում էին առառաւելն 10.000 հոգի։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ։

Կառավարչապետ իշխ. Գոլիցին օգոստոսի վերջերից այցի գնաց Կարսի շրջանը օգոստ. 29-ին մտաւ Կարս, 31-ին ուղեւորւեց զօրախաղի դաշտը և ապա Ստրիղամիշ. սեպտ. 2-ին ներկայ եղաւ զօրախաղին, 4-ին ճանապարհ ընկաւ Թիֆլիս։ Ներկայ հոկտ. 2-ին կառավարչապետը եղաւ ս. Էջմիածին, ուր նա այցելից ճեմարանը, Մայր վանքը, Վեհափառին, որի մօտ և ճաշեց։

Շուշայ գաւառապետ իշխ. Արխազի արձակւեց իւր պաշտօնից։

Զիւանշիրի գաւառապետ (Գանձակի նահանգ) Միրզաբէկ Ռաֆիբէկով արձակւած է իւր պաշտօնից։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։

Անցագիր հայերից եւ զինաթափ։ Մինչև պարսկա-տաճկական սահմանի վրայ եղած ընդհարումը հայերի և քիւրդերի մէջ, Պարսկաստանում բնակող հայերից անցագիր չէր պահանջւում. այժմ մի տեղից միւս տեղ անցնող հայերից հրամայւած է անցագիր պահանջել։ Հրամայւած է նաև բոլոր հայերին զինաթափ անել. այժմ զէնք կրելու համար պահանջւում է առանձին թոյլտուութիւն։

Հայ փախստականները Պարսկաստանում։ Անցեալ տարուանից Սալմաստում ապաստան դտած հայ փախստականներից կառավարութեան հրամանով օգոստոսի վերջերքը 240 հոգի գնացին Թաւրիզ, ուստից որոշած էր ուղարկել Մուժամբար և Ալջամուլք հայ գիւղերը։ Սալմաստցիները շատ եղբայրական էին վարւել նոցա հետ, ճանապարհ գցելու համար էլեր էին վարձել և ճանապարհի հաց էին տւել։

ՌՈՒՍԱՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՄԱՄՈՒԼԸ։ «Պետերբո՛ւրգսկիյա Վէ՛դոմոստի» լայտնի ուղղամիտ և ազդեցիկ օրաթերթը (իշխան Ուխտոմսկի՛ի լրագիրը) № 259-ում հրատարակել է մի առաջնորդող լօդւած ընդդէմ «Նովոե Վրեմիա», և զորա ուղղութեան թերթերին։ Այդ լօդւածում մերկացւում է Նովոե Վրեմիայի և նման թերթերի ուղղութիւնը որպէս «մի լայտնի չրջանի իրար հետ սերտ կապւած մարդկանց հաշիւ», «որոնց հարկաւոր են ապօրինութիւն և դժգոհութիւն պետութեան ծայրերում, որպէս զի լեռ ամեն ինչ չիոթի ու խառնի պղտոր ջրի մէջ, որից լայտնի տիպարի գործիչների համար հեշտ կ'լինի հանել այն, ինչ իրենց շահւէտ է ցանկացած բոպէին». զորա համար դոքա աշխատում են «եղիտական միջոցներով ապացուցել թէ սրգազան Ռուսիան կարող է պահւել՝ բռնութիւն գործ դնելով օտարի կրօնի և կենցաղի վրայ, գործադրելով ճնշում այն ամենի վրայ, ինչ օտար ցեղից է և օտար կրօն ունի, մի խօսքով կեղծաւորութեամբ դիմակաւորւած քարոզելով խորին ցինիզմով լի այնպիսի սկզբունքներ, որոնց նոյնիսկ ամենակատաղի կողմնակիցները չեն համարձակւում պաշտպանել բացարձակ կերպով, իբր սկզբունքներ»։ Պետերբո՛ւրգսկիյա Վէ՛դոմոստի նոյն լօդւածում իւր դայրոյթն է լայտնում. երբ Նովոե Վրեմեա՛ն, «որ բիւրոկրատիայի (պետական ծառայողների) մի քանի չրջանների ֆոնոգրաֆն է», այսպէս է որոշում կրօնական համբերատարութեանը. «մենք (ասում է Նովոե Վրեմիա) հասկանում ենք որ պետութիւնը կարող է թոյլ տալ իւր այլացեղ քաղաքացիներին դաւանութեան ազատութիւն, չբճնչել նոցա առանձին ծէսերը, եթէ դոքա չեն խախտում՝ կարգն ու ապահովութիւնը ու հակառակ չեն բարեկարգութեան հիմնական պահանջներին»։ Առաջ բերելով Նովոե Վրեմիայի այդ խօսքերը, Պետերբուրգ-

սկիզբ Վ.Էդոմոստի'ն գրում է. «Այս կլասիկական բանաձևը ինքն ըստ-ինքեան է խօսում իւր մասին։ Գոնէ տեսնում ես թէ ով է գրում և ինչ է նորա ծածուկ միտքը»։

ԴՊՐՈՅԱԿԱՆ։

Ներսիսեան դպրոց։ Անցեալ ամիս գրել էինք որ դպրոցը մտնել ցանկացողների թիւն էր ներկայ սեպտեմբերին 560, սրանցից քննութեան թոյլատրեցին մօտ 200 և ընդունեցին դպրոցում զորանից էլ պակաս։ Այդ թիւերը ուղղելու կարօտ են. խնդիրքատուների թիւը եղած է արդարև 560, բայց քննութեան ենթարկեցին, և դպրոցում ընդունեցին 230 հոգի։ Տեղական ուսուցիչներից պ. Յա. ռոյ, որի դասերը ֆրանսերէն լեզուից հոգաբարձութիւնը պակսեցրել էր, հարկ էր համարել վեհ. Կաթողիկոսին դիմել, և Վեհափառը պատվիրել էր հոգաբարձութեանը պակսեցրած դասերը նորից պ. Յարոյին տալ։

Լազարեան ճեմարանի վերատեսուչ։ Հանգուցեալ Գէորգ Քանանեանցի տեղ վերատեսուչ Լազարեան ճեմարանի նշանակեց պրոֆ. Վսեւոլոդ Ֆէօդորովիչ Միլլէր, Մոսկուայի համալսարանի համեմատական լեզուագիտութեան և ռուսաց գրականութեան պրոֆեսորը։ Նա մէկն է ամենալաւ մասնագէտներից Ռուսիայում սանսկրիտի և իրանական լեզուների։ 70-ական թուականներին համալսարանում նա կարդաց Արևելքի պատմութիւնը, ապա մի քանի տարի նուիրեց իրան Կովկասի ուսումնասիրութեանը, հրատարակելով մի շարք կարևոր աշխատութիւններ օսերէնի և հրէական-թաթական լեզուների մասին, որպէս նաև Կովկասի աղգագրութիւնից և հնագիտութիւնից։ Միաժամանակ նա շատ տարիներից ի վեր նախագահ է բնագիտութեան, մարդաբանութեան և աղգագրութեան սիրողների դպրոցական ընկերութեան և պահողը Դաշկովեան աղգագրական թանգարանի։ Նորա ջանքերով կազմուեց մի զորձունեայ խումբ, որը հրատարակում է «Этнографическое Обозрѣніе.

Երեւանի թեմական դպրոցի տեսուչ, հոգաբարձութեան վճռով, պիտի առաջարկուէր ի հաստատութիւն Վեհափառի Մեսրոպ վարդ. Տէր-Մովսէսեան. բայց Վեհ. Կաթողիկոսը նշանակեց իւր իշխանութեամբ մի ուրիշին, Նիկ. Քարամեանցին, Գէորգեան ճեմարանի ուսուցիչներից։ Որքան, սակայն, հարկ կար որ բարձր իշխանութիւնը օգտուէր իւր ծայրագոյն իշխանութիւնից մի այսպիսի դէպքում, վարուելով իւր իսկ տուած դպրոցական կանոնադրութեան հակառակ։

Շուշւայ դպրանոցի տեսուչ նշանակուած է Տիրայր վարդապետը։

ՄԱՄՈՒԼ։

Արարատ ամսագիրը (ս. Էջմիածնի) իւր օգոստոսի համարից

լույս է տեսնում կառավարչական դրաքննութեան թոռութեամբ։

Կոլխիդա անունով Թիֆլիսում ռուսերէն թերթ հրատարակելու համար գեներալ Բուչկիեւի տուած խնդիրքը մերժուած է։

Կրերուլի («Ժողովածու») անունով իշխան Ակակի Ծերեթելիին թոյլատրուած է և արդէն սկսել է հրատարակել մի ամսագիր զուտ բելետրիստիկական բովանդակութեամբ. բայց կարող են տպել միայն իւր՝ Ծերեթելիի դրուածքները. տպւում են նաև վրաց աւանդութիւններ։

Նոր-Փորձ անունով մի վեցամսեայ դրականական և հասարակական հանդէս հրատարակելու է ձեռնարկել պ. Յովհ. Շահնազարեանց, Մոսկուայում, որի առաջին գիրքը լոյս տեսաւ։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ։

Թիֆլիս։ Խորհրդարանը (դումա) քննեց քաղաքային վարչութեան առաջարկը՝ բնակարանական հարկ ներմուծել Թիֆլիսում, այսինքն, որ, բացի այն որ տնատէրերը իրենց տների համար հարկ են վճարում, այլ և վճարեն հարկ այն ամենքը, որոնք Թիֆլիսի տներում բնակարան են վարձում, աղատելով հարկից ամենաանկարողներին, որոնք տարեկան բնակարանի վարձ տալիս են միայն 60, 100, 120 և այլն ռուբլի, նայած թէ խորհրդարանը ինչպէս կը վճռէր. այդ հարկից սպասւում էր եկամուտ 6.000 ռուբլի։ Բնակարանահարկի կողմնակիցները լոյս ունէին որ, եթէ այդ հարկը մտցնի, ապա բոլոր այն անձերը, որոնք այդ հարկը վճարելու լինեն՝ պիտի ստանային քաղաքային ընտրական իրաւունք, և որ այդպիսով Թիֆլիսում ընտրական իրաւունք կունենային ոչ թէ մօտ 3.000, այլ մօտ 8.000 հոգի. սակայն օրէնքը դեռ չի որոշած թէ բնակարանահարկ տալով՝ կարելի է ընտրող լինել. ուրեմն հարկը ընդունելուց յետոյ միայն այդ իրաւունքի խնդիրը պիտի պարզէր։ Խորհրդարանը 15 սեպտ. ձայների բազմութեամբ հիմքից մերժեց քաղաքային վարչութեան առաջարկը բնակարանահարկի մասին։

Նոյն նիստում վճռեց քաղաքագլխի ռոճիկը թողնել 6.000 ռուբլի և վարչութեան միւս անդամներինը 3.000 ռ., խորհրդարանի քարտուղարինը՝ 2.000 ռ.։

Հոկտ. 6-ին 52 ձայնով (74-ից) Կոնստ. Ռէյտեր ընտրուեց նախագահող այն դէպքերում, երբ քաղաքագլուխը օրէնքով չի կարող նախագահել։

Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը։ Քաղաքագլխի ընտրութեան համար խորհրդարանի (դումա) անդամները 24 սեպտ. ունեցան մի մասնաւոր ժողով՝ կուսակցական տրամադրութիւնները որոշելու համար. թերթիկներով առաջարկւածներից նախ ստացան իշխ. Գէորգ

Թումանով (խմբագիր Նովոե Արազրենիեի) 28 ձայն, Կոնստ. Միխ. Ալիխանեան 19 ձայն, մի քանի հոգի և մի-մի ձայն։ Ապա նոր քվեարկութեամբ Կոնստ. Ալիխանեան ստացաւ 28 սպիտակ և 24 սև, իշխ. Դ. Մ. Թումանով 27 սպ. և 27 սև։

Պր. Ալիխանեանին նկատում էինք իբր հին կուսակցութեան պարագլուխներից առաջինը. և հաւանական էր թէ նա պիտի լինէր հին կուսակցութեան թեկնածուն. այդ մենք յայտնել էինք դեռ ևս մայիս ամսին. տես Մուրճ 1897 № 5 էջ 691, ուր տրուեց նաև նորա բնագիրը։

Իշխան Թումանով առաջարկուած էր խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութիւնների կողմից, որոնք հաշուում են նոր խորհրդարանում, որպէս երևում է, մինչև 30 ձայն, որ պատկառելի թիւ է։

Այդ ժամանակուանից քաղաքագլխի ընտրութեան պայքարը սկսած համարուեց։ Իշխ. Թումանով իւր թերթի համարում առ. 26 սեպտ. հրատարակեց «ինձ ընտրողներին» խորագրով մի դիմում, ուր չեշտում էր այն, որ իրեն ընտրողները իրեն ձայն տալով ի նկատի են ունեցել դաղափարի մարդուն, իբր հաշտարարի ազդութիւնների։ Թումանովի այդ դիմումը ռուսաց այլ երկու թերթերում՝ Կաւկազ և Լիստոկ օրաթերթերում, չարձակողական և ծաղրական նկատողութիւնների հանդիպեց, իբր թէ այդպիսի դիմում անտեղի էր և շողոքորթութիւն իրեն ձայն տուած իրաւասուներին։ Առանց կամենալու խօսք մի անելու լիշեալ թերթերի հետ, որոնք տենդենցիական նոտա էին մացնում իրենց վերաբերմունքի մէջ դէպի իշխ. Թումանով, մենք գտնում ենք որ այդ դիմումը անտեղի էր, ըստ բովանդակութեան։ Որ իշխ. Թումանով դաղափարի ծառայ է՝ այդ մեզ համար դուրս է ամեն կասկածից. բայց որ ներկայումս «ազդութիւնների հաշտարարութեան» պէտք լինի—այդ մենք ժխտում ենք։ Կամենալ իբր քաղաքաղլուխ ազդութիւնների հաշտարարութեան դեր կատարել, այդ կը նշանակի կամենալ բաւարարութիւն տալ մայրաքաղաքների հայակեր թերթերի և տեղականներից՝ Կաւկազ և Լուերիա լրագրերի պահանջներին, ընդունելով նոցա ասածները իբր ճշմարտութիւն։

Քաղաքագլխի թեկնածուների քննադատութիւնը գլխաւորապէս կատարուեց Տիֆլիսկիյ Լիստոկում, առանց սակայն որ այդ քննադատութիւնները որոշիչ ազդեցութիւն գործէին հասարակաց կարծիքի վրայ։

Ընտրութիւններից մի քանի օր առաջ պ. Ալիխանեան յայտնեց իւր կուսակիցներին որ հրաժարուում է թեկնածութիւնից. ի հետևումն դորա հին կուսակցութիւնը իւր համար թեկնածու ընտրեց պ.

Գէորգ Եւանգուլեանին, որի մասին սեպտ. 24-ից առաջ խօսւում էր իբր մէկը հաւանական թեկնածուներից.

Այսպիսով մնացին երկու թեկնածու՝ Եւանգուլեան և Թումանով։ Ընտրութիւնը կատարւեց հոկտ. 6-ին։ Նախ առաջարկւեցին թեկնածուներ թերթիկներով. պ. Եւանգուլեան առաջարկւեց 38 ձայնով, իշխ. Թումանով 30 ձայնով. այլ անձեր ստացան 2-ական և մի-մի ձայն։ Քւէարկութեան համաձայնութիւն տւին երկու վիշեածները։ Բայց քւէարկութեան միջոցին իշխ. Թումանով իւր արկղը ետ վերցնել տւաւ, այնպէս որ քւէարկութիւնը չարունակւեց միայն Եւանգուլեանի տուփի համար, որ և ստացաւ 38 սպիտակ, 34 սև։

Ներկայ էին 72 իրաւասու։

Պր. Եւանգուլեան եղել է իրաւասու Թիֆլիսի խորհրդարանի՝ քաղաքային ինքնավարութիւնը Թիֆլիսում հաստատւած տարուց սկսած և երկար տարիներ եղած է խորհրդարանի ներկայացուցիչ նահանգական ատեանում քաղաքային գործերի համար։ Նա մէկն է հին կուսակցութեան պարագլուխներից (պրոֆեսիայով՝ երդւեալ հաւատարմատար), (տես Մուրճ № 5 էջ 691, ուր Ալիխանեանից անմիջապէս վերև վիշեած է Եւանգուլեան), և էր մէկը հաւանական թեկնածուներից։

ՆԵՐՍԷՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ 4-ամեայ ծառայութիւնը վերջացած է դեռ ևս այս տարւայ ամառւայ ամիսներին։ Մինչդեռ նոր ընտրութիւնների մասին ոչ մի տեղ ոչինչ չի լսւում. ինչ է պատճառը։ Հրաւիրում ենք հոգաբարձութեանը՝ օրինականութեան հետևելու.

ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ։

Գրիգոր Յովհաննիս. Մեղինեան, անգաւակ, Թիֆլիսից, անդամ «Դաւ. Փիթոեւ և ընկ.» առևտրական տան) վախճանւած սեպտեմբերի 14-ին, կտակով թողել է 61.300 ռուբլի հետևեալ բարեգործական նպատակներով 1) Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց, կրթական պէտքերի համար 25.000 ռուբլի, այնպէս, որ դրամագլուխը պիտի անձեռնմխելի մնայ լաւիտեան, իսկ տոկոսները պիտի գործադրւեն ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի պէտքերի համար. սորա փակւելու դէպքում՝ թեմական դպրոցների կամ այլ ուսումնարանների համար, որոնք ամենից կարօտ կը լինեն և կամ, ըստ Կաթողիկոսի հաւանութեան և նորա ընտրութեամբ՝ հայերից երիտասարդներ ուսում տալու համար։ 2) ս. Էջմիածնի վանքի նորոգման 2.000 ռ., 3) Թիֆլիսի ս. Նշան եկեղեցու նորոգման 1.000 ռ. 4) Ներսիսեան դպրանոցին Թիֆլիսում 6.000 ռ., տոկոսներովը մի որդեգիր պահելու հանդուցեալի անուան. 5) Հայոց Բարեգ. Ընկերու-

թեան Կովկասում 1.000 ռ. 6) Հայոց Հրատարակչական ընկերութեան 1.000 ռ., 7) Թիֆլիսում նոր կազմուող ընկերութեան՝ Կովկասի բնիկներից չքաւոր ուսանողներին օգնելու համար 500 ռ. 8) Թիֆլիսի հայոց հոգևորականների դանձարանին 300 ռ., 9) Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցին 6.000 ռ., 10) Թիֆլիս քաղաքին, ի կարգադրութիւն քաղաքային վարչութեան՝ ա) 6.000 ռուբլի, որի տոկոսներից պիտի թոշակներ տրուեն Միքայէլեան արհեստաւորաց դպրոցի ամենաչքաւոր հայ աշակերտներին, ընտրութեամբ քաղաքային վարչութեան. բ) 3.000 ռ. քաղաքապատկան տարրական դպրոցների համար. գ) 15.000 ռուբլի, որի տոկոսները պիտի տրուեն իբր օգնութիւն ամենաչքաւոր հայ հարսնացուների, քաղաքային վարչութեան ընտրութեամբ։ Կտակակատարներ նշանակուած են հանգուցեալի եղբայր ինժեներ Ա. Ց. Մեղրինեան (որին ժառանգութիւն է թողնուած հանգուցեալի մնացած կարողութիւնը) և Գր. Եղ. Փրկոնեան։

Միքայէլ Բալայեան Սափարեանց (շուշեցի, Թիֆլիսաբնակ ծխատոմի գործարանատէր Թիֆլիսում), վախճանուած 30 սեպտեմբերի, կտակով թողել է 5.000 ռուբլի ի տնօրինութիւն իւր կտակակատարների (որոնք են կինը՝ տ. Նատալիա Սափարեանց, քոյրը՝ տ. Սոֆիա Ստեփանեանց և քրոջ որդին՝ պ. Յովհաննէս Ստեփանեանց), որ սոքա գործադրեն հանրօգուտ գործերի, իրենց բարեհայեցութեամբ։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐԻ ՔԱՀԱՆԱՅ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Հայ կաթողիկ հոգևոր վարչութեան գլխաւոր Սարատովի եպիսկոպոսի կարգադրութեամբ Թիֆլիսի հայ կաթողիկների հովիւ է նշանակուած Գաբրիէլ վարդապետ Նահապետեան, որը դորանից առաջ Ալէքսանդրապոլ էր։

ՄԱԼԵԱՐԻԱ հիւանդութիւնը։ Թիֆլիսի նահանգում, որպէս և քաղաքում, վերջին ժամանակները սկսել է սաստիկ տարածուել մալեարիա կոչուած հիւանդութիւնը, որ արտայայտուում է դողոցով և որը շատ անգամ մահաբեր վախճան է ունենում։ Այժմ, հոկտ. 10-ին, պաշտօնապէս յայտնուում է որ այդ հիւանդութիւնը սկսել է թուլանալ։

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԷՐՈՒԹԻՒՆԸ։ Ներկայ տարուայ 22 յուլիսից մինչև 6 օգոստ. Կազանում նիստ ունեցաւ ռուսական միսիոնէրական երրորդ համաժողովը, որը անցեալում իւր առաջին և երկրորդ նիստերը ունեցել էր Մոսկուայում։ Ռուսական միսիոնէրական համաժողովների նպատակն է միութեան բերել ռուսաց միսիոներական գործողութիւնները։

ՀՈՂԵՐԻ ԽԼՈՒՄԸ։ Ստաւրապոլի նահանգում մահմեդականների մօտ գտնուող ընդարձակ արքունական հողերը, որպէս վճռել է երկրագոր-

ծութեան և արքունական հողերի մինիստրը, պիտի խլեն և տրեն ռուս գաղթականներին։

ԳԷՕԼՈԳՆԵՐԸ, որ Մոսկվայի կոնգրէսից Թիֆլիս էին եկել, թւով 200 հոգի գնացին Բաքու, ուր հասան 12 սեպտ.։ Եղան Սև քաղաք, Նոբէլի գործարանում, Բիբի-Էյբաթ, Բալախանի, Սուրախանի։ Քաղաքի կողմից կլուբի դահլիճում ճաշ տրուեց մօտ 260 հոգու. տրուեց նախաճաշ նաւթագործների խորհրդի կողմից։ Գէօլոգներին ընդունելու և հիւրասիրելու համար որոշուած էր 12.000 ռուբլի, որից կէսը քաղաքի կողմից, կէսը նաւթագործների խորհրդի կողմից։

Գէօլոգների մի մասը, 32 հոգի, որոնց մէջ և պրոֆեսոր Ցիւրիխում Աբէլեան, իրենց հետ մի քանի տիկիններ և որիորդներ Բաքուից գնացին Ս. Էջմիածին, ուր հիւրասիրուեցին Վեհ. Կաթողիկոսի կողմից։ Էջմիածին հասան սեպտ. 16-ին. այցելեցին ճեմարանը և ապա ներկայացան Վեհափառին. ապա այցելեցին մայր տաճարը, թանգարանը, գրադարանը, տպարանը և այլն. ճեմարանում տրուեց նոցա ճաշ, մասնակցութեամբ մի քանի եպիսկոպոսների, վարդապետների և ճեմարանի ուսուցիչների. խօսուեցին ճառեր, որ թարգմանում էին վարդապետներից և ուսուցիչներից մի քանիսը։ Նոյն օրը գնացին Երեւան, ու ապա Արարատի ստորոտները. բայց ժամանակի անբարմարութեան պատճառով մեծ Մասիսը չբարձրացան, իսկ մի մասը բարձրացաւ փոքր Մասիսը։ Գէօլոգների հետ էր նաև Վլադիկաւկազից նոցա ընկերացած դեղագործ Շտեբերդ, որը Մասիսի ստորոտներում, չեղելով ճանապարհից, գլորուել էր, ոտը կոտրել ու սառած մնալ։ Գէօլոգները ապա գնացին Ալեքսանդրապոլ և Անի։

ՕՂԼ ԲԵՆԵԴԻԿՏՍԷՆ դանիացի երիտասարդ գիտնականի մասին անցեալ անգամ հաղորդել էինք. սուրբ միւռոնօրհնութեանը ս. Էջմիածին գնալուց յետոյ, նա ընկերակցել էր մի անգլիացու և մի շէյդի հետ և սոցա հետ միասին գնացել էր Պարսկաստանի Մակուայ խանութիւնը, հիւրընկալուելով խանի մօտ երեք օր։ Այդտեղից նոքա այցելել են ս. Թադէոսի վանքը, ուր հանդիպել են տաճկահայ փախստականների մի մեծ խմբի, որոնց սակայն վանքը չէր կարող ամենքին ապաստանել։ Փախստականները եղել են ծայրայեղ թշուառութեան մէջ։

Պրն. Բենեդիկտսէն ներկայ հոկտ. 8.ին՝ ճամբա ընկաւ դէպի Տաճկաստան, ուր նա պիտի մնայ չորս ամիս, այցելելով Տրապիզոն, Սամսոն, Բրուսա, Ամասիա, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Սալոնիկ, Մակեդոնիա։ Նոյա նպատակն է Տաճկաստանի մասին մի գիրք գրել, ուր ցոյց տրուած կը լինի տաճիկ կառավարութեան վերաբերմունքը դէպի իւր հպատակ ազգութիւնները։

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ։

Ուսանուհիները Աւստրիայում Ներկայ տարեայ մարտի 23-ին հրատարակեց աւստրիական մինիստրի կարգադրութիւնը՝ վերաբերեալ կանանց թոյլտուութեան իբրև իսկական և աղատ ուսանողուհիներ աւստրիական համալսարանների Փիլոսոփայական ֆակուլտէտներում։ Այդ կարգադրութիւնը ներկայ սեպտեմբերին ոյժ ստացաւ արդէն և 15 սեպտ. (27-ին) ուսանուհիները սկսեցին գրել, Վիեննայի համալսարանում. սակայն շատերի ցանկութիւնը կատարել չի կարող, որովհետև ընդունելու համար պահանջւում է 1) աւստրիական հպատակութիւն, 2) տարիք 18-ից վեր, 3) հասունութեան վկայական որ և է աւստրիական կամ նորան համահաւասար արտասահմանեան գիմնազներից։

ՅՈՎՀ. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՅՈԲԵԼԵԱՆԸ։ Սեպտ. 26-ին կատարուեց Ֆէոդոսիայում հռչակաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու 60 ամեայ նկարչական գործունէութեան մեծահանդէս յոբելեանը, չտեսնուած շքեղութեամբ։ Այդ առթիւ քաղաքային խորհրդարանը յատուկ նիստ ունեցաւ, որը վճռեց հիմնել՝ թոշակ յոբելեարի անունով այն թէոդոսիացիների համար, որոնք կոչումն կ'արտայայտեն գեղարուեստի մէջ, քաղաքային դպրոց յոբելեարի անունով, և երկու թոշակ Եղիպտի մտնաւոր դպրոցում։ Հանդէսի սկզբում կատարուեց գեղարուեստների ակադեմիայի փոխ-նախագահի հեռագիրը, որով յայտնւում էր թէ Թագաւոր Կայսրը բարեհաճեց շնորհել յոբելեարին Ս. Ալէքսանդր Նևսկու շքանշանը։ Եկել էին բազմաթիւ պատգամաւորութիւններ, ի միջի այլոց ծովային և ժողովրդական կրթութեան մինիստրութիւններից և գեղարուեստների զանազան ընկերութիւններից. Անգին թուով հեռագիրներ ստացուեցին, ի միջի այլոց և Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնայից, Կէսարին Այվազովսկու նկարների գալերէյում նախաճաշ տրուեց պատգամաւորութիւններին. Քաղաքը ճաշ տուաւ ի պատիւ յոբելեարի, երեկոյեան կայացաւ ցուցահանդէս։

(Յոբելեանի նախընթաց օրը յոբելեարի ցանկութեամբ հոգեհանգիստ կատարուեց ի յիշատակ Նիկոլայ Պաւլովիչ կայսեր, որի թագաւորութեան օրով սկսել է յոբելեարի գեղարուեստական գործունեութիւնը)։

Ուղերձները կարդացին նահանգապետը—նահանգի կողմից, պ. Սոկոլով՝ գեղարուեստների ակադեմիայի կողմից, ծովակալ Օստելսակի՝ ծովային մինիստրութեան կողմից, պ. Եղեանց՝ լուսաւորութեան մինիստրութեան կողմից. քաղաքագլուխը կարդաց Ն.Բ. Իշխանուհի Եվգենիա Մաքսիմիլիանովայի նամակը, որ մի ողջոյն էր նկարիչներին

հովանաւորող ընկերութեան կողմից, իշխ. Կ. Բեհրութեան ողջունեց յօբելեարին Պետերբուրգի հայ հասարակութեան կողմից. ապա շնորհաւորեցին տեղական պատգամաւորութիւնները՝ հոգևորականութեան, ազնուականութեան, հայ հասարակութեան, զեմստուոյ և դպրոցների կողմից։

ՌՈՒՍԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ։ Հրատարակուած է Ռուսաց կայսրութեան գործարանների (ֆաբրիկաների և զաւոդների) մասին եղած պաշտօնական տեղեկութիւնների համագումարը 1893 թ. համար, որից երևում է թէ 1893 թուականին գործարանների թիւն էր Ռուսիայում 22.483։ Տարեկան արդիւնաբերութիւնը այդ բոլոր գործարանների էր 1.759.331 հազար ռուբլի (կամ 1 միլիարդ 759 միլիոն 331 հազար ռուբլի)։ Այդ գործարաններում գործում էին շոքեմեքենաներ 13.325։ Բոլոր բանուորների թիւն էր արական 1.094.972 հոգի, իգական 311,803 հոգի։

ԻՍՊԱՆԻԱ։ Կանովասի սպանումից յետոյ կազմած ժամանակաւոր մինիստրութիւնը հրաժարական տուաւ և կառավարութեան գլուխ անցաւ լիբերալների գլուխ Սագաստան։

Սագաստայի մինիստրութիւնը հինգերորդն է նախագահութեամբ այդ պետական մարդու, սկսած 4 տեսակ։ 1874 թ. ապա նա եղաւ մինիստր նախագահ փետրուարից 1883 թ. մինչև 1883 թ. 1885—1890 և 1892—1895։ Միջանցքներում կառաւարութեան գլուխ անցնում էր նոր սպանուած Կանովաս։ Սագաստան այժմ 70 տարեկան է։ Նա ներմուծեց Իսպանիայում ընդհանուր ձայնատուութեան իրաւունքը, քաղաքացիական ամուսնութիւնը երդուեալ դատարանը և ընդհանուր զինուորագրութիւնը։

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) «ԱԹԱՑԵԱՆ, Ա. շակ.—Թոյն. (վէպ), Բաքու, տպ. Ց. Դիւլբասարեանի, գինն է?

2) ՏԻԳՐԱՆԵԱՆՑ, բժ. Լևոն.—Մանկական պարտէզ։ Տեսական մասն։ Զեռնարկ մայրերի և մանկական պարտէզպանուհիների համար։ Երևան, տպ. Է. Տէր-Գրիգորեանցի, գինն է 1 ռուբլի։

3) MANANDIAN, Agop.—Beiträge zur albanischen Geschichte (Inaugural Dissertation). (այսինքն Մանանդեան Յակոբ.—Նիւթեր Աղուանից պատմութեան համար)։ Leipzig, Breitkopf u. Härtel. գինը?

4) OWSEPIAN, Dr. G. Archidiakonus in Etschmiadzin.—Die Entstehungsgeschichte des Monotheletismus nach ihren Quellen geprüft und dargestellt. (Այսինքն՝ Յովսէփեան, դ-ր Գ. աւագդարկաւագ Էջմիածնի.—Միակամեայ վարդապետութեան սկզբնաւորութեան

պատմութիւնը, քննուած և պարզաբանուած համաձայն աղբիւրների։
Leipzig, Breitkopf u. Härtel. *գինը?*

5) ХРИСТОФОРЫЧЪ, Дав.—Маскарадъ; комедія въ 1 дѣйствіи. Тифлисъ, тип. М. Мартиросянца; *գինն է 25 կոպէկ։*

6) ՆՈՃՆԸ.—Мысли и афоризмы. Часть I. *գինն է 25 կոպէկ.*

ՎՐԻՊԱԿՆԵՐ ՄՈՒՐՃ № 7—8-ում։

Էջ 1032 (Լեզուական զրույցներ) տող 13 ներքևից և ուրիշ տեղերում տպւած է՝բառբառներ. ուղղել՝ բարբառներ.

«1049, տող 5 ներքևից «ոչ» խօսքը ջնջել։

«1057 տող 14 վերևից տպւած է՝ պարզ—իր. ուղղել՝ պարզ եր.

Էջ 964 («Ամպիկ» ոտանաւորի մէջ) տող 3. որին (ոչ՝ ոտին)։ («Էլուլիւցիայի գաղափարը»), էջ 1002 տող 4 ներքևից՝ վկայւած է (ոչ՝ վկայում են)։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

		Ր	Կ.
1.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՑԵՑԵՐ» (*վէպ*).	1	—
2.	ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (Ղզլարցի)՝ «*Մանուկների մարսողութ. գործարանների հիւանդութիւնները*» . .	—	05
3.	ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», *վէպ հայ-կաթոլիկների կեանքից*	1	—
4.	ԼԷՕ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (*վէպ*).	—	50
5.	Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս.—«ՀԱՑ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ»: (*կեանքից պատկեր*).	—	40
6.	ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».	—	60
7.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԷ», *վէպ*	1	20
8.	ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (*հայ բոշան. կեանքից*	—	15
9.	ՄԱՐԻՍԵԱՆ, *տիկին* Մ.—«ՀԵՂԻՆԷ» (*մեծ վէպ*), *ա. մասը*	—	50
10.	» » » » *բ. մասը*	—	75
11.	ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՌՆՅԻՔ» (*տոհմագ. պատկ.*)	—	15
12.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ».	—	03
13.	» » «ՄԻՆԱՍԻ ԵՋԸ».	—	03
14.	» » «ԵԶԻԴ ԱՂՋԻԿԸ»	—	03
15.	» » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
16.	» » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ». . .	—	03
17.	» » «ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ . .	—	03
18.	ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
19.	ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈԲՆԵՐԸ»	—	10
20.	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ».	—	10
21.	ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ՉԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»	—	15

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ». . . . . — 20
23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. Բ.Ծ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», *Մասն ա.* . . . — 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ». . . . . — 50
25. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.—«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» 1 50
26. ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ» . . .
27. ԱՂԱՅԵԱՆՑ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ»
28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», *յառաջաբանով և ընտրութեամբ* ՎՐՈՅՐԻ . . . . . — 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, Բ.Ծ. Վ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», *Մասն բ.* . . . . — 50
30. ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ.—«ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ *Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում* . . . . — 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱՒ. ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . . — 40
32. ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ» (*պատկերներ*) . . . . . — 40
33. ՇԱՆԹ.—«ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐ», *վէպ* . . . . . — 50
34. » «ԵՐԱԶ ՕՐԵՐ». . . . . — 40
35. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ, Յ.—«ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ» — 25
36. ՋԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԷՈՍ Բ.Ժ.—«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ» . . . . . — 20
37. ՐԱԲԿԵՆՑ, Գ.—«ՆՈՐԵԿ» (*վէպ*) . . . . . — 70
38. ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԱՆՑԱԳԸ» . . . . . — 15

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Լոյս տեսաւ

„БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“

(Նղբայրական օգնութիւն Թիւրքիայում՝ մնասուած հայերին)

Գրական-դիտական ժողովածուն։

Ժողովածուի մէջ, ի միջի այլոց տպած են ստանաւորներ—պ. պ. Կ. Թ.-ի, Ա. Մ. Ժեմչուժնիկովի, (լեակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելոուսովի, Վ. Գոլովոչվաակու, Սավելիէվի, Բալմոնտի, Ֆ. Է. Կոլշի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բօրաւիկովակու, Ն. Կ. Ալիբեկեանցի, Ս. Ի. Զախոտինի, Կոշեվնչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Բելոուսովի, Կանտոնի, Կ. Ծատուրեանի, Յ. Թումանեանի և այլոց։ Նամակներ—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալթիկովի (լեակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տոլստոյի (լեակատար ֆակսիմիլէ). զրոյցներ—Դ. Ն. Մամին Սիբիրեակի, Ե. Ս. Բարանցեվիչի, Վ. Գ. Կորոլէնկոյի, Ն. Ն. Զլատովրատսկու, Սատախովի, Ն Դ. Տելիշովայի, Ա. Ա. Վեսելովսկու և այլոց. հետեւալ պրոֆեսորների յօդուածները.—Պ. Ի. Մելիւկովի (Գրանովսկու դասախօսութեանց անլայտ դասընթացը) Ի. Ր. Թարխանովի, Մ. Մ. Կովալեվսկու, Կ. Ա. Թէմիրազիեվի, Ա. Ն. Կարիշեւի, Վ. Դ. Սպասովիչի, Ն. Ի. Քոսրովենկո, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Խալաթեանցի, կոմսուհի Պ Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Ե. Քանանեանցի, Վ. Ս. Գոլցէվի, Բուկվայի, Դիոնէի, Պ. Ա. Բելոզոլովի, Բարոն Շտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, զենեբալ Պոտոտոյի, Պ. Ն. Ռընինսկու, Ա. Ն. Սապանովի, Ս. Ս. Խախանովի, Զորանեանի, Վ. Ե. Երմիլովի, Լ. Զ. Մաերեանցի, Վ. Ե. Երմիլովայի, Գ. Ա. Ջանշեանի, Ի. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և այլոց։

Յաւելուածներ Յ. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի շրջանկարները, աւելի քան 100 տեսարաններ Անդրկովկասը և Տաճկական-Հայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, Սալտիկովի, կոմս Լորիս-Մելիքեանի, Բելոզոլովի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Ջուրուղեանի, Կաթուղիկոս Մկրտիչ Ի-ի, հայր Ալիշանի, Աղամեանի, զենեբալ Լազարեանի, Տէր-Գուկասեանի, Շելկովնիկեանի, Յ. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանեանի և այլոց պատկերները։

(Հատորի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 5 ռուբլի։

Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6. кв. 1.

Խմբագիր—ԴՐ. ՋԱՆՇԵԱՆ։

Լոյս տեսաւ եւ վաճառուում է

„ՆՈՐ ՓՈՐՁ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

1) Առաջաբանի փոխարէն։—2) *Ա. Աղելեան* Ճար չկայ (ուսուցչի յիշատակարանից)։—3) *Յովհաննէս Շահնազարեան* Անմեղ զոհեր (կանայք Գ. Զուբարի գրուածքներում)։—4) *Ա. Լազարեանց* Ձեռագիր (վէպիկ ծակ Նորման'ից)։—5) *Յովհ. Գնունի* Ինչ է կտակել իր ազգին Ա. Պուշկինը (քննական տեսութիւն)։—6) *Արտաշէս Մարգ թէ անանուն* (Մարսել Պրեւօ'ի „Lettres de Femmes“-ը)։ 7) *Օր. Կատարինէ Ներսէսեանց* Խղճացէք (վէպիկ—Մարսել Պրիւօ'ից)։—8) *Ստ. Գրիգորեան* Մի ուղղութիւն Գեղարուեստական կրիտիկայի մէջ (Ի. Իւանով'ից)։—9) *Մելիք Իւ. Տուրգենեւ'ի* Արձակ բանաստեղծութիւնները պ. Ալ. Ծատուրեանի թարգմանութեամբ։—10) Խմբագրութեան կողմից։—11) Յայտարարութիւններ։

Իւրաքանչիւր օրինակի գինն է ամենայն տեղ **75** կոպէկ։

Հասցէ՝ Москва, Больш. Дмитровка, д. Живаго, кв. № 2.

Ивану Шахъ-Назарянъ.

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻՎԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆռանկ։

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիեւսկայա փողոց, տուն № 6։ Այլ քաղաքներից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“. և կամ հետեւեալ անձերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդոն Մարգանեան՝ Հ. Մելիքեանի դրասենեակ։

ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Մկրտիչ Էհրամճեան։

ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալէքս. Խոջամիրեան։

ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանց։

ԿԱՐՍ—պ. Աբել Ապրեսեան։

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զալալ Տէր-Գրիգորեան.

ՆՈՒԽԻ—պ. Աբրահամ Բունիաթեան։

ՂԶԼԱՐ—պ. Ստեփ. Սողոմոնեան։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան։

ՄՈՍԿՒԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քրիստ. Բաշինջաղեան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալէքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում։